

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԹՈՒԹԵԱՆ

ՄԻՈՆ



ՕԳՈՍՏՈՍ – ԴԵԿՏԵՄԲԵՐ ԹԻՒ 8-12
ՂԳ. 93 ՏԱՐԻ – ՆՈՐ ՇՐՋԱՆ



ՄԻՈՆ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԴԷՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹԵԱՆ

ՂԳ. 93 ՏԱՐԻ – ՆՈՐ ՇՐՋԱՆ

ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՅ ՅԱԿՈԲԵԱՆՅ
ԵՐՈՒՍԱԴԷՄ

2021

ՕԳՈՍՏՈՍ – ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԹԻԻ 8–12

2021

AUGUST – DECEMBER

№ 8–12

SION

A QUARTERLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY
OFFICIAL PUBLICATION OF THE
ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

VOL. 93



ST. JAMES PRESS
JERUSALEM

*Իրաւատէր՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան,
Հայ Պատրիարք Երուսաղէմի*

*Proprietor: His Beatitude Archbishop Nourhan Manougian
Armenian Patriarch of Jerusalem*

*Գլխաւոր խմբագիր՝ Տ. Ներսէհ Աբեղայ Ալոյեան
Editor in Chief: Father Nerseh Aloyan*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

Ն.Ա.Մ.

«Որք զերկաւոր մեծութիւն փառաց՝ խաւար կոչիցին» 279

ԱՐՈՒԵՍՏ

ԱՇԽԷՆ ԵՆՈՔԵԱՆ

Արտաւանի եկեղեցու բարաւորի «Տիրամայրը Մանկան հետ»
պատկերաքանդակը 281

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԽՈՐԷՆ ԵՊ. ՆԱՐՊԷՅ

Հայր մեր որ յերկինս 291

Յ. ՈՍԿԱՆ

Վտարանդին առ ոգի Հայաստանի 292

ՅԱԿՈԲ ԱՐՔ. ԳԼՆՃԵԱՆ

Լոյս 294

ԵՂԻՎԱՐԴ

Օրեր 295

ՀՄԱՅԵԱԿ ԳՐԱՆԵԱՆ

Իրիկուան աղօթք 296

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՌՈԶԱ ԳԱԼՍՏԵԱՆ

Համօ Սահեան եւ Ֆրեդերիկո Գարսիա Լորկա 297

ԱՆԱՀԻՏ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Արշակ Բ.-ն Բուզանդի «Պատմութեան» համապատկերում 306

ՎՈՎԱ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Անուշ Ասլիբեկեանի տողերում միակն ու ուրիշը հայրենիքն է 312

ՍԵՒԱՆ ՏԷՅԻՐՄԵՆՃԵԱՆ

Փորձ մը եւ ո՛չ գործ մը
(Քասիմի «Աշխարհաբար Նարեկ»-ի վերահրատարակութեան առթիւ) 317

ԳՐԱԿԱՆ

MICHAEL E. STONE

Khachatur Kecharetzi: Four poems 323

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

ԱՆՆԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Նոր Հայկազեան բառարանի դարձուածային միաւորների իմաստային խմբերը 329

ԶԱԻԷՆ ԱԻ. ՔՏՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Դասական յունարէնի եւ դասական գրաբարի

առանձնաշատկուծիւններէն «Այլ փրկեա՛ղմեզ ի չարէ»

335

ԿՐՕՆԱԿԱՆ

REVD. DR. ZAVEN ARZOUMANIAN

Tradition and the Armenian church

Dogmatic-Traditional-National

337

ՁԵՌԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅԿ ՅԱԿՈԲԵԱՆ

Սողոմոն Իմաստունը եւ Եօթանասուն երկու դեւերը

Ձեռագրագիտական էսքիզներ

340

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ

ՆԵՐՍԵՏ ԱՔՂ. ԱԼՈՅԵԱՆ

Ընդհանուր բովանդակութիւն «Սիոն»-ի (1991-1995)

352

ՅՈՒՐԵՆԱՆ

ՋԱԻԷՆ ԱԻ. ՔՇՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Եւրոպայի հնագոյն եւ նորագոյն հայ եկեղեցիները.

Հոլանտայի Ս. Հոգի եւ Պելճիքայի Ս. Մարիամ Մագդաղենացի

(Դիւտ Արքեպիսկոպոս Նագգաշեանի յիշատակին)

368

ՆԵՐՍԵՏ ԱՔՂ. ԱԼՈՅԵԱՆ

Սկիւտարի Սոխակը

(Պետրոս Դուրեանի ծննդեան 170-ամեակի առթիւ)

371

ՊԱՏՄԱԿԱՆ

ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆՅ

Վաշուտեան տոհմի իշխանուհիները մշակութային բարերարներ

381

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

REVD. DR. ZAVEN ARZOUMANIAN

The Armenian church. Genuine support to the Armenian Nation

392

ՍՈՒՐԲ ԳՐԱԿԱՆ

ՏՕՔԹ. Յ. ԹՕՓՃԵԱՆ

Տելիշեան խնդիրը, Ս. Գիրքը եւ Բաբելոն,

Աշխարհի ստեղծագործութիւնը (Մաս 2.)

395

ՎԻՄԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅԿ ՅԱԿՈԲԵԱՆ, ԱՄԱԼՅԱ ԴԻԼԱՆԵԱՆ

«Գրաֆիտի» երեւոյթը միջնադարեան վիմագրերում

400

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԱՅԼԵՒԱՅԼՔ

- Հանդիպում Բեթղէհէմի նահանգապետին հետ

408

- Տարեկան գիշերային ուխտագնացութիւն դէպի Ս. Աստուածամօր տաճար

408

- Տարեմուտ Սրբոց Թարգմանչաց վարժարանի

408

- Տարեմուտ ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի	408
- Դպրութեան աստիճանի տըւշութիւն	409
- Տարեկան ուխտագնացութիւն դէպի Ռամլէի Ս. Գէորգ վանք	409
- Ֆրանչիսկեան Ուխտի նոր մեծաւորի պաշտօնական մուտքը Ս. Յարութեան տաճար	410
- Տարեկան ուխտագնացութիւն դէպի Փիլիպպոսի աղբիւր	410
- Տարեկան ուխտագնացութիւն դէպի Յոպպէի Ս. Նիկողայոս Հայոց վանք	410
 Եկեղեցականք - Բեմականք	411
Պաշտօնականք	416
Բարեպաշտական նուէրներ 2020-2021 տարւոյ	417
Ս. Աթոռոյս Կիւլպէնկեան Մատենադարանը շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ գիրքերը	419
Յօդուածագիրներու ուշադրութեան	421
Յանկ նիւթոց 2021 տարւոյ	422

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

«Որք զերկաւոր մեծութիւն փառաց՝ խաւար կոչիցին»:

«Անոնք, որոնք երկրաւոր փառքի մեծութիւնը՝ խաւար կոչեցին»:

(Շարական Թարգմանչաց)

Ահա՛ այս բառերով էր, որ սրբազան Շարականագիրը կը նկարագրէր փաղանգը այն հոյակապ մարդոց, որոնք Ե. դարէն մինչեւ ԺԲ. դար լուսաւորեցին Հայաստանեայց եկեղեցւոյ երկնակամարը, անոնք՝ որոնք այս աշխարհի փառքը խաւար կոչեցին եւ փորձեցին իրենց հետ եւս մեզ մօտեցնել երկնքին ու Երկնայինին:

Ինչպէս բնութիւնը ունի իր գարունը, ազգեր եւս ունին զիրենք յաւերժացնող սերունդները, նման Թարգմանչաց սերունդին, որ դարձաւ Հայ ազգը տեւականացնող գարունը: Մարդկային պատմութիւնը ցոյց տուած եւ հաստատած է, որ զինուորական ոյժը, անոր ձեռք բերած յաջողութիւններն ու փառքը ժամանակաւոր են եւ չեն յաւերժացներ անոնց գոյութիւնը: Ժամանակը ցոյց տուած է թէ Աւետարանի խօսքն է, «ի վերուստ իջեալ», ճշմարիտն ու յաւերժականը, եւ ահա ա՛յս էր միակ նպատակը Թարգմանչաց խումբին, երկինքէն երկիր իջեցնել զԱստուած, որպէսզի Հայ գիրով եւ լեզուով խօսէր հայուն հետ: Եւ արդար պիտի չըլլար թեթեւ յիշատակութեամբ մը անցնիլ մեր ազգային պատմութիւնն ու մշակոյթը լուսաւորող այսպիսի դէպքի մը վրայէն, որովհետեւ ժամանակները զորս անոնք կ'ապրէին, լեցուն էր թէ՛ արտաքին եւ թէ՛ ներքին թշնամիներով, եւ այդպիսի ժամանակներու մէջ էր, որ Թարգմանչաց սերունդի նման զօրաւոր հոգիներու տէր մարդիկ՝ գիտցան խորենացիի ականարկած «Փոքր ածուին» մէջ աճեցնել մշտադաւար մեր լեզուն, մեր մշակոյթն ու պատմութիւնը: Անոնք ըլլալով «հոգիի» տէր մարդիկ, այդ նոյն բանն էր որ փորձեցին աւանդել գալիք սերունդներուն, որովհետեւ անոնք լիովին ապրած եւ փորձած էին, ու գտած որ այդ կեանքը միւս բոլոր կեանքերէն աւելի նպատակայարմար էր եւ օգտակար: Ահա այս էր Թարգմանչաց սերունդին միակ նպատակը, յաւերժացնել Աստուծոյ հոգին մարդուն մէջ, որովհետեւ անոնք քաջ վստահ էին թէ «հոգին է կենդանարար», եւ ահա ճիշդ այս էր որ անոնք մեզի փոխանցեցին, ձգտիլ բարիին, հոգեկանին եւ յաւերժին:

Եւ որոնցմէ՞ կը կազմուէր դարերու վրայ երկարող փաղանգը այն սուրբ մարդոց՝ եթէ ոչ Մեսրոպ Մաշտոցէ, Եղիշէէ, Խորենացիէ, Դաւիթ Անյաղթէ, Գրիգոր Նարեկացիէ եւ Ներսէս Շնորհալիէ: Ասոնցմէ իւրաքանչիւրը բերաւ իր նպաստը, մեր մշակոյթի կանթեղին մէջ դնելով ձէթի իրենց բաժինը, այդպէսով լուսաւորելու մեր խաւար հոգիներն ու աշխարհը: Մեսրոպ Մաշտոց ստեղծեց մեր Այբուբենը, այդպէս լուսաւորելով եւ յաւերժացնելով մեր ժողովուրդի գոյութիւնը: Եղիշէ՝ իր «վարդանանց» պատմութեամբ դարձաւ Աւարայրի Մարտին ոսկի գրիչը: Դաւիթ Անյաղթ Փիլիսոփայ, որ յաջողած էր շուքի մէջ ձգել ու նսեմացնել իր ժամանակի նշանաւոր յոյն իմաստասէրները, որուն համար ալ Անյաղթ մակդիրը տրուած էր իրեն: Պատմահայր՝ Մովսէս Խորենացի, որ հակառակ մեր արդի պատմաբաններու քննադատութեան, միշտ կը մնայ իր Պատմահօր պատուանդանի բարձրութեան վրայ, որովհետեւ ան էր որ մեր պատմութեամբ եկաւ մեզի տալու ծագումը մեր ժողովուրդին, մեր հեթանոսական երգերուն եւ մեր անցեալի երբեմնի փառքին, ու այս բոլորը՝ հակառակ ներկայ շրջանի քննադատներուն, միշտ պիտի մնայ իր բարձրութեան վրայ: Սուրբ Գրիգոր Նարեկացի՝ Աստուածարեալ մեծ

մատենագիրը, որ ինքզինք ճենճերեց Միաձնին եւ Աստուածամօր փառքը «ի խորոց սրտի» երգելու համար: Իր նման մեծ հոգիները կը գլեն ու կ'անցնին միջավայրի եւ ժամանակի պայմանները: Գիտելիքներ ամբարելը զօրաւոր կամքի եւ պայծառ մտքի գործ է, սակայն աղօթքի մարդ ըլլալը տրուած է միայն հոգիի մարդոց, մարդիկ՝ նման Նարեկացիի, որ վերացած է այս աշխարհէն եւ դարձած բնակիչ՝ հոգեկան աշխարհին: Իբր աղօթագիրք եւ ջինջ ու պարզկայ երկնքին նմանող իր հոգիին հարազատ արտայայտութիւնն է Նարեկը, որ թարգմանուած է զանազան լեզուներու եւ գրեթէ դարձած Ս. Գիրք մը հաւատացեալ եւ աղօթող հոգիներու համար, եւ Աւետարանով եւ Նարեկով սնած իրա՛վ հաւատացեալ հայը, տակաւին դարեր պիտի շարունակէ ծծել այդ գերազանց հոգեւոր սնունդը քանի որ ան միշտ ներկայ է իր բարձին տակ: Թարգմանչաց Վարդապետաց հոյլին վերջին ներկայացուցիչը կ'ըլլայ Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետ, մեր եկեղեցւոյ կողմէ նուիրականացած անունը, որ բանաստեղծ էր ու երաժիշտ միանգամայն եւ ասոնց առընթեր նախանձախնդիր պահապանը Հայաստանեայց եկեղեցւոյ կանոններուն եւ աւանդութեանց: Իր «Թուղթ Ընդհանրական»-ը հայելին է եւ արտացոլացումը իր ազնուական հոգիին, որով կ'ուզէ արգիլել մոտքը բոլոր անոնց՝ որոնք կը փորձեն աղարտել մեր եկեղեցւոյ նկարագիրն ու նուիրականութիւնը: Թէեւ հայ ժողովուրդը ժլատ եղած է այսպիսի մակդիրներու բաշխման, նամանաւանդ «Շնորհ»ներու պարագային, սակայն Շնորհալի Հայրապետ անկասկած արժանացած է անոր:

Արդէն անցած են տասնեւվեց դարեր եւ հայ ժողովուրդը դարձեալ կանգնած է յիշատակին առջեւ այն սուրբերուն՝ որոնց երախտաւորեալները եղած ենք մենք, որովհետեւ անոնց տալու ոգին ամբողջ դարերու ընթացքին փոխանցուած է մեր սրտին եւ ատով՝ մեր արեան: Մեր Թարգմանչաց Վարդապետներու պատգամն է այս օրերու սերունդին հետեւիլ իրենց «Ճալու», «Նուիրելու» գերագոյն օրինակին, այդպիսով հասնելու իրենց գերագոյն օրինակին, որովհետեւ անոնք «Հոգիի» տէր մարդիկ էին եւ միշտ հաւատացին Աւետարանի «Հոգին է կենդանարար» խօսքին, եւ անոնք քաջ գիտէին թէ միայն այդ ոգիով կարելի էր հասնիլ եւ արժանանալ Հայր Աստուծոյ բաւութեան:

Ն.Ա.Մ.



ԱՐՈՒԵՍ

ԱՐՏԱԻԱՆԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐԱԽՈՐԻ
«ՏԻՐԱՄԱՅՐԸ ՄԱՆԿԱՆ ՀԵՏ» ՊԱՏԿԵՐԱՔԱՆԴԱԿԸ

Մուտք

Արտաւան գիւղը գտնուում է ՀՀ Վայոց ձորի մարզում՝ Վայք քաղաքից մօտ 10 կմ հարաւ-արեւելք, Արփայ գետի Արտաւան վտակի ափին¹։ Այն պատմական Սինեաց աշխարհի Ճահուկ գաւառի մասն է կազմել եւ յայտնի է եղել Ագխաշ, Ակխաշ, Աղխաշ, Ճուկ, Զուկ անուանաձեւերով²։

Գիւղն աչքի է ընկնում յատկապէս միջնադարեան յուշարձաններով, պահպանուել են խաչքարեր, տապանաքարեր (կենցաղային պատկերաքանդակներով), ԺԸ. դարով թուագրուող կամուրջ։ Վերջինիս ժամանակակից է եղել նաեւ Ս. Աստուածածին եկեղեցին, որը ներկայումս գրեթէ հիմնաւեր է. վերջին տարիներին յայտնաբերուել է կառուցի մուտքի բարաւորը՝ Աստուածամօր քանդակով³։

Արտաւանի եկեղեցու մասին Հ. Ղեւոնդ Ալիշանը գրում է, որ «կայ եւ ի Զուկ աւերակ եկեղեցի մի, չափաւոր մեծութեամբ, այլ ոչ հին թուականօք, որպէս եամա 1703 եւ 1721. Շինեցաւ եկեղեցիս թվին ՌՃԾԲ. եւ ի տապանի միում վերագրէալ է. Այս է տապան Յուստասէին, հանգէալ թվին ՌՃՀ.»⁴։ Եկեղեցու արեւմտեան պատի՝ երբեմնի ընթեռնելի արձանագրութիւնը թոյլ է տալիս թուագրել նաեւ սոյն յօդուածի խնդրոյ առարկայ մուտքի բարաւորի՝ ցարդ ուշադրութեան շարժանացած պատկերաքանդակը, որը, ըստ ամենայնի, ստեղծուել է յիշեալ ժամանակահատուածում⁵։

Պատկերաքանդակն իր յօրինուածքային լուծումներով աղերսւում է վայոցձորեան մշակույթի համանման այլ օրինակների հետ, որի լիարժէք ուսումնասիրման համար նախ անդրադառնանք այս տարածաշրջանում գործած ԺԳ-ԺԴ. դդ. նշանաւոր վարպետ, ծաղկող Թորօս Տարոնացու ստեղծագործութիւններին եւ, առհասարակ, Գլաձորի մանրանկարչական դպրոցի աւանդոյթներին։ Տեղին է նկատում անուանի հայագէտ Ս. Մնացականեանը, երբ նշում է, որ վայոցձորեան մշակութային աւանդոյթներն իրենց ազդեցութիւնն ունեցան նաեւ կերպարուեստի միւս բնագաւառների զարգացման գործում⁶։ Դրա հետ մէկտեղ Գլաձորի վարպետները պահպանում են հայ

¹ Քաջբերդուհի, Ճանապարհորդական նկատողութիւններ, հրատարակութեան պատրաստեցին՝ Ա. Քալանթարեան, Գ. Սարգսեան, Հ. Մելիքեան, Երևան, 2003, էջ 417։

² Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, [կազմեցին]՝ Թ. Յակոբեան, Ստ. Մելիք-Քալաշեան, Հ. Բարսեղեան, Երևան, 1986, էջ 500։

³ Քաջբերդուհի, Ճանապարհորդական նկատողութիւններ, էջ 417, տե՛ս նաեւ Հ. Եղիազարեան, Ազիզբեկովի շրջանի կոլտուրայի յուշարձանները, Երևան, 1955, էջ 92։

⁴ Հ. Ղեւոնդ Ալիշան, Սիսական. տեղագրութիւն Սինեաց աշխարհի, Վենետիկ, 1983, էջ 108։ Տե՛ս նաեւ Դիւան հայ վիմագրութեան, պրակ III, Վայոց ձոր. եղեգնածորի եւ Ազիզբեկովի շրջաններ, կազմեց՝ Ս. Բարխուդարեան, Երևան, 1967, էջ 198-199, արձ. 620, 621. Ե. Լալայեան, Հարաւային Վայոց-ձոր, «Ազգագրական հանդէս», գիրք ԺԲ., Թիֆլիս, 1904, էջ 284։

⁵ Պատկերաքանդակի լուսանկարը սիրայօժար մեզ է տրամադրել հնագէտ Յուսիկ Մելիքեանը, որի համար խորին երախտագիտութիւն եմք յայտնում։

⁶ Ս. Մնացականեան, Վարպետաց վարպետներ. Մանուէլ. Տրդատ. Մամիկ, Երևան, 1982, էջ 145։

մանրանկարչությունների և առանձին ժանրերի զարգացումը իրենց շրջապատող կենսական պայմաններով:

Գլաձորի մանրանկարչական դպրոցի եւ, առհասարակ, Վայոց ձորի տարածքում ձևավորված նկարչական եւ քանդակային արուեստի առանձնապատկերները միմեանց լրացնելով եւ կրելով փոխազդեցություններ՝ պահպանում են բազմազան երկար ժամանակ, ինչի առհասարակ է Արտաւանի ու շրջանային եկեղեցու մոտ՝ Տիրամայրը մանկան հետ պատկերաքանդակը:

Նշենք, որ Տիրամայր՝ այդտեսակ յօրինվածքը բազմիցս հանդիպում է հայկական եկեղեցիների մուտքերի բարաւորներին, որոնցում մեծաթիւ են պատկերագրորէն Օդիգիդրիան ներկայացնող օրինակները, յայտնի են նաեւ Չարչարանաց պատկերները, Բարեխօսութիւնը, Խանդավատանքը եւ այլն:

Խանդավատանքի պատկերագրութիւնը հայ արուեստում

Մեր ուսումնասիրութեան առարկայ պատկերաքանդակում Տիրամայրն ու Մանուկը ներկայացնուած են Խանդավատանք պատկերագրութեամբ, որը եւս հանդիպում է թէ՛ հայկական քանդակային արուեստում եւ թէ՛ կերպարուեստի այլ բնագաւառներում (նկ. 1ա, բ): Սակայն, մինչ խնդրոյ առարկայ պատկերաքանդակին անդրադառնալը, փորձենք ներկայացնել Խանդավատանքի առանձնապատկերները եւ համանուն օրինակների ընդհանուր նկարագիրը հայ արուեստում:

Հստ Վ. Լազարեւի, «Խանդավատանք» պատկերագրական տարբերակը ձևավորուել է ՓԱ. դարից առաջ եւ յայտնի է եղել ինչպէս կոնստանդնուպոլսեան, այնպէս էլ արեւելաքրիստոնէական նկարիչներին: Սակայն այն առաւել լայն տարածում է ստանում ՓԱ.-ՓԲ. դդ. ի վեր, երբ նկարիչների համար դառնում է Տիրամայր սիրելի կերպարներից մէկը⁷: Ն. Կոնդակովի կարծիքով, Խանդավատանքն առաջացել է Օդիգիդրիայ պատկերագրական տարբերակից եւ հնարաւոր է, որ այդպէս են անուանել Օդիգիդրիայի այն տարբերակին, որտեղ Տիրամայրը կարծես խոնարհուած է դէպի Մանուկը, որում փնտրում է ողորմութիւն մարդկութեան համար, իսկ մանկահասակ Քրիստոսն ի պատասխան՝ օրհնանքով դառնում է դէպի մայրը⁸:

Յայտնի է այս պատկերագրութեան մի քանի տարբերակ, որոնցից հաճախագէտ են հետեւեալները. Մանուկը փարուել է մօր պարանոցին եւ միաժամանակ այտը հպել այտին, իսկ Տիրամայրը խոնարհուել է դէպի Մանուկ Յիսուսը, որն էլ օրհնանքի շարժումով դիմում է նրան: Տիրամայրն այս պատկերագրութեան համաձայն՝ ներկայանում է կանգնած, գահին բազմած, ինչպէս նաեւ գօտկային հատուածով, իսկ Մանուկ Յիսուսը երբեմն պատկերուել է Տիրամայր ծնկներին կանգնած, երբեմն էլ նստած նրա ձեռքին, ընդ որում՝ Մանուկը կարող է նստած լինել Տիրամայր ինչպէս աջ, այնպէս էլ՝ ձախ ձեռքին¹⁰:

⁷ Ա. Աւետիսեան, Հայկական մանրանկարչութեան Գլաձորի դպրոցը, Երեւան 1971, էջ 30:

⁸ В. Лазарев, Византийская живопись, Москва, 1971, էջ 286:

⁹ Н. Кондаков, Иконография Богоматери, т. II, Петроградъ, 1915, էջ 211: Տե՛ս նաեւ Օ. Этингоф, Образ Богоматери. Очерки византийской иконографии XI-XIII вв., Москва, 2000, էջ 68:

¹⁰ Օ. Этингоф, Образ Богоматери... էջ 68: Տե՛ս նաեւ Ю. Бобров, Основы иконографии памятников христианского искусства, Москва, 2010, էջ 96-97: Ю. Бобров, Малая история культуры. Основы иконографии древнерусской живописи, СПб., 1995, էջ 83: Խանդավատանքի պատկերագրական տարբերակների մասին աւելի մանրամասն տե՛ս Н. Кондаков, Иконография Богоматери. Связи греческой и русской иконописи с итальянской живописью раннего Возрождения, Москва, 1910, էջ 146-189:

Նշենք, որ հայ արուեստում հանդադատանքի պատկերագրութեան նախօրինակները հանդիպում են դեռևս վաղ միջնադարից, որոնցից է Դուինի կենտրոնական թաղի հարաւ-արեւմտեան ծայրամասում գտնուած մենաւոր սեան խոյակի արեւմտահայեաց ճակատին պահպանուած պատկերաքանդակը, որը յայտնաբերուել է 1959 թ. հնագիտական պեղումների ժամանակ (ՃԿ. 2)¹¹: Տեսարանը կամարածեւ եզրագօտուներքոյ է¹². Տիրամայրը նստած է արեւելեան ոճի բարձին, նրա ծնկներին Մանուկ Յիսուսն է՝ աջն օրհնող շարժումով պարզած դէպի Մայրը, իսկ ձախ ձեռքով պահել է թղթագալարը: Տիրամայրն ու Մանուկը հպուել են միմեանց եւ հայեացքներն ուղղել առաջ: Պատկերաքանդակն աչքի է ընկնում ծաւալային-ընդհանրական մշակումներով եւ արտայայտիչ դիմագծերով:

Վաղ միջնադարից մեզ հասած համանուն պատկերաքանդակի եւս մէկ օրինակ պահպանուել է Թալինի քառանիստ կոթողներից մէկի խարսխին (ՃԿ. 3), այն երիզուած է ուղղանկիւն եզրագօտիով, որի կենտրոնում Տիրամայրն ու Մանուկն են՝ վերոնշեալ պատկերագրութեամբ, իսկ նրանցից աջ եւ ձախ երկու հրեշտակների քանդակային պատկերներ են: Ի հակադրութիւն նախորդ օրինակի՝ այստեղ քանդակագործ վարպետն առաւել մեծ ուշադրութիւն է դարձրել կերպարների կառուցողական համաչափութեանը, ամենայն մանրամասնութեամբ մշակել հագուստները՝ յատուկ շեշտելով ծալագարդերը: Խօսելով հանդադատանքի նախօրինակ պատկերաքանդակներից՝ պէտք է յաւելենք, որ այս նմուշներում դեռևս արտայայտուած չէ խնդրոյ առարկայ պատկերագրութիւնն իր բոլոր մանրամասներով, քանի որ այստեղ մասամբ պահպանուել են նաեւ Օդիգիդրիայի պատկերագրութեան որոշ առանձնայատկութիւններ¹³: Արուեստաբան Լ. Ազարեանն այն համարում է նստած Օդիգիդրիայի պատկերագրական մի տարբերակ¹⁴, սակայն մեր կարծիքով, այս քանդակային յօրինուածքն առաւել մօտ է հանդադատանքի պատկերագրութեանը, քանի որ այստեղ Տիրամօր ձեռքը Մանկան ազդրին է եւ գլխի հատուածով նրանք հպուած են միմեանց, ինչպէս որ հանդադատանքի դէպքում է:

Արուեստաբան Հր. Յակոբեանը նոյնպէս բովանդակային ընդհանրութիւններ է գտնում Օդիգիդրիայ եւ հանդադատանք պատկերագրական տարբերակների միջեւ՝ համարելով, որ երկուսն էլ մարմնաւորում են «էլեուսի» գաղափարը, այսինքն՝ գթասրտութիւնը, ողորմածութիւնը եւ բարեկամութիւնը¹⁵: Գուցէ վաղ-միջնադարեան արուեստում Օդիգիդրիայ եւ հանդադատանք տարբերակները չունէին պատկերագրական ակնյայտ տարանջատումներ, սակայն արդէն զարգացած միջնադարում հանդադատանքի պատկերագրութիւնը, կարող ենք ասել, որ հասնում է իր վերջնական զարգացմանն ու ձեւաւորմանը՝ իբրեւ առանձին պատկերագրական տարբերակ:

Հայ ձեռագրարուեստում հանդադատանքի վաղագոյն օրինակները հանդիպում են կիլիկեան մանրանկարներում, որոնցից է 1295 թ. Աստուածաշունչը (գրիչ եւ ծաղկող՝ Ստեփանոս, ՄՄ ձեռ. 180, 279ա) (ՃԿ. 4): Այս ձեռագրին անդրադարձել են

¹¹ Կ. Ղաֆադարեան, Դուինի փաղաք եւ նրա պեղումները, հ. II, Երեւան, 1982, էջ 53:

¹² Այսպիսի եզրագօտիներ հանդիպում են նաեւ խաչաւերի վաղագոյն օրինակներում, ինչպիսիք են Թալինի խաչաւերը, Մաքենեաց վանքի խաչաւեր եւ այլն:

¹³ Օդիգիդրիան համարում է «Տիրամայրը Մանուկ Յիսուսը գրկին» պատկերագրութեան վաղագոյն օրինակը, այն յունարէնից թարգմանաբար նշանակում է հանապարհ ցոյց տուող (Ю. Бодров, Основы иконографии, էջ 190), որի համաձայն՝ Տիրամայրն այս պատկերագրական տարբերակում պարտադիր ներկայացում է ձեռքն ուղղած դէպի Մանուկը:

¹⁴ Լ. Ազարեան, Վաղ-միջնադարեան հայկական փանդակը, Երեւան, 1975, էջ 95:

¹⁵ Հր. Յակոբեան, Հայոց տէրունական սրբապատկերներ, Երեւան, 2003, էջ 26:

արուեստաբաններ Լ. Ազարեան¹⁶ ու Ք. Աւետիսեան¹⁷: Հստ Լ. Ազարեանի՝ այն կերպով է գոթական արուեստի ազդեցությունը, որը, համեմատաբար, աւելի պարզ է արտայայտուել ԺԳ. դ. կիլիկեան ձեռագրերում: Այնուհետեւ, յաջորդ օրինակները վկայուած են 1307-1331 թթ. Աւետարանում (Նորավանք, գրիչ՝ Մոմիկ, Պողոս, Յովհաննէս, ծաղկող՝ Թորոս, Յելի համալսարան, Arm. 3, էջ 153ա¹⁸) (ՃԿ. 5), 1317 թ. Ժողովածոյում (Գլաձոր, գրիչ՝ Կարապետ, ծաղկող՝ Թորոս, ՄՄ ձեռ. 6897, 2ա), 1375 թ. Աստուածաշնչում (Բջնի, գրիչ՝ Յովհաննէս, ծաղկող՝ Մելիքսեդեկ, Վիեննայ, Մխիթարեան միաբանութեան մատենադարան, ձեռ. 55), ԺԳ-ԺԴ. դդ. Աւետարանում (Արցախ, գրիչ, ծաղկող եւ կազմող՝ Ովանէս, ՄՄ ձեռ. 4820, 160ա)¹⁹ (ՃԿ. 6):

Ինչպէս նկատեցինք, հայ մանրանկարչութեան մէջ Խանդավատանքը պատկերող օրինակների մեծ մասը հեղինակել է ԺԴ. դարի նշանաւոր ծաղկող, Գլաձորի մանրանկարչական դպրոցի ներկայացուցիչ Թորոս Տարոնացին: Ինչպէս գրում է արուեստաբան Լ. Դուռնովոն, Թորոս Տարոնացին իր մանրանկարչական գործունէութեան սկզբներին եղել է Կիլիկիայում եւ, հաւանաբար, այնտեղից փոխառել ձեռագրերը շքեղ ու ճաշակով նկարազարդելու արուեստը: Նաեւ հաւանական է, որ նա տեղում ծանօթացել է լատինական եւ արեւմտա-եւրոպական ձեռագրերին, քանի որ դրանց ազդեցութիւնն ակնյայտ է 1318 թ. Աստուածաշնչի նկարազարդումներում²⁰ (ՄՄ ձեռ. 206): Հաւանաբար, նշուած ձեռագրերում էլ նա հանդիպել է Խանդավատանքը պատկերող մանրանկարների, որոնք գրաւել են յայտնի ծաղկողի ուշադրութիւնը: Սակայն այս պատկերազրական տարբերակը Թորոս Տարոնացու կողմից մի շարք փոփոխութիւններ է կրել: Ի տարբերութիւն բիզանդական եւ արեւմտա-եւրոպական օրինակների, Տարոնացու մանրանկարներում Աստուածամայրը պատկերւում է ականակուռ գահին հանդիսաւոր բազմած, թագակիր, մարգարտազարդ հանդերձանքով, ձեռքերի խորհրդանշական շարժումներով եւ դէմքի ոգեշնչուած արտայայտութեամբ²¹:

Այսպիսով, ինչպէս նկատեցինք, Թորոս Տարոնացու շնորհիւ Խանդավատանքը պատկերազրական տարբերակը մուտք է գործում Գլաձորի մանրանկարչական դպրոց եւ յետագայում տարածում գտնում նաեւ տեղի քարգործ վարպետների ու նկարիչների կողմից, ինչի վառ վկայութիւնն են Վայոց ձորի եկեղեցիների յարգարանքում հանդիպող Տիրամօր ու Մանկան համանուն պատկերները:

Վայոց ձորի քանդակային արուեստի բացառիկ օրինակներից է Սպիտակաւոր Ս. Աստուածածին եկեղեցու մուտքի բարաւորի պատկերաքանդակը (ՃԿ. 7), որտեղ լաւագոյնս դրսեւորուել է Խանդավատանքին բնորոշ յուզական կողմը՝ մօր եւ Մանկան փոխադարձ սէրն ու գորովանքը: Յաւելնք նաեւ, որ Տիրամայրն ու Մանուկը, ի տարբերութիւն նախորդ օրինակների, այստեղ պատկերուած են լուսապսակով: Քանդակագործը յատուկ նրբութեամբ է մշակել հագուստների ծալազարդերը, Աստուածամօր ու Մանկան կերպարները՝ հաղորդելով նրանց մեղմութիւն ու քնքշութիւն, որը առաւել քան բնորոշ է այս պատկերազրութեանը:

Յիշեալ պատկերաքանդակին հանգամանօրէն անդրադարձել է Գարեգին Յովսէփեանը՝ նշելով, որ այն պատկերազրական ընդհանուրութիւններ ունի Օդիզիդրիայի

¹⁶ Լ. Ազարեան, Կիլիկեան մանրանկարչութիւն, Երեւան, 1964, էջ 37, 82, 105:

¹⁷ Ք. Աւետիսեան, Աստուածամոր պատկերագրութիւնը հայ միջնադարեան արուեստում, Երեւան, 2015, էջ 129-130:

¹⁸ Կ. Մաթևոսեան, Նորավանքի վիմագրերը եւ յիշատակարանները, Երեւան, 2017, էջ 211:

¹⁹ Ք. Աւետիսեան, Աստուածամոր պատկերագրութիւնը հայ միջնադարեան արուեստում, էջ 128:

²⁰ Л. Дурново, Очерки изобразительного искусства средневековой Армении, Москва, 1979, էջ 270:

²¹ Ք. Աւետիսեան, Աստուածամօր պատկերները Թորոս Տարոնացու նկարազարդած ձեռագրերում, «Էջմիածին», 2006, Երեւան, էջ 58:

հետ, բայց եւ այնպէս կան նաեւ տարբերութիւններ, որոնցից ուշագրութեան են արժանի Մանկան կանգնած դիրքը, մօր գլխի թեքումը դէպի Մանուկը, որը մօտ է խանդաղատանքի պատկերագրութեանը²²:

Վերոնշեալ յատկանիշներով է առանձնանում նաեւ Եղվարդի՝ ԺԴ. դարի առաջին քառորդով թուագրուող Ս. Աստուածածին երկյարկ եկեղեցու արեւմտեան պատի՝ մօր ու Մանկան համանուն պատկերագրութիւնը ներկայացնող պատկերաքանդակը (ճկ. 8), որի հեղինակը Շահիկ վարդապետն է: Այստեղ կերպարների դիմային մշակումներն ընդգծուած են, հանդերձանքը բաւական ծաւալուն է եւ հարուստ ծալազարդերով: Մանուկ Յիսուսն աջն օրհնող շարժումով պարզել է դէպի Տիրամայրը, իսկ ձախով պահել է թղթագալարը: Նշենք, որ վերոբերեալ բոլոր օրինակներում Յիսուսը պատկերւում է մերկ ոտքերով, որը, ըստ Հր. Յակոբեանի, ընկալուած է որպէս նրա խոնարհութեան եւ հնազանդութեան արտայայտութիւն, ապագայ փրկչարար ինքնազոհաբերման խորհրդանիշ²³:

Նախիջեւանի յուշարձանների քանդակային արուեստում եւս հանդիպում ենք խանդաղատանքը ներկայացնող օրինակների, որոնք, ցաւօք, այսօր չեն պահպանուել: Նշուած պատկերաքանդակներից մէկն ագուցուած է եղել Նորաշէնի Ս. Աստուածածին եկեղեցու որմին (ճկ. 9): Նախիջեւանագէտ Ա. Այվազեանը, հիմք ընդունելով եկեղեցու որմերին առկայ վիմական արձանագրութիւնների ժամանակը, այն թուագրել է 951 թուականով, մինչդեռ ԺԶ.-ԺԷ. դդ. ընթացքում եկեղեցին քանիցս նորոգուել է²⁴ եւ հաւանական է, որ յիշեալ նորոգչական աշխատանքների ընթացքում էլ կերտուել է մեզ հետաքրքրող որմնաքանդակը: Վերջինս արտայայտուած է սլաքաձեւ կամարի ներքոյ, ուր Տիրամայրն ու Մանուկը ներկայացուած են խանդաղատանք պատկերագրութեամբ: Քանդակագործն այստեղ հարազատ է մնացել պատկերագրական սկզբունքներին եւ յօրինուածքն ստեղծելիս՝ պահպանել է խանդաղատանքին բնորոշ բոլոր մանրամասները:

Նախիջեւանի տարածքից խանդաղատանքի պատկերագրութեամբ բաւականին ուշագրաւ մի որմնաքանդակ էլ յայտնի է Շոռոթի Ս. Յակոբ գմբէթաւոր եկեղեցուց (ԺԷ. դարի կէսեր) (ճկ. 10)²⁵: Մեզ հետաքրքրող պատկերաքանդակը մանրամասն նկարագրել է Ա. Այվազեանը²⁶. յօրինուածքի հիմնական մասը զբաղեցնում է Տիրամօր ու Մանկան քանդակային պատկերը, որտեղ նրանք ներկայացուած են խանդաղատանք պատկերագրութեամբ, սակայն, ցաւօք, կերպարների դէմքերը գրեթէ ամբողջութեամբ եղծուած են եւ անկարելի է ենթադրել, թէ հոգեյուզական ինչ արտայայտութեամբ է քանդակագործը ներկայացրել մօրն ու Մանկան:

Արտաւանի եկեղեցու բարաւորի պատկերաքանդակը

Դառնանք Արտաւանի եկեղեցու մուտքի բարաւորի պատկերաքանդակին. այն ներկայացուած է բարաւորի կամարակապ խորշի կենտրոնում, որն էլ իր հերթին երիզուած է վերին հատուածում սլաքաձեւ վերջաւորութեամբ շրջանակով: Խորշի կամարը յարդարուած է ոլորահիւս զարդագօտիով, որի աջ եւ ձախ անկիւններում փետրաւոր թեւերով եւ ընդգծուած գլխի հատուածով հրեշտակների պատկերներ են: Սլաքաձեւ

²² Գ. Յովսէփեան, Խաղրակեանք կամ Պոռեանք հայոց պատմութեան մէջ, մասն առաջին, Վաղարշապատ, 1928, էջ 217:

²³ Հր. Յակոբեան, Հայոց տէրունական սրբապատկերներ, էջ 63:

²⁴ Ա. Այվազեան, Նախիջեւանի կոթողային յուշարձաններն ու պատկերաքանդակները, Երեւան, 1987, էջ 74:

²⁵ Նոյն տեղում, էջ 66-67:

²⁶ Նոյն տեղում, էջ 67:

եզրագօտու կենտրոնում՝ քարի հարթ մակերեսին, ներկայացուած են Տիրամայրն ու Մանուկը՝ Խանդավառաճառ պատկերագրութեամբ: Այստեղ քանդակագործը Տիրամօրը ներկայացրել է գահին բազմած՝ մարմնի երեք քառորդ դիրքով, գլուխը փոքրինչ խոնարհած դէպի Մանուկ Յիսուսը եւ հայեացքն ուղղած դիտողին: Տիրամօր կերպարը հեռու է պատկերման դասական տարբերակից, որը ե՛ւ եթերային է, ե՛ւ աստուածաշնորհ, այստեղ առաւել նկատելի է աշխարհիկ կնոջ կերպարին բնորոշ պարզութիւն, որը, մեր կարծիքով, պէտք է կապել տեղի աւանդոյթների հետ, քանի որ, ինչպէս վերը նշեցինք, Վայոց ձորի տարածքում գործած վարպետները, սովորաբար, իրենց ստեղծագործութիւններէն ներմուծում առօրեայ կեանքից դրուագներ, որն ակնառու է նաեւ այս պատկերաքանդակում: Բացի այդ, այստեղ նկատելի են նաեւ պատկերագրական որոշ անճշտութիւններ, որը, հաւանաբար, քանդակագործի անհատական մտածողութեան արդիւնք է: Այսպէս, Խանդավառաճառի դէպքում Տիրամայրն ու Մանուկը պատկերուած են հայեացքներն ուղղած միմեանց՝ արտայայտելով իրենց լուռ զրոյցը, ըստ որի՝ առաջինը հայցում է գթասրտութիւն մարդկութեան համար, իսկ երկրորդը՝ դրականօրէն արձագանքում այդ աղերսին: Ուսումնասիրուող պատկերաքանդակում Տիրամայրն ու Մանուկը հայեացքներն ուղղել են դէպի դիտողը եւ միեւնոյն ժամանակ ջերմօրէն հպուել միմեանց: Այստեղ ուշագրաւ է նաեւ Մանկան դիրքը, որը ոչ թէ նստած է Տիրամօր ձեռքին, այլ ներկայացուած է ոտքերի բարդ դիրքով, կարծես խաղալիս լինի, իսկ մայրը երկու ձեռքով պահել է նրան գօտկատեղից: Մանկան՝ կեանքով լեցուն, ամբողջ մարմնով շարժման մէջ գտնուող կերպարը առաւել բնորոշ է «Խաղացող Մանուկ» տիպին, որը համարուած է Խանդավառաճառի պատկերագրական տարբերակներից մէկը²⁷: Սակայն «Խաղացող Մանուկ» տարբերակում Յիսուսը հիմնականում պատկերուած է գլուխը հետ շրջած եւ այդ դիրքով հպուած մօր այտին²⁸:

Խնդրոյ առարկայ պատկերաքանդակում, Տիրամայրը նստած է գահաթոռին (Տիրամօր թիկունքում՝ ուսից մինչեւ շրջանակի եզրը, նկատելի է գահաթոռի կողային հատուած յիշեցնող մանրամասն) եւ միեւնոյն ժամանակ երկու ձեռքով գօտկատեղից պահել է Մանկանը, որն այդ պահին փարուել է մօր պարանոցին եւ ազատ թափահարում է ոտքերը:

Հարթաքանդակային մշակումներում ակնառու են ձեւերի ընդհանրական լուծումներ, առաջին հայեացքից նկատելի են Տիրամօր դիմագծերը, արտայայտիչ այտոսկրեր, փոքր-ինչ ներս ընկած այտեր, ընդգծուած յօնքերի ներքոյ նշաձեւ աչքեր: Առհասարակ, բոլոր ժամանակների արուեստի գործիչները Տիրամօրը պատկերել են գեղեցկութեան կատարելութեամբ՝ պահելով ընդունուած համաչափութիւնները՝ զուգահեռ հաղորդելով իր կերպարին բնորոշ մեղմութիւն եւ յուզականութիւն: Սակայն այստեղ, ինչպէս վերը նշեցինք, Տիրամօր դիմագծերն առաւել մօտ են աշխարհիկ կնոջ կերպարի, որը, թերեւս, բխել է քարգործ վարպետի երեւակայութիւնից կամ աչքի առաջ ունենալով կատարեալ կնոջ կերպար՝ այն նախատիպ է դարձրել Տիրամօր պատկերը կերտելիս:

Արտաւանի պատկերաքանդակում Մանուկ Յիսուսը ներկայացուած է մերկ, քանդակագործը նրան առանձնացրել է ընդհանուր միջավայրից՝ յստակ տարանջատելով մարմնի ուրուագծերը, ինչը չենք կարող ասել Տիրամօր դէպքում: Վերջինիս կերպարը մասամբ ձուլուել է քարի հարթ մակերեսի հետ, միայն նկատելիօրէն ընդգծուած են ձեռքերը, որոնք ամուր պահել են Մանկանը, իսկ ձախ բազկին նշմարուած են հագու-

²⁷ В. Лазарев, Византийская живопись, էջ 291:


²⁸ Նոյն տեղում:

տի ծալազարդերը, որոնք մնացեալ հատուածներում աննկատ են:

Եզրակացութիւն

Այսպիսով, ամբողջացնելով խնդրոյ առարկայ պատկերաքանդակի ուսումնասիրութիւնը, կարող ենք հաւաստել, որ այն, որպէս ուշ-միջնադարեան քանդակային արուեստի նմոյշ, բացառիկ է իր տեսակում, քանի որ այստեղ միահիւստում են քրիստոնէական կանոնիկ պատկերագրութիւնն ու միջնադարեան մարդու մտածողութեան արգասիքները՝ Տիրամօրն ու Մանկանը ներկայացնելով նոր լոյսի ներքոյ:

Լուսանկարներ



Նկ. 1ա, բ. Արտաանի եկեղեցու բարատրի պատկերաքանդակը,
(լսնկ.՝ Յ. Մելիքեանի, գրչանկ.՝ ճեղինակի)



Նկ. 2 Քառանիստ կոթողի խոյակ, Դուին, Զ-Է. դդ., լսնկ.
<http://www.armenianart.org> կայքից




Նկ. 3 Քառանիստ կոթողի խարխախ, Թալին, լսնկ.՝ Կ. Մաթևոսեանի, 2010 թ.



Նկ. 4 Աստուածաշունչ, 1295 թ., ՄՄ ձեռ.
 180, էջ 279 ա




Նկ. 5 Աւետարան, 1307-1331 թ., Յելի
 համալսարան, Arm. 3, էջ 153ա



Նկ. 6 Աւետարանի անուանաթերթ, ԺԳ-ԺԴ.
դդ. ՄՄ ձեռ. 4820, էջ 160ա



Նկ. 7 Սպիտակաուր Ս. Աստուածածին եկեղեցու մուտքի
բարաւորի պատկերաքանդակը,
լսնկ.՝ <https://hushardzan.am/> կայքից



Նկ. 8 Եղուարդի երկյարկ
եկեղեցու արեւմտեան պատի
պատկերաքանդակը,
լսնկ.՝ Ա. Յարութիւնեանի, 2020 թ.



212 Նորաշեն — Աստվածամոր բարձրաքանդակը

Նկ. 9 Նորաշենի Ս. Աստուածածին եկեղեցու պատկերաքանդակը



Նկ. 10 Շողոթի Ս. Յակոբ եկեղեցու պատկերաքանդակը

ԱՇԽԷՆ ԵՆՈՔԵԱՆ

*Արուեստաբանության մագիստրոս, ՀՀ ԳԱԱ
Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ*



ՔԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ**ՀԱՅՐ ՄԵՐ ՈՐ ՅԵՐԿԻՆՍ**

Ո՛վ Հայր մեր, Հայր որ ես յերկին,
սուրբ եղիցի անուն քոյին,
եկեսցէ մեզ. Աստուած հօր,
արքայութիւն քո երկնաւոր,
եղիցին կամք քո խընկելի.
որպէս յերկինս և ա՛նդ յերկրի:

Ըզհաց հոգւոյն մեր և մարմնոյ,
տո՛ւր և այսօր շնորհիւ քո,
եւ թո՛ղ մեզ զմեր պարտքս,
որպէս և մեք թողումք յաստիս,
ամենեցուն որ մեզ մեղան,
կամ մնացին մեզ պարտապան:

Մի թողուր զմեզ ի փորձութիւն,
այլ հանապազ հաս յօգնութիւն
եւ յամենայն շարին մըրցմանց,
փըրկեա՛ ըզմեզ Տէր գըթութեանց.
զի քո է միշտ արքայութիւն,
քո փառք պատիւ եւ զօրութիւն:

ԽՈՐԷՆ ԵՊ. ՆԱՐԴԷՅ

Սբ. Թէոդորոս Ձեռագրատուն, Երզարան,
Ձեռ. թիւ 2904, 1887 թ., էջ 3-4:



ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՎՏԱՐԱՆԴԻՆ
ԱՌ՝ ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ազատ Մասեաց դուստր, ընդէ՞ր
դէմքըդ մենէ ես ծածկեր,
վտարանդի հայերու
սիրտի յոյժ՝ յո՛յժ են կարօտցեր,
աչքով զքեզ տեսնելու
հոգւով ի քեզ փարելու:

Ի զուր դրացին մեր ոսոխ
կարծեց առնուլ իւր շար ոխ,
երբոր օտար երկրի մէջ
ջանաց առնել ոտնակոխ
քու փառքդ որ 'ի մեզ անվերջ,
քու սէրդ որ 'ի մեզ անշէջ:

Այո՛, քաղաքք մեր աճիւն,
դաշտք մեր յարիւն թաթաւիւն
բայց ոսոխին ի՞նչ օգուտ,
քանի հայ սիրտըն զգայուն.
պահէ զանունդ անկորուստ,
թէ չքաւոր, թէ հարուստ:

Այլ աւա՛ղ որ ցարդ իսկ կան
շատ Վասակք ազգակործան,
կան ալ արի Վարդաններ
անզէն բայց ո՛չ անարժան:
քու քաղցր անուանց պաշտպաններ,
քու Հօրդ Հայկայ որդիներ:

Արդ հայրենեացդ իմ ոգի,
խընդրեմ քեզնէ որ քանի
դու նետահար թափառիս՝
մի զայն որ անհոգ նայի
հայու որդի համարիս,
քեզ բարեկամ զարկանիս:

Ո՛չ Հայկ հայոց որդւոց հայր,
Եւ Հայաստանդ հայու մայր.
արդ՝ թէ ծընօղքս են անմահ,
ապա մեծ է ո՞ւր այն այր:
որոյ հոգւոյն մէջ անուն
չի բազմիս դու իբր 'ի քուն:

Թէ մոռնա՞մ ամպեր կուտակեր
 Եւ լոյս երեսդ են ծածկեր,
 Բայց մեր աչք դեռ կը զմայլի,
 որչափ և թանձր ալ է ստուեր՝
 գեղովդ, ոգի փարելի,
 սիրովդ, երկիր հայրենի:

Մէկ ժրպիտէդ բիւր շուշան
 չէ՞ որ դաշտք մեր ըզգեցան,
 եւ մէկ կաթիլ արցունքէդ՝
 անկան, բարձան, քանդեցան
 անթիւ անսուրբ ատրուշան
 անթիւ արիք Սասունեան:

Մօրդ Հայոց կաթն էր արիւն,
 որդիքդ, առիւծոց կորիւն.
 եւ ո՛չ երբեք զուտ ըստրուկ՝
 պատրեալք յոսկի կարմրագոյն,
 կամ ապիրատ բիրտ գեղջուկ,
 գոն՝ թէ ունին միշտ շիճուկ:

Միթէ հայկայ սերունդին
 ա՛յնչափ զատեր է հոգին՝
 մինչեւ չըզգան, չիմանան
 թէ քո վըշտացդ տեղին
 անդ է՝ ուր է Հայաստան,
 ուր փառքդ և շէնքդ են կործան:

Ո՛հ, Հայաստան, Հայաստան,
 դեռ աչքս ըզքեզ չտեսած
 որ օտարի տունն եմ հիւր,
 բայց թէ կանգուն թէ կործան՝
 հողդ ինձ քաղցր է, Հայաստան,
 օդդ ինձ սուրբ է, Հայաստան:

Զիա՛րդ քաղաքք քո անկան...
 բայց կրօնքդ՝ ու անունդ կան մընան.
 և քանի խաչն է կանգուն՝
 մի՛ վհատիր, չե՛ս կործան,
 հոգւոյս հատորըդ Հայաստան,
 սիրոյս իմ մայրդ Հայաստան:

Յ. ՈՍԿԱՆ

Սբ. Թէոդորոս Ձեռագրատուն, Երզարան,

Ձեռ. թիւ 2904, 1887 թ., էջ 7-10:

ՔԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ**ԼՈՅՍ**

Ամենից առաջ լոյսն ստեղծեցիր,
 Լոյսը պերճափայլ եւ լոյսը զուարթ,
 Լուսատուների լոյսը անդորրիչ
 Եւ հալածիչը թանձր խաւարի:

Արարի՛չ Լուսոյ, Տէ՛ր իմ երկնաւոր,
 Թող մեր սրտերից լոյսդ չմարի,
 Ողորմի՛ր Դու միշտ աշխարհը համայն
 Լուսով Քո բարի եւ միշտ տենչալի:

Մայրս մաքրափայլ քո լոյսից վառեց
 Մեր հինաւուրց տան լոյսը ճրագի.
 Թող պլպլայ, անսպառ մնայ
 Մեր ջինջ հաւատի ձէթովն անարատ:

Լուսազարդ սրտով փառաբանում ենք
 Երկնառաք լոյսը մեզ շնորհողին,
 Եւ օրհնանքը մեր բաշխում ենք անվերջ
 Մեր տան ճրագն էլ միշտ վառ պահողին:

ՅԱԿՈԲ ԱՐՔ. ԳԼՆՃԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ**ՕՐԵՐ****Շ. Ռ. ՊԵՐԱԿԵՐԵԱՆԻՆ**

Օրերն անդարձ, խոստըմնադրուժ ճամբորդներ են,
Որոնք նըման տէրվիշներու՝ բոկոտ, անձայն,
Ժամանակի անծայր ճամբէն կ'անցնին, կ'երթան:

Ձեռքերուն մէջն իրենց ունին թագ ու աստղեր,
Եւ շըրթներուն՝ խմաստութիւն, վիշտ ու ծիծաղ,
Մեծ իղձերու անոնք աներգ մեռելաթաղ:

Ոչինչ մընաց: Անցեալի դուռն է յաւէտ փակ:
Եւ մանկութիւնս հեռու պարտէզ կախարդական...
Մեկնող օրեր խաբեցին զիս, ու ետ չեկան:

Բայց կը սպասեմ ես տակաւին իրենց ճամբուն,
Ընդունելի խոստումն անոյշ որ կ'ուշանայ,
Մինչ երկինքը կ'ըլլայ օրուան դագաղն անհուն:

ԵՂԻՎԱՐԴ**1941**

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ**ԻՐԻԿՈՒԱՆ ԱՂՕԹՔ**

Այս ծառերուն տակ, ուր հոգիս
 Ծնրադրութեան կը տանի զիս,
 Ամէն իրիկուն, երկինք մ'անհուն,
 Անոնց կանաչ կատարներուն

Կ'իջնէ վերէն աստղածորան,
 Աղօթակերտ իբրեւ խորան,
 Որուն առջեւ ես լըռամած՝
 Զերթ խուզարկու մը երկնայած,

Աստղերէն վեր, պայծառ, անամպ,
 Քեզ կ'որոնեմ հանդարտութեամբ,
 Մինչ Դուն՝ առ մեզ իջեւանիլ
 Բարձունքներէդ վար կու գաս բիլ:

Հուսախորհուրդ գիշերներուդ,
 Աստղահիւս, պայծառ ու լուրթ,
 Ու ծառերուն երկնանրէր,
 Պաշտող քուրմը ըրէ զիս, Տէ՛ր,

Եւ տո՛ւր ինծի, որ վեհագոյն
 Աղօթական սուրբի մ'հանգոյն,
 Վերընծայեմ Քեզ պատարագ,
 Սիրտըս այդ ջինջ կապոյտին տակ:

ՀՄԱՅԵԱԿ ԳՐԱՆԵԱՆ

(Զամ-Թաղ, 25 Մայիս, 1908)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆ ԵՒ ՖԵԴԵՐԱԿԱՆ ԳԱՐՍԻԱ ԼՈՐԿԱ**

Համօ Սահեանի բուռն ու ստեղծարար գրական գործունեության մէջ կայ մի բնագաւառ, որ առաջին հայեացքից, կարծես թէ, այնքան էլ չի բնութագրում նրան, բայց հարցին ըստ էության մօտենալու դէպքում ի յայտ է գալիս Սահեանի նախասիրութիւնների մի ծանրակշիռ կողմը: Սահեանի թարգմանութիւնները՝ թէ՛ խօսքը մի լեզուից միւս լեզուով վերափոխելու սկզբունքներով, թէ՛ թարգմանուող նիւթի հոգեհարազատութեամբ, թէ՛ քանակով, թէ՛ որակով ու բազմազանութեամբ, արժանի են ուշադրութեան եւ գալիս են, որ իւրովի ներկայացնեն սահեանական աշխարհը:

Համօ Սահեանը թարգմանութեան ոլորտում ունի այնպիսի ստուարածաւալ աշխատանքներ, որոնք թարգմանչական գրականութեան ձեռքբերումներից են: «Հ. Սահեանը,- գրում է Դ. Գասպարեանը,- թարգմանութիւններ է արել ատրպէյճանական, բելառուսական, թուրքմէնական, էստոնական, իսպանական, պարսկական, ռուսական, վրացական, ուկրաինական, ֆրանսիական գրականութիւնից, Ասիայի եւ Աֆրիկայի բանաստեղծներից: Դրանց մեծ մասը լոյս է տեսել ինքնուրոյն ժողովածուներում, իսկ մի մասը՝ առանձին գրքերում: Այս բնագաւառին եւս Սահեանը կարեւորութիւն է տուել: Այսինքն՝ նա ստեղծագործական կապի մէջ էր թարգմանուող նիւթի հետ, եւ պատահական չէ որ ցանկանում էր հրատարակել իր թարգմանութիւնների մի առանձին ժողովածոյ»¹:

Գրողների համար թարգմանութիւնը կարող է դառնալ ստեղծագործութեան մի մաս: Համօ Սահեանը «Պոեզիան կ'օգնի մարդուն յօդուածում» խօսելով թարգմանութիւնների դերի մասին՝ նշել է. «Պարոյր Սեւակն ասում էր, թարգմանում եմ այն բանաստեղծութիւնները, որոնք ես պէտք է գրած լինէի, բայց ինձ նրանց հեղինակները կանխել են: Սեւակը ճիշդ էր այն առումով, որ սովորաբար թարգմանում ես քեզ մօտիկ ու հարազատ բանաստեղծներին: Թարգմանութիւնները դառնում են քո ստեղծագործութեան մի մասը: Եւ եթէ դու թարգմանում ես ասէնք, ռուս կամ իսպանացի բանաստեղծներին, եւ նրանք քո թարգմանութեան մէջ դառնում են մի քիչ հայ, նշանակում է դու՝ թարգմանիչդ էլ, դառնում ես մի քիչ ռուս, մի քիչ իսպանացի»²:

Համօ Սահեանը թարգմանել է Ալեքսանդր Պուշկինի, Սերգէյ Եսենինի, Արսէնի Տարկովսկու, Գարսիա Լորկայի եւ այլ բանաստեղծների գործերից: Ունի նաեւ նախասիրած օտար հեղինակներ:

«Ռուսներից նրան աւելի հոգեհարազատ է Սերգէյ Եսենինը: Մէկից աւելի անգամ Սահեանն այն միտքն է յայտնել, որ պոեզիայի ճանապարհը իրեն յուշել է Յովհ. Թումանեանը, իսկ բանալին տուել է Եսենինը: Հաւանաբար նա նկատի ունի նաեւ հայրենի գիւղից օտարանալու ողբերգութիւնը. «Երանի էր քեզ» բանաստեղծութեան մէջ նա նախանձում է Եսենինին, որ ընդամէնը մի քանի տարի առաջ էր հեռացել հայրական տնից, իսկ ինքը՝ շատ աւելի վաղուց: Բնորոշ է, որ Համօ Սահեանը թարգմանել է Եսենինին:

¹ Գասպարեան Դ., Համօ Սահեան: Կեանքը եւ ստեղծագործութիւնը, Երեւան, «Զանգակ-97», 2003, էջ 24:

² Սահեան Հ., Գրչի, խօսքի, խղճի կշիռը, Երեւան, «Ոսկան Երեւանցի», 2003, էջ 168:

Թարգմանութիւնը նոյնպէս աւանդները կամրջելու միջոց է: Եւրոպացի բանաստեղծներից Սահեանը թարգմանել է Ֆեդերիկո Գարսիա Լորկային: «Մեղրի երգը» վերնագրով ժողովածուն, որ լոյս է տեսել 1965 թ., դարձաւ իսպանացի բանաստեղծի հայերէն առաջին գիրքը: Նրան Սահեանը նաեւ նուիրել է առանձին բանաստեղծութիւն («Գարսիա Լորկա»), իսկ մի հարցազրոյցում խոստովանել է, որ Պաստեռնակի համեմատ նախընտրում է Լորկայի պոեզիան»³:

Նա մեծ էր, այո,
 Բոլոր մեծերին մերձ ու մերձաւոր,
 Դրա համար չեղաւ մեծաւոր,
 Աչքի փուշն եղաւ մեծաւորների:
 Եւ որովհետեւ
 Մեծաւորների աչքի փուշն եղաւ,
 Աչքի լոյսն եղաւ մերձաւորների:
 Մեծ էր եւ գիտէր, որ մեծապատիւ
 Մեծաւորները չեն ներում մեծին,
 Եւ մինչեւ անգամ
 Մահից յետոյ էլ չեն ներում մեծին,
 Այլ մեծանում են՝ մեծաւորական
 Պաշտանութիւնը պահելու համար
 Եւ նամանաւանդ հանգուցեալ մեծի
 Մերձաւորներին շահելու համար...
 Այսպէս է, աւաղ, քիչ է պարտահում
 Մեծաւորը՝ մեծ, մեծը՝ մեծաւոր...
 Մեծաւորները աշխարհից շահում,
 Մեծերն ապրում են աշխարհի շահով,
 Ցաւով աշխարհի:
 Դրա համար էլ մեծաւորների
 Շահին են բախում:
 Դրա համար էլ մահին են բախում:
 Դրա համար էլ (պարզ է ու մէկին)
 Մեծաւորները չեն ներում մեծին: (Հպ. 2, էջ 264)

Լորկային նուիրուած բանաստեղծութիւնից պարզ է դառնում, որ Սահեանը ծանօթ էր Ֆեդերիկո Գարսիա Լորկայի կեանքին ու ստեղծագործական աշխարհին, որովհետեւ Լորկան անձնական ու ստեղծագործական աշխարհում բազմաթիւ խնդիրների էր բախուել, եւ այդ ամէնը կարելոր դեր էր կատարել նրա ստեղծագործական աշխարհի ձեւաւորման գործում: Երկու գրողներ էլ անշափ զգայուն էին եւ անմիջապէս իրենց պոեզիայով անդրադառնում էին ժամանակի իրադարձութիւններին:

Թէ՛ Լորկայի, եւ թէ՛ Սահեանի բանաստեղծական ֆենոմենը խարսխուած է անձնաւորուած բնութեան ու մարդու փոխ-յարաբերութիւնների եւ փոխ-հարստացման վրայ:

³ Գրիգորեան Ս., Համօ Սահեան (Դասախօսութիւն), Տե՛ս http://ysu.am/files/Hamo_Sahyan_dasakhosutyun.pdf, էջ 5-6:

«Ես,- գրել է Սահեանը,- Լորկայի բանաստեղծությունները կարդալիս ընկնում էի հայերէնի այն ոլորտները, ուր ինձ ազատ էի զգում, հետեւաբար ես Լորկա չէի թարգմանում, ես ինձ էի թարգմանում»⁴:

Լորկայի գործերը թարգմանելու համար Սահեանը զգում էր թեմատիկ ընդհանրություններ: Լորկան «Մեղրի երգը» ժողովածոյի գործերում հիմնական ու խորհրդանշական կերպար էր ընտրել բնությունն ու բնութեան երեւոյթները: Ե՛ւ Լորկան, ե՛ւ Սահեանը իրենց ստեղծագործություններում կենդանացնում-շնչաւորում են բնութիւնը ու տալիս մարդկային կերպարանք: Առաջին հայեացքից բնութեան երեւոյթների առկայությունն ու յաճախ մարդկային յոյզներն ու ապրումները բնութեանը վերագրելը կարող է խօսել գրողների ինչ-որ թեմատիկ նմանութեան մասին, բայց «Մեղրի երգը» շարքում Լորկան բնութեան երեւոյթները, բոյսերն ու կենդանիները ներկայացնում է իր բնօրրանին ու բնաշխարհին մօտ ու յատուկ, իսկ Սահեանի ստեղծագործություններում ապրում ու շնչաւորում է սահանական աշխարհին բնորոշ բնութիւնը՝ լեռներն ու քարափները, մասրենին ու անտառը:

Բնութեան երեւոյթների, անշունչ առարկաների կենդանացումը եւ «հաւասարեցումը» մարդկային անհատականութեան ֆենոմեններին՝ կազմում են Լորկայի շատ գործերի աշխարհագրոգութեան հիմքը: Ծառերը, բոյսերը, քարերը, հողը, լուսինը խօսում են բանաստեղծի հետ եւ լսում նրա բարբառը⁵:

Լորկայի «Հասկեր» բանաստեղծությունը ներկայացնում է հասկի կենարար ու կենսատու լինելը, որ դեռ Աստուածաշնչից մարդու ճակատագրի մի մասն է եղել.

Յորենը դաշտում անձնապուր եղաւ

Մահուան շնորհին,

Մանգաղներն արդէն հասկերն են կտրում

Ջեփիւռն ու բարդին զրոյցի համար

Պարզ ու մտերիմ խօսքեր են փնտրում:

Յորենն ուզում է խորին լռութիւն:

Նա, ամրանալով բորբ արեւի քակ,

Այն է քաշում այն լայնութեան համար,

Որտեղ ապրում են երազներն արթուն:

Իսկ օրը, օրը,

Որ յագեցել է ու հասունացել

Լոյս ու դողանջից,

Լուռ նահանջում է լեռները կապոյտ⁶:

Յորենը գիտակցում է իր դերի կարեւորությունը ու կարող է անձնատուր լինել մահուանը, որովհետեւ կենարարությունը շարունակուելու է իրենից յետոյ: Բնությունը ամբողջութեամբ կերպաւորուած է ստեղծագործութեան մէջ: Հասկը դաշտում մենակ չէր. կար լռութիւն, որ բառերից պերճախօս էր, ու միաժամանակ օրուայ աւարտին հասկը նկատում է, որ օրն էլ իր աւարտին նահանջում է դէպի կապոյտ լեռները.

⁴ Սահեան Հ., Գրչի, խօսքի, խղճի կշիռը, Երեւան, «Ոսկան Երեւանցի», 2003, էջ 196:

⁵ Գրիգորեան Ս., Պարոյր Սեւակը եւ համաշխարհային պոեզիան, Երեւան, «Արմա», 2018, էջ 232:

⁶ Ֆ. Գ. Լորկա, Մեղրի երգը, թարգ.՝ Հ. Սահեանի, Երեւան, «Հայաստան», 1965, էջ 5:

*Դուք անում էք, որ կերակրեք մարդկանց,
 Զարկածադիկն ու հիրիկը դաշտում
 Ծնում են ամեն ինչի հակառակ,
 Դուք-գերություն մէջ ոսկէ մումիաներ:
 Քնի համար է լոյս աշխարհ գալիս
 Ծաղիկնանրառի: (Հտ. 2, էջ 69)*

Հասկերը ծնում են ամեն ինչին հակառակ ու յաղթահարում բնութեան տուած փորձութիւնները, որ իրենց հասունութեամբ դառնան նոր կեանքի շարունակութիւն:

*Մեռնել, որ ապրի կեանքը աշխարհում,
 Հասկեր, ահա ձեր ճակատագիրը⁷:*

Համօ Սահեանն էլ հասկին օրհնաբանել ու նրան կենարարութեան խորհրդանիշ է համարել.

*Կանգնել էր դաշտում հասկը ցորենի
 Աստուածալայել իր շշուկներով
 Իմ մեծությունն էր ցանում՝ երբեմնի
 Աստուածաբնակ երկիւքներն ի վեր
 Եւ աստուածային բեղիկներն ի վար
 Հողին ու քարին
 Օրհնություններ ու սարսուռ էր շաղում:
 Եւ աշխարհ եկայ,
 Երբ հին աստուածներն արդէն չկային (Հտ. 2, էջ 71):*

Ներկայանում է հասկի մենախօսութիւնը, որ պատմում է, թէ ինչպէս ու երբ աշխարհ եկաւ հասկը: Հասկը ծնուել էր ամեն ինչից առաջ ու օրհնաբանում էր այն հողին, որից սերել էր: Սահեանական աշխարհում բազմաթիւ անդրադարձներ կան հասկի ու ցորենի մասին, որ մեր շարունակութեան ու ճակատագրի լուռ վկաներն են եւ պատահական չէ, որ Սահեանի համոզմամբ «էլի ցորենն է աշխարհի հիմքը»:

*Էլի ցորենն է աշխարհի հիմքը
 Փառք քանք ցորենին եւ օրհնաբաններ:
 Յորենի մահով մահը խափանենք,
 Մայրը՝ հողն է սուրբ, հայրը երկիւքը,
 Հող դարձնենք քարը եւ ցորեն ցանենք:
 Էլի ցորենն է աշխարհի հիմքը,
 Փառք քանք ցորենին եւ օրհնաբաններ⁸:*

Հորկան նշում էր, որ հասկի ճակատագիրն է մեռնել, որ ապրի կեանքը աշխարհում, իսկ Սահեանը նշում է, որ ցորենի մահով կը խափանենք մահը: Երկու գրողներն էլ չնայած ապրել ու ստեղծագործել են տարբեր ժամանակներում եւ տարբեր իրականութիւններում, բայց կենարարութեան խորհրդանիշը ու կեանքի շարունակութիւնը տեսել են մարկային գոյին անձնատուր եղած բնութեան եւ հասկի մէջ: Համօ Սահեանի համոզմամբ հասկի կենարարութիւնը օրհնաբանել ու դեռ շարունակելու են

⁷ Ֆ. Գ. Լորկա, Մեղրի երգը, քաղ.՝ Հ. Սահեանի, Երեւան, «Հայաստան», 1965, էջ 6:

⁸ Սահեան Հ., Աստուած՝ ցորենին կ'ասեմ, Երեւան, «Զէյթուն», 1998, էջ 13:

օրհնաբանել տարբեր ազգեր ու ասքեր.

*Հասկը չի քնում, անքուն է հասկը,
Պաշտում եմ հասկի ուռած աչքերը:
Մարգարէներ են բոլոր հասկերը,
Հասկը չի քնում, անքուն է հասկը:
Օրհնաբանում են հասկի հրաշքը
Բոլոր ազգերի բոլոր ասքերը:
Հասկը չի քնում, անքուն է հասկը,
Պաշտում եմ հասկի ուռած աչքերը (Հր. 2, էջ 85):*

Հասկի աչքերը ուռած են հատիկի հասունութիւնից ու ծանրութիւնից, եւ պատահական չէ, որ Սահեանի համար պաշտելի են հասկի ուռած աչքերը:

«Միջանկեալ նշենք,- գրել է Դ. Գասպարեանը,- որ ուռած աչքերով այդ հասկը, մեռնելով աշխարհը պահող հասկը նաեւ իր իսկ՝ ստեղծագործ բանաստեղծի խորհրդաբանական պատկերն է»⁹:

Լորկան էլ «Հասկեր» բանաստեղծութեան մէջ նշել էր, որ հասկերը թռչել չեն կարողանալ, որովհետեւ ծանրացած են, ու կարծես գլխի մէջ կայ ուղեղը, որ ձուլուած է ոսկուց.

*Ծանր ու ծերացած հաւքերի նման
Հասկերը թռչել չեն կարողանում:
Նրանց ներդաշնակ գլուխների մէջ
Ուղեղ կայ, որը ձուլուած է ոսկուց:
Դիմագծերը խաղաղ են նրանց¹⁰:*

Բնութեան երեւոյթների քննութիւնը ե՛ւ Լորկայի, ե՛ւ Սահեանի ստեղծագործութիւններում առանցքային ու կարեւոր խորհրդանշ է: Գրողները իրենց ու մարդկութեանը յուզող շատ կարեւոր ու գաղափարական հարցերի կարող էին անդրադառնալ կերպաւորուած բնութեան միջոցով: Եթէ Համօ Սահեանի համար կերպաւորման խորհրդանշիչ պատկեր կարող էին դառնալ մասրենին, բարդին, ապա Լորկայի ստեղծագործութիւններում նկատելի են ձիթենու ու նարնջենու պատկերները: Այսինքն՝ գրողների համար կերպաւորման համակարգում կարեւորում է նաեւ այն տեղն ու բնաշխարհը, ուր ապրում ու ստեղծագործում են նրանք: Լորկայի «Չորացած նարնջենու երգը» բանաստեղծութեան մէջ տեսանելի են դառնում ծառի խոհերը, երբ արդէն ծերացել ու սաղարթից զրկուել է ծառը ու միայն երազներում է տեսնում իր կանաչ լինելը.

*Ոչ շնչում եմ արդէն,
Ոչ սօսափում եմ,
Հայելիների միջեւ
Ես պառապում եմ ¹¹:*

⁹ Գասպարեան Դ., Համօ Սահեան: Կեանք եւ ստեղծագործութիւնը, Երեւան, «Զանգակ-97», 2003, էջ 161:

¹⁰ Ֆ. Գ. Լորկա, Մեղրի երգը, Թարգ.՝ Հ. Սահեանի, Երեւան, «Հայաստան», 1965, էջ 5:

¹¹ Նոյն տեղում, էջ 9:

«Անձնաւորուած, մարդացած բնութիւն եւ բնական մարդ. ահա իմ հաւատոյ հանգանակը կեանքում եւ արուեստում»¹², - ասել է Հ. Սահեանը:

Լռութեան մոթիվի առկայութիւնը նկատելի է Սահեանի եւ Լորկայի պոեզիայում: Լռութիւնը բոլոր ձայների մէկտեղումն է: Գ. Լորկան լռութիւնը տեսնում է լեռների եւ կանչող արձագանքների տեսքով, իսկ Հ. Սահեանի պոեզիայում լռութիւնը դառնում է առաւել խօսուն:

Լսիր, ընկեր, լռութիւն:

Լռութիւնը

Լիքն է կանչով ալիքների

Եւ լեռների արձագանքով:

Լռութիւնը

Խոնարհել է

*Դէմքը հողին*¹³:

Լորկան լռութեանը անդրադարձել է նաեւ «Աւաղ» բանաստեղծութեան մէջ.

Ամէն ինչ խզուել է աշխարհում,

*Ամէն ինչ լցուել է լռութեամբ*¹⁴:

Այսինքն՝ մայր բնութեան մէջ լռութեան խորհուրդը բնութեան ձայների համատեղումն է: Սահեանական պոեզիայում եւս նկատելի է լռութեան մոթիվը «Ինձ բացակայ չդնեք» բանաստեղծութեան մէջ նրա լռութիւնը Լորկայի լեռների արձագանքի պէս զըրնգում է ձորով մէկ.

Ձեր լռութիւնը զնգում,

Ջրնգում է ձորով մէկ,

Ձեր լռութեան համերգում

*Ինձ բացակայ չդնէք*¹⁵:

Լորկայի «Դու սեւ բարդի» ստեղծագործութեան մէջ հեղինակը բարդուն նմանեցնում է մարդուն: Այսինքն՝ նորից հանդիպում ենք մարդ-ծառ խորհրդապատկերին.

Դու սեւ բարդի,

Քնքուշ բարդի,

Հագել ես դու

Ոսկի, ոսկի:

Երէկ էր դեռ, կանգնած էիր

Թռչունների աղմուկի մէջ,

Ծածկուած կանաչ տերեւներով,

Բարդի, բարդի:

Է, իսկ հիմա մէն ու մենակ,

Աշնան մռայլ երկնքի տակ,

*Կանգնել ես դու ինձ պէս տխուր*¹⁶:

¹² Սահեան Հ., Բանաստեղծը, մտածողը, մարդը, Երեւան, «Վան Արեան», 2001, էջ 249:

¹³ Ֆ. Գ. Լորկա, Մեղրի երգը, թարգ.՝ Հ. Սահեանի, Երեւան, «Հայաստան», 1965, էջ 10:

¹⁴ Նոյն տեղում, էջ 23:

¹⁵ Սահեան Հ., Ինձ բացակայ չդնէք, Երեւան, «Հայաստան», 2003, էջ 36:

¹⁶ Ֆ. Գ. Լորկա, Մեղրի երգը, թարգ.՝ Հ. Սահեանի, Երեւան, «Հայաստան», 1965, էջ 10

Բարդին ներկայանում է սեւ հագած ու կեանքի մայրամուտում: Լորկան նշում է, որ կարծես երէկ լինէր, երբ բարդին երիտասարդ էր ու կանգնած էր աղմուկի մէջ: Բարդին Լորկան էր, որի կեանքն անցել էր կարծես մի ակնթարթ: Բարդին արդէն կանգնած է մէն ու մենակ, իսկ աշնան մռայլ երկինքը ծերութիւնն է.

*Դու ծերունի, դու ճգնաւոր
Տխուր կանգնած կանաչ մարգում,
Բարդի, բարդի:
Ամէն ինչով քեզ ենք նման,
Ամէն ինչով:
Մենք էլ քեզ պէս,
Հագել ենք, տես,
Ոսկի... Ոսկի...*

Համօ Սահեանի պոեզիայում նոյնպէս հանդիպում ենք բարդու կերպարին: Սահեանի «Նաիրեան դալար բարդի» բանաստեղծութեան մէջ բարդին հագած է զմրուխտ կանաչ: Եթէ Լորկան ներկայացնում էր կեանքի մայրամուտն ապրող բարդուն, Սահեանի բարդին ներկայանում է դեռ նոր կանաչ հագած ու երիտասարդութեան շեմին.

*Նագում ես ու շորորում զմրուխտեայ քո շորերում,
Շուք արած ճամփի վրայ մանկույթեան կանաչ արտի,
Քո կանչը զնգում է զիլ իմ սրտի խոր ձորերում,
Իմ հեռու՛, հեռու՛ նաիրեան դալարբարդի: (Հպ. 1, էջ 67)*

Լորկայի պոեզիայում գերակշռող է մահուան եւ մենակութեան թեման, եւ սա պայմանաւորուած է նրան տանջող մահուան վախով: Մահուան թեման տեսանելի է հատկապէս «Հրաժեշտ» բանաստեղծութեան մէջ: Ողբերգականութիւնը նրա պոեզիայի չափումներից էր.

*Երբ որ ես մեռնեմ,
Բաց թողէք դռներն իմ պարզգամբի:
Ուրախ պարանիւն նարինջ է քաղում:
(Ես պարզգամբից տեսնում եմ նրան):
Հասկեր է կտրում հնձուորը ուրախ:
(Ես պարզգամբից լսում եմ նրան):
Երբ որ ես մեռնեմ,
Բաց թողէք դռներն իմ պարզգամբի¹⁷:*

Կեանքի յարատեւ լինելու գաղափարը շարունակում է, երբ նոյնիսկ մենք արդէն չենք լինի: Լորկան նշում է, որ բաց թողնեն պատշգամբի դռները, որպէսզի տեսնի կեանքի շարունակական լինելը, երբ հնձուորը էլի հասկեր կը քաղի, իսկ պատանին՝ նարինջ:

Սահեանական պոեզիայում եւս տեսանելի է կեանքի այն խոհափիլիսոփայութիւնը, որ կեանքը շարունակական է, ու անկախ մեր լինելութիւնից՝ կեանքի օրինաչափ ընթացքը շարունակում է: «Իմ մահով ոչինչ չի փոխուի կեանքում», սահեանական այս խօսքերը խօսուուն ապացոյցն են կեանքի յարատեւութեան.

¹⁷ **Ֆ. Գ. Լորկա**, Մեդրի երգը, թարգ.՝ Հ. Սահեանի, Երեւան, «Հայաստան», 1965, էջ 13

*Իմ մահով ոչինչ չի փոխուի կեանքում,
Ու չի պակասի աշխարհում ոչինչ,-
Մի լոյս կը մարի հինգերորդ յարկում,
Կը մթնեն մի պահ աչքերը քո ջիւնը:*

*Բայց հաւքերն էլի հարաւ կը չունեն,
Մանուկներն էլի կը խաղան բակում,
Կանաչներն էլի ցօղով կը թրջունեն,
Ծաղիկներն էլի կը շնչեն մարգում: (Հտ. 2, էջ 15)*

Նոյն միտքն էլ թեւածում էր Լորկայի պոեզիայում, որ աշխարհում ոչինչ չի պակասելու, ու կեանքը շարունակուելու է:

Լորկայի պատկեր-ստեղծագործութիւն-խոհափիլսոփայութիւն համաժիրի քննութեան ժամանակ հանդիպում ենք «Մոլորակ» բանաստեղծութեանը, որ բաղկացած է ընդամենը չորս բառից, բայց կրում է իր մէջ մի ողջ խորհրդապատկերային համակարգ.

*Սիրիուսի վրայ
Երեխաներ կան¹⁸:*

Համօ Սահեանի խոհերում ապրում են Լորկայի այս բառերը, ու նա հետաքրքրւում է, թէ ինչ եղան երեխաները: «Յիշում եմ՝ մի անգամ, երբ թարգմանում էր Լորկայի «Մեղրի երգը», «Մոլորակ» բանաստեղծութեան առիթով, որն ընդամենը չորս բառանոց մի փոքրիկ տող-պատկեր էր՝ «Սիրիուսի վրայ երեխաներ կան», Համօ Սահեանն ասաց. «Մտքիցս չեն գնում էդ երեխեքը. Տեսնես ի՞նչ եղան, ու՞ր կորան»¹⁹:

Համաշխարհային միջա-մտածողութեան մէջ լեռն ու ծառը համարում են տիեզերքի առանցքը, եւ ամէն ինչ, այդ թւում եւ մարդիկ, հաւաքւում են այդ գաղափարի շուրջ: Լեռն ու ծառը հանդիպում են Լորկայի պոեզիայում՝ «Չորս դեղին բալլադէ բանաստեղծութեան մէջ: Բանաստեղծութիւնը բացւում է լեռան գագաթին կանգնած կանաչ ծառի պատկերով.

*Լեռան գագաթին, լեռան գագաթին,
Կանաչ մի ծառ կայ լեռան գագաթին:
Հովիւն անցնում է
Իր ճանապարհով²⁰:*

Լորկայի ստեղծագործութիւններում յաճախակի հանդիպող ծառ-խորհրդանիշ է ձիթենին.

*Ձիթենիներն են հրում իրարու-
Դէպի շիկացած դաշտերը հեռու²¹:*

Ձիթենին դեռ շատ վաղուց համարուել է խաղաղութեան, յաղթանակի, ուրախութեան խորհրդանիշ, իսկ հրէական ու քրիստոնէական մշակոյթում այն խաղաղութեան, նաեւ յոյսի խորհրդանիշ է: Երկու գրողների ստեղծագործական աշխարհում գիւղն

¹⁸ **Ֆ. Գ. Լորկա**, Մեղրի երգը, Թարգ.՝ Հ. Սահեանի, Երեւան, «Հայաստան», 1965, էջ 22:

¹⁹ **Մարտիրոսեան Ա.**, Ներկայում հանգրուանող անցեալ, Երեւան, «ՀԳՄ», 2010, էջ 71:

²⁰ **Ֆ. Գ. Լորկա**, Մեղրի երգը, Թարգ.՝ Հ. Սահեանի, Երեւան, «Հայաստան», 1965, էջ 48:

²¹ Նոյն տեղում:

ու գիւղական միջավայրը, բնաշխարհի գոյներն ու բոյրերը կարեւոր ու վճռորոշ դեր ունեցան: Բնաշխարհի գոյների արտակարգ հարուստ բազմազանութեամբ են բնութագրուում Հ. Սահեանի եւ Լորկայի պոեզիան: Բանաստեղծները մի նոր հնչեղութիւն տուեցին հայրենի բնաշխարհների քնարերգութեանը՝ խօսքի ատաղձը դարձնելով բնօրրանի գոյներն ու աշխարհագրական տեղանքները: Հ. Սահեանը եւ Գ. Լորկան խօսեցին պոեզիայի դերի մասին: Լորկան իր «Սա նախերգանք է» բանաստեղծութեան մէջ խօսում է պոեզիայի ոգեղէն դերի մասին.

*Պոեզիան - դա կեանք է, որով
Քայլում ենք մենք տխրութեամբ,
Յուսալով, որ նաւավարը
Կը տանի մեր նաւն անշէկ²²:*

Պոեզիայի մասին տուած դիրքորոշումներից կարող ենք առանձնացնել նաեւ Հ. Սահեանի տեսլականը: «Պոեզիան իմ ամբողջ կեանքն է,- գրում է բանաստեղծը,- բայց ես չեմ կամենում բնորոշում տալ դրան: Չէի կամենայ կրկնել եղած բազմաթիւ բնորոշումները»²³:

Համօ Սահեանի ստեղծագործական աշխարհում կարեւոր երեւոյթ էին թարգմանութիւնները, եւ առաւել երեւելի էր, երբ Սահեանը թարգմանեց Ֆեդերիկո Գարսիա Լորկայի «Մեղրի երգը» ժողովածոն: Բազմակողմանի եւ բեղմնաւոր է եղել Լորկայի ստեղծագործական կեանքը. նա մինչեւ իր կեանքի վերջին ժամերը աշխատել է լարուած ու պայքարել յանուն գաղափարի եւ ազատութեան:

Այսպիսով՝ Լորկան Համօ Սահեանին գրաւում էր ոչ միայն իբրեւ անհատ բանաստեղծ, այլեւ որպէս բանաստեղծական մշակոյթի կրող ու հիմնարար: Յիշատակուած ստեղծագործութիւններում Հ. Սահեանը եւ Գ. Լորկան իրենց բանաստեղծական շարունակ պահում են յաւիտենութեան խորհուրդը: Հ. Սահեանի եւ Գ. Լորկայի ընտրած բանաստեղծական բոլոր բառ-կառուցները նախնականի ու յաւերժականի գաղափարական խորհուրդն են մեկնում ու մէկտեղում:

ՈՌՁԱ ԳԱԼՍՏԵԱՆ

Երեւանի պետական համալսարանի Հայ բանասիրութեան ֆակուլտետի մագիստրոս



²² Նոյն տեղում, էջ 54:

²³ Մկրտչեան Լ., Զրոյցներ բանաստեղծի հետ, 1984, էջ 154:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐՇԱԿ Բ.-Ն ԲՈՒՋԱՆԴԻ «ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

Ոսկեդարի հայ մատենագրութեան իւրօրինակ աշխատութիւններից մէկը **Փաւստոս Բուզանդի** «Պատմութիւն Հայոց»-ն է: Բարձր տաղանդով է Բուզանդը ներկայացնում պատմուող դէպքերը եւ կերտում կերպարներին:

Ինչպէս նկատում է Հրանտ Թամրազեանը, «Փաւստոսը գրում է անցեալ հարիւրամեակի անցքերի մասին: Այդ մասին մեզանում չկային գրաւոր աղբիւրներ, եթէ բացառութիւն անենք Ագաթանգեղոսի համար, որ պատկերում է դարի առաջին տասնամեակների պատմութիւնը: Փաւստոսը ստիպուած էր դիմել ժողովրդական յիշողութիւններին եւ անթիւ քանակութեամբ գրուած թղթերին՝ ներքին կեանքի մասին»¹:

Փաւստոս Բուզանդը, իր պատմութեան նիւթ դարձնելով Հայոց պատմութեան չորրորդ դարի դէպքերը (330-387 թթ.), անդրադառնում է ամենահակասական ու տարածայնութիւններով շրջապատուած Արշակունեաց արքաներին: Բուզանդը կիրառում է կերպաւորման նրբագոյն տարրեր եւ պատկերակերտման հետաքրքիր լուծումներ, որոնք երկը դարձնում են առաւել հետաքրքիր:

Փաւստոսի «Պատմութեան» կենտրոնական դէմքերից մէկը **Արշակ Բ.-ն** է, որի կերպարում խտացուած են դրական եւ բացասական յատկանիշներ: Արշակի կերպարը առաւելաբար կերտում է իր գործողութիւնների եւ հեղինակային խօսքի միջոցով: Վերջինիս քիչ ենք տեսնում մենախօսելիս, չկայ նաեւ ներքին խօսքի որեւէ դրսևորում, ինչն աւելի լիարժէք կը դարձնէր հերոսի կերպաւորումը:

Կերպարը նախ ներկայացուում է համեմատաբար դրական յատկանիշներով: Յայտնի է, որ 350-ական թուականներին Հռոմը եւ Պարսկաստանը, զբաղուած սեփական սահմանների պաշտպանութեան խնդրով, ժամանակաւորապէս չեն միջամտում Հայաստանի ներքին գործերին: Մօտ մէկ տասնամեակ Հայոց աշխարհը բարգաւաճում եւ հզօրանում է: Բուզանդը դրական է արտայայտւում Արշակ Երկրորդի գահակալութեան առաջին տարիների մասին: Նա վարում է ազգանպաստ, կշռադատուած քաղաքականութիւն, կարճ ժամանակում բարեկարգում ու շէնացնում է երկիրը, ամրացնում եւ հսկողութիւն է հաստատում Հայաստանի սահմանամերձ շրջաններում: Հրաշալի ըմբռնելով, որ ուժեղ պետութիւն կառուցելու գլխաւոր նախապայմանը միաբանութիւնն է, համախմբում է հօր օրօք արքունիքից դժգոհ նախարարներին, ըստ արժանւոյն պաշտօններ բաշխում Մամիկոնեանների, Գնունիների եւ այլ յայտնի տոհմերի ներկայացուցիչներին²: Արշակը կարեւորում է նաեւ կաթողիկոսի ընտրութեան հարցը՝ ձգտելով հոգեւոր հայր տեսնել վստահելի մէկին, նա այդ պաշտօնի համար ընտրում է իր հաւատարիմ սենեկապետին՝ Գրիգոր Լուսաւորչի շառաւիղներից Ներսէսին: Բուզանդը ընդգծում է. «Եւ նորոգեցաւ զուարթացաւ տէրութիւնն թագաւորութեանն Հայաստան երկրին որպէս եւ զառաջինսն, մեծամեծքն յիւրաքանչիւր գահու, և գործակալքն յիւրաքանչիւր շաւիու» (էջ 124):

¹ Թամրազեան Հր., Հայ ֆննադատութիւն, Գիրք Ա, Երևան, 1983, էջ 86:

² Տե՛ս Մնացականեան Եւա, Կերպարակերտման առանձնայատկութիւնները Ե. դարի հայ պատմագրութեան մէջ, Երևան, 2007, էջ 54:

Ինքնուրույն քաղաքականութեան շնորհիւ Արշակին յաջողում է վերականգնել երկրի ներքին եւ արտաքին ամրութիւնը, թէկուզեւ՝ ժամանակաւոր: Այսպէս՝ պարսից զօրքերը Արշակի կառավարման տարիներին բազմիցս յարձակուել են Հայոց աշխարհի վրայ, բայց հզօր մտածողութեան տէր արքան, պէտք է ընդունենք, կարողանում է ետ մղել թշնամու հարուածները: Արշակը, Վասակ Մամիկոնեանը եւ նրա եղբայրը տեղի ունեցած մի քանի ճակատամարտերում ջախջախում են թշնամուն:

Արշակին բնորոշ է բարձր արժանապատուութեան յատկանիշը՝ սեփական անձի եւ երկրի հանդէպ: Ահա, օրինակ, Վաղէս կայսրը աքսորում է Ներսէսին Պատմոս կղզի եւ Արշակի վստահութիւնը չկորցնելու, նրա հետ յարաբերութիւնները չսրելու համար մեծամեծ ընծաներ, թանկարժէք քարեր է ուղարկում պատգամատարների հետ: Արշակը մերժում է՝ ասելով. «Քարինք բազումք, ասէ, ի վերայ կայսերն, և ձեր ի բերելդ. Քարինք և մեր շատ կան ի թափել զատամունս նորա ի տալն, և ձեր ի բերելդ. Զմեր վատթարութիւնս յո տարայց. Արդ այդմ երախտեացդ ես դարձուցանեմ» (էջ 164):

Սակայն Արշակի քայլերը պատմիչի կողմից միշտ չէ, որ ճիշդ են հասկացւում: Եւ ահա Բուզանդը սկսում է բացասաբար արտայայտուել Արշակի մասին՝ շեշտելով, որ արքան այնքան էլ աստուածահաճոյ ճանապարհով չէր գնում: Որքան մանուկ հասակում աստուածային իմաստութեամբ էր փայլում, այդքան հասուն տարիքում լկտիութեան մէջ է ընկնում:

Ինչպէս վերը նշեցինք, Արշակ Բ.-ն հաստատակամօրէն ինքնուրույն քաղաքականութիւն էր վարում: Թագաւորական իշխանութեան ամրապնդման եւ նախարարական կենտրոնախոյս տրամադրութիւնները զսպելու նպատակով Արշակը սկսում է Արշակաւան քաղաքի կառուցումը, որը սրում է արքայի յարաբերութիւնները կաթողիկոսի եւ նախարարների հետ: Այդ քաղաքում կարող էին բնակուել բոլոր ցանկացողները, այդ թւում՝ գողեր, պոռնիկներ, դաւաճան ծառաներ, ամուսիններ, որոնք փախչում էին իրենց կանանցից, կանայք, որոնք դաւաճանել էին իրենց ամուսիններին, մարդասպաններ եւ այլք, որոնք կ'ազատուէին ամէն տեսակ դատաստանից: Սա, ըստ պատմիչի, արքայի խիստ բացասական բնաւորութեան դրսեւորումն է: Արշակաւան քաղաքի կառուցումը բորբոքում է աքսորից վերադարձած Ներսէս Մեծի բարկութիւնը՝ դառնալով նրա անհանգստութեան, լաց ու կոծի պատճառ: Յաջորդում է բարկացած Ներսէսի եւ Արշակի հանդիպումը, որի ժամանակ Ներսէսը հանդիմանական խօսքեր է հնչեցնում արքայի հասցէին՝ տալով նրա կերպարի բացասական յատկանիշների նկարագիրը. «Եւ զիա՛րդ կամ ի՛նչ ու ըմբռնեցար արհամարհել զնորա զպատուիրանսն. ո՛չ հայրն քո վասն այսր ամբարշտութեան ի կորուստ մատնեցաւ: Արդ դու տակաւին չիշեցեր զնա, որ ոչն յիշեաց զմեզս հաւրն քո, եւ ետ քեզ զտեղի ունել, այս ինքն զաթոռ եւ զթագ հաւրն քո. եւ սկսար անաւրինել առաջի Տեառնն Աստուծոյ քո, եւ զամբարըշտութիւնս եւ զանաւրէնութիւնս եւ զանիրաւութիւնս կարի ի նմանութիւն սողոմացւոցն՝ պարծանաւք յայտնապէս պատմել: Եւ երկիր առ հասարակ լան եւ վայեն զրկութեանցն զյափշտակութեանցն, որովք դու կամեցար մեծանալ. եւ ոչ յագեցոյց զքեզ մեծ եւ բազում թագաւորութեանցն յղփութիւնքն, զոր ետն քեզ Տէր ամենայնի Քրիստոս» (էջ 174):

Ապա մէջ է բերւում Ներսէսի երազը, որը դառնում է ապագայի համար մարգարէական կանխորոշման նկարագրութիւն. «Արդ լուր ինձ զոր ասեմս քեզ, եւ արա զնա՛ զի մարթասցես շահել զանձն քո, եւ ապրեցուցանել զքեզ ի բարկութենէ անտի Աստուծոյ. եւ մի՛ թշուառական աշխարհս Հայոց յաղագս քո կորիցէ: Այլ ես տեսի տեսիլ, զի կորուստ եւ քանդումն յուզեալ խաղացեալ գայ ի վերայ կորստական աշխարհիս Հայոց այսո՜րիկ» (էջ 176): Ինչպէս նկատեցինք, իրար յաջորդող կաթողիկոսներին եւ հոգեւորա-

կաններին է վերագրուած ապագայի մասին բախտորոշ եւ մարգարէական վճիռները ներկայացնելը Աստծոյ անունից, ինչը ընթերցողին կանխաւ նախապատրաստում է գործողութիւնների յետագայ ընթացքին: Իրեն ծաղրող եւ արհամարհող արքային ի պատասխան՝ Ներսէս Մեծը զգուշացնում է՝ յիշեցնելով աստուածաշնչեան մարգարէութիւնը «Վայ որ շինէ զտուն իւր՝ և ոչ արդարութեամբ, և վերնայարկս իւր՝ և ոչ իրաւամբ» (էջ 176): Այս խօսքերից երեք օր անց Արշակաւան քաղաքի գլխին գալիս են բազում պատուհասներ՝ սկսած ժանտախտից, ինչի հետեւանքով կոտորուում է քաղաքի բնակչութիւնը:

Արշակի կերպարը ամբողջապէս բացասական երանգ է ձեռք բերում Գնէլ-Փառանձեմ-Տիրիթ գրուագից յետոյ³: Պատմիչը Արշակին նախ դնում է Գնէլ-Փառանձեմ-Տիրիթ, ապա Տիրիթ-Փառանձեմ-Արշակ եռանկիւնու շրջանակում: Արշակը արտաքուստ ցոյց է տալիս, թէ դիւրահաւատ է. նա անսալով Տիրիթի սուտ հաւաստիացումներին, թէ Գնէլը ցանկանում է զաւթել հայոց գահը, սպաննել է տալիս վերջինիս: Արշակի կերպարի զարգացման տեսանկիւնից բաւական հետաքրքիր է այն դրուագը, երբ նրան յայտնում են Գնէլի մահուան մասին: Ներսէսը գալիս է Արշակի սենեակ եւ փորձում ետ պահել նրան մահաբեր մտադրութիւնից: Ներսէսը Արշակի հետ խօսում է աստուածաշնչեան լեզուով եւ քրիստոնէական պատգամներով՝ փորձելով ներգործութիւն ունենալ արքայի վճիռի վրայ: Աստուածաշնչեան մէջբերումները կրկին ընթերցողին նախապատրաստում են գործողութիւնների մօտալուտ ընթացքին: Ներսէսը յիշեցնում է Քրիստոսի պատգամը. «Ով ձեզ լսէ, ինձ կը լսէ. Ով ձեզ ընդունէ՝ ինձ կ'ընդունէ, և ով որ ձեզ անարգէ՝ ինձ կ'անարգէ» (էջ 187): Եպիսկոպոսապետը Արշակին յիշեցնում է «Մի՛ սպանիր» պատուիրանը: Ի պատասխան Ներսէսի յորդորներին՝ Արշակը ծածկոցի մէջ է փաթաթուում եւ ձեւացնում, թէ քնած է: Սակայն սենեակ է մտնում Արշակի՝ Գնէլին սպանելու հրամանը կատարած Երազմակ դահճապետը եւ Ներսէսի ներկայութեամբ պատմում Գնէլի սպանութեան մանրամասները: Ներսէսը բարկանալով զգուշացնում է Արշակին, որ նրան սպասում է այն, ինչ Աստուածաշնչում ասուել է գազանների համար, որ Աստուած նրանց ատամները բերաններում կը փշրի, իսկ առիւծի ժանիքները կը խորտակի: Ներսէսը ողջ Արշակունեաց ցեղի համար իրապէս կանխագուշակում է մօտալուտ կործանում. նրանք «կը խմեն վերջին բաժակը, կը հարբեն եւ կը կործանուեն, եւ այլեւս երբեք ոտքի չեն կանգնի, եւ Աստծոյ որդու երկրորդ գալստեան ժամանակ նրանք չեն տեսնի Յիսուսի փառքի արեւը: Արշակի արարքը բնորոշելիս Բուզանդն այն համեմատում է Կայէնի արարքի հետ, որ սպանեց իր եղբօրը՝ Աբէլին⁴, հետեւաբար Ներսէսը Կայէնից աւելի վատթար ապագայ է կանխորոշում Արշակի համար. «Այլ դու, Արշակ, փոխանակ զի զգործս Կայէնի գործեցեր, զանէծան Կայէնի զգեցչիր. անկջիր կենդանւոյն ի թագաւորութենեդ քումմէ, և շարչարեսցիս առաւել քան զՏիրան զհայրն քո, և դառն մահուամբ զկեանս քո յերկրէս մեծ նեղութեամբ վճարեսչիր» (էջ 188):

Բուզանդի երկում երկխօսութիւնները դառնում են գլխաւոր միջոցներից մէկը ինչպէս Արշակունեաց, այնպէս էլ մնացեալ հերոսների կերպաւորման համար: Երկխօսութիւնը գեղարուեստական երկի կառուցուածքի մասերից մէկն է՝ զրոյց-խօսակցութիւն երկու եւ աւելի անձանց միջեւ: Տարբեր ժանրերի երկերում երկխօսութիւնը սիւժէի զարգացման հիմնական միջոցներից է, որը դառնում է կերպարների տիպականացման ու անհատականացման, գործողութիւնների զարգացման եղանակներից մէկը⁵: Փաւ-

³ Տե՛ս Սաֆարեան Վ., Հայ միջնադարեան..., էջ 40:

⁴ Կայէնը եւ Աբէլը, ըստ Աստուածաշնչի, Ադամի եւ Եւայի որդիներն էին: Աստուածաշնչում նշում է, որ Կայէնը, սպանելով իր եղբայր Աբէլին, դարձաւ մարդկային պատմութեան մէջ առաջին մարդասպանը, իսկ Աբէլը՝ առաջին մարտիրոսը: Տե՛ս <https://armenianchurchlibrary.com>:

⁵ Տե՛ս Զրբաշեան Էդ., Մալսեանեան Հ., Գրականագիտական բառարան, Երևան, 1972, էջ 108:

ստոսի երկուսն տեսնում ենք, որ երկխոսութեան մէջ խօսքի գերակշիռ մասը պատկանում է մեղադրող կողմին, օրինակ՝ կաթողիկոսներին կամ քահանաներին: Արշակունիները իրենց հասցէին ուղղուած մեղադրանքները լսելիս առաւելաբար դիմում են դիմագծերի փոփոխութեան, շարժումներին եւ երբեմն անտարբեր են ձեւանում իրենց հասցէին հնչեցրած խօսքերին: Այսպիսի հնարքների միջոցով մեծանում է Փաւստոս Բուզանդի «Պատմութեան» գեղարուեստական արժէքը:

Գնէլի սպանութիւնից յետոյ Արշակը գնում եւ նստում է թաղման մասնակիցների կողքին եւ նրանց հետ սգում եղբօր որդու մահը՝ անմեղ ձեւանալով: Հէնց թաղման ժամանակ բացայայտում է Տիրիթի ցանկասիրութիւնը: Նա եղբօր կնոջը դիմում է այսպէս. «...մի՛ կարի զանձն քո աշխատ առներ այդչափ, զի այր բարի ես եմ քան զնա, ես սիրեցի զքեզ, վասն այսորիկ մատնեցի զնա ի մահ, զի զքեզ առից ինձ կնութեան» (էջ 190): Փառանձեմը սաստկացնում է իր ողբը՝ մագերէտ փետելով եւ ճշալով. «...լուարուք ամենեքեան, զի մահ առն իմոյ վասն իմ եղև. զի որ ինձ ակն եղ վասն իմ, զայրն իմ ետ սպանանել»: Արշակը նախ սկսում է կասկածել եղբօրորդու շարամտութեան վրայ, իսկ այնուհետեւ վերջինիս՝ իրեն ուղղուած նամակից կրկնակի համոզում է, որ Գնէլի մասին ասուածները զուտ խարդաւանք էին, որ հրահրել էր Տիրիթը, եւ սպանել է տալիս նաեւ նրան. «Արդ հաստատ գիտեմ զոր լուայն թէ ստույգ է, վասն կնոջ իւրոյ եղև մահն Գնելոյ» (էջ 192):

Որոշ ժամանակ անց Արշակը կնութեան է առնում Փառանձեմին՝ վերստին բորբոքելով Ներսէս Մեծ կաթողիկոսին իր դէմ: Բայց Արշակն աւելի քան հաշուենկատ էր, քանի որ նրան ձեռնտու էր Գնէլի՝ հանգամանքների բերումով մահը: Արշակը քաջ գիտակցում էր, որ անկախ այն բանից՝ Գնէլն իրապէս ցանկանում էր զաւթել գահը թէ ոչ, գահի իրական տէրը կարող էր լինել հէնց նա, որովհետեւ իր մեռած եղբօր որդին էր եւ Տիրան արքայի սիրելին: Ահա այստեղ մի քանի Արշակունի են գծում. ասպետական Գնէլը՝ երիտասարդ, առոյգ, ուժեղ, միշտ ձիու վրայ (անգամ մահուան պահին), այս Գնէլն էլ հոմերոսեան հերոսների պէս ուժ եւ զօրութիւն է ստանում իր կնոջ՝ Փառանձեմի հիացմունքից եւ սիրուց. խաբեբայ եւ սադրիչ Տիրիթը, որ կուրացել էր Փառանձեմի նկատմամբ սիրուց:

Արշակի կերպարը հետաքրքրական է դառնում նաեւ նրանով, որ Բուզանդը ներկայացրել է արքայի արտաքինը: Դա արւում է Փառանձեմի միջոցով, ով ասում է Արշակին չսիրելու իր պատճառները. Արշակը թաւամազ է եւ տգեղ: Առհասարակ Արշակի՝ Փառանձեմին իրեն կին առնելու դրուագը փոքր-ինչ յիշեցնում է հեթանոսական ժամանակների վարք ու բարքը, այդ ժամանակների սովորութիւնները, առիւծասիրտ մարդկանց քաջութիւնները, ասպետական ժամանակները, երբ գնահատում էին գեղեցիկը, եւ յանուն այդ գեղեցիկի մեծանուն մարդիկ կարող էին բախուել իրար:

Ներսէսի շուրթերով Փաւստոս Բուզանդը սթափութեան կոչ է յղում Արշակին: Ինչպէս նկատում է Հր. Թամրազեանը, «այս պատմիչը շատ ընդգծուած հակադրում է հեթանոսական աշխարհայեցողութեանը, բարքերին, ի՛նչ խօսք նաեւ գեղարուեստական ճաշակին ու ներքին հակումներին: Նա անողոր է հեթանոս Հայաստանի բարքերի, մարդկային յարաբերութիւնների նկատմամբ, մերկացնում է արատները՝ անմիաբանութիւնը, տգիտութիւնը, անհաւատարմութիւնը»⁶: Սրա լաւագոյն արտայայտութիւնը անշուշտ այն պատկերն է, երբ Արշակը, սիրուած չլինելով կնոջից, Յունաց երկրից իրեն կին է բերում Ոլիմպիային, որին սիրում է ուժգին սիրով եւ գրգռում է Փառանձեմի խանդը: Արշակին «ատող» Փառանձեմը ոխ է պահում Ոլիմպիայի դէմ եւ միջոց է փնտռում նրան սպանելու: Եւ շուտով Փառանձեմը Մրջունիկ անունով մի սպասաւորի

⁶ Թամրազեան Հր., Հայ ֆննադատութիւն, Գրք Ա, Երեւան, 1983, էջ 74:

միջոցով Ուլիմպիայի «Կեանքի դեղի մէջ մահուան դեղ է խառնում» (էջ 203):

Բուզանդը նկատում եւ ընդգծում է, որ Արշակունի թագաւորները շարունակում էին հեթանոսական սովորութիւններն ու կենցաղը, որ զանազան վայրերում Արշակունիների թոյլտուութեամբ նորից արձաններ էին դրւում հին աստուածներին, վերականգնում թաղման հին ծէսերը⁷: Մի պարզ օրինակ. մինչ Ներսէս քահանայապետը Աշտիշատի ժողովով վերացնել է տալիս մեռելների յետեւից ինքնակործան լացով լեցուն թաղման արարողութիւնները, Արշակ արքան, Փառանձեմը եւ այլք Գնէլի թաղման ժամանակ կոծում են եւ ողբում: Փառանձեմն էլ զգեստներն է պատառոտում եւ ողբում՝ վարսերն արձակած, կուրծքը՝ բաց, բարձր ճշում էր, արտասուքով յուզում բոլորին:

Արշակի գործած բացասական արարքների թուարկման եւ նկարագրութեան մէջ կարեւորում է արքայի կողմից հայ նախարարներին կոտորելու հրամանը: Եղբայրասպանը այս անգամ ձեռքերը թաթախում է շրջապատի մարդկանց (Վարդան Մամիկոնեան եւ նախարարներ) արյան մէջ: Ահա Արշակը նախքան նախարարների կոտորածը, յետամուտ լինելով Վասակ Մամիկոնեանի եւ կնոջ՝ Փառանձեմի խօսքերին, թէ Վարդան Մամիկոնեանն է Արշակին մատնում Պարսից արքայի ձեռքը, հրաման է արձակում, որ Վասակը սպանի եղբորը՝ Վարդանին: Յաջորդում են հետեւեալ կարճ, բայց ներազդուն տողերը, թէ «Ի զբազումս ի նախարարացն կոտորեաց, զբազումս ազգատ արարեալ անճիտեաց, և զբազմաց տունս հատանէր յարքունիս: Բայց զտոհմս Կամսարականացն՝ որ էին գաւառաց տեարք, Շիրակայ և Արշակունեաց, ազգատ առնէր. և զգաւառսն ուներ յոստան» (էջ 202):

Երբեմն Արշակին օտար արքաների հետ համեմատելիս Բուզանդն արքային վերագրուող բացասական շերտերը խտացնում է: Դա յստակում է պարսից Շապուհի հետ յարաբերութեան մէջ: Շապուհը կանչում է Արշակին եւ Վասակին Տիգրոն, ցոյց տալիս իր «բարեկամութիւնը»՝ պատուելով նրանց: Բայց Անդովկի՝ Փառանձեմի հօր հաւաստիացումներն ու զգուշացումները ստիպում են Արշակին փախչել Շապուհից, որն էլ Հայաստանի դէմ սկսում է 30-ամեայ պատերազմ: Այստեղ եւս մէկ անգամ վեր է յառնում դիւրահաւատ, անգամ մանկամիտ արքան, որին միշտ հեշտ է լինում փակուղու մէջ դնելը: Հայոց աշխարհը յայտնում է վատթարագոյն իրավիճակի մէջ՝ շրջապատուած արտաքին եւ ներքին թշնամիներով: Հետեւաբար Արշակը, հասկանալով, որ վերադարձ գուցէ չլինի, գնում է Պարսկաստան: Արշակը Շապուհ Երկարակեացի կողմից հրաւիրւում է Տիգրոն, բանտարկւում ու այնտեղ էլ մահանում:

Արշակը, թւում է՝ դիւրահաւատ է, հեշտ հաւատում է Շապուհի ուղարկած նամակին եւ մեկնում Տիգրոն, բայց դա քաղաքական անհրաժեշտութիւն էր՝ ի նպաստ հայրենիքի եւ ժողովրդի բարօրութեան:

Առաւել յաճախ Արշակի դրական ձգտումները, որոշ հանգամանքներով պայմանաւորուած, ունենում են բացասական հետեւանքներ: Արշակը մտնում է եղբրական կացութեան մէջ: Տիգրոնում Շապուհի հետ առճակատման ժամանակ էլ տեղի է ունենում բանահիւսական յայտնի դրուագը՝ կապուած հայրենի հողի եւ ջրի հետ: Շապուհն Արշակին փորձելու համար հրամայում է Հայաստանից բերել հող ու ջուր եւ արքունի դահլիճի յատակի կէսը ծածկում այդ հողով՝ վրան ցանելով ջուրը: Շապուհը, Արշակի ձեռքը բռնած, ճեմելով շրջում է դահլիճում: Արշակը, որ պարսից հողի վրայ խօսում էր զղջումով, հայկական հողի վրայ սաստիկ ըմբոստանում է Շապուհի դէմ եւ հպարտօրէն ասում. «Ի բաց կաց յինէն, ծառայ չարագործ տիրացեալ տերանցն քոց. այլ ոչ թողից զքեզ եւ որդւոց քոց զվրէժ նախնեաց իմոց, եւ զմահն Արտեւանայ

⁷ Տե՛ս նոյն տեղում, էջ 77:

արքային: Զի այժմիկ ձեր ծառայից զմեր տերանց ձերոց զբարձ կալեալ է. բայց ոչ թողից, եթէ ոչ տեղիդ մեր առ մեզ եկեսցէ: Իսկ դարձեալ առնոյր զձեռանէ, դարձեալ տանէր յայն հող Պարսից. աշխարէր զասացեալսն, խոնարհէր բուն հարկանէր զոտից նորա, մեծապէս ապաշխարելով զղջմամբ զասացեալ բանսն: Իսկ յորժամ առեալ զձեռանէ զնա տանել ի հայ հողն, եւս խստագոյն քան զառաջինսն բարբառէր. իսկ դարձեալ միւսանգամ հանէր յայնմ հողոյն, բանիւք յապաշխարութիւն դառնայր: Յաջգուէ մինչեւ երեկոյն այնպէս շատ փորձ փորձեաց զնա. զի իբրեւ ի վերայ հարեալ հողոյն տանէր, խոստացեալ ամբարտաւանէր. իսկ ի վերայ բուն գետնոյն յատակին՝ եւ կայր, ի զղջումն դառնայր» (էջ 258). սա էլ դառնում է Արշակի՝ Անհուշ բերդում փակուած մնալու պատճառներից մէկը: Սակայն մի բան առաւել քան պարզ է. Բուզանդը, օգտագործելով բանահիւսական այս մոթիվը, հետապնդում է մի նպատակ՝ ցոյց տալ, որ մարդուն եւ յատկապէս թագաւորին ուժ եւ զօրութիւն է պարգեւում հողը՝ երկիր հայրենին: Սրանով Բուզանդը պանծացնում է հայրենիքի գաղափարը, աստուածասիրութիւնից բացի՝ հայրենասիրութեան կոչ անում:

Արքայի կերպաւորման համար կարեւոր է այն դրուագը, երբ Արշակի թագաւորական կեանքը մէկ օրով վերականգնում է Անհուշ բերդում՝ արդէն իսկ կործանուած: Դրաստամատ ներքինապետը կռիւներից մէկում Շապուհի կեանքը փրկելու դիմաց նրանից խնդրում է թոյլ տալ այցելել Արշակին եւ մէկ օրով վերականգնել արքայի նախկին փառքն ու արժանապատուութիւնը: Բանտարկեալ-արքայ եւ բանտում մէկ օրով արքայ հակադրամիասնութիւնը ստիպում է Արշակին դիմել ծայրայեղ մի քայլի: Դառը խօսքեր ասելով նախարարների հասցէին, գնահատելով սեփական վիճակը եւ մնալով սեփական արժանապատուութեան բարձր գնահատութեան սահմաններում՝ արտասանելով «Վա՛յ ինձ Արշակայ. այս ես և այս, և այսմ չափու և այս անցք անցին ընդ իս» (էջ 318) խօսքերը՝ ինքնասպան է լինում սեղանին դրուած դանակով, որով նոյն պահին իր կեանքին վերջ է տալիս նաեւ Դրաստամատը: Փաւստոս Բուզանդը վերստին հաստատում է արքայի կարեւորութիւնը եւ այլոց կողմից յարգանքն առ արքայ: Եւ ահա արքայի ինքնասպանութիւնից յետոյ հայ նախարարները համախմբւում են եւ պարսիկների դէմ կռուի են ելնում յանուն իրենց արքայի, իսկ հայ զինուորն ամէն անգամ պարսիկ սպանելիս կրկնում էր. «Քաջ Արշակի համար»: Ըստ էութեան, Բուզանդը կերպարի կերտման աւարտին թողնում է դրական տպաւորութիւն, ինչով աւելի է ընդգծւում կերպարի երկակիութիւնը:

ԱՆԱՀԻՏ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Երեւանի պետական համալսարանի Հայ բանասիրութեան ֆակուլտետի մագիստրոս

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՈՒՇ ԱՍԼԻԲԵԿԵԱՆԻ ՏՈՂԵՐՈՒՄ ՄԻԱԿՆ ՈՒ ՈՒՐԻՇԸ ՀԱՅՐԵՆԻՔՆ Է

Թատերագետ, արձակագիր, դրամատուրգ Անուշ Ասլիբեկեանն իր «Հայրենիքս, միակս, ուրիշս» բանաստեղծությունները բազմաշերտ մտացումներով է գրել: Պատերազմի օրերին եւ յետպատերազմեան շրջանում յատկապէս՝ խորը եւ լուրջ պոեզիա է ծնուել, որ արժանի է գրաքննադատների յատուկ ուշադրութեանը, որովհետեւ կան շատ ստեղծագործություններ, որոնք ոչ միայն իրականությունն են արտացոլում, այլ նաեւ հանդէս են գալիս որպէս մարտակոչ ու հայրենիքը սեփական անձից կարեւորելու բանաձեւումներով:

Յետպատերազմեան շրջանում նկատելով եւ ընթերցելով Անուշ Ասլիբեկեանի «Հայրենիքս, միակս, ուրիշս» բանաստեղծությունը՝ առաջին տողից պատկերաւոր միջավայրում յայտնուեցի՝ չիմանալով յետագայ զարգացումների մասին: Սակայն վերնագրից արդէն հասկանալի է, որ այն պէտք է ունենայ հայրենիքին լաւագոյնս ներկայացնող ու բարձրացնող ուրիշներ:

Երբ հիասթափությունը ոչ այնքան կարեւոր իրողություն է, որքան հիասթափութեան մէջ ապրելն ու ցաւից մորմոքուելը, այդժամ վերականգնում է այն գործառոյթը, որը պէտք է իմաստաւորի եւ պահերը, եւ ժամերը, եւ հասկացնի կարեւորի ու երկրորդականի մասին: Գործ ունենք կուռ եւ ստացուած բանաստեղծական օրինակի հետ, որն ընթերցողին կլանում է իր անկեղծ տողատակերով:

Շատ անգամ յուսահատութեան խտացումների մէջ պոռթկում է համարձակութիւնն ու սէրը, որը միեւնոյն ժամանակ այնքան շօշափելի է, բայց եւ մի տեսակ իտէլականացում: Անուշ Ասլիբեկեանը բազմահայեաց ռեալիստականություն ու բառագործածական ինքնատիպություն է ցուցաբերում: Գրում է հոգեթով, բուռն յուզականութեամբ՝ ամէն կերպ նախընտրելով այն, ինչը կը սփոփի, յոյզ ու յիշողություն կ'արթնացնի, բայց... Հեղինակը տագնապում է երջանկութեան կորստի վախից, որն առաջին հերթին հայրենիքն է իր համար, եւ որի սահմաններն իր աչքի առջեւ յանկարծ տարրալուծում են:

*Այսօր ես վաստակած (խաբուսիկ) ծերութիւն վայելելու ցանկութիւն ունեմ՝
դաք շալով փաթաթուելու,
թէյ խմելու, ինձ թոյլ դալու լուրեր չլսել,
Եւրոյի բարձրացող գնի ու նաւթի արժեզրկուող գոյնի մասին ոչինչ չիմանալու,
մի քիչ ապրելու ու ոչինչ չանելու հրամայական, պահանջ.
այսօր ակնոցս կորցնելու, կուրանալու,
յօդացաւերից ցնորուելու ցանկութիւն ունեմ,
որ չտեսնեմ մառախուղի պէս արագօրէն փարրալուծուող
Հայրենիքիս սահմանները:
Այսօր ես ունեցածիս մասին մոռանալու,
ու սրտխփոցով ընդհատուած քնից վեր թռչելով՝*

այն սարսափահար փնտրելու ու դարձեալ գրնելու ցանկութիւն ունեմ,
զաւակներին ո՛չ թէ խնամելու, ո՛չ թէ խրատելու,
այլ կողքի պարուհանից անվերջ դիտելու, հեռակայ գրկելու,
աչքերով նկարահանելու,
ընդմիջոր հոգումն պահելու ցանկութիւն ունեմ նրանց մանկութիւնը,
որ Ուրախութիւնն են հէնց:

Այս տողերը ցաւի ծանրութիւնից կքած հեղինակի փախուստի փորձ են դէպի սեփական ներաշխարհ, սակայն նա համարձակուած է եւ այնտեղից դուրս է գալիս հզօրացած, անկասելի որոշումով: Գրականութեան մէջ ընդունուած է հայրենիքին դիմել որպէս զաւակ, սակայն Ա. Ասլիբեկեանի այս ստեղծագործութիւնը կարելի է ասել արդի հայ գրականութեան մէջ եզակի է, որտեղ հեղինակը հայրենիքը սիրում է ոչ թէ որդիաբար, այլ որպէս ծնող, եւ նրանից թոյլտուութիւն է խնդրում մայրութեան «սրբազան իրաւունքի»: Սա բոլորովին նոր, թարմ ու անսպասելի փոխաբերութիւն է:

Խօսուն է տողը, երբ անկեղծանում ես գրչի հետ: Անուշ Ասլիբեկեանին յաջողուել է անկեղծանալ եւ շարադրել այն ամէնը, ինչը կարելոր ասելիքով է հարուստ, որը շառաւիղներ ունի տարբեր ծիրերում, որը միատարր չէ: Նաեւ անպայման պէտք է կարելորենք տողի հակիրճութիւնն ու սեղմուածութիւնը՝ ընդգծելով տողատակի ասելիքի ահռելի տարողունակութիւնը, որը որպէս գրական վարպետութեան օրինակ կարող ենք առանձնացնել:

Այս, Հայրենիք,
դու, որ հիմա բոլորովին անօգնական, խռով մի բլրում ես կուշ եկել՝
արքայաւորութիւն մեխակներով ծածկուած,
անթիւ ուղղանկիւնաձեւ սառը սալիկների ծնկներին ծուարել,
օգնութիւն ես հայցում յաւերժօրէն դաջուած հերոսական լռութիւնից,
ինչպէ՛ս կարողացար այսքան մեր սիրտը մխրճուել՝ ցաւոյ ու կաթոգին,
այսքան տրտում, բայց վճռական,
այսքան արնոյր, բայց սիրուն:

Ինչպէս նշեցի, յուսահատութիւն կայ, որն աւելի հնչեղ է դառնում այն ժամանակ, երբ հայրենիք-մարդ կապն ամէն կերպ միաձուլուում եւ դառնում է անբաժանելի, քանզի հայրենիքի համար ապրողը մեռնում է նաեւ յանուն նրա: Զեւականութիւնից զերծ է մնացել գրողը, նա չի թաքցնում իր ցաւը, բայց եւ անշառաւիղ է նրա սէրը: Պատկերաւոր են իրավիճակները, բառը եւ վերջ ի վերջոյ՝ տողը: Բանաստեղծութիւնը բնական, բաբախող շնչառութիւն ունի, եւ գնալով ապագայի յոյսը գլուխ է բարձրացնում վշտի ու տառապանքի հանդէպ:

Հիմա ես ամէն օր ծերանալու, փախչելու, թաքնուելու
ցանկութիւն ունեմ քո՝
մանկան պէս անպաշտպան հայեացքից,
բայց այսօր, հէնց հիմա, առաւել, քան երբեմէ,
քեզ կրծքով կերակրելու ու բարուրելու պարտք ունեմ:
Թո՛ղ տղաներին իրենց Եռաբլրում՝ շահած խաղաղութեան հեղ, անուշա,
թո՛ղ նրանց երեւից Ծիր կաթինի պէս ծորացող նրանց մայրերի
միլիոնաւոր բեկորների վերածուած արտերը,

որբերի արցունքները, որ պերերպուրկեան ու լոնպոնեան դժգոյն անձրեւներից
էլ յորդառապ են:

Դ՛հօրս եկ ապագայի համար քենդագին մաքառող հայրերի անպակ
խորշոմներից,
թող ու եկ ինձ մօտ, ձագճուկ,
ես զաւակներ խնամելու մեծ փորձ ունեմ,
նրանք իմ քնքշանքի ներքոյ մոգեր ու մարգարէներ են դառնում,
նախշուն հաւքեր ու եղեմական ծաղիկներ,
նրանք իմ համբոյրներից
հսկաներ ու աստուածներ են դառնում,
ովկիանոսներ ու աստղեր, Կաճարներ ու վանքեր:

Ա. Ասլիբեկեանի տողը բովանդակութեան խորութեան հետ նաեւ մեծ գրաւչու-
թիւն ունի: Մարդը յաճախ իր ներսում գաղտնի աղօթք-նուիրումի որոնումների,
նրանց միջեւ կապեր հաստատելու ճանապարհն է փնտռում: Հերթական աղօթք-մենա-
խօսութիւնում գրողը համբուրում է հայրենիքին մայրաքաղաք եւ բանաստեղծական գե-
ղեցիկ պատկերներով բռպէ առ բռպէ հզօրացնում նրա տկարացած ու խոցուած մարմ-
ինն ու ոգին:

Այս... Հայրենիք,
դ՛հօր ինձ քո մայրը լինելու սուրբ իրաւունքը,
եւ ես քեզ կը համբուրեմ հէնց այնպէս,
ինչպէս իմ զաւակներին,
որ սիրել գիտեն,
որ գիտեն Երկնային Ապարանքը կառուցելու բոլոր գաղտնիքները,
որ ներել ու երգել գիտեն, այսօր օրը պոեզիա է բուրում:

Պոեզիան խեղդում է (ի հարկէ, լաւ առումով նկատի ունեմ) օրուայ ժամանակա-
գրութիւնը, որովհետեւ այս ամէնը ոչ թէ պարզապէս տողեր են, այլ հայրենիքի
ամբողջական պատկերը կառուցելու օրհասական ժամի մասին են զգուշացնում:
Այո՛, հեղինակը կոչ է անում իւրաքանչիւրին անձնապէս սիրելով, փայփայելով, վէրքե-
րը շոյելով ու սնելով օգնել ոտքի կանգնել ծնկի եկած, բայց մտքում աղօթքի պէս
պայքար մրմնջացող հայրենիքին:

Ու ես, որ սիրում եմ բեմի վարագոյրի յեղեւում դիմակների հետ պար բռնել,
այսօր ներծծուած եմ պոեզիայով,
այն մէկով, որ քո մասին շատ բան գիտի,
նա տեսել է, շոյել է քո բոլոր վէրքերը՝ 88-ին, 92-ին, 16-ին, 2020-ին բացուած:
Նա գիտի դրանից առաջ էլ բացուած քո վէրքերի մասին,
բայց չի տեսել, այլ շօշափել է դրանց սպիները՝
լացելով, մտքում մահանալով, աղօթելով, ոտքի կանգնելով, մայր դառնալով:
Նա գիտի հողի, Տիեզերքի, ջրի ու արեան կանչի մասին շատ բաներ:
Այսօր հեռաւոր Կրեֆելդում փոքրիկ մի աղջիկ անպրարուջ հեռացաւ երկինք,
ու նրա խեղճ հայ ծնողները շփոթուած են,
նրանք չգիտեն՝ մոխրացնել ու ովկիանոսին յանձնել,
թէ փայտեայ արկղիկով օդար հողին պահ տալ այն հայուկի մարմինը, որին

կտրել էին իր արմարից,
քեզնից, քո սպիներով ու վերքերով պարուած հողից, Հայրենիք,
որ ամենապաքն ես:

Գրողի բնագրում արտացոլուել է ժամանակի շունչը: Այդ ժամանակը նաեւ ժամանակագրութիւն է որոշ տողերում: Գաղափարական կենսունակ ու հաստատուն միջուկ, ընթացք եւ աւարտ է պարունակում տուեալ ստեղծագործութիւնը: Պոետական ճակատագիրը յաճախ միախառնում է հայրենիքի ցաւի հետ, որը տարբեր պահերի կարող է ցնցումներ առաջացնել՝ հոգեբանօրէն խախտելով կապը աշխարհի ու մարդու ներաշխարհի միջեւ:

Երէկ հայր ու որդի՝
անհասկանալի, անսպասելի, անընթեռնելի հանգամանքներում՝
զազանի ձեռքն ընկան,
զէնքի ուժով գերնին զապալուած՝ յանկարծ հողից բարձրացող զաք ու գիրգ՝
իրենց Հայրենիքի հոյսն առան, որպէղից, ինչպէ՛ս, նրանք չիմացան,
բայց երբ նայեցին միմեանց, նոյն բանն աւացին ու իրար հասկացան,
ինչ լեզուով, ինչպէ՛ս, ինչո՞ւ, չգիտեմ,
բայց դանդաղ ու վստահ հպուեցին իրար մարմիններով:
Ո՛չ թէ մահուան վախից,
այլ քո բոյրի մէջ պարուրուելու երանութիւնն իրար հեպ կիսելու
խենթացնող երջանկութեամբ՝
յաշարուած մահուան հեպ, եւ
հէնց այդ պահին եղաւ աններելին,
ու հէնց այդ պահին Տիեզերքը զգաց քո հրամայականը, Հայրենիք,
Նա հասկացաւ, որ զէնքն անգոր է,
երբ մարմնիդ յափտեմականին է հպում:

Բանաստեղծութեան վերջում գրողը խնդրանքով է դիմում հայրենիքին: Այն հայրենիքին, որի մարմինը յաւիտենականին է հպում: Նա հասկացնում է, որ զէնքով ոգին չե՛ս կարող սպանել, ինչքան էլ ջանաս: Իսկ մեր հայրենիքն այդպիսին է՝ ոգով ուժեղ, կամքով՝ անգերազանցելի, իսկական որդիներով՝ անպարտելի:

Տո՛ւր ինձ քո մայրը լինելու սրբազան իրաւունքը,
Հօգօս, ու ես քո ոտքերի առաջ մարգարիտներ ու հակինթներ կը դառնամ,
մայրական կենարար կաթի պէս քեզ ամէն բոպէ կաթիլ առ կաթիլ սնելով՝
դարձեալ Հսկայ կը դարձնեմ,
Հայրենիքս,
Միակս,
Ուրիշս:

Անուշ Ասլիբեկեանի «Հայրենիքս, միակս, ուրիշս» բանաստեղծութիւնը վերլիբրի՝ ազատ բանաստեղծութեան օրինակ է, որն առաջին անգամ յայտնուելով համացանցում այս յոռնուարին՝ գրաւեց ընթերցողների եւ մասնագիտական շրջանակների ուշադրութիւնը. տպագրուեց «Գրական թերթում» եւ գանատական «Գեղարդ» ամսագրում, թարգմանուեց անգլերէն՝ Արծուի Բախչինեանի եւ Նորա Արմանիի համատեղ աշխատանքի արդիւնքում: Քչերին է յայտնի, որ Անուշ Ասլիբեկեանը

1990-ականների վերջին գրականություն է մտել որպես բանաստեղծուհի: Նրա առաջին բանաստեղծությունները Գուրգէն Խանջեանի, Արտաշէս Արամի եւ այլ գրողների հաւանութեանն են արժանացել, տպագրուել «Գրեթերթում» եւ «Արուեստ» ամսագրում: Բանաստեղծություններից մի քանիսը թարգմանուել են գերմաներէն եւ ընդգրկուել Գերմանիայում լոյս տեսած «Հայաստանի սիրտը... բանաստեղծություններ եւ ուրիշ ոչինչ» անթոլոգիայում (Թարգմանիչներ՝ Ագապի Մկրտչեան, Հելմուտ Մալոնէկ, 2017), ինչպէս նաեւ ՀՀ վաստակաւոր արտիստուհի Սիլվա Իզպաշեանի տպաւորիչ, յուզական կատարմամբ հնչել են Հանրային ռատիոյի եթերում:

Վերջին տարիներին Անուշ Ասլիբեկեանն իր ընթերցողներին ներկայանում է արձակ ստեղծագործություններով եւ պիեսներով, բայց ահա «Հայրենիքս, միակս, ուրիշս» բանաստեղծութեամբ տեսնում ենք, թէ ինչպէս է պատերազմի ցաւը խտանում, դառնում յույզ ու պոեզիա եւ ստիպում է գրողին վերստին խօսել բանաստեղծական լեզուով:

ՎՈՎԱ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**ՓՈՐՁ ՄԸ ԵՒ Ո՛Չ ԳՈՐԾ ՄԸ****(Քասիմի «Աշխարհաբար Նարեկ»-ի վերահրատարակութեան առթիւ)**

Քասիմի «Աշխարհաբար Նարեկ»ը, որ 1902-ին հրատարակուած է առանձին հատոր մը, Գրիգոր Նարեկացիի «Մատեան ողբերգութեան» հանճարեղ ստեղծագործութեան ամբողջական ու հրատարակեալ առաջին թարգմանութիւնն է: Միսաք Գօշունեան (Հալէպ, 1863-1913, Պոլիս), իր անունին շրջադարձով ստեղծուած յայտնի ծածկանունովը Քասիմ, արեւմտահայ թերթօնային վիպագրութեան դասական ստեղծագործութիւններէն «Վրէժխնդիրը» («Բիւզանդիոն», 1898-1899), «Խորհրդաւոր աղջիկը» (1898), «Բախտախնդիրը» («Բիւզանդիոն», 1900) եւ «Ժառանգորդը» («Մանգումէի էֆքեար», 1901) արդէն իսկ հրատարակած յայտնի վիպագիր մըն էր, երբ 1902-ին «Մանգումէի էֆքեար»-ի մէջ կը ձեռնարկէր Գրիգոր Նարեկացիի «Մատեան ողբերգութեան» երկի աշխարհաբար թարգմանութեան հրատարակումին: «Նարեկ» հակառակ անհասկնալի լեզուով ու խրթին բովանդակութեամբ իր անմատչելիութեան, կը մնար բարեպաշտ հաւատացեալներու սնարի աղօթագիրքը՝ անհամեմատելիօրէն պատկառելի քան թերթօնային որեւէ հրատարակութիւն: Այս իմաստով «Մանգումէի էֆքեար»-ի ու Քասիմի նախաձեռնութիւնը արգիլեալ սրբութիւն մը կը հասարակացնէր թէ՛ անոր լեզուն աշխարհակացնելով եւ թէ՛ զայն տան խորշերէն իջեցնելով փողոցները թերթ առ թերթ բաշխուող հրատարակութեան մը հասանելիութեան:

Մամուլի քննարկումները

Թերթօնի ու «Նարեկ»-ի այս սիրուն հակադրութիւնը ու անօրինակ նման նորութիւն մը չի վրիպիր Մենասէր ծածկանունին տակ ինքզինք քօղարկած Արփիար Արփիարեանի ուշադրութենէն: «Անկեղծապէս պէտք է խոստովանիլ թէ այսքան ինքնատիպ գաղափար մը ո՛չ մէկ հայ օրագրող չղացած ու գործադրած էր տակաւին», կը գրէ ան «Կրօնական թերթօն» խորագրեալ ակնարկին մէջ՝ տպագրուած «Մասիս»-ի մէջ, «Վառարանիս անկիւնէն» սիւնակին վրայ: Պոլսական կամ գաւառական կեանքէ առնուած պատկերներու կամ թարգմանական գրականութեան նմոյշներու թերթօնային հրատարակութիւնը ընթերցողները («Քիչ մնաց «յաճախորդը» պիտի ըսէի-»)՝ լրագրին կապուած պահելու միջոց մըն է շատ անգամ ըստ իրեն, եւ այս միօրինակութեան մէջ օրաթերթ մը, երբ իբրեւ թերթօն կ'ընտրէ կրօնական հատոր մը, ցոյց տուած կ'ըլլայ նախաձեռնութեան հոգի մը: Արփիարեան կ'ողջունէ այս նախաձեռնութիւնը՝ շեշտելով, թէ «Նարեկ»-ին «աշխարհաբար թարգմանութիւնը գրական կարեւոր աշխատասիրութիւն մըն է, ժողովուրդին դիւրամատչելի ըլլալէ զատ, բանասէրներուն ալ ուսումնասիրութեան ու զննութեան նիւթ մատակարարող»¹:

Արփիարեան մասամբ ճիշդ էր իր կարծիքին մէջ՝ հանրութեան մօտ այս հրատարակութեան գտած ընդունելութեան առումով. զոր օրինակ, «Բիւզանդիոն»-ի թղթակից մը Ուրֆայէն կը տեղեկացնէր, թէ տեղւոյն կիրակնօրեայ լսարանի մասնակիցներուն անակնկալ մը ընծայելու համար որպէս բացման աղօթք արտասանուած է «Նարեկ»-էն Քասիմի թարգմանած մէկ հատուածը, զոր հասարակութիւնը ընդունած է գոհու-

¹ Մենասէր, «Վառարանիս անկիւնէն - Կրօնական թերթօն», «Մասիս», 1902, թիւ 4, էջ 93-94:

նակութեամբ: «[Քասիմ] իր աշխատասիրութեան նիւթ ընելով Նարեկի աշխարհաբար թարգմանութիւնն՝ հայկական բարեպաշտութեան այնչափ հաճելաո՞րթ ընտրութիւն մ'ըրած է, որու համար, կարծենք, անկեղծ շնորհատրութիւններու միայն կրնայ սպասել»²:

Նախքան «Մանգումէի էֆքեար»-ի մէջ որպէս թերթօն հրատարակուիլը, Քասիմ «Նարեկ»-ի թարգմանութենէն որոշ հատուածներ տպագրած էր «Բիւզանդիոն»-ին մէջ, եւ հասարակութիւնը արդէն իսկ նախաճաշակ մը ունէր: Կատարուած նախաձեռնութիւնը, այսինքն «Նարեկ»-ը աշխարհաբարի թարգմանելու անհրաժեշտութիւնը ողջունելով հանդերձ, սկսած էին ծայր առնել նաեւ թարգմանութեան որակը քննադատող, թարգմանիչին արժանիքները հարցականի ենթարկող բազմաթիւ ակնարկներ, յօդուածներ:

Առաջին քննադատներէն մէկն էր Շահէն ծածկանունով ներկայացող յօդուածագիրը (ինքնութիւնը կարելի չեղաւ ստուգել): Ան կը նշէ, թէ «առանց բնագրին հետ համեմատութեան, ջուրի պէս կը կարգացուի թարգմանուած աղօթքը»: Սակայն, կ'ըսէ Շահէն, գիրքը այլեւս աղօթագիրքէ մը աւելին է, «քրտինքոտ, հոտած բարձերու տակէն ու հիւանդներու սնարքներէն՝ բարձրութիւններու մէջ կը սաւառնի, եւ անոր վանական հեղինակն, Հոմերոսի, Տանդէի մեծ դէմքերուն պէս՝ Պառնասի վրայ կը ճառագայթէ շողարձակ», հետեւաբար շատ աւելի խնամքով պէտք է վարուիլ անոր հետ³: Բնագրին ու թարգմանութեան միջեւ համեմատութիւններ կը կատարէ յօդուածագիրը, նոյնիսկ երբեմն կ'առաջարկէ իր տարբերակը:

«Հեղ. “Եթէ ախտս ինչ սրբանուէրս կաթուածոց աշաց սովաւ բերցի, եղիցի ի քէն խնամով եւ յիս անձրեւեալ” - Թարգ. “Եթէ այս աղօթքներուն ազդեցութեամբ հոսած կաթիլ մը արցունքն ընդունելի ըլլայ քու առջիդ ու սրբագործուի, իմ վրաս ալ թող անձրեւէ այն սրբագործութիւնն, ո՞վ խնամակալ”: - Գարնան գետի չափ յորդութիւն մը, բայց այնքան պղտորութիւն կայ որ հեղինակին լոյսէն նշոյլ մը չի տեսնուիր յատակը: Ի՞նչ ըսել է ախտս ինչ սրբանուէրս»: Իր քննադատութիւնը այս եւ այլ օրինակներով կ'ամրացնէ Շահէն ու կ'եզրակացնէ. «Թարգմանիչը, տեղ տեղ, անոր ետեւէն չի քալեր. թէեւ ձեռքը տապար չունի, բայց հին պատկերներու վրայ երկնցող վրձիններու պէս՝ սկզբնատիպ գեղեցկութիւնը կ'եղծէ պոռոտ երանգներով. տեղ տեղ ալ բաւական հեռաւորութիւններ կան»: Բնագրին ու թարգմանութեան վերաբերեալ իր ուշագրաւ բանաձեւումը հետեւեալն է. «Մէկը կը քալէ, միւսը կը թռչի»:

«Բիւզանդիոն» Շահէնի յօդուածէն ետք խմբագրական ծանօթութիւն մը գրած է, որ Քասիմի կատարած թարգմանութեան սկզբունքները հասկնալու համար բանալի մը կարելի է համարել: «Քասիմ իմաստներու եւ բացատրութիւններու աւելի դիւրահասկնալին, ճկունն ու ժողովրդականը փնտռած է եւ այս նպատակով մէկ կամ երկու մոլթ կամ երկդիմի բառ զոհելու չէ վարանած»: Ըստ «Բիւզանդիոն»-ի խմբագիրին, «Նարեկ»-ի թարգմանութիւն մը ցարդ հայկաբան մը կամ կղերական մը կատարած պէտք է ըլլար, սակայն, ընդհակառակը, «կը տեսնենք ժողովուրդի զաւակ մը որ ո՛չ հայկաբանութեան դասատու է, ո՛չ եկեղեցական է, եւ միայն ժողովուրդին օգտակար ըլլալու եռանդով լոկ փռն մը կ'ընէ, ո՛չ թէ վերջնական գործ մը գրական»⁴:

«Աշխարհաբար Նարեկ»-ին շուրջ մամուլին մէջ կատարուած քննարկումները բանավիճային աստիճանի մը կը հասնին ատեն մը վերջ, երբ մանաւանդ «Սուրհանդակ»

² Գ. Կ. Ո., «Քասիմ» ու «Նարեկ», «Բիւզանդիոն», 8 Մայիս, 1899:

³ Շահէն, «Երկու թարգմանութիւններ», «Բիւզանդիոն», 1-13 Ապրիլ, 1899:

⁴ Անդ:

յաջորդաբար կը սկսի հրապարակել խմբագրութեան հասած քննադատական մէկ քանի ակնարկները: «Գ.» ստորագրութեամբ հրատարակուած ակնարկին մէջ նշուած է, թէ «Նարեկ»-ի թարգմանութիւնը «աւելի բառարան մը եղած է, բառերուն նշանակութիւնը քով քովի դնելով, քան հեղինակին (Գրիգորի Նարեկացւոյ) ունեցած հմտութեանը հետեւելով՝ անոր բուն իմաստը երեւան հանած»: Ըստ յօդուածագիրի, թարգմանիչը աչքի առջեւ չէ ունեցած Հ. Գաբրիէլ Աւետիքեանի մեկնութիւնը՝ «Նարեկութիւն»-ը, այլապէս փոխաբերեալ իմաստները մեկին եւ որոշ բացատրուած կ'ըլլային⁵ (բանասէր Պօղոս Խաչատրեանի կարծիքով սակայն «Նարեկ»-ի աշխարհաբար թարգմանիչները, ի թիւս անոնց նաեւ Քասիմ, առանձին կապակցութիւններ, նախադասութիւններ ու հատուածներ թարգմանած են ըստ Աւետիքեանի վերաշարադրանքին, կռահումներուն ու վերիմաստատորոմներուն⁶): Քասիմի հմտութիւնը կասկածի ենթարկող քննադատներէն մէկն ալ Ռոզմերի ծածկանունով յօդուածագիրն է՝ Յակոբ Ալոճեանը: Բնագրին ու թարգմանութեան միջեւ առկայ անհամաձայնութիւնները օրինակներով ցոյց տալէ ետք՝ ան կ'եզրակացնէ, որ «Նարեկ»-ի նման եզական գիրք մը աշխարհաբարի պէտք է վերածուէր շատ աւելի ուշագրութեամբ եւ Ս. Գիրքի ու հայրապետներու մեկնաբանութիւններուն հմուտ անձնաւորութեան մը կողմէ⁷:

Հորոյին գրքոյկը

Քասիմի «Աշխարհաբար Նարեկ»-ին շուրջ ստեղծուած գրականութիւնը սահմանափակուած չէ միայն մամուլի մէջ հրատարակուած յօդուածներով, կայ նաեւ տպագրեալ գրքոյկ մը, որ իր հերթին տուն տուած է այլ բանավէճերու: Շրջանի անուանի յօդուածագիրներէն Նշան Ճիւանեան (1851-1933), որ մամուլի մէջ հանդէս կու գար Հորոյ ծածկանունով, 1905-ին կը հրատարակէ գրքոյկ մը՝ «Նարեկը եւ իւր աշխարհաբար թարգմանութիւնը» խորագրով: Ճիւանեան «չէր ներեր հայ լեզուի դէմ մեղանշողներուն ու կտրուկ յօդուածներով կը մատնանշէր այդ սխալները ու ատով կ'արդարացնէր իրեն տրուած «Գրական ոստիկան»-ի տիտղոսը»⁸:

Հորոյին հեղինակութիւնը մեծ էր Քասիմի մօտ, այնքան որ վերջինս յայտարարած էր, թէ միայն անոր քննադատութիւններուն կարեւորութիւն պիտի տայ⁹: Նախքան թարգմանութեան ուսումնասիրութեան ձեռնարկելը, Հորոյ կը յայտնէ, թէ կատարուած աշխատանքը բաւական յաջող եղած է եւ չի կարծեր, թէ «առաջին անգամ ըլլալով որ եւ է բանասէր մը լաւագոյն թարգմանութիւն մը կարենար ընծայել» եւ թէ սխալներն ու վրիպակները ամբողջին բաղդատութեամբ փոքր մաս մը կը կազմեն¹⁰: Այնուամենայնիւ, Հորոյ քննադատութիւններու առարկայ եղած կամ սրբագրելի կէտերը կը բաժնէ չորս մասերու, որոնցմէ կարեւորագոյնները Քասիմի կողմէ կատարուած սխալ մեկնութիւններն են, որոնք պէտք է ուղղուին, այլապէս կրնան յանրաւի աղարտել Նարեկացիին համբաւը, եւ թարգմանիչին կողմէ կատարուած քմածին շրջաբանութիւններն ու հեղինակը քերականական օրէնքներուն ըմբոստացող մը ներկայացնելու պարագան:

Հորոյի գրքոյկին առթիւ մատենախօսականներ կը տպագրուին «Լոյս» շաբաթթերթին մէջ, որու այդ շրջանի խմբագիր-տնօրէնն էր Բաբգէն Ծ. Վրդ. Կիւլէսէրեան:

⁵ Գ., «Աշխարհաբար Նարեկը», «Աուրհանդակ», 1902, թիւ 956:

⁶ Պօղոս Խաչատրեան, «Գրիգոր Նարեկացի եւ հայ միջնադարը», Ս. Էջմիածին, 1996, էջ 62:

⁷ Ռոզմերի, «Աշխարհաբար Նարեկը», «Աուրհանդակ», 1902, թիւ 967:

⁸ Ընդարձակ տարեցոյց Ս. Փ. Ազգային հիւանդանոցի, Պոլիս, 1934, նոր շրջան Ժ տարի, էջ 294-295:

⁹ Հորոյ, «Նարեկը եւ իւր աշխարհաբար թարգմանութիւնը», Պոլիս, 1905, էջ 12:

¹⁰ Անդ, էջ 13:

Այս մատենախօսականները առիթ կը դառնան, որպէսզի եկեղեցականներ եւս անդրադառնան Քասիմի «Աշխարհաբար Նարեկ»-ին: Կիւլէսէրեան, որ «Նարեկ»-էն հատուածներ թրքերէնի թարգմանած էր նախապէս¹¹, կը խոստովանի, թէ «Քասիմ եթէ մէկ կողմէն իբր թարգմանիչ պատասխանատուութիւններ ունի Նարեկի գրաբարին հանդէպ, միւս կողմէն նոյն ինքն Նարեկի գրաբարն է շատ մը սխալներու պատճառը»¹²: Կիւլէսէրեանի կարծիքով, սխալ պիտի ըլլար Քասիմին աշխարհաբարը բանասիրօրէն համեմատել գրաբար «Նարեկ»-ին հետ, որովհետեւ տարբերութիւնը չափազանց է: Կիւլէսէրեան Քասիմի թարգմանութիւնը ըստ ինքեան գեղեցիկ գործ մը կը համարէ, սակայն ո՛չ գրաբարի բաղդատմամբ: Մտածելով հանդերձ թէ թերեւս հայերէն քերականութեան եւ մանաւանդ Նարեկացիի դարձուածներուն աւելի հմուտ թարգմանիչ մը նուազ թերութիւններով աշխարհաբար «Նարեկ» մը տար՝ Կիւլէսէրեան կը պնդէ, թէ կատարեալ եւ անթերի թարգմանութիւն մը անկարելի է, որովհետեւ «Նարեկին բնագիրը պէտք է վերականգնել ամէնէն յառաջ՝ այդպիսի ճշգրիտ թարգմանութեան մը համար»¹³: Հուսկ, Կիւլէսէրեան խորհուրդ կու տայ Քասիմին, որպէսզի անգամ մը եւս «ձեռք առնէ աշխարհաբար Նարեկը՝ մաքրելու համար զայն, ա՛յն սխալներէն, զորս մատնանիշ կ'ընէ Հորոյ»¹⁴:

«Աշխարհաբար Նարեկ»-ին ճանապարհը

Քասիմի «Աշխարհաբար Նարեկ»-ը, որ միջոց մը «Մանգումէի էֆքեար»-ի հետ թերթ առ թերթ բաշխուելէ ետք վերջապէս նաեւ կը հրատարակուի առանձին հատոր մը, 1902-ին, իր բոլոր թերութիւններով հանդերձ կոչուած էր դառնալու Գրիգոր Նարեկացիի «Մատենան ողբերգութեան» հանճարեղ ստեղծագործութեան ամբողջական ու հրատարակեալ առաջին թարգմանութիւնը¹⁵: Թարգմանիչը զայն ձօնած էր իր հանգուցեալ հօր՝ Մարտիրոս Գօշունեանին ու մօր՝ Մարիամ Գօշունեանին, որու «Նարեկ»-ի հանդէպ սնուցած բարեպաշտիկ սէրը խթան մը եղած էր ստեղծագործութեան թարգմանութեան համար: Միսաք Գօշունեան անսխալ թարգմանութիւն մը կատարած ըլլալու յաւակնութիւնը չէ ունեցած երբեք, այլ փափաքած է աղօթամատեանը «ժողովուրդին ամէն դասակարգին մատչելի լեզուով մը թարգմանել»¹⁶: Մամուլին մէջ լոյս տեսած թեր ու դէմ բազմաթիւ յօդուածները թերեւս ապացոյցը կարելի է նկատել հատորին արժանացած լայն ընդունելութեան:

Այս ընդունելութիւնը կրաւորական չէր. «Աշխարհաբար Նարեկ»-ի հրատարակութեան կարճ ժամանակ մը անց Պօղոս Քահանայ Մալէզեան Քասիմի թարգմանութեան վրայէն «Մատենան ողբերգութեան»-ը կը թարգմանէ թրքերէնի, 1904-ին: Դժբախտաբար, հայատառ թրքերէն այս թարգմանութիւնը (538 էջ) տպագրուած չէ ու կը պահուի Երեւանի «Եղիշէ Զարենցի Անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարան»-ին մէջ,

¹¹ «Տու՛ա քիթապը. ժամագիրք, Սաղմոս, Շարական, Ագաթանգեղոս, Նարեկ վէ սա՛իր էսէրլերաէն սէլիմիշ թերեմէ վէ թէպլիպ օլունմուշ տու՛ալար», թարգմանիչ՝ Բաբգէն Մ. Վրդ. Կիւլէսէրեան, Պոլիս, 1904:

¹² «Մատենախօսական, Նարեկը եւ իւր աշխարհաբար թարգմանութիւնը, գրեց՝ Հորոյ», «Լոյս» շաբաթաթերթ (Նոր շրջան), 26 Փետրուար, 1905, ժ տարի, թիւ 9, էջ 214:

¹³ Անդ:

¹⁴ Անդ, էջ 215:

¹⁵ «Մատենան ողբերգութեան» առաջին թարգմանութիւնները եղած են թրքերէնով: Առաջինը թերեւ 1857-ին Իզմիրի մէջ տպագրուած գրոյկն է, որ կը ներկայացնէ Ա, Բ, Գ, Դ, ԺԲ, ԽԳ եւ ՂԳ գլուխներուն թարգմանութիւնը: Կայ նաեւ ուրիշ մը՝ կատարուած 1861-ին, Գրիգոր Ղարամանեան ֆահանայի ձեռամբ: Թարգմանութեան հայատառ թրքերէն ձեռագիրը կը պահուի Երուսաղէմի Ս. Յակոբեանց մայրավանքի Ս. Թէոդորոս Զեռագրատան մէջ (տե՛ս, Նորայր Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Ս. Յակոբեանց, հտ. Գ., 1977, էջ՝ 386-387):

¹⁶ «Աշխարհաբար Նարեկ», թարգմանեց՝ Միսաք Գօշունեան (Քասիմ), Պոլիս, 1902, էջ՝ 510:

մաս կազմելով Թորոս Աղատեանի հաւաքածոյին¹⁷:

Հասարակութեան կողմէ ընդունելի եղած «Աշխարհաբար Նարեկ»-ը ըստ երեւոյթիւն նոյն ոգեւորութիւնը յառաջացուցած չէր աղօթամատեանի հետագայ թարգմանիչներուն մօտ:

«Մատեան ողբերգութեան» յաջորդ թարգմանիչները պիտի ըլլային արմաշական երկու հոգեւորականներ: 1926-ին Գահիրէի մէջ լոյս կը տեսնէ «Նարեկ»-ի «արդի հայերէն» երկրորդ թարգմանութիւնը՝ Թորգոմ Եպս. Գուշակեանի ձեռամբ¹⁸: Ա. տպագրութեան նախաբանին մէջ Թորգոմ Եպիսկոպոսը կը յայտնէր, թէ ժամանակի ոգիին դէմ գործած պիտի չըլլայ «Նարեկ»-ի այս նոր վերածումը ներկայացնելով հանրութեան¹⁹ (ընդգծումը մերն է՝ Ս. Տ.)՝ անուղղակիօրէն յայտնելով, թէ տեղեակ է հին թարգմանութեան, թէեւ ոչինչ կ'ըսէ այս մասին կամ որեւէ տեղ չի յղուիր անոր:

Նոյն տարին՝ 1926-ին արմաշական ուրիշ հոգեւորական մը՝ Գարեգին Եպս. Տրապիզոնի (Խաչատուրեան) Պոլսոյ մէջ կը հրատարակէ իր թարգմանութիւնը²⁰: Թարգմանիչը առաջին էջին զետեղած էր այն ընծայագիրը, զոր պաշտելի ուսուցիչը՝ Եղիշէ Արք. Դուրեան գրառած էր իր ձեռնաստիճան սարկաւազներուն նուիրած «Նարեկ»-ներուն վրայ²¹: Խաչատուրեան թարգմանութեան ձեռնարկած էր 20 Հոկտեմբեր, 1921-ին, Տրապիզոնի մէջ ու աշխատանքն աւարտած 19 Նոյեմբեր, 1922-ին²²: Թարգմանիչ եպիսկոպոսը իր աշխատանքը նուիրած է հօրը՝ Աստուածատուր Խաչատուրեանի (1829-1914) յիշատակին: Գարեգին Եպս. Խաչատուրեան 1948-ին, այս անգամ Պուլէնոս Այրեսի մէջ կը հրատարակէ «Նարեկ»-ի վերանայուած ու բարեփոխուած երկրորդ հրատարակութիւնը, չափածոյ տողատակումով, գրաբար բնագրի հանդիպադրութեամբ²³: Խաչատուրեան նոյնպէս, գոնէ առաջին հրատարակութեան մէջ, զոր մեր ձեռքին ունինք, որեւէ յիշատակում չէ կատարած Քասիմի թարգմանութեան մասին:

Նարեկացիագէտ Յակոբ Կիւլլիւճեան Քասիմի «Կեանքի տեսարաններ»-ի մասին հրատարակուած գրութեան մը առթիւ «Ազգակ»-ի խմբագրութեան ուղղած նամակին մէջ նախ կը նշէ, որ «Աշխարհաբար Նարեկ»ը «գժեպատաբար չէ վայելած իր կարեւորութեան համապատասխան ճանաչում, ներառեալ՝ նարեկացիագիտական-ակադեմիական շրջանակներու մէջ»²⁴: Տրապիզոնի ու Գուշակեանի կատարած թարգմանութիւնները, ըստ Կիւլլիւճեանի, լեզուական իրենց մակարդակով, «պաշտօնականութեամբ», Նարեկացիի լեզուի խրթնութիւնները աւելի ճիշդ վերծանելու ջանասիրութեամբ թէեւ աւելի գերազանց են, սակայն իր առաջնութեան համար Գօշունեանի աշխատանքը արժանի է մեծարանքի: Երկրորդ պատճառը աւելի կարեւոր է սակայն. «Նարեկի թարգմանութիւնները ուսումնասիրող մը անմիջապէս պիտի

¹⁷ Յաւաքաբան՝ Գրիգոր Նարեկացի, «Մատեան ողբերգութեան» հատորին, աշխատասիրութեամբ՝ Պ. Մ. Խաչատուրեանի եւ Ա. Ա. Դազինեանի, Հայկական ՍԱՀ ԳԱ հրատարակչութիւն, Երեւան, 1985, էջ 228:

¹⁸ «Նարեկ աղօթամատեան Ս. Գրիգոր Նարեկացոյ», արդի հայերէնի վերածեց՝ Թորգոմ Եպիսկոպոս: Ունեցած է առնուազն 2 տպագրութիւն, վերջինը՝ 1966-ին, Երուսաղէմի մէջ. Ս. Յակոբեանց տպարանէն:

¹⁹ «Նարեկ աղօթամատեան Ս. Գրիգոր Նարեկացոյ», արդի հայերէնի վերածեց՝ Թորգոմ Եպիսկոպոս, Երուսաղէմ, 1966, էջ 5:

²⁰ «Նարեկ ողբերգութիւն Ս. Գրիգոր Նարեկացիի», աշխարհաբարի վերածեց Գարեգին Եպիսկոպոս Տրապիզոնի, Պոլիս, 1926:

²¹ Անդ. էջ է:

²² Անդ. էջ ԺԳ:

²³ Յաւաքաբան՝ Գրիգոր Նարեկացի, «Մատեան ողբերգութեան» հատորին, աշխատասիրութեամբ՝ Պ. Մ. Խաչատուրեանի եւ Ա. Ա. Դազինեանի, Հայկական ՍԱՀ ԳԱ հրատարակչութիւն, Երեւան, 1985, էջ 226:

²⁴ Տե՛ս «Ազգակ», 25 Սեպտեմբեր, 2009, էջ 6: Շնորհակալ ենք պր. Կիւլլիւճեանին՝ մեզի փոխանցած գաղափարներուն համար:

անդրադառնալ հոս կատարուած բացառիկ աշխատանքին՝ ընթերցողին մատչելի նախադասութիւններով տալու Նարեկացիի բարդ գաղափարները»²⁵:

* * *

Իր առաջին հրատարակութենէն 116 տարի անց, 2018-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ, Ամենայն հայոց Տ. Տ. Գարեգին Բ կաթողիկոսի օրհնութեամբ եւ Քասիմի հիմնադրած Պոլսոյ «Ժամանակ» օրաթերթի 110-ամեակին առթիւ վերստին տպագրութեան արժանացած «Աշխարհաբար Նարեկ»-ը իր անդրանկութեամբ, անշուշտ, բանասիրական որոշ արժէք մը կը ներկայացնէ, սակայն մէկ կողմէ ալ կը հանդիսանայ կամբոյժացիէն սկսեալ մինչեւ Նալեան ու Աւետիքեան երկարած մեկնողական աւանդութիւնը շարունակող օղակներէն մէկը. աւանդութիւն, որ «կը պատրաստէ ընթերցողը խորհուրդի մը ընկալումին, սակայն ամբողջական ընկալումը անհնար է առանց անձնական փորձին, առանց վերջին շնորհին: ... Ան կը բացայայտէ մթնած իմաստը, ծածկուած բայց գոյ ճշմարտութիւնը, պայմանաւ որ ճշմարտութիւնը ինք յայտնուած ըլլայ իր անյայտէն: Ինչ որ կախեալ չէ մեկնաբանութենէն»²⁶:

Քասիմ կը հրաւիրէ ընթերցողն ու աղօթողը մասնակից դառնալու իր փորձին՝ համաշխարհային գրականութեան բացառիկ գործերէն, ինչպէս նաեւ Հայ եկեղեցւոյ ու առհասարակ Ընդհանրական եկեղեցւոյ մեծագոյն աղօթամատեաններէն մին հասկընալու ճանապարհին:

ՍԵՒԱՆ ՏԷՅԻՐՄԵՆՃԵԱՆ



²⁵ Անդ:

²⁶ Գրիգոր Պըլտեան, «Երկխօսութիւն Նարեկացիի հետ», Երեւան, 2008, էջ 431-432:

ԳՐԱԿԱՆ**KHACHATUR KECHARETZI
FOUR POEMS**

Khachatur Vartabed Kecharetzi was a poet, scribe, miniaturist, and educator, who lived at the end of the thirteenth century and the beginning of the fourteenth centuries, during the period of Mongol rule in Armenia (b. ca. 1260, d. 1331).¹ He was a scion of the prominent Khalbagian family and had friendly ties with Stepanos Orbelian, thus being related to the highest social classes of the time and place.² His students included Bartal, a master copyist and Stepanos *qahana*, who lavished praises on his teacher and spiritual father.³

He was a monk and served as Abbot of the Monastery of Kecharis in the Marz (region) of Kotayk. Bogharian notes that his tomb is located in the monastery of Carskar, in the area of Arsharunik.⁴ As a poet, he composed both ecclesiastical hymns (*ganjs*) and also poems of a more personal type, called *tals* (poems). He is best known for his labours dedicated to the *Alexander Romance* in its Armenian version.⁵ He edited this work adding preface, epilogue and *kafas*. The latter are 8-line stanzas attached to prose texts, such as the *History of Alexander* and were a popular genre in the eleventh-sixteenth centuries.⁶

Some of Khachatur's works have been published from time to time, and Mayis T. Avdalebegyan published a study and an edition of his writings.⁷

**Four Poems
1. Counsel for Souls⁸**

¹ On Khachatur, see the discussion in Manuk Abelyan (1955), *Հայ Հին Մատենագրութեան Պատմութիւն* [History of Ancient Armenian Literature] 2 Vols. (Beirut: Sevan), 2.228-244; Archbishop Norayr Bogharian (1971), *Հայ Գրողներ* [Armenian Writers]. (Jerusalem: Sts. James Press), 356; A. Doluxanyan (2002), "Khachatur Kecharetzi" in *Քրիստոնյա Հայաստան Հանրագիտարան* [Encyclopedia of Christian Armenia]. (Erevan: Armenian Encyclopedia Editions), 425-26.

² See Doluxanyan (2002), 425. In general, on this period and these families in southern Armenia, see: Garegin Catholicos Hovsepyan (1969), *Խաղբակեանք կամ Պողոտեան Հայոց պատմութեան մէջ* [The Khalbakians or Proshians in Armenian History]. (Antelias: Catholicosate).

³ Bogharian (1971), 356.

⁴ Bogharian (1971), 356.

⁵ The most recent edition of the Armenian version of the Alexander Romance is Hasmik Simonyan (1989), *Պատմութիւն Ալեքսանդրի Մակեդոնացոյ*. [History of Alexander of Macedon] (Erevan: Academy of Sciences).

⁶ See Kevork B. Bardakjian (2000), *A Reference Guide to Modern Armenian Literature 1500-1920*. (Detroit: Wayne State University Press), 31.

⁷ M. T. Avdalebegyan (1958), *Խաչատուր Կեչարեցի XIII-XIV դդ.* [Khachatur Kecharetzi XIII-XIV Cents]. (Yerevan: Academy of Sciences). For the fairly meagre bibliography dedicated to Khachatur and his works, see Robert W. Thomson (1995), *A Bibliography of Classical Armenian Literature to 1500 AD*. Corpus Christianorum. (Turnhout: Brepols), 214-215.

⁸ Avdalebegyan (1958), 145-146. Prof. Th. M. van Lint pointed out to me in a private communication that this poem shares lines with Frik and indeed the whole poem turns out to have also been attributed to Frik and is printed among his works. See Frik (1952), ed. Archbishop Tirayr (Melik Muschkambarian), *Ֆրիկ Տիվան*. [Poetry of Frik]. (New York: AGBU), 489-490. At this juncture, the question of actual authorship cannot yet be resolved. The situation bespeaks some confusion in the transmission of the poem.

This poem takes up a well-known literary form; it is a didactic call for repentance. Khachatur presents this call as if he were addressing an audience, most likely of monks (see “Brothers” in line 1). Its message is the fleeting nature of this world and its sensory delights. In an image which is sustained from Stanza 1 to Stanza 4, he likens the world to a dream. In many religious contexts, the simile of sleep preceding the revelation or realization of some revealed or redemptive truth is to be observed. The turn, the repentance, or the revelation is presented as an awakening.⁹ Here the poet tells his brothers that this world is like a sleep and those who will awaken will “escape Hell’s lot.” He does not deal at any length with the eschatological state, but focuses on arousing his listeners to “do what you ought / Abandon evil, go after good.”

In the poem lines B and D are in monorhyme throughout and lines A C do not rhyme. The lines are of seven syllables each.

ԽՏՏՏ ՈԳՈՑ

1. Եղբա՛րք, ձեզ խորատ մի տամ՝
Մի՛ կենաք դուք շատ խոր ի քուն,
Զարթիք եւ արթուն կացէք,
Խիստ ի մօտ եմք յօրն ի մահուն:

2. Աշխարհս է յերազ նրման,
Զինչ լինի մէկ մ'անուշ ի քուն,
Եւ ի քուն լինելն ի ներս,
Գանձ գըտնու անթիւ եւ անհուն:

3. Խընդալուն ցընծայր ի սիրտըն
Եւ ուրախ էր գանձին սիրուն
Եւ հանց համարէր յիւր միտքն,
Թէ՛ լինիմ իշխան մեծատուն:

4. Երբ որ ի քընոյն զարթեաւ
Եւ տեսաւ՝ որ էր սուտ ի քուն,
Յայնժամ փոշիման դարձաւ
Ի վերայ իւր շատ խընդալուն:

COUNSEL FOR SOULS

1. Brothers,¹⁰ I give you one counsel:
Do not sleep too deeply!
Awaken and stay alert,¹¹
We are very near the day of death.

2. This world is like a dream,¹²
As if one was in a sweet sleep.
And while being deeply asleep,
Finds a countless and vast treasure.¹³

3. He rejoiced happily in his heart,
And was glad of the delightful treasure,
And thus he thought in his mind,
“I will become a wealthy prince.”

4. When he awoke from sleep,
And saw that it was false, in sleep,
Then he started to regret
His great rejoicing.

⁹ Compare 1 Thess 5:6: “So then let us not sleep, as others do, but let us keep awake and be sober.” This verse might have contributed to the sleep image.

¹⁰ Here the poet addressed “Brothers,” which may be compared with the biblical Wisdom Literature, where the didactic address to “my son” is common: see, e.g., Prov 1:1. Both terms imply some sort of homiletic or pedagogic context for the ensuing address.

¹¹ Here, as often, “sleep” refers to a sleep of the spirit, and not ordinary physical sleep. The soul, if not aroused to repentance, is said to be asleep. Compare Ephes 5:14.

¹² Cf. Ps 90 (89):5 but there the image is used to heighten the idea of the transience of humans.

¹³ This image may have been constructed on the foundation of Matt 11:34 which has both the elements of finding a treasure, which is for Matthew, the kingdom of heaven and rejoicing. Or it may simply be a simile drawn from poetic tradition and based, of course, on real life.

5. Յորժամ հրամայէ Աստուած,
Ու խընդիր գան մարդոյն հոգոյն
Պահիկ մի դադար չի տան,
Որ տեսնու զորդիքն իւր սիրուն:

6. Զաչերն ողորմուկ ածէ
Ու նայի ի դէմ սիրելուն,
Ի ճարկէ ճարակ ընկնի
Զի գըտնու հընար գերծանելուն:

7. Հառաչէ սըրտէն ի վեր
Ու կոչէ զմայր տղաքներուն,
Ու հանց պատասխան տայ իւրն,
որ նուազի ի խեղճ յասելուն:

8. «Քո կէս մարմընոյդ եմ ես,
որ կանցնիմ ի ներքեւ հողուն.
Զագե՛ր ձեր ծընօղն եմ ես,
Որ կերթամ այլ ոչ գամ ի տուն»:

9. Հիմիկ դուք ձեզ պէտ արէք,
Թողէք զչարն, գնացէք հետ բարուն.
Զարին ատեցող լերուք,
Որ չլինիք բաժին գեհենուն:

10. Բարեացըն սիրող լերուք,
Գործեցէք ‘ւ արէք ձեզ անուն,
գէմ քան ըզթարթել ականն,
Մահն ի մօտ է աղամորդուն:

5. When God commands,
And they come to seek man’s soul,¹⁴
They do not give (him) a moment’s respite,
So as to see his beloved children.

6. He directs wretched eyes
And regards his loved one’s faces,
He tumbles from ploy to ploy,¹⁵
He finds no means to escape.¹⁶

7. From his heart he sighs towards Heaven,
And he calls to the children’s mother,
And speaks¹⁷ to her thus;
and¹⁸ saying, “Miserable (me)!” she fainted.

8. “I am that part of your¹⁹ body
that will pass to beneath the earth.
Nestlings, I am your parent,
Who will depart and not return home.

9. “Now, you do what you ought,
Abandon evil, go after the good,²⁰
Become haters of evil,²¹
And you will escape Hell’s lot.

10. “Be lovers of good,
Work and make a (good) name for yourself.
Faster than the blink of the eye,
Death approaches Adam’s children.”

¹⁴ The verb “come” has an unspoken subject, “the angels”. On the idea that angels come and take the soul at the time of death, see *QGreg* §9, where we read: “St. Gregory said to the archangel, “How do you take the soul of the sinner?” The idea of an angelic psychopomp is already present in *QEzra* A 19-21, *QEzra* B 6, *TAbr* B 13:3 and compare *TAbr* A 17:7, *TAbr* B 6; 2 Bar 51:1-6, and *Apoc Paul* 11, 15.

¹⁵ Apparently meaning: from one possible penitential act to another.

¹⁶ Escape the angel and equally, his fate

¹⁷ Or: responds.

¹⁸ Literally: so that.

¹⁹ His wife’s body

²⁰ The same sentiment is expressed differently in Ps. 34 (33):15 and 37 (36):27 where we read *Խոտորեալ ի շարէ եւ արա զբարի*. This idea also recurs repeatedly in Proverbs: 3:7, 13:19, 16:6, and 16:17. Since the biblical verbiage is not used by Khachatur, this obvious idea here may not owe anything to biblical allusion and its use in Psalms and Proverbs might be coincidental.

²¹ Or: the Evil One.

2. MY SOUL THE ACCUSER²²

This interesting poem presents a dialogue-dispute between body and soul, with judicial overtones. Literary dialogues were well known in the early Christian centuries and before, a famous example being Justin's *Dialogue with Trypho*. Dispute dialogue poems also appear in literature early, some of the most striking surviving in Syriac.²³ Khachatur presents a dispute dialogue between the body and the soul in this world,²⁴ and it is implied that these are their speeches in the heavenly court of justice

Such dialogues occur in various contexts and our poem here is comparable with the dialogue of soul and body in *Questions of St. Gregory*.²⁵ While there the stress is on the solidarity of body and soul in virtuous acts, in Khachatur's poem the soul accuses the body of leading it astray. Beneath this lies an attitude clearly weighted towards the soul as opposed to the body, which, of course, depends upon a particular attitude to anthropology. A similar underlying pattern is also present in Pseudo-Ezekiel's "Parable of the Lame and the Blind", again about the relative merits of soul and body.²⁶

The poem is monorhyme in three lines of each two stanzas and one line not rhyming. The non-rhyming line is line 3 except for stanza 1, where it is line 1. The unique rhyme on line 1 of stanza 1 is njū which is taken up as the dominant rhyme in stanzas 3-4, thus contributing to the unification of the poem.

<i>Stanza 1</i>	<i>Stanza 2</i>	<i>Stanza 3</i>	<i>Stanza 4</i>
<i>nju</i>	<i>hu</i>	<i>uju</i>	<i>nju</i>
<i>hu</i>	<i>hu</i>	<i>nju</i>	<i>nju</i>
<i>hu</i>	<i>h</i>	<i>ku</i>	<i>hā</i>
<i>hu</i>	<i>hu</i>	<i>nju</i>	<i>nju</i>

*The syllable count is uneven and the poem is clearly not formally structured on that basis.*²⁷

²² Avdalbekyan (1958), 152, Poem no. 7.

²³ See one reference among many devoted to Justin's text: J. C. M. van Winden (1971), *An Early Christian Philosopher. Justin Martyr's Dialogue With Trypho Chapters One to Nine*. (Philosophia Patrum, 1; Leiden: Brill). Concerning Syriac dispute poems, see S. P. Brock (2001), "The Dispute Poem: From Sumer to Syriac," *Journal of the Canadian Society for Syriac Studies*, 1: 3-10. S. P. Brock (1983), "Dialogue Hymns of the Syriac Churches," *Sobornost*, 5: 35-45.

²⁴ A quite similar dialogue between body and soul is to be found, as I have already observed, in the Armenian text *Questions of St. Gregory*. See Recension I §§13-24 published in M. E. Stone (2018), "The Armenian Questions of St. Gregory: A Text Descended from 4 Ezra. Recension 1," *LM*, 131: 142-72, especially pp. 149-155, and Recension II §§13-17 (forthcoming). There the dispute is about which of the two is responsible for the person's fate on the Day of Judgement.

²⁵ See the preceding note.

²⁶ See Michael E. Stone, Benjamin G. Wright, and David Satran (2000), *The Apocryphal Ezekiel*. (Early Judaism and its Literature 18; Atlanta: Society of Biblical Literature), 9-18 (Esther Chazon), 61-69 (Marc Bregman).

²⁷ Stanza 1 has: 9, 6; 7, 8 syllables; stanza 2 has 7, 5(7); 7, 8; stanza 3 has 7, 7(8); 7, 7; stanza 4 has 8, 8; 8, 7.

ՀՈԳԻՍ ԳԱՏԱԽԱԶ

1. Հոգիս դատախազ լինի մարմնոյս
‘Ի եղուկ տայ սրտիս,
Թէ՛ է՞ր կուտեցեր զչարիս
Յանցաւոր այս սուտ աշխարհիս:
2. Կամ է՞ր կորուսեր դու զիս,
‘Ի անշէջ կրակ դրիր յիս.
Այն օրն, որ հաշիւ լինի,
Դու այրիս, ‘ւ անգերծ տանջեն զիս:
3. Մարմնոյս պատասխանն է այս,
որ ի տալ մտացս եւ հոգոյս՝
«Զիս պարտաւոր է՞ր առնես,
Այդ սուտ է զուր իմ խոցերոյս:
4. Ես ձի, եւ դու տէ՛ր ես ձիոյս,
Ես ծառայ, ‘ւ իշխան դու գերոյս,
Կամիլըդ քո՝ գործ լինէր ինձ.
Մեղ է՞ր դրնես հողածնոյս»:

MY SOUL THE ACCUSER

1. My soul accuses my body,
and causes my heart’s dismay,
Saying, “Why did you heap up evils
in this false, transient world?”
2. “Why did you destroy me?
and put me into unquenchable fire?
On that day when there is a reckoning,
you burn and they surely punish me.”²⁸
3. This is my body’s answer,
which it gives to my mind and soul,
“Why do you make me guilty?
My hurts are false and unjust.”²⁹
4. “I am a horse — and you are this horse’s
owner,
I am a servant — and you are lord of me,
the captive,
Yours is the will — mine the act.
Why do you accuse me of sin, who am
born of dust?”

3. THIS WORLD WAS LIKE A SEA³⁰

In this poem, Khachatur expresses his sense of the transience of human life and of the senses. Jewelled words and love pass away with death. The body dies and is buried in the grave; death’s pallor replaces vivacity. This theme greatly occupied the poet’s thought and feelings, for it is to be observed in all four poems translated here.

ԱՆԽԱՐՀՍ ԷՐ Ի ԾՈՎ ՆՐՄԱՆ

1. Աշխարհս էր ի ծով նրման,
Զիս ի վայր տարաւ յանդիման.
Կենցաղս էր յալեաց նրման,
Զիս ի մէջ էառ քան զընդան
2. Սէրն էր անդընդոց նրման,
Զիս ի վայր քաշեց փոշիման.
Աւուրքս էր ծաղկի նրման,
Որ անցաւ երազի նրման.

THIS WORLD WAS LIKE A SEA

1. This world was like a sea,
It led me downwards opposite.³¹
This life was like waves,
It held me in tighter than a prison.
2. Love was like an abyss,
Regret dragged me downwards.³²
My days were³³ like a flower,
Which passes as a dream.

²⁸ The body will burn and the soul will be punished.

²⁹ You fail to do justice to my hurts/wounds: suggestion of Th. M. van Lint.

³⁰ Avdalbekyan (1958), 153, poem no. 7.

³¹ I.e. the abyss, or “for all to see” (Th.M.v.L.).

³² I.e., into the depths.

³³ Observe the singular verb with a plural subject. The similes here may be derived from Psa. 90(89):5 “Thou dost sweep men away; they are like a dream, like grass which is renewed in the morning.” Compare Ps 102(103):11, 16. The poet replaces Psalms’ “grass” with “flower”.

3. Մարմին, մեռանիլ կայ քեզ
Եւ մըտնուլ ի նեղ գերեզման,
Աչերըդ խըփւի, գերի՛:
‘Ի երեսիդ գոյնըն հողանան:

3. O body, dying is for you,
And entering a narrow grave.
Your eyes are closed, O captive,
And your face’s colour is earthen.³⁴

4. Ճօհար բան եւ բառ լեզուիդ
Այդ ամէնն ի քէն վերանան,
Սնոտի սիրելիքըդ քո
Զքեզ թողուն, եւ ի քէն հեռանան:

4. Your jewelled word and tongue’s speech,
All these are taken from you
Your loved ones are nothing,
They leave you, draw far from you.

4. POEM³⁵

In this short poem composed of two gnomic quatrains of sapiential character, Khachatur apostrophizes himself. The advice he gives himself is proverbial in character and is, formulated as a series of binary oppositions.

The monorhyme pattern is Է in lines A C of each stanza and ԷԼ in lines B D.

ԽԱՉԱՏՈՒՐ, ԱՌՆԵԼ ԼԱՅ Է

KHACHATUR, IT IS BETTER TO ACT

1. Խաչատու՛ր, առնել լաւ է,
Քան ասել եւ ոչ կատարել,
Աղքատ եւ արդար լաւ է,
Քան գիտուն եւ յոյժ մոլորել:

1. Khachatur, it is better to act
than to speak and not to do.
Poor and righteous is better
than learned and greatly erring.

2. Սակաւ գիտութիւն լաւ է,
Քան գիտել եւ ոչ կատարել
Մին ձեռօք յերկինս լաւ է
Քան երկու ձեռօք դեգերել:

2. A little knowledge is better
than to know and not to do.
In heaven with one hand is better
than to wander about³⁶ with two.

MICHAEL E. STONE

The Hebrew University of Jerusalem



³⁴ For color of face as a sign of strong emotion, compare Dan 5:6, 9, 10, 7:28; Armenian version of 4 Ezra 5:16 ms A. Here, however, it is used to indicate the pallor of death.

³⁵ Avdalbekyan (1958), 160, Poem No. 12.

³⁶ Implying: err, sin.

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

ՆՈՐ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԲԱՌԱՐԱՆԻ ԴԱՐՁՈՒԱԾԱՅԻՆ ՄԻԱԽՈՐՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ

Մուտք

Հայ բառարանագրական բազմաթիւ ու բազմապիսի յուշարձանների մէջ իր բացառիկ տեղն ունի «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» բառարանը: «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» երկհատոր բառարանը Մխիթարեան հայրերի անգնահատելի ներդրումն է հայոց լեզուի պատմութեան ուսումնասիրութեան գործում: «Նոր Հայկազեան բառարան»-ը մեզ տալիս է ամբողջական պատկերացում գրաբարի բառային կազմի վերաբերեալ, արտայայտում է հին գրական հայերէնի բառապաշարի քերականական պատկերը: Մեր հետազոտութեան առարկան «Նոր Հայկազեան բառարան»-ում զետեղւած դարձուածային միաւորների իմաստային խմբերի առանձնացումը եւ քննութիւնն է: Այս բառարանում արդէն դարձուածքների ընտրութիւնը եւ տեղադրումը կատարուել է գիտական որոշակի սկզբունքների կիրառմամբ, ժամանակակից լեզուաբանութեան պահանջներին միանգամայն համապատասխան: Դարձուածային միաւորների հետ մէկտեղ բառարանում ներկայացւում են նաեւ գրաբարեան դարձուածային միաւորների ոճերը, ոճական երանգաւորումները, իմաստային նրբերանգները¹:

Այդ միաւորների դասակարգումը կատարել ենք ըստ դարձուածքների բաղադրիչների իմաստային առանձնայատկութիւնների՝ նշելով նաեւ իւրաքանչիւր խմբի մէջ ներառուած դարձուածային միաւորների այս բառարանում մեզ հանդիպած էական առանձնայատկութիւնները:

Մարդկային հնագրեան սովորութիւն է խօսքն ուղեկցել զանազան ժեստերով, դիմաշարժութեամբ, որոնք, սերնդէ սերունդ կրկնուելով, դառնում են սովորական, ընդունուած իբրեւ խորհրդանշաններ այս կամ այն գործողութեան կատարման կամ զգացմունքի, վիճակի, նոյնիսկ մտքի արտայայտման համար: Այս ճանապարհով էլ առաջացել է դարձուածային միաւորների զգալի մասը: Խօսակցական շերտից գեղարւեստական խօսքի մէջ այս կարգի դարձուածքները լայնօրէն կիրառուել են ու արագօրէն տարածուել: Նմանատիպ միաւորները ամէնից առաջ կազմուել են մարմնի մասերի եւ նրանց կատարած զանազան գործողութիւնների անուանման միջոցով: Հետագօտութեան արդիւնքում պարզ է դառնում, որ գրաբարում լայն տարածում են ունեցել մարմնամասեր նշանակող բառերից կազմուած դարձուածքները: Արդի հայերէնում եւս դարձուածքների գերակշիռ մասը կազմուած է մարդու մարմնի մասերի անուններով, եւ դա միանգամայն բացատրելի եւ հասկանալի է, քանի որ մարդ արարածը, անհատը, իր օրգանիզմով, իր զգայարաններով ու զգայութիւններով անքակտելիօրէն կապւած է շրջապատող աշխարհի հետ, եւ վերջինս դրանց միջոցով բեկուելով հասնում է նրա իմացութեանը, ճանաչմանը ու գիտակցութեանը: Տուեալ մարմնամասին բնորոշ յատկանիշն ու առանձնայատկութիւնն էլ դառնում է որեւէ գոյականի կամ այլ խօսքի մասի փոխաբերական լրացումը: Մարմնամասերի անուանումներից կազմուած դարձուածքների մեծ մասը բաղադրուած է ալն, ալք, ձեռք, գլուխ բառերից, եւ դրա բացատրութիւնն էլ է ակնյայտ. նշուած գոյականներն էլ լայն կիրառութեան ոլորտ ունեցող

¹ Տե՛ս Ղազարեան Ռ., Լեզուաբանական ուսումնասիրութիւններ, Երեւան, 2010, էջ 27-32:

բառամթերքի անբաժան մասն են կազմում: Եւ իմաստային այս խմբի մէջ մտնող դարձ-լածքներն էլ ունեն գործածական լայն ոլորտ ոչ միայն գրաբարում, այլեւ արդի հայերէնում եւս, քանի որ դրանց զգալի մասը իր հիմնական իմաստային շերտով եւ աննշան փոփոխութիւններ կրելով փոխանցուել է լեզուի յաջորդ փուլերին: Իմաստային այս խմբին պատկանող բառերից դարձուածքներ կերտելու սկզբունքները բնորոշում են լեզուակիր հանրոյթի աշխարհընկալման առաջնահերթութեամբ:

Մարմնամասերի անուանումներից բաղկացած դարձուածքների համապատկերում կարելի է արձանագրել հետեւեալ հետաքրքրական փաստերը, որ աչք բառը իրենով կազմուած դարձուածքների մեծ մասի մէջ մտել է իր առաջնային նշանակութեամբ՝ տեսողութեան, իսկ միւսների մէջ աչք բաղադրիչը հիմնականում ունի հայեացքի, շրջահայեացութեան, կենսափորձի, ուշիմ լինելու, հսկողութեան, հովանաւորութեան, ընկալման վերաիմաստաւորուած գաղափար արտայայտող իմաստներ: Աչքը իմացութեան կենտրոնն է մարդու երեւելի, ֆիզիքական կեանքի, իսկ սիրտը զգայական, զգացողական, զգացմունքային կենտրոնն է իւրաքանչիւր մարդու հոգեւոր աշխարհի համար: Սրտի զգացածն ու աչքերի տեսածն էլ ամբողջանում է լեզուի միջոցով, որը այդ երկուսի բովանդակային կողմը կարծես լինի: Ձեռքն էլ հէնց այն օրգանն է, որի օգնութեամբ մարդը կատարում է գրեթէ բոլոր գործողութիւնները. սրտի թելադրածը, աչքերի տեսածը, լսածը իրագործում է հէնց արտաքին օրգանների կիրառման միջոցով, եւ դրանք էլ դարձել են մեր լեզուի դարձուածային միաւորների կազմիչ բաղադրիչները:

Ա. Մարմնամասեր – ազատ բերանով(5), ազգի գլուխ(8), ականջալուր լինել(23), զակն տալ կամ տալ ակն(24), յակն անկանել(315), յառել զաչս(338), յառել զակն(338), զակն արկանել(710), ընդ ակն խոցել(765), ըստ ակն անկանել(786), ակն ի ճանապարհ(24), յակն առնուլ(24), ակն արկանել(25), թարթափել ական, ի թարթել ական, ակն ունել(25), ակն լուսոյ(25), ակն ածել(25), անկանել ի շեպ(476), անունկնդիր լինել(221), ակնաբեր լինել, ակնակառոյց լինել(25), ակն դնել(27), յակն ելանել(167), յակն հանել(167), արկանիլ յերեսս(169), ըստ աչս դատել(267), կալ աչաց(267), կալեալ լինել աչաց(267), զաչս ամբառնալ(267), յաչաց հանել(267), յաչաց ելանել(267), աչք հոգւոյ(267), աչք մտաց(267), առ աչս(267), առ աչօք(267), կալ աչաց(267), աչս արձակել(267), աչք տնկել(267), աչք զարնել(267), ձեռն արկանել(363), ձայն արուեստականց(372), աւանդել զոգի(390), բառնալ զգլուխ(440), բացաւ գլխով(469), բեկանիլ զսիրտ(479), բեկանիլ սրտի(479), բերան սրոյ(482), գալ ընդ կուսական արգանդ(526), գետնի աղիք(540), գլուխ ամենայնի(562), ի գլուխ ելանել(562), ի գլուխ հասանել(562), ի գլուխ գալ(562), ի գլուխ երթալ(562), ի գլուխ կատարիլ(562), ի գլուխ հանել(562), ի գլուխ տանել(562), ի գլուխ ածել(562), դնել զսիրտ(637), դնել ի սրտի(637), դնել զոգին ի բռին(637), յերեսս բերել(676), յերեսս գալ(676), թափել զոգի(802), թեկն ածել(806), թիկունս առնել(812), թիկունս տալ(812), թիկունս դարձուցանել(812), թիկունս լինել(812), ի թիկունս ածել(812), հոգի տալ(2), հաստատել զերեսս(55), հաստատել զձեռն(55), ձեռս դնել(151), զձեռանէ ունել(151), զձեռանէ առնուլ(151), զձեռանէ ձըգել(151), ձեռս տալ(151), ի ձեռս առնուլ(151), ի ձեռս տալ(151), ոգի առնուլ(503), ընդ արիւն գալ, սրբել զմօրուս(761), վազել սրտի(769), հանել յայլ լեզու(Բ,45), հաց ի բերան(Բ,70), ունչս ունել(Բ,552), ունչս առնել(Բ,552), ողն առնուլ(Բ,508), սրտապախ առնել(Բ,764), սրտապախ լինել(Բ,764), սրտառուլ լինել(Բ,764)²:

Հայ մատենագրութեան մէջ կրթութեան եւ գիտելիքի դերը միշտ կարեւորուել է: Եւ

² Անտիքեան Գ., Արգիշեան Մ., Սիւրմեկեան Խ., «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», Վենետիկ, Հ. I 1836, Հ. II 1837:

դարձուածային միաւորներին մէջ էլ փոքր թիւ չեն կազմում մտքի, մտածողութեան հետ կապուած դարձուածքները: Դրանցից շատերում պատկերաւոր կերպով ընդգծուած է, թէ մտքի, խելքի, մտածելու պակասից կամ բացակայութիւնից ինչպիսի բնութագրման կարող է արժանանալ մարդը եւ ոչ միայն մարդը: Դարձուածքների կառուցուածքից, գոյականի կամ այլ խօսքի մասի կողքին հանդէս եկող բայի գործածութիւնն էլ յուշում է, որ մեզանում մտածելը, խորհելը, յիշելը համարուել է եւ համարուում է ոչ միայն մտաւոր, այլեւ լուրջ ֆիզիքական աշխատանք: Միտք, մտածողութիւն արտայայտող դարձուածքները գրեթէ նոյն կաղապարն ունեն՝ կազմուած են միտ(f), ուշ, երբեմն էլ խել(f) գերադաս անդամներից:

Բ. Միտք, մտածողութիւն - անկանիլի մտաց(169), թափելի մտաց(802), անկանիլի միտս կամ մտօք(169), առնուլ յատամունս - իբր նովին մտօք(334), գալի միտս(525), գալի խելս(525), գալի կարծիս(526), գալի կամս ուրուք(526), ի խօկ արկանել - մըտածել, հոգալ(845, ընդ դաւթիկեանս գալ - խորհել(526), քրքրել զմիտս(1019), միտ առնել(281), ուշ դնել(281), միտս դնել(281), միտ դնել(281), ի միտ առնուլ(282), մտաւածել կամ ածել մտաւ(282), ընդ միտ մտանել(282), ընդ միտս հարկանել(282), ըստ մտի(282), ըստ մտի այլոց լինել(282), ի միտս գալ(282), ի միտս լինել(282), ի մտաց ելանել(282), ի մտաց անկանել(282), ի մտաց ասել(282), ի մտաց ասել(Բ, 282), սահել ի մտաց(Բ, 687), մտապահ լինել(Բ, 306), յուշ բերել(552), ուշ առնուլ(552), ուշ ունել(552), ուշ դնել(552), յիշումն առնել(Բ, 361):

Բնական է, որ վիճակ, դրութիւն, ֆիզիքական զանազան գործողութիւններ արտայայտող բայերից կազմուած դարձուածքները պէտք է գրաբարում եւս ամենամեծ թիւը կազմողները լինէին, քանի որ լեզուի զարգացման բոլոր փուլերում էլ գործողութիւն, լինելիութիւն, վիճակ նշանակող բայերը կիրառական լայն ու բազմապիսի ոլորտներ ունեն, անմիջականօրէն առնչուած են հասարակութեան բոլոր ոլորտների առօրեայ կեանքին, կապուած են մարդկային կեանքի որոշակի երեւոյթների հետ: Վիճակ, դրութիւն արտայայտող դարձուածքների խումբը միւս իմաստային խմբերի համեմատութեամբ մեր ուսումնասիրութեան մէջ եւս ամենամեծ թիւն է կազմում:

Գ. Վիճակ, դրութիւն - ագահել զագահութիւն(2), ածել ի հաւան(21), ածել զըրրունս(21), ածել ի համբոյր եւ ի քծինս(21), ածել ի հաշտութիւն(21), աղումբ առնուլ(27), ահ արկանել(28), աղ առնուլ(31), աղ եւ հաց ուտել(31), աղ ուխտի(31), աղ կնքեալ(31), աղմուկ առնել(42), աղմուկ գրգռել(42), յաճին դարձուցանել կամ վախճանիլ(50), ի մոխիր դարձուցանել(50), հրոյ կերակուր լինել(50), յամօթով առնել(78), զարամբ գալ(97), առն տալ(97), այց առնել(99), անկանիլ յարեւ(169), անձին առնել(169), անձին հրամայել(169), յանձին ունել(192), յանձն բեկանիլ(192), զանձամբ դառնալ(192), ըստ անձինն առնուլ(192), ըստ անձինն բառնալ(192), յանձն առնել(192), յանձին լինել(192), անտես առնել(245), անցանել անցից(249), անցանել յաշխահ(249), ապախտ առնել(269), ապախտ լինել(269), ապտակ ըմպել(278), յառ ապուռ(281), յապուշ առնել(330), յապուշ արկանել(330), յապուշ դարձուցանել(330), յապուշ կործանել(330), ատեան հողմոյ(335), յարեւ արկանել(352), արեւու ցուցանել(353), զարեւ հատանել(363), ափիբերան առնել(397), ափիբերան լինել(397) - լռեցուցանել, բազ արկանել(400), բան ինչ ասել(432), բան ունել(432), բան առնել(432), բան կապել(432), խօսք տնել(432), ի բան ձգել(432), ի բանի առնել(432), ի բան ձգել(432), զբանիւք առնել(432), բան ի գործ առնել(432), ի բան առնել(432), ի զարթման հարկանել, զբանիւք արկանիլ(432), զբանիւք առնել(432), բարեխօս լինել(449), բարեխօս առնել(449), բարեխօս արկանել(449), բարեխօս ունել(449), բարձ և թող առնել(461), բարձի թողի առնել(461), բիծ դնել(489), բողոք արկանել(504), բողոք հարկանել(504), բողոք բառնալ(504), բողոք ունել(504), բուռն հարկանել(505), գալ ի զղշումն(526), գալ յողոր-

մուկիւն(526), գալ ի քնին(526), գալ ի ծնունդ(526), գալ ի վախճան(526), գալ ի վըտանգ(526), գալ ի յարութիւն(526), գալ ընդ աղբ(526), գալ ընդ ծովս(526), գալ ընդ փոշի(526), գալ ընդ ապաւառս(526), գալ ի զարմացումն(526), գալ ի հարցումն(526), գետնի պտուղ(540), դատ դնել(599), դատ տալ(600), դատ խնդրել(600), դարպաս տալ(604), դժուարօք բերել(616), երանի տալ(669), երկս արկանել(686), փայտ տալ(1036), ուղիղ համառօտել(21), յինքն հանել(45), ի բանս հանել - խաբել(45), հաւատարիմ առնել(77), հեշտ պաշտօն(85), հեշտ ցանկութիւն(85), մեղք ձգել(250), մերկանալ զբան-յայտնել(255), միս ածել(281), միս կապել(281)-գիրացուցանել, մրուր տալ(308), յանձն առնուլ(327), նախանձ արկանել(393), նախանձ առնուլ(393), նախանձ բերել(393), նախանձ դնել(393), ի նախանձ մտանել(393), նախանձ բերիլ(393), շահել զվիշտս կամ զվնաս(460), շահել զկեանս անձին(460), շահել զմահ(460), պարապ բերել(628), պարապ տալ(628), պարապ կացուցանել(628), պարապ լինել(628), ջուր հեղուլ(676), սուգ առնել(731), սուգ ունել(731), սուտ առնել(732), ի սուտ հանել(732), սրբել զմօրուս-այսինքն՝ յապաւել(761), հրով սրբել - որպէս փորձել(Բ,143), ընտրել(761), փայտ ընկենուլ - որպէս փորձել զբախտ և հմայել(930), ամրածածուկ առնել(75), ամրածածուկ լինել(75), ամրապահեստ մնալ(76), ամրապահեստ լինել(76), յայլակերպս լինել(Բ,320), այլ եւ կատակ առնել(89), անհաւատարիմ առնել(185), անշիւ առնուլ(232), աշխարհագոյժ առնել(260), աշխարհալուր առնել(261), ապիրատ լինել - վտարուել(276), առաքինակից լինել(300), առիւծամարտիկ լինել(305), առ լոյս ածել(306), ատենախօս լինել(335), արտօս արկանել(383), արօտակից լինել(386), բազմակոխ լինել(408), բազմապատիկ լինել, առնել(414), բազում խնդալ(421), բնաբարձ լինել(494), գիտաց առնել(556), գետակուր առնել(540), դալարաբեր լինել, դատախուզութեամբ ունել(600), դիտողութիւն առնել(627), դիւթաբար ասել(629), դսրով առնել(641), եկակոշ առնել - ամբաստանել(650), զամենայն քար շարժել(473), զլալ առնուլ(877), ընդ հայց անկանել(776), ընդ վայր հարկանել - լքել(776), ի խօսս առնել(845), ի խօսս գալ(845), ի կենաց արկանել(845), ի պարապս դեգերել(867), ի վայր արկանել(869), լոյս առնուլ(892), լուր օր(904), խաղ լինել(916), խումբ առնել, գործել(984), խօլ առատութիւն(996), ծաղր հեղուլ, առնել(1004), ծնունդ փոխոյ(1022), կահ ունել(1036), հոգ առնել(Բ,109), հոգ տանել(Բ,109), հրամանաբեկ լինել(Բ,132), հօրան լինել(Բ,144), ձաղ առնել(Բ,145), ձաղ լինել(Բ,145), ձեռնակալ առնել(Բ,153), ձեռնահար լինել(Բ,153), ճարակ առնել(Բ,174), ճեպս կացուցանել(Բ,179), մատն անձին գործել(Բ,215), մատն եւ տուր լինել(Բ,215), յառաջամատոյց լինել - ունկնդիր լինել(Բ,335), յեզր ելանել(Բ,353), պատսպարել զանձն(Բ,623), պէտ լինել(Բ,647), պէտս առնել(Բ,648):

Դարձուածքների իմաստային վերլուծութիւնը եւս մի հետաքրքիր կառուցուածքային իրողութիւն է բացայայտում. ինչպէս վերը նշուած բայական միաւորների թուաքանակներն են վկայում, առնել եւ լինել բայերը բաւական մեծ թիւ են կազմում վիճակ, դրութիւն ցոյց տուող դարձուածային միաւորների կառուցներում: Առնել բայով կազմուած դարձուածքների մեծ թուաքանակը կարելի է բացատրել նախ այդ բայի վաղնջական ծագմամբ, հարուստ իմաստային բովանդակութեամբ, զանազան իմաստային յարաբերութիւններ արտայայտելու ներուժով՝ կիրառել, ծաղրել, դառննել, երբեմն լինել եւ շատ այլ իմաստային նրբերանգներ: Նոյնը կարող ենք ասել նաեւ լինել բայի համար, վաղնջական ծագում ունենալուց բացի, գրաբարեան դարձուածքներում իմաստային հարուստ շերտաւորումներ ունի, վերիմաստաւորուելով արտայայտում է՝ դառնալու, լսելու, շտապելու, իմանալու, մատնելու եւ զանազան այլ իմաստներ:

Մեր քննութեան ընթացքում հանդիպել ենք ժամանականիշ բառերից կազմուած հետեւեալ դարձուածային միաւորներին.

Դ. Ժամանակային - հանել աւուրս(3), հանել զգիշերն(3), նախակատար պտուղ - վաղ կատարեալ(389), ի տոկ անկանել - երկար տեւել, երկարաձգուել(870), առաւօտ առնել(298), աստղ առաւօտին կամ առաւօտու - իբրեւ Արուսեակ(320), դառնալ աւուր(597), մերկանալ առաւօտն - լուսանալ(Բ,215):

Շարժման, տեղափոխութեան յարաբերութիւն ցոյց տուող խմբի մէջ մտնող դարձ-ւածքերը մատնանշում են վայր, տեղափոխման գործընթաց, շարժման ընթացք: Դարձ-ւածքներում բայական միաւորները վերիմաստաւորուած են, փայլուն, շօշափելի կեն-դանութիւն են հաղորդում խօսքին:

Ե. Շարժում, տեղափոխութիւն - ածել յուղղութիւն(21), առաջի արկանել(289), առաջի ածել(289), անց եւ անց առնել(249), առ եւ զնաց առնել(302), գիտել զաջ եւ զձախ(64), հանել ճանապարհի(45), հանել դրան(45), ճանապարհ առնել(169), մտա-նել առ կին(305), ի նեղ մտանել(853):

Տարածական յարաբերութիւններ արտայայտող դարձուածների մի զգալի մասը կազմուած են մակբայներով, որոնց միջոցով էլ արտայայտում են գործողութեան կա-տարման տեղ, ժամանակ, ձեւ եւ գործողութեան կատարման մոտաւոր ընթացքը: Այս խմբում, իբրեւ տարածական յարաբերութիւններ արտայայտող բառեր, հանդէս են գա-լիս՝ զառաջ, տեղ, վեր, բարձր եւն:

Զ. Տարածական յարաբերութիւններ՝ տեղ, ձև - զառաջս ունել(287), բարձր առ-նել(462), գիրկ ընդ գիրկ խառնել(558), ի վեր հանել(45), զյօնս ի վեր պճնել(656), զյօնս ի վեր պրկել(666), սրտի մտօք(282), զտեղի առնուլ(865), զտեղի ունել(865), կիցս ընկենուլ(1101):

Առհասարակ հագուստ, խմիչք նշանակող բառերից կազմուած դարձուածային միաւորները մեր լեզուում փոքր թիւ են կազմել եւ կազմում, ամենաքիչ հանդիպող դարձուածքներից են:

Է. Հագուստ - վերարկու լինել - իբր հովանի լինել(810):

Ը. Ըմպելիք - զգլխել գինով(727):

Քրիստոնէութիւնը իբրեւ պետական կրօն ընդունած ժողովրդի համար հաւատի ամրապնդումն ու ամրակայումը պէտք է, ի հարկէ, առաջնային եւ հիմնական խնդիրը լինել, քանի որ այն ուղղակիօրէն առնչում էր ազգապահպանութեան հարցին: Հայ հասարակութիւնն էլ քաջ գիտակցել է կրօնի կարեւորութիւնը իր կեանքում, որի ար-տացոլանքն են նաեւ դարձուածքների եւ դարձուածային արտայայտութիւնների գոր-ծածութիւնները, սփռուածութիւնը խօսքային շղթայում: Ի վկայումն ասուածի՝ բերենք մեզ հանդիպած նմանատիպ օրինակներ:

Թ. Կրօնի, եկեղեցու, հաւատալիքի, պաշտամունքի դարձուածքային միաւորներից հանդիպել ենք՝ զաստուած արհամարհութիւն(364), գալ յաղերս(526), աղանդամարտ լինել, հին եկեղեցի - տուն Իսրայէլի(651), ժամ առնել-որպէս պատարագ մատուցա-նել(826), ժամ դնել(826), ժամ տալ(826), նետ առ ի յաստուծոյ(413), իղձ(ք) առնել - աղօթել(845):

Այս խմբի դարձուածքները նոյնպէս բաղադրիչների բազմազանութեամբ աչքի չեն ընկնում. հիմնականում հանդիպել ենք Աստուած, ժամ, եկեղեցի բառերով կազմուած դարձուածային միաւորներին:

Ժ. Պետութիւն, պետական կառավարում - դուռն իշխանի կամ արքունի(640), թագ առնուլ(788), թագ դնել(788), թագ կապել՝ անձին(788):

Այս խումբը կազմող դարձուածքները գրեթէ նոյնական են ոչ միայն այս բառարանում, այլև միւս աղբիւրներում եւս՝ կապուած կիրառական, գործառական ոլորտի հետ:

Ի. Ջէնքերի անուանումներից բաղադրուած դարձուածքներ - հանել ընդ սուր (45):

Ռազմին, զէնքին, պատերազմական գործողութիւններին վերաբերող դարձուածային միաւորների մեր ուսումնասիրած բառարանում, ինչպէս նկատելի է, բաւական քիչ ենք հանդիպել: Նշենք, որ առհասարակ զէնքերի անուանումներից բաղադրուած դարձուածքները խիստ սահմանափակ թիւ են կազմել գրաբարում:

Եզրակացութիւն: Մեր աշխատանքում հետազոտութեան առարկան եղել են «Նոր Հայկազեան բառարան»-ում ներառուած դարձուածային միաւորները: Այդ միաւորները ենթարկել ենք իմաստային համակողմանի քննութեան: Բառարանային քննութիւնը մէկ անգամ եւս հաստատեց, որ գրաբարեան ոսկեղենիկ հայերէնը շողում է դարձուածային միաւորների իմաստային առատութեամբ, բազմազանութեամբ:

ԱՆՆԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Երեւանի պետական համալսարանի Հայ բանասիրութեան ֆակուլտետի մագիստրոս



ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

**ԴԱՍԱԿԱՆ ՅՈՒՆԱՐԷՆԻ ԵՒ ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԲԱՐԻ
ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ «ԱՅԼ ՓՐԿԵԱ՝ ԶՄԵՁ Ի ԶԱՐԷ»**

Որոշիչ Յօդերու Գործածութիւնը

Նպատակաւ քարոզ մը խօսիլ չէ, այլ պարզ փնտռտուք մը կատարելն է աղօթանուէր հաւատացեալի մը ուղղած մէկ հարցումին որպէս պատասխան: Լսած էր, որ ոմանք «փրկեա՛ զմեզ ի չարէն» կ'արտասանեն փոխանակ «ի չարէ» ուղիղ ձեւին ինչպէս ինքս նաեւ լսեր եմ:

Երբ «Հայր Մեր» Տէրունական Աղօթքը կ'արտասանենք վերջաւորութեան «այլ փրկեա՛ զմեզ ի չարէ» թէ ոչ «ի չարէն» պէտք է ըսել, կը հարցնէր հաւատացեալը: Երկրորդ պարագային յատուկ եւ մասնաւոր «չարիք»-ի մը կ'ականարկուի երբ որոշիչ «ն» գիրը կ'աւելցնենք ինչպէս «Փրկիչն մեր»: Մինչդեռ առանց «ն» որոշիչ յօդին «չարիք»-ը կը հասկցուի իր աւելի լայն եւ ընդհանուր հասկացողութեամբ, այսինքն զմեզ «ամէն տեսակ չարիքէ ազատէ» կ'աղերսուի քան թէ մէկ որոշ չարիքէ մը, ինչպէս յիշուի աղօթքին նպատակն է:

Աշխարհաբարի թարգմանութեամբ հասկնալի կը դառնայ «ն» եւ կամ «ը» որոշիչ յօդերուն առատ օգտագործումը, բայց դասական գրաբար լեզուին մէջ նուազ կը հանդիպինք «ն» գիրին իր նոյն պաշտօնով, ինչպէս «Տէրն մեր», «Արեգակն արդար», «բը-խումն ի Հօրէ»: Իսկ «ը» որոշիչ յօդը երբեք կապ չունի գրաբար լեզուին հետ, քանի ան միայն աշխարհաբարին կը վերաբերի: Նկատի ունենալ նաեւ, «ի Հօրէ» բացառական հոլովը, որուն ետին «ն» որոշիչ յօդը դարձեալ քիչ անգամ կը տեսնենք գրաբար լեզուին մէջ, ինչպէս «ի Փրկչէն մերմէ»: Գրաբար լեզուն բառին բացառական հոլովին ետին «ն» գիրը ընդհանապէս չի կցեր: Հետեւաբար «ի չարէն» ձեւակերպումը խորթ է մեր գրաբարին:

«Այլ Փրկեա՛ Զմեզ ի Զարէ»

Երբ մեր Ոսկեգարեան Թարգմանիչները Աստուածաշունչ Մատեանը գրաբարի թարգմանեցին, Տէրունական Աղօթքին մէջ «ի չարէ» թարգմանեցին, հակառակ անոր որ Յունարէն Եօթանասնից Սուրբ Գիրքը որմէ թարգմանեցին, «ի չարէն» գրած է: Մեր Թարգմանիչները քաջ գիտնալով հանդերձ յունարէն լեզուն, պահեցին գրաբարի կառուցուածքը եւ այս կէտին մէջ չհետեւեցան յունարէն բնագրին: Անգլերէն թարգմանութեան մէջ ալ “Deliver us from evil” կը կարդանք եւ ոչ “from the evil”: Յունարէնն ու Գրաբարը դասական լեզուներ ըլլալով բնականաբար ունին իրենց առանձնայատկութիւնները:

Որպէս հայերէն խօսակցական լեզու Թարգմանիչներն ու իրենց նախնիքը միայն գրաբարը գիտէին կամ ունէին, սորված ըլլալով հանդերձ յունարէնն ու ասորերէնը, որքան ատեն որ գիրերը տակաւին չէին հնարուած ու հաստատուած արտայայտելու համար լեզուին բառամթերքն ու քերականական կառուցուածքը, որուն վրայ գիրերու գիւտէն ետք պիտի հիմնէին առաջին թարգմանութիւնները: Անոնք պիտի չթարգմանէին յունարէն լեզուին առանձնայատկութիւնը, այլ պիտի թարգմանէին բովանդակութիւնը՝ հաստատուն գրաբար լեզուով որուն տիրապետած էին լիովին: Արդէն ուրիշ տարբերակ չկար այն ատեն գրաբարի կողքին:

Երբ կը կարդանք յունարէն «Հայր Մեր»-ը առաջին տողերուն մէջն իսկ կը տեսնենք նոյն դրոյթը: Հոն «սուրբ եղիցի անունն քո» գրուած է, ինչպէս նաեւ «եկեսցէ արքայութիւնն քո» «եղիցի կամքն քո», մինչդեռ մեր թարգմանիչները գրաբարի հաստատ օրէնքներով կամ առանձնայատկութիւններով թարգմանած են «սուրբ եղիցի անունն քո», «եկեսցէ արքայութիւնն քո», «եղիցին կամք քո»: Չշփոթել «եղիցին» բառին վերջին «ն» գիրը որ որոշիչ յօդ չէ, պարզապէս եղիցի բային յոգնակի երրորդ դէմքին խոնարհումն է, յոգնակի «կամք» բառին ենթակայ: Շատեր «եղիցի կամք քո» ըսելով կ'անցնին, փոխանակ բայը երրորդ դէմք յոգնակի կարդալու:

Նշելի է նաեւ յունարէն բնագրին կրկնապէս «որոշիչ» դարձնելու արտայայտութիւնը: Երբ արդէն «սուրբ եղիցի անունն քո» կ'ըսուի, հոն որոշապէս «քո» դերանունը ամբողջովին կը ճշդէ թէ որու անուան մասին է խօսքը: Նոյնպէս «արքայութիւնն քո» եւ «կամք քո»: Որոշիչ յօդը աւելորդ կը մնայ երբ արդէն բնորոշուած է թէ որո՞ւն յատուկ են անոնք՝ ուղղակի «քո» դերանունով: Բնականաբար Յունարէն լեզուի առանձնայատկութիւններէն մին է այդ կրկնակի շեշտադրումը: Գրաբար լեզուն ուրեմն կը զատորոշի իր ճկունութեամբն ու պարզութեամբ:

Այս բոլորը կը հաստատեն սխալ գործածութիւնը երբ ոմանք «ի չարէն» կը նախընտրեն իբրեւ թէ շեշտելու համար «չարը»: Մինչդեռ ինչպէս ըսուեցաւ աղօթքը մէկ յատուկ չարիքի մասին չէ, չարիքը որպէս ամբողջութիւն, ամէն տեսակի չարիքէ փրկութիւն կը հայցուի: Ուրեմն հարցին պատասխանն այն է որ Ոսկեդարեան հնագոյն թարգմանութեան հետեւելով պիտի աղօթենք «այլ փրկեա՛ զմեզ ի չարէ» հայցելով: Առաւել եւս որեւէ մէկը պիտի չհամարձակի Աստուածաշունչ Մատեանէն գիր մը եւ ստորակէտ մը փոխելու եւ նաեւ Ոսկեդարեան թարգմանութիւնը «ճշդելու»: Քաւ լիցի: Բնագիրն ու իմաստը այս է:

Սողոմոն, Սիոն

«Վ» գիրը յատկապէս ընդգծեցի որովհետեւ «գրաբարագէտ» տիրացուներ եւ անհատ հոգեւոր հայրեր երբ կը կարդան Աւետարանէն երբեմն կը շեշտեն Սողոմոնի եւ Սիոնի անպաշտօն «վ» գիրը, զանոնք բարձրաձայն արտասանելով ցոյց տալու համար գրաբար գիտցած կամ չգիտցած ըլլալին: Հոս դարձեալ յունարէն լեզուէն տառադարձութեան օրէնք մը կայ որուն մասին հետեւեալ բացատրութիւնը կ'ուզեմ տալ:

Սողոմոն անունը երեք հատ «ո» գիրեր ունի եւ տառադարձուած է յունարէն լեզուէն, ուր առաջին երկուքը «օմիգրոն» են ու վերջինը «օմեկա»: Մեր թարգմանիչները նկատի ունէին որ հայերէն նորահնար գիրերուն մէջ միայն «Ո» գիրը կը ձայնէր որպէս համազօր, եւ գիտականօրէն կարելի չէր յունարէն երկու տարբեր գիրերուն դիմաց միեւնոյն գիրը հաւասարեցնել: Ուստի հնարք մը ըրին ու «օմեկա» տառին համար հնարեցին «ով» բաղադրեալը, զատորոշելու համար «օմիգրոն»-էն: Ոմանք շուտով պիտի ըսեն թէ մենք ունինք արդէն «օ» գիրը որ կրնար փոխարինել: Սակայն պէտք է գիտնալ որ Մեսրոպեան այբուբենին մէջ նման գիր մը գոյութիւն չունի, այլ միայն «աւ» բաղադրեալը, ինչպէս Պաւղոս (Պօղոս) եւ կամ աւրէնք (օրէնք): Հետագային է որ «օ» եւ «ֆ» գիրերը աւելցած են մեսրոպեան այբուբենի վերջաւորութեան: «Սիոն»-ի պարագային նոյնպէս, եթէ մինչեւ դար մը առաջ «վ» գիրով կը գրէին, արդէն անպաշտօն եւ անձայն այդ գիրը անտեսուեցաւ ու հնչումը մնաց անաղարտ: Հետեւաբար կարդալ Սողոմոն եւ Սիոն ու նմանատիպ բառեր հաստատ գիտնալով որ յունարէն «օմեկա» գիրին հաւասար մեր Թարգմանիչները հնարած են «Վ» գիրը կցելով ձայնաւոր գիրին:

ԿՐՕՆԱԿԱՆ**TRADITION AND THE ARMENIAN CHURCH****Dogmatic – Traditional - National**

Analysis of the roles of dogma and of doctrine in the Armenian Church explores her traditional and historical foundations, including the historical gains and losses that have accrued to the church and to the faithful.

Tradition and History

In general there exists the tendency to disqualify the role of the Church when the term tradition is attached to it, and for that reason tradition must be identified in its historical context. It seems complicated and controversial when distinguishing the essential traditions from the secondary ones, labeling them non-pragmatic and easily unacceptable.

First and foremost it is important to apply “tradition” in relation to the Armenian Church in its proper sense as **“history received orally”** when letters and literature did not exist until the 5th century, while the Church existed in Armenia and functioned from the first year of the 4th century for sure. Here lies the basis of evidence whether we should abandon the “hearsay” tradition against the “documented” information. Tradition in its positive sense stands for “history transmitted and received,” and later recorded by our earliest historians.

To be sure that the religious and national aspects of the Armenian Church are formed biblically, historically, doctrinally, and ecclesiastically both by way of received traditions and recorded documentation. Together all of them comprise a standard touchstone, as well as a point of departure, to admittedly qualify the status of “the traditional made historical”. In the process they complete each other rather than challenge each other.

We also bear in mind that historic precondition sometimes simplifies our inquiry, and sometimes complicates it more, leaving no choice but to constantly refer to the parallel development of “traditional” and “national” phases of our Church, since both have proven to be the constitutional and the administrative dimensions for the Church’s persistence in Armenia as *Hayasdanyayts Yegeghetsi* (Church of the Armenians,) exclusively for the population of Armenia.

The First Church among Nations

It is universally recognized the Armenian Christianity the first adopted as a state religion in 301 AD. Priority is always given to the religious aspect when Christ descended to appear in the land of Armenia as a token to the first Saint, Gregory the Illuminator, who suffered gravely by the Roman Emperor and his vassal the King of Armenia, for not abandoning the new religion. He was saved and Christ appeared, the Armenian nation converted, and Gregory became the First Servant of Christ in Armenia. Thus far the data are traditional as said above, since the following one century testifies the Church’s recovery by way of tradition, supported by ancient Greek and Latin historians’ evidences wherever applicable referring to the existing Christianity in ancient Armenia. The “received” tradition was written by our first historians Movses Khorenatsi, Agathangelos, and Yeghishe Vartabed.

Peculiar for the Armenians

While there is not the remotest danger of alienating the Armenian Church from the Holy Bible, and from the One, Holy, Universal, and Apostolic Church of Christ as pronounced at the First General Council of Nicaea in 325, there is by necessity and as a matter of course her national identity which in the process has made her both historic and authentic.

In order for tradition to be valid in terms of today's standards, it should prove to be meaningful and logical, rather than pleasant and expedient, initially commensurate with the Bible and its teachings. Trying to examine the history of the Armenian Church we shall see that both her existence and service were mutually supportive in the expression of faith, doctrine, and education. All three have subscribed to the meaningfulness and to the essentiality of certain traditions as indispensable factors within the constitution of the Armenian Church.

From Traditional to Theological

Three main issues are important for the reconciliation of the Armenian Church with her *bona fide* traditions while the traditional gradually developed into theological.

(a) Traditions of dogma and doctrine universally adopted by the First Three Ecumenical Councils and relative to the Canon Law that explore meaningful contribution to the validity of the foundation of the Armenian Church.

(b) The scrutiny and critical examination of national traditions of the Armenian Church relative to the Canon Law, and their value as vehicles for carrying on the existence and the efficiency of our Church. Concurrent with it the use of language and symbolism in Liturgy must be considered.

(c) The *national* parallel to the *traditional* in the life situation of the Armenian Church, always in accord with the Holy Scriptures on the originally translated text by the 5th century Translators. Soon the “traditional” became “theological” by way of philosophy and hermeneutics.

When asked where the authentic faith was to be found, the answer is clear and unequivocal: in the Person and teachings of Jesus Christ, the Son of God and His Gospel. Here again tradition helps as a continuous stream to explain and elucidate the primitive faith, illustrating the way in which Christianity has been present and understood in the past. Tradition is therefore loaded with **necessary** and **sufficient** doctrines, accumulated by the wisdom of the past, meaning the doctrines of the Person of Christ, the Holy Trinity, and the status of St. Mary Mother of Jesus.

The Language Barrier

The Armenian Church's authenticity is also confirmed by the tradition *par excellence* of her language, namely, the Classical Armenian dialect. We realize on the other hand that languages are means of communication and understanding. It must be clear however that there is no alternative but to keep the language as it is given the composition of the texts of the Liturgy and the Hymnbook. Music and text are tightly interwoven.

Translation for education and learning the content of the books is most welcomed and truly expedient, but not for performance at which time the Armenian Church loses her identity and eventually her existence. Sacraments are partially performed in local languages, the Sacraments of Baptism, Wedding, and Confession for example, only partially, not forgetting that the validity of the Sacrament is guaranteed by its originality. It is strictly forbidden by the hierarchy

to perform the Divine Liturgy in translation, even partially.

Թողիկոսի եւ Մոսկովայի եւ համայն Ռուսիոյ Պատրիարք Ալեքսի Բ-ի համատեղ յայտարարութիւնը – 68:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Հայաստանի ու ներքին սփիւռքի թեմական-եկեղեցական կազմակերպութիւնների գործունէութեան մասին 1989-1992 տարիների ընթացքում – 69:

Մարդասիրական օգնութիւններ – 214:

Քէնթըրպըրիի Արքեպիսկոպոսի Այցը Էջմիածին – 215:

Օծումն Քիշնեւի եկեղեցւոյ – 216:

Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեան,- Ուղեւորութիւն՝ Հայաստան - Ս. Էջմիածին – 217, 490:

Դոկտ. Գէորգ Խրլոբեան,- եկեղեցածին Տաղանդը – 223:

Ժիրայր Մ. Վրդ. Թաշճեան,- Պատրիարք Սրբազան Հօր այցը Էջմիածին – 361:

Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարքի Քարոզը Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ Կիրակի 26 սեպտ. 1993 – 364:

Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի Ամանորի մաղթանքը – 488:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ամենապատիւ Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի Ս. Ծնունդի Պատգամը Բեթղեհէմի Մըսուրէն - 3:

Archbishop Torkom Manoogian.- 1993 Christmas Message – 6:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա. Հայրապետի Զատկական Քարոզը Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում 11 Ապրիլ, 1993 թ. – 109:

Թ.Ա.Մ.- Խռոված ու շփոթած հոգիներ – 111:
- Տեսիլքին փորձառութիւնը – 285:

Արքութեան աստիճան շնորհուած Տ. Խաթակ Եպս. Պարսամեանի, Տ. Աղան Եպս. Պալիօզեանի եւ Տ. Տաթեւ Եպս. Ղարիպեանի – 132:

Թ.Ե.Գ.- Մշակուած խիղճը – 401:

ԿՐՕՆԱԿԱՆ

Թ.Ա.Մ.- Այսօր եւս Յիսուս կը փնտռէ, կը խօսի – 11:

Թորգոմ Արք. Մանուկեան,- Յորենի հատիկին ալլաբանութիւնը – 114:

- Դէմքերը դէպի լոյս – 290:

Կարէն Քահանայ,- Ժամագրքի աղօթքները – 14, 294, 415:

Բաբգէն Թօփճեան,- Յիսուսի ծնունդը եւ մոգերուն գալուստը – 17:

- Զատիկ եւ Կարմիր հաւկիթ – 120:

- «Ես եմ Աստուծոյ Որդին» – 417:

Ռուբէն Վրդ. Յովակիմեան,- Նորոգութեան պէտքը – 19:

Գուսան Վրդ. Ալճանեան,- Վարդանանց պատգամը – 22:

Բաբգէն Եպս. Կիւլէսէրեան,- Վարդանանց ոգին – 25:

Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան,- Մոլորուածին վերադարձը – 117:

Համբարձում Վրդ. Քէշիշեան,- Մանանեխի հատիկին չափ հաւատք – 123:

Գրիգոր Ոսկանեան,- Խաչեցար Քրիստոս Աստուած մեր... – 126:

- Խաչի տօներ – 296:

Վարդան Ա. Քհնյ, Տիւլկէրեան,- Կ'աճապարենք... Ո՛ր երթալու համար – 130:

Թորոս Տ. Ի. Զուղայեցի,- Նուիրապետութիւն եկեղեցւոյ – 152, 310, 438:

Բաբգէն Եպս. Վարժապետեան,- Յիսուսի կերպարը – 288:

Սեւան Եպս. Ղարիպեան,- Աստուածամայր – 292:

Յ. Հայրապետեան,- Այլակերպութիւն – 404:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր այցը Լիզպոն – 81:

Գ. Ճ.- Եկեղեցիներու միութեան եօթնեակը երուսաղէմի մէջ – 82:

Եզնիկ Վրդ. Պալեան Կարգալոյծ – 83:

1993 Ամանորեայ Երեկոյթ – 84:

Պատրիարք Սրբազան Հօր խօսքը Կաղանդի գիշերին 1993 Յունուար 13-ին – 85:

14 Յունուար, 1993, Պատրիարքարանի դահլիճին մէջ Պատրիարք Սրբազանի խօսքը Մանուկ Յովսէփ Գէորգեանի ուղերձէն յետոյ – 87:

Հաղորդագրութիւն Գերմանիոյ թեմէն – 88:

Արտէն Ա. Քհնյ, Աշճեան,- Սաղիմական

Ուխտագնացութիւն Հայոց Ս. Զատկի Առիթուն, Ապրիլ 20-29, 1992 – 226:

- Տիրան Արք. Ներոսոյեանի աճիւններու երուսաղէմ փոխադրութիւնը – 368:

Վարդան Գրիգորեան.- Երուսաղէմում նըշեց Մեծ Եղեռնի 78-րդ տարեդարձը – 252:

Ապրիլեան Եղեռնի ընդհանուր նահատակաց 78-րդ Յուշատօն – 254:

«Կիլիկիոյ Արքան» Մ. Իշխան (Թաւերախաղ) – 255:

Ուխտաւոր.- Քրիստոսի քայլերով – 256:

Պատրիարք Սրբազան Հօր առողջական վիճակը – 259:

Ամալբերդի հանդէսներ Սրբոց Յակոբեանց Վանքի վարժարաններու – 260:

Ֆլորէնս Աւագեան.- Ամերիկայի Հայոց Արեւելեան թեմի առաջնորդարանը կը պատւէ Հայաստանի Ամերիկեան նոր դեսպանը – 262:

- Միջեկեղեցական գոհաբանական արարողութիւն Ս. Վարդան Մայր Տաճարի օծման 25-ամեակին առթիւ – 265:

Նորոգեալ Պարտիզաթաղի Տնօրհնէքը – 371:

Հաղորդագրութիւն Աւստրալիոյ թեմէն – 374:

Հաղորդագրութիւն Պրագիլիոյ թեմէն – 375:

Դոկտ. Հայր Զաւէն Արզումանեան.- Մաղաքիա Արքեպս. Օրմանեան (Վախճանման 75-ամեակին առթիւ) – 377:

Հեռագիրներ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Նախագահ Բերտիկաօի մահուան առթիւ – 379:

Բարգէն Եպիսկոպոս.- Ընթերցողէն նօթեր – 380:

Ձեռնագրութիւն Տ. Գալուստ Քհնյ. Դարբինեանի – 381:

Rev. Vertanes Kalayjian.- An Invitation to rev Giragos Chopourian – 382:

- Chic Bolshevik pundits, Naive Dupes, Useful Idiots and Ara Baliozian – 386:

H. Mekhitarian.- An open letter to rev Giragos Chopourian Ph. D. – 384:

Թանկարժէք նուէր Նիւ Եորքի Առաջնորդարանին – 494:

Մայրագոյն Արեւելքի Հայրապետական պատուիրակի Առաքելութիւնը – 494:

Գէորգ եւ Սիրվարդ Յովնանեան կը պատուին Արեւելեան Թեմի Առաջնորդարանին

կողմէ – 495:

ՇՆՈՐՀԱՒՈՐԱԳՐԵՐ

Շնորհաւորական հեռագիրներ՝ յղուած Ս. Աթոռէն – 89, 267, 272:

Շնորհաւորական գիր՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետէն – 90, 268:

Շնորհաւորական գիր՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանէն – 91, 269:

Շնորհաւորական գիր՝ Հռովմական Կաթողիկ Եկեղեցւոյ Քահանայապետ Նորին Սրբութիւն Յովհաննէս Պօղոս Բ. Պապէն – 92, 270:

Շնորհաւորական գիր՝ Մոսկուայի եւ Ռուսիոյ Օրթոտոքս Եկեղեցւոյ Ալեքսեյ Բ. Սրբազան Պատրիարքէն – 93, 271:

Շնորհաւորական գիր՝ Կ. Պոլսոյ Պատրիարքէն – 94, 272:

Շնորհաւորական գիր՝ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան նախագահ Տիար Ռօպերթօ Կիւլպէնկեանէն – 94:

ՊԱՏՄԱԿԱՆ

Վարդան Գրիգորեան.- Ղուկաս Կարնեցու նամակագրութիւնը Ասորիների Կաթողիկոս Մատթէոսի հետ – 190:

Եղուարդ Բարսեղեան.- Հայերը եւ էտրուսկները – 448:

Գրիգոր Վրդ. Մագսուտեան.- Վերծանութիւն ծածկագրութեան մը – 458:

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Յունուար-Մարտ – 97:

Ապրիլ-Յունիս – 275:

Յուլիս-Սեպտեմբեր – 391:

Հոկտեմբեր-Դեկտեմբեր – 499:

Դաւիթ Արք. Սահակեան.- Բարեպաշտական նուէրներու ցանկ 1992 տարուոյ – 103:

- Բարեպաշտական նուէրներու ցանկը 1993 տարուոյ – 507:

ՏԵՐՈՒՆԻ

Հանգիստ Տիկին Մարի Մանուկեանի – 273:

Եղուարդ Մարտիկեան ձեռներեց հայր – 503:

Վարուժան Պօղաճեան – 506:

1994

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

Դր. Աբել Վրդ. Օղլուգեան.- Միակամու-
թեան վարդապետութիւնը իբրեւ հաշտարար
լուծում միաբնակութեան եւ երկբնակութեան
միջեւ – 205:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Արշալոյս Ղազինեան.- Նարեկացու գնա-
հատութիւնը դարերի հոլովոյթում – 29:

- Աշխարհի եւ մարդու ընկալման Նարեկա-
ցու հայեցակէտը – 110, 208:

- Նարեկացու ստեղծագործութեան ժան-
րային համակարգը – 303:

Ռաֆայէլ Համբարձումեան.- Ներսէս Համբ-
րոնացի՝ Արքեպիսկոպոս Տարսոնի – 39:

Թորոս Տ. Ի. Զուղայեցի.- Նուիրապետու-
թիւն եկեղեցւոյ – 47, 225, 319:

Զաւէն Արք. Զինչինեան.- Ս. Ներսէս Շնոր-
հալի – 218:

- Մխիթար Սեբաստացի – 314:

Ն. Արք. Ծովական.- Հայ Գրչուհիներ Ժէ.
դարուն – 311:

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Lord Byron (Թարգ. Մուրատ Մանուկեանի).-
Հարոլտի որդւոյն պանդխտութիւնը – 21, 117:

Յովհաննէս Շիրազ.- Սպիտակ Եղեռն – 22:

- Հայոց Տանթէականը (Գլուխ Քսաներորդ)
– 118:

- Հայոց Տանթէականը, Սպասմանց Գիշեր
(Գլուխ Զորրորդ) – 230, 296:

Haig Khachadourian.- If I forget thee, O Jeru-
salem (to Garo on the 40th anniversary of his writ-
ing career) – 24

- Թէ մոռացայց զքեզ Երուսաղէմ (Կարօին՝
իւր Գրական ասպարէզին 40-ամեակին աոթով)
(Թարգ. Շէն-ՄԱՀ) – 26:

Անանուն (Թարգ. Շէն-ՄԱՀ).- Ամբողջը քեզ
– 28:

Անել.- Դիւրաբեկ Սրտին – 120:

- Կանթեղ – 231:

- Հաւատք – 298:

Arthur Hagopian.- Answered Questions – 121:

- Պատասխաններ (Թարգ. Շէն-ՄԱՀ).- 123:

Walter De La Mare.- The Listeners – 232:

- Լսողները (Թարգ. Շէն-ՄԱՀ).- 234:

Max Ehrmann.- Desiderata – 299:

- Ըղձանքներ (Թարգ. Շէն-ՄԱՀ).- 300:

ԳՐԱՆՕՍԱԿԱՆ

Շաքէ Մինասեան.- Մեր նորագոյն թարգ-
մանական գրականութեան մասին (Նիկոլոս
Սարաֆեանի «Վենսէնի անտառ»-ի ֆրանսերէն
թարգմանութեան առթիւ) – 63:

Գէորգ Քրիստինեան.- Մեր բախտի փշոտ
շուշաններ – 135:

Ն. Արք. Ծովական.- La Chaine Arménienne
Sur la Première Epître de Jean – 249:

ԳՐԱԿԱՆ

Սամուէլ Մուրատեան.- Երգիծականը եւ ող-
բերգականը «Ընկեր Փանջունի» վէպում – 53,
126:

Մարգարէտ Մարկոսեան.- Գրողի, մտաւո-
րականի, հասարակական գործիչի կերպարը
եւ Յովհաննէս Թումանեան՝ մեր օրերու իրա-
կանութենէն դիտուած – 342:

ԴԻՅԱԲԱՆԱԿԱՆ

Գրիգոր Կարախանեան.- Հայոց դիցարանի
տօները – 322:

ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ

Կոմիտաս Ա. Քհնյ. Շիրինեան.- Երուսաղէմի
Հայոց կրօնական հանդիսութիւնները – 137:

ԵՐԳԻԾԱԿԱՆ

Յակոբ Պարոնեան.- Մկրտիչ Տիգրանեան
– 143:

ԸՆԹԵՐՅՈՂԷՆ ՆՕԹԵՐ

Ամանոր, գիր – 166:

Բառերու խաղեր – 167:

ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ

Վարդան Գրիգորեան.- Երուսաղէմի Հայոց
Պատրիարքութեան «Էդուարդ եւ Հէլէն Մար-
տիկեան թանգարանի» չցուցակագրուած պը-
ղընձեղէն առարկաները եւ նրանց գիտական

արժէքը – 236:

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

Շահան Ռ. Պէրպէրեան.- Յանապատրաստից խօսքէն պահանջուած յատկութիւններ – 66:
- Վիճաբանութենէ մը ետք կարծիք մը – 66:

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

Զենոբ Քհնյ, Նալպանտեան.- Մէյէն եւ ուղղադրական հարցեր – 67:

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ

Ս. Թադէոս եւ Ս. Բարդուղիմէոս Առաքեալների մասունքների յանձնումը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում – 154:

Հաղորդագրութիւն Քրիստոնէութեան 1700-ամեակի վերաբերեալ – 157:

Վաչէ Մ. Վրդ. Իգնատիոսեան.- Լոյսին Յաղթանակը – 158:

Թորգոմ Պատրիարք Մանուկեան.- Յիշատակի յաւերժացում – 363:

Վարուժան Ոսկանեան.- Թող Աստուած օրհնէ մեր միասնութիւնը – 366:

Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան.- Շըրջաբերական Կրիկիոյ Կաթողիկոսութեան, Երուսաղէմի եւ Կ. Պոլսոյ Պատրիարքութիւններին, բոլոր թեմակալ առաջնորդներին, Եպիսկոպոսներին, հոգեւորական դասին, թեմական եւ ծխական խորհուրդներին ու համայն հայ ժողովրդին – 369:

Գրիգոր Կէօքճեան.- Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիւ Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի գործարար հանդիպումները ու ուղեւորութիւնները – 371:

Կաթողիկոսական Տեղապահի տեղեկատուութիւն Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի 3 Հոկտեմբեր, 18-19 նոյեմբեր 1994 թ. նիստերին – 375, 378:

Ամենայն Հայոց Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիւ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանի այցը Սպիտակ եւ Գիւմրի (7 դեկտեմբեր 1994) – 381:

Կաթողիկոսական Տեղապահ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանի քարոզը Գիւմրիի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ (7 դեկտեմբեր 1994) – 382:

Կաթողիկոսական Տեղապահ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանի խօսքը Կոմիտասի

եւ Թումանեանի 125-ամեակին Շիրակի թեմի հոգեւոր դպրանոցի մէջ (7 Դեկտեմբեր 1994) – 385:

Հայաստանի Հանրապետութեան Արտաքին գործոց նախարարին այցը Երուսաղէմ (18-21 Դեկտեմբեր 1994 թ) – 388:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Հայրապետական քարոզ Փրկչի Հրաշափառ Ս. Ծննդեան տօնի առթիւ Մայր Տաճարում (1994 թ. Յունուար 6) – 3:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա Վեհափառ Հայրապետի քարոզը Փրկչի Սուրբ Յարութեան տօնի առթիւ Մայր Տաճարում (1994 թ. Ապրիլ 3) – 95:

Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիւ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանի քարոզը Փրկչի Հրաշափառ Ս. Ծննդեան տօնի առթիւ Մայր Տաճարում (6 Յունուար, 1995 թ.) – 277:

Christmas Message of the Pontifical Locum Tenens, Patriarch Torkom Manoogian (6 January 1995, in Holy Etchmiadzine) – 271:

Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիւ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանի Պատգամը նոր Տարուայ առթիւ (1 Յունուար, 1995) – 283:

Թ.Ա.Մ.- Բեթղէհէմի քարայրէն – 6:

- Հոգիի պատերազմ – 98:

Patriarch Torkom Manoogian.- Armenian Christmas From the Grotto (18th January, 1994) – 8:

Շնորհակալիք – 81:

ԿՐՕՆԱԿԱՆ

Բաբգէն Եպս. Վարժապետեան.- Յիսուս կըրկին խաչուած – 11:

Հայկազուն Մ. Վրդ. Նաճարեան.- Աղօթքի Ոյժը – 12:

Ռուբէն Վրդ. Յովակիմեան.- Նոր Տարուան Սեմին

Կարէն Քհնյ. Կտանեան.- Ժամագրքի աղօթքները – 17:

Թ.Ա.Մ.- Զձանձրանալ – 101:

Գրիգոր Քհնյ. Հայրապետեան.- Անառակի Կիրակի – 104:

Ս. Գրիգոր Տաթեւացի.- Համբարձման քարոզ – 107:

Թ.Ն.Գ.- Ժուժկալութիւն եւ աշխատասիրու-

թիւն – 198:

Բաբգէն Թօփճեան,- Փիւնիկեցի կնոջ հաւատքը – 200:

Ս. Մայիլեան,- Բարեպաշտական սովորութիւններու մասին – 202:

Զենոբ Քհնյ, Նալպանտեան,- Ճշմարիտ ներկայութիւն եւ մասնակցութիւն – 286:

Սեպուհ Մ. Վրդ. Սարգիսեան,- Նախատուիլ՝ այո, նախատել՝ ոչ, երբեք – 289:

Ասողիկ Եպս. Արիստակէսեան,- Քրիստոս Մնաւ եւ Յայտնեցաւ – 292:

Բաբգէն Եպս. Վարժապետեան,- Հայաստանեայց եկեղեցին եւ աղանդներ ու հերետիկոսութիւններ – 294:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Ներկայ մը,- Եկեղեցիներու Միութեան Եօթնեակը Երոսաղէմի մէջ – 71:

Արտէն Ա. Քհնյ, Աշճեան,- Մտածումներ Ս. Պատարագի մէջ քարոզխօսութեան մասին – 72:

Ամանորը ժառանգաւորաց Վարժարանի մէջ – 75:

Մշակութային յայտագիրներ – 75:

Եղուարդ Ճէրէճեան Միացեալ Նահանգաց դեսպան Իսրայէլի մէջ – 76:

Ռաֆիկ Աղասեան,- Եհովայի Վկաներ – 160:

Նորա Մելիքեան,- Աղթամարեան նշենին կը ծաղկի Վհարանի բակում – 162:

Ամավերջի հանդէսներ, Ժառանգաւորաց Վարժարան եւ Ընծայարան, Սրբոց Թարգմանչաց Ազգ. Վարժարան – 169:

Երոսաղէմ տպագրուած «Գիրք Հարցմանց» եւ «Գիրք Թղթոց» – 180:

Հաղորդագրութիւն Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի առողջական վիճակի մասին, Բժշկական հաղորդում – 187:

Հայաստանի նախագահի եւ կառավարութեան գիրը – 188:

Յուդարկաւորութիւն հանգուցեալ Հայրապետին Ամենայն Հայոց – 189:

Քահանայական ձեռնադրութիւն – 252:

Հաղորդագրութիւն Աւստրալիոյ թեմէն – 252:

Կենսագրութիւն նորընծայից Դանիէլ Քհնյ, Գարաճեանի, Եզրաս Քհնյ, Պոկտանի եւ Զաքարիա Քհնյ, Սարիբէկեանի – 253:

Թորգոմ Արքեպս. Մանուկեան,- Խօսք Գնահատանքի – 254:

Նորայր Արքեպս. Պողարեան,- Բացատրական «Գիրք Թղթոց»-ի նոր հրատարակութեան մասին – 255:

Վաչագան Բաբայեան,- Ժառանգաւորի մը մահը – 256:

Պատրիարք Սրբազան Հօր այցելութիւնք Ս. Էջմիածին եւ Ամման – 258:

Ազգային-եկեղեցական ժողովի անհրաժեշտ ընդհանուր տեղեկութիւններ 2 Ապրիլ, 1995 – 261:

Պատրիարք Սրբազան Հօր երկու նամակները՝ Հիւսէյն Թագաւորին եւ Իցխակ Րապինին – 262:

Երոսաղէմ Սրբոց Յակոբեանց Տպարանէն լոյս ընծայուած «Գիրք հարցմանց» եւ «Գիրք թղթոց» – 265:

Յանկ Կիւլպէնկեան Մատենադարանին կողմէ ստացուած գիրքերու (Յաւելուած) – 89, 177, 272, 392:

ՇՆՈՐՀԱՒՈՐԱԳՐԵՐ

Շնորհաւորական հեռագիրներ՝ յղուած Ս. Աթոռէն – 76, 169:

Շնորհաւորական գիր՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետէն – 77:

Շնորհաւորական գիր՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանէն – 78

Շնորհաւորական գիր՝ Հռովմական Կաթողիկ եկեղեցւոյ Քահանայապետ Նորին Սրբութիւն Յովհաննէս Պօղոս Բ. Պապէն – 79:

Շնորհաւորական գիր՝ Մոսկուայի եւ Ռուսիոյ Օրթոտոքս Եկեղեցւոյ Ալեքսեյ Բ. Սրբազան Պատրիարքէն – 80:

Շնորհաւորական գիր՝ Կ. Պոլսոյ Պատրիարքէն – 81:

ՊԱՏՄԱԿԱՆ

Օրագրութիւն Տ. Մեսրոպ Վրդ. Նշանեանի, յիշատակարան 1917 Յունուար 1-էն – 329:

Տքթ. Տ. Զաւէն Արզումանեան,- Նախագիտելիք – 331:

- Տ.Տ. Մատթէոս Բ. Իզմիրլեան – 333:

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Յունուար-Մարտ – 82:

Ապրիլ-Յունիս – 170:

Յուլիս-Հոկտեմբեր – 266:

Նոյեմբեր-Դեկտեմբեր – 389:

ՏՈՄԱՐԱԿԱՆ

Ռաֆայէլ Համբարձումեան.- Հայկական տոմար – 149:

ՏԵՐՈՒՆԻ

Հանգիստ Նորին Սուրբ Օծութիւն Տ. Տ. Վազ-

գէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի – 183:

Համառօտ Ժամանակագրութիւն Հանգուցեալ Վազգէն Առաջին Կաթողիկոսին Ամենայն Հայոց – 184:

Բագրատ Աբղ. Պուրճէքեան.- Հանգիստ Սահակ Գալայճեանի – 264:

1995

ԱՅԼԵՒԱՅԼՔ

Կոմիտաս Ա. Քհնյ. Շիրինեան.- Ժառանգաւորացը մեր օրերուն – 78:

Մինաս Գասպարեան.- Ժառանգաւորի մը յուշերէն – 476:

Հեռագիրներ – 186:

Armenian Community Outraged by Genocide Denial – 188:

Let us erase this shame – 190:

Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց.- Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի անդրանիկ կոնդակ – 203:

- Քարոզ կաթողիկոսական գահակալութեան առթիւ – 208:

- Հայրապետական խօսք շնորհակալութեան եւ գնահատանքի – 323:

- Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի նշանակում – 327:

- Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խօսքն ու աղօթքը Հայաստանի Հանրապետութեան նորընտիր Ազգային ժողովի Առաջին նիստին (27 Յուլիս, 1995) – 329:

- Գարեգին Ա. Ամենայն Հայոց Հայրապետին նամակը Համայն Վրաց Օրթոդոքս Եկեղեցւոյ Իլիաս Բ. Պատրիարք-Կաթողիկոսին – 503:

Կանոնադրութիւն Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Քրիստոնէական դաստիարակութեան եւ քարոզչութեան կենդրոնի (ՔԴՔԿ) – 246:

Կանոնակարգ Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ Եկեղեցու Քրիստոնէական դաստիարակութեան եւ քարոզչութեան կենտրոնի [ՔԴՔԿ] խորհրդի – 251:

Կանոնադրութիւն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վանք» Դուստր ձեռնարկութեան – 256:

Կանոններ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ֆինանսական եւ արտադրական համակարգի աշխատողների ներքին աշխատակարգի (Հաս-

տատուած է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ֆինանսական եւ արտադրական գծով Յանձնախմբի 1994 թ. Դեկտեմբերի 24-ի նիստի որոշմամբ) – 271:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 1995 թուականի Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր – 288:

Մարտիկ Աւետիսեան.- Զեկուցագիր կատարուած աշխատանքների մասին – 297:

Արձանագրութիւն Ազգային Եկեղեցական ժողովի Ա-Դ նիստերի, 3-5 Ապրիլ 1995 – 299:

Բացման խօսք Վաչէ Արք. Յովսէփեանի [Ազգային Եկեղեցական ժողովին] – 312:

Կաթողիկոսական Տեղապահ Թորգոմ Պատրիարք Մանուկեանի նամակը Երուսաղէմ Տ. Դաւիթ Արք. Սահակեանին, ծանուցանելով կաթողիկոսի ընտրութիւնը – 313:

Speech His Beatitude Patriarch Torkom Manoukian Locum Tenens Catholicos of All Armenians National Ecclesiastical Assembly. April 3, 1995 Holy Etchmiadzin – 314:

Կենսագրական գիծեր Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի – 320:

Ինքնակենսագրականք. Արմէն Սրկ. Աթաշանեան – 375:

Ինքնակենսագրականք. Գէորգ Սրկ. Բաբախանեան – 375:

Ինքնակենսագրականք. Նորայր Սրկ. Զաքարեան – 376:

Ուխտագիր – 377:

Yeghia H. Dickranian.- On the Occasion of the Newly Ordained Priests – 378:

Ընտրութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան գահակալին – 393:

Արամ Ա. Կաթողիկոսի խոսքը ընտրութեանէն յետոյ – 394:

Կենսագրական ամփոփ գիծեր Գերշ. Տ. Արամ Արքեպս. Քէշիշեանի – 397:

Հարցազրույց Նորին Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա.
Վեհափառ Հայրապետին կողմէ – 400:

Աւետիս Աբեղայ Իփրաճեան.- Ամեն. Տ. Թոր-
գոմ Պատրիարքի ուղեւորութիւնը Ի Լիբանան
եւ Յանթիլիաս – 306:

Հ.Ա.Ա.- Անդրադարձ «Կոմիտասի Հանճա-
րը» դասախօսութեան – 428:

Սիւրիոյ Երուսաղէմապատկան թեմերուն
Կիլիկիոյ Կաթողիկոսութեան փոխանցումը –
430:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Արշալոյս Ղազինեան.- Նարեկացու ստեղ-
ծագործութեան ժանրային համակարգը – 27,
138:

- Անհատական քնարերգութեան աւուր-
ների մօտ – 349:

- Մատենի քնարական հերոսը – 485:

Զաւէն Արք. Զինչինեան.- Մխիթար Սեբաս-
տացի – 34:

Ստեփան Զօրեանի յուշերէն.- Վահան Տէր-
եան, Ծննդեան 110-ամեակ եւ Մահուան 75-ամ-
եակ – 474:

Ծովական.- Մանրապատում – 492:

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Lord Byron (Թարգ. Մուրաթ Մանուկեանի).-
Հարոլտի որդւոյն պանդխտութիւնը – 18, 131,
342, 467:

Անել.- Moribundi – 19:

- Օրհնեալ է Աստուած – 136:

- Ու հեռացար – 343 :

- Նիակարա – 472:

Կոստան Զարեան.- Կոմիտաս Վարդապե-
տին (Նրա անիւնը Հայաստան տանելու առթիւ)
– 20:

- The Homecoming (On the occasion of the
transfer of Komitas' remains to Armenia) by Gostan
Zarian (Թարգ. Մարգալետ Մարկոսեան) – 21:

- Ասացուած կախաղան բարձրացողի հա-
մար – 132:

- Ode to a boy on his way to the gallows by
Gostan Zarian (Թարգ. Մարգալետ Մարկոսեան)
– 133:

Ճօյս Քիլմըր (Թարգ. Շէն-ՄԱՀ).- Ծառեր – 24:

- Trees – 25:

Գէորգ Հնձացեան.- Ազատամարտիկի յիշա-
տակին – 26:

Շէն-ՄԱՀ.- Թռիչքն իմ հին – 137:

Յովհաննէս Շիրազ.- Յաւերժական Հայրե-
նիք – 345 :

- The Eternal Homeland by Hovanness Shiraz
(Թարգ. Մարգալետ Մարկոսեան) – 344:

William Shakespeare.- Sonnet 42 – 346 :

- Սօնէթ 42 (Թարգ. Շէն-ՄԱՀ).- 347:

Բագրատունի.- Երկիր հայրենի – 348:

- Մօրս – 473:

Sir Walter Scott.- Patriotism – 468:

- Հայրենասիրութիւն (Թարգ. Շէն-ՄԱՀ).- 469:

Վահան Տէրեան.- Մեր Հաւատը – 471:

- Our Faith by Vahan Derian (Թարգ. Մարգալետ
Մարկոսեան) – 470:

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Բաբգէն Թօփճեան.- Հայ Հայրաբանութիւ-
նը.- Մովսէս Խորենացիի՝ Պատմութիւն Սըր-
բուհւոյն Աստուածածնի եւ Պատկերի նորա՝
Հեղինակ՝ Թամար Տասնապետեան – 51:

Գրիգոր Ոսկանեան.- «Ընտրեալը Աստու-
ծոյ». Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրու-
թիւնը Դ.-րդ դարէն մինչեւ մեր ժամանակը:
Հեղինակ՝ Տ. Գրիգոր Վրդ. Մագսուտեան – 151:

Նազարէթ Թօփալեան.- Կեանք եւ Մահ՝
Արեւելքի Քրիստոնեաներու. Հեղինակ՝ Ժան-
Փիէր Վալոնյ, Փարիզ, 1994, 974 էջ – 358:

Արշակ Մադոյեան.- Նորայր Արքեպիսկո-
պոս Ծովական. Վանատուր. Բանասիրական
յօդուածների ժողովածոյ, Երուսաղէմ, 1993,
415 էջ – 494:

Արտէն Ա. Քհնյ. Աշճեան.- Սխալի առաջ-
նորդող գիրք մը Տ. Մեսրոպ Արք. Աշճեանի
The Armenian church in America (Հայ Եկեղեցին
Ամերիկայի մէջ), Նիւ Եորք, 1995, 92 էջ – 496:

ԳՐԱԿԱՆ

Սարգիս Եսփուշեան.- Միրիեմ Խաթուն Դա-
մասկուհուն – 41:

Արշակ Մատոյեան.- Հայաստանեան անցա-
գիր – 146:

ԴԻՅԱԲԱՆԱԿԱՆ

Ռաֆայէլ Վարդանեան, Գրիգոր Կարա-
խանեան, Յովհաննէս Վարդանեան.- Հայոց
դիցարանի տօները – 58, 156:

ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ

Նորման Եպս. Զաքարեան.- Նախագիծ մը ժողովումի համար – 64:

Սարգիս Սարիբեկեան.- Խորհրդաբանական թուաբանություն – 74:

Արամ Քերովբեան.- Հայկական եկեղեցական երգեցողություն, Համակարգը եւ ներկայ վիճակը – 160:

Վաչէ Արքեպիսկոպոս Յովսէփեան.- Երկու խօսք Եկեղեցական Սահմանադրություններու մասին – 506:

ԵՐԱԺԵՏԱԿԱՆ

Բան.՝ Ռուբէն Որբերեան, Երաժշտ.՝ Շահան Ռ. Պէրպէրեան.- Գիւղիս Ճամբան – 109:

Բան.՝ Եղիշէ Արք. Դուրեան, Երաժշտ.՝ Շահան Ռ. Պէրպէրեան.- Ետեւէս եկուր – 115:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ամեն. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի Ծննդեան Պատգամը – 3:

Christmas Message of His Beatitude Patriarch Torkom Manoogian (18 January 1995, in Bethlehem) – 7:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Ա. Վեհափառ Հայրապետի քարոզը Փրկչի Սուրբ Յարութեան տօնի առթիւ Մայր Տաճարում.- Յարութեան շունչը մեր երկրում – 111:

Սրբազրություն – 361:

ԿՐՕՆԱԿԱՆ

Ռուբէն Վրդ. Յովակիմեան.- Նոր Տարին – 9:
Աւետիս Աբեղայ Իփրաճեան.- Յորենի հատիկի ընձիւղումը – 10:

- Պարտ է կալ յաղօթս – 119:

Փրոֆ. Գէորգ Խրլոբեան.- Վարդանանց շարժումը եւ հայ կրօնագիտական միտքը – 12:

Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց.- Հայրապետական պատգամ Ապրիլեան Եղեռնի 80-ամեակի առթիւ – 115:

Վարդան Ա. Քչնյ. Տիւկէրեան.- Ամուսնութիւն, թէ բարբարոսութիւն – 117:

Վաչէ Ծ. Վրդ. Իգնատիոսեան.- Կենաց ջուրը – 123:

Արմէն Սրկ. Աթաշանեան.- Թաղէոս Առաքելը եւ Հայաստանեայց Սուրբ Եկեղեցին – 126:

Սուրէն Վրդ. Զինչինեան.- Հրեաներու եւ Յոյներու ըմբռնումը խաչի մասին – 334:

Բաբգէն Ա. Քչնյ. Մագսուտեան.- Ստերչ կեանքեր – 336:

Գրիգոր Ոսկանեան.- Տիրամայրն ու մեր եկեղեցին – 338:

Դոհար Յարութիւնեան.- Արեւածագի սպասումը – 341:

Զաւէն Արքեպս. Զինչինեան.- Իգնատիոս Եպիսկոպոս եւ Մեկնություն Դուկասու Աւետարանին – 459:

Անուշաւան Ծ. Վրդ. Զղջանեան.- Սրբոց Թարգմանչաց Վարդապետացն Մերոց Սահակայ եւ Մեսրոպայ – 463:

Սարգ.- Յիսուսի հրաշքները – 464:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Հայր Բագրատ.- Ամանորը ժառանգաւորաց Վարժարանի մէջ – 94:

- Բեմադրություն «Քաջ Նազար»-ի – 94:

Թորգոմ Պատրիարք Մանուկեան.- Աղան Արք. Պալիօղեանի ուխտագնացությունը Հընդ-կաստանի Զինսուրա քաղաքի Յովհ. Մկրտիչ Եկեղեցի – 95:

- Հրաւէր Հայ Երուսաղէմի Սրբավայրերէն – 518:

- A call from Armenian Shrines of Jerusalem – 520:

- Հեռագիրներ՝ այրի Տիկին Լիա Ռապինին.- Յորդանանի Վսեմ. Թագաւոր Հիւսէյնին – 516:

Իցհակ Ռապինի յուղարկաւորութեան մասնակցելէ ետք Նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան այցելեց Երուսաղէմի Հայոց Պատըրիարքարան – 517:

Յանկ Կիւպէնկեան Մատենադարանին կողմէ ստացուած գիրքերու (Յաւելուած) – 106, 197, 381:

Ամավերջի հանդէսներ. ժառանգաւորաց Վարժարան եւ Ընծայարան, Սրբոց Թարգմանչաց Ազգ. Վարժարան – 185:

Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիւ Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի զեկոյցը Ազգային Եկեղեցական ժողովին 3 Ապրիլ, 1995, Սուրբ Էջմիածին – 215:

Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիւ Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի այցը Սիւնեաց թեմ – 242:

Տ. Աբրահամ Վարդապետ Մկրտչեան.- Տե-

ղեկատվություն 1994 թվականին Սիւնեաց
թեմում կատարուած աշխատանքների – 244:

Միօրեայ պտույտ ղէպի Աշքելոնի հնագի-
տական վայրը 24 Յուլիս, 1995 – 380:

Տարելիցի հոգեհանգստեան պաշտօն – 380:

Հաղորդագրութիւն Մայր Աթոռ Սուրբ Էջ-
միածնէն – 501:

Վարժարաններու տարեսկիզբ – 512:

Խաղաղութեան համագումար Երուսաղէմի
մէջ – 513:

ՇՆՈՐՀԱՆՈՐԱԿԱՆՔ

Շնորհաւորական հեռագիրներ՝ յղուած Ս.
Աթոռէն – 53, 181, 367, 368:

Շնորհաւորական գիր՝ Կաթողիկոսական
Տեղապահ Թորգոմ Պատրիարք Մանուկեա-
նէն – 54:

Շնորհաւորական գիր՝ Ամենայն Հայոց Կա-
թողիկոսէն – 182:

Շնորհաւորական գիր՝ Մեծի Տանն Կիլիկիոյ
Կաթողիկոսարանէն – 55:

Շնորհաւորական գիր՝ Հռոմի Սրբազան Քա-
հանայապետէն – 183:

Շնորհաւորական գիր՝ Մոսկուայի եւ Ռու-
սիոյ Օրթոտոքս Եկեղեցւոյ Սրբազան Պատըր-
իարքէն – 56, 184:

Շնորհաւորական գիր՝ Կ. Պոլսոյ Պատրիար-
քէն – 57:

ՊԱՏՄԱԿԱՆ

Տ. Զաւէն Արզումանեան.- Տ. Տ. Մատթէոս
Բ. Իզմիրլեան – 84, 85:

Վարդան Մատթէոսեան.- Առաջին Արտա-

շէսեանները, Ժամանակագրական դիտողու-
թիւններ – 176:

Սամուէլ Կարապետեան.- Թիֆլիս, Նորաշէ-
նի Սուրբ Աստուածածին Հայոց Եկեղեցին –
362:

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Յունուար-Մարտ – 100:

Ապրիլ-Յունիս – 191:

Յուլիս-Սեպտեմբեր – 370:

Հոկտեմբեր-Դեկտեմբեր – 522:

Դաւիթ Արքեպս. Սահակեան.- Բարեպաշ-
տական նուէրներու ցանկը 1994 տարուան –
96:

Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը եւ Երուսաղէ-
մի Պատրիարքութիւնը: [Արտատպած «Սիոն»-ի
1929 թ. Մարտ՝ էջ 126, Ապրիլ՝ էջ 156, Մայիս՝
էջ 192] – 429:

ՏԵՐՈՒՆԻ

Կարպիս Եսայեան.- Վաստակաւոր կրթա-
կան մշակ՝ Յարութիւն Այվազեանի անցումը
– 97:

Փրոֆ. – Դոկտ. Աւետիս Գ. Սանճեանի կեն-
սագրական գիծեր (1921-1995) – 382:

Թորգոմ Պատրիարք Մանուկեան.- Յաւակ-
ցական Աւետիս Սանճեանի ընտանիքին – 385:

Արսինէ Քաջախեան (1921-1995) – 386:

Նահապետ Մելքոնեան.- Արսինէ Քաջա-
խեանի մահուան քառասունքին առթիւ – 387:

Իսրայէլի Վարչապետ Իցհակ Ռապիւն սպան-
նուած 1922-1995 – 515:

Պատրաստեց՝ ՆԵՐՍԷՆ ԱՐԴ. ԱՆՈՅԵԱՆ

ՅՈՐԴԱՆԵԱՆ

ԵՐՐՈՊԱՅԻ ՀՆԱԳՈՅՆ ԵՒ ՆՈՐԱԳՈՅՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ. ՀՈԼԱՆՏԱՅԻ Ս. ՀՈԳԻ, ՊԵԼՃԻՔԱՅԻ Ս. ՄԱՐԻԱՄ ՄԱԳԴԱՂԵՆԱՅԻ (Գիտ Արքեպիսկոպոս Նագգաշեանի Յիշատակին)

Ամսդերտամի Սուրբ Հոգի Եկեղեցին

Լուսահոգի Գիտ Արքեպիսկոպոս Նագգաշեանի վախճանման քառասունքին առիթով իր յիշատակին կ'ընծայեմ սույն գրութիւնը, որ պատմական տեղիք կը բովանդակէ Եւրոպայի հայ գաղութի պատմութեան համար, ուր ան ծառայեց երկար տարիներ որպէս Հայրապետական Պատուիրակ Արեւմտեան Եւրոպայի եւ Առաջնորդ Փարիզի: Իր ջանքերով Ամսդերտամի եկեղեցին վերստին սեփականութիւնը եղաւ հայ համայնքին եւ նորագոյն եկեղեցին կանգնեցաւ Պրիւքսէլի մէջ:

Եւրոպայի հնագոյն Հայ Եկեղեցին Ամսդերտամի Սուրբ Հոգի եկեղեցին կը նըկատուի, որուն հիմնադրութեան թուականը 1713, Հոկտեմբեր 26 արձանագրուած է պատմական ստույգ տեղեկութիւններէն՝ գրուած Առաքել Սարուխանի «Հոլանդա՛ն եւ Հայեր» երկասիրութեան մէջ եւ հրատարակուած Վիեննայի Միթիթարեաններուն կողմէ 1926 թուին: Սկզբնական տուեալներու համաձայն առաջին հայ հոգեւորականը Մարկոս Քահանայ Աբրահամեանն է որ Հոլանտա եկած է, կառուցած եւ օծած առաջին հայ եկեղեցին 1715, Սեպտեմբեր 20-ին՝ հաւանութեամբ եւ հայրապետական կարգադրութեամբ Աստուածատուր Համադանցի Ամենայն Հայոց Կաթողիկոսին (1715-1725): Աւելի կանուխ, Աղեքսանդր Ա. Զուղայեցի Կաթողիկոսի (1706-1714) կողմէ Ամսդերտամ հասած է էջմիածնի միաբան Յովակիմ Վարդապետը «որ աւելի քան մէկ տարի» միայն պաշտօնավարած է:

Եկեղեցին Առժամապէս Ծախուած

Սուրբ Հոգի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին 160 տարի հոգեւոր ծառայութիւն մատուցանելէ ետք, հայ հաւատացեալներու նուազումին պատճառով 1874, Մարտ 9-ին ծախուած է Հոլանտական կրօնաւորութիւններու միաբանութեան, որոնք օգտագործած են զայն որպէս մանկապարտէզ եւ դպրոց: Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական Պատուիրակի Փոխանորդ նորոգ վախճանեալ Գիտ Արքեպիսկոպոս Նագգաշեանի հրապարակած պաշտօնական հաղորդագրութենէն կը տեղեկացուի որ իր տարած յատուկ բանակցութիւններէն ետք Սուրբ Հոգի եկեղեցին նոյն միաբանութենէն վերստին գնուած է հայ համայնքին կողմէ 1986, Նոյեմբեր 14-ին:

Գնման պաշտօնագիրը ստորագրած են Գիտ Արքեպիսկոպոս եւ Վահէ Գինեպանեան, տեղեկացնելով թէ «վերջին շուրջ 25 տարիներուն Հոլանտայի հայութիւնը աճած էր մնայուն բնակչութեամբ, եւ թէ նախկին Հայրապետական Պատուիրակն ու Փարիզի Առաջնորդ՝ հանգուցեալ Սերովբէ Արքեպիսկոպոս Մանուկեան, դիմումներ կատարած էր Ութբէլի Կաթողիկոս Ուիլյամ Բարդուղիմէի Արքեպիսկոպոսին եւ քաղաքապետութեան եկեղեցին ետ առնելու, սակայն առանց արդիւնք մը ստանալու»:

Եկեղեցին Վերստին Գնում

Հոլանտացի կրօնաւորութիւններու միաբանութիւնը երբ եկեղեցին ծախու դրաւ, տուաւ նաեւ նախապատուութիւնը հայ համայնքին, ու վերջինս շնորհիւ Գիւտ Սրբազանի, ամէն ճիգ ի գործ դնելով կրցաւ գնել զայն, «անմիջապէս գոյացնելով գինին մէկ երրորդը»: Գիւտ Արքեպիսկոպոս Սուրբ Հոգի Հայ Եկեղեցւոյ վերստացման լուրը հաղորդեց Մայր Աթոռ՝ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին, «որ գնահատելով իր հօտին նախանձախնդրութիւնը, նուիրեց գնման անհրաժեշտ գումարին յաւելեալ մէկ երրորդ բաժինը»: Իսկ վերջին մէկ երրորդն ալ նուիրուեցաւ ՀԲԸ Միութեան կողմէ: «Պատմական յուշարձան մը» նկատուած եկեղեցին, «լաւ եւ հաստատուն վիճակի մէջ է ըսուած, ուր նախկին բոլոր արձանագրութիւնները կը մնան ըստ առաջնոյն»:

Եկեղեցւոյ հանդիսաւոր օծումը Գիւտ Արքեպիսկոպոս կատարած է 1989, Նոյեմբեր 26-ին, երբ արդէն յաջորդելով 1984, Փետրուարին վախճանեալ Սերովբէ Արքեպիսկոպոսին, Նորին Սրբութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսին կողմէ նշանակուած էր Հայրապետական Պատուիրակ Արեւմտեան Եւրոպայի: Այդ առիթով Վազգէն Ա. Ամենայն Հայոց Հայրապետ իր 1989, Նոյեմբեր 14 թուակիր «Օրհնութեան Գիրը» ուղարկած էր «անհուն ուրախութեամբ ողջունելով վերաբացումն ու օծումը Ամսթերտամի հայոց պատմական եկեղեցիին՝ յանուն Սուրբ Հոգւոյն»:

Ալմելոյի Հայ Համայնքը

Հոլանտացի մայրաքաղաքէն 90 մղոն հեռաւորութեամբ գտնուող Ալմելօ քաղաքը հայեր սկսան գաղթել Թուրքիայէն ու Հայաստանէն Սերովբէ Արքեպիսկոպոսի Հայրապետական Պատուիրակութեան շրջանին: Իր կարգադրութեամբ շուտով մնայուն հոգեւոր հովիւ մը նշանակուեցաւ: Երուսաղէմի երիտասարդ միաբաններէն Մանուէլ Վարդապետ Երկաթեան 1980 թուականին Հոլանտա ժամանեց: Ալմելօ քաղաքին մէջ հայեր սկսած էին հաստատուիլ 1976 թուականէն, եւ մինչեւ 1980 մօտ 300 հայ ընտանիքներ Թուրքիոյ ներքին գաւառներէն հեռանալով եկած ու բնակութիւն հաստատած էին: Առաջին հոգեւոր հովիւը եղած է Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց միաբաններէն Տ. Նուրհան Վրդ. Մանուկեան՝ 1980-1982 թուականներուն: ՀԲԸ Միութեան Կեդրոնական Վարչութիւնը Հոլանտացի բարեսիրական եւ կրօնական կազմակերպութիւններու հետ գաղթական հայերուն բնակարան եւ գործ հայթայթեց, քաղաքին արժէքաւոր մէկ թաղին մէջ շէնք մըն ալ գնելով, ուր եկեղեցական արարողութիւններ ալ կատարուեցան:

Մինչ այդ 1985 թուին, երբ նախորդ տարին վախճանած էր Սերովբէ Արքեպիսկոպոս Մանուկեան ու իրեն յաջորդած Գիւտ Արքեպիսկոպոս, Ալմելոյի հայ համայնքը ինքնաբաւ դառնալով իր հայկական սեփական եկեղեցին կառուցեց երբ հայերու թիւը բազմապատկուած էր քաղաքին մէջ համայնքի մնայուն հոգեւոր հովիւ Մանուէլ Վարդապետ Երկաթեանի գլխաւորութեամբ: Մինչդեռ հոգեւոր հովիւի նշանակումէն առաջ յաճախ հայ եպիսկոպոսներ այցի երթալով Ալմելոյի համայնքը խանդավառ եւ գործօն կը պահէին, Ամսթերտամի եկեղեցին կը մնար ուղղակի Փարիզի հովանաւորութեան տակ, ինչպէս նաեւ Պելճիքայի Սուրբ Մարիամ Մագդաղենացի եկեղեցին:

Պելճիքայի Հայ Եկեղեցին

Եւրոպայի նորագոյն հայ եկեղեցին եղաւ Պրիւքսէլի եկեղեցին: Պելճիքայի, յատկապէս Պրիւքսէլի մէջ ապրող հայութիւնը միշտ ենթակայ մնաց Փարիզի առաջնորդութեան, ուրկէ հոգեւորականներ կ'այցելէին պատահական առիթներով պատարագելու եւ կամ խորհուրդներ մատակարարելու: Հոն գործօն դիրքի վրայ կը մնային թէ՛ Գաղութային Վարչութիւնը, եւ թէ՛ Եկեղեցւոյ Շինութեան Վարչութիւնը: Զոյգ վար-

շուրթիները եկեղեցու շինութեան համար մայրաքաղաքի Քինդերմանս փողոցին վերայ յարմար կալուած մը գնելէ եւ նախապատրաստական աշխատանքներ կատարելէ ետք, իրենց տեղեկագիրը կը ներկայացնէին Փարիզի Առաջնորդ Գիւտ Արքեպիսկոպոս Նազգաշեանին՝ ստանալով իր հաւանութիւնն ու հովանաւորութիւնը:

Գիւտ Սրբազան իսկոյն կը տեղեկացնէր Մայր Աթոռ՝ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որուն արտօնութեամբ 1987, Նոյեմբեր 16-ին կը կատարէր եկեղեցու հիմնարկէքը՝ մասնակցութեամբ Լիոնէն Դաւիթ Եպիսկոպոս Սահակեանի եւ Գանատայէն Վազգէն Եպիսկոպոս Քէշիշեանի: Ներկայ կ'ըլլար նաեւ ազգային բարերար Տիար Ալեք Մանուկեան: Հիմնարկէքին ներկայ էին նաեւ Պելճիքայի թագաւորական պալատի ներկայացուցիչները:

Եկեղեցու Օծումը

Երեք տարի ետք, երբ արդէն նոր եկեղեցին կառուցուած էր, օծման համար Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս 1990, Մայիս 3-ին յատկապէս Պրիւքսէլ կը ժամանէր, իր հետ ունենալով Կիլիկիոյ Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսը: Վազգէն Հայրապետ Փարիզ հասնելով կը դիմաւորուէր Գիւտ Արքեպիսկոպոս Նազգաշեանի, Նորվան Եպիսկոպոս Զաքարեանի եւ հայ հոգեւորականութեան կողմէ: Նոյն օրը Հայրապետը նորաշէն եկեղեցին կ'առաջնորդուէր, որ «դրսից նմանում է Աղթամարի Ս. Խաչ եկեղեցուն, իսկ ներսից ունի արդիական լուծում»: Եկեղեցու ճարտարապետն է Հայկ Մարտիկեան:

Կիրակի Մայիս 6-ին տեղի կ'ունենար Ս. Մարիամ Մագդաղենացի Հայաստանեայց Եկեղեցու օծումը՝ ձեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ մասնակցութեամբ Գարեգին Բ. Կիլիկիոյ Կաթողիկոսին: Մինչ Հայրապետը կ'օծէր աւագ սեղանը, Եպիսկոպոսներ կ'օծէին եկեղեցու 16 սիւնները: Պատարագը կը մատուցանէր Գիւտ Արքեպիսկոպոս: Վազգէն Հայրապետի քարոզէն առաջ կը կարդացուէր Հայրապետական Կոնդակը՝ ուղղուած Պելճիքայի Պոտուէն Ա. Թագաւորին, ուր յանուն հայ ժողովուրդին երախտագիտութիւն կը յայտնէր «որ Զեռ պետական իշխանութեանց բարի կամեցողութեամբ հնարաւոր դարձաւ եւ որուն կանոնական օծումը մեր ձեռքով կատարելու գոհումակութիւնը ունեցանք»: Նոյն երեկոյեան պաշտօնական ճաշկերոյթի ընթացքին Վազգէն Հայրապետ իր բարձր գնահատանքը կը յայտնէր ներկայ պետական անձանց եւ եկեղեցական ներկայացուցիչներուն: Պետական այցելութիւններ տալէ ետք Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայիս 9-ին Փարիզի վրայով կը վերադառնար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Ի յիշատակ Գիւտ Արքեպիսկոպոս Նազգաշեանի այստեղ կ'արձանագրենք իր աննկուն կամքն ու յարատեւ աշխատանքը Եւրոպայի հնագոյն եւ նորագոյն հայ եկեղեցիներուն իսկական հովանաւորն ըլլալու պատիւը եւ մանաւանդ անոնց գործնական նուիրեալ հոգեւորական հանգիստանալը:

ԴՈԿՏ. ԶԱԽԷՆ ԱԻ. ՔՇՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

ՅՈՒՐԵԼԵԱՆ**ՍԿԻՒՏԱՐԻ ՍՈՒՍԱԿԸ****(Պետրոս Դուրեանի ծննդեան 170-ամեակի առթիւ)**

Իսկ աննըշան եթէ մընայ
Երկրի մէկ խորշն հողակոյրն իմ,
Եւ յիշատակս ալ թառամի,
Ա՛հ, այն արեւն ես կը մեռնիմ...:

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

Արեւմտահայ գրականութեան վաղամեռիկ բանաստեղծ Պետրոս Դուրեանը, գիսաստղի պէս մի ակնթարթ լուսաւորեց հայ քնարերգութեան երկնակամարը եւ նոյնպիսի արագութեամբ անհետացաւ իր կեանքի ոսկեշող արշալոյսին: Նա հեռացաւ կեանքից քսանմէկը չբոլորած, հեռացաւ առանց տեսնելու իր «արցունքոտ տողերու» «արեւ տեսնելը», որի համար այնքան կարօտով մորմոքում էր նրա սիրտը: Հեռացաւ նոյնիսկ առանց լուսանկար ունենալու՝ մահից մէկ օր առաջ մարգարէանալով. «Յարգս չգիտցան, բայց պիտի փնտռեն զիս...»¹: Ու փնտռեցինք նրան, որովհետեւ կարճատեւ կեանքի ընթացքում նա կարողացաւ ստեղծել բանաստեղծական այնպիսի արժէքներ, որոնց հարստութիւնը զմայլում է ընթերցողին, ներշնչում է նրան խորին ակնածանք եւ խանդավառ սէր դէպի բանաստեղծի անըստգիւտ տաղանդը:

Պետրոս Դուրեանը ծնունդ է Կ. Պոլսի Սկիւտար արուարձանի Ենի-Մահալլէ խուլ ու անշուք փողոցում, Տէմիրճի (գարբին) Աբրահամ Զըմպայանի² ընտանիքում, 1851 թ.-ի Մայիսի 20-ին³: Հայրը, ինչպէս գրեթէ ամէն մի արհեստաւոր, ընդունուած կարգով երբեմն խմում էր, բայց ուսումնասէր մարդ էր, երեխաներին մղում էր դէպի կրթութիւն: Մայրը՝ տիկին Արուսեակը, աշխատասէր, բարի, լուսկեաց եւ վշտոտ կին էր: Նա աւելի

¹ Զաղարեան Ա., Պետրոս Դուրեան, Դէմֆի վերականգնումը, Երեւան, 1971, էջ 11:

² Զըմպայեան ազգանունն ունի փոքրիկ պատմութիւն: Դուրեանի պապը՝ Սարգիսը, երկաթագործ էր: Մի օր յանախորդներից մէկը հարցնում է. «պարգունակին (սողնակ – Դ.Ա.Ա.) ծակերը ինչպէ՞ս կը բանան»: «Զըմպայով» պատասխանում է երկաթագործը: Յանախորդը ծիծաղելով ասում է. «Վա՛յ զըմպայ, վա՛յ», որից յետոյ Սարգիսի անունը Զըմպա Սարգիս է մնում, եւ դառնում է ընտանիքի անունը: 1865 թ.-ին, Պետրոս Դուրեանն իր առաջին բանաստեղծութիւնների տակ Զըմպայեան ստորագրելուց յետոյ, թուրքերէն այդ բառը, այն էլ հայ բանաստեղծի անուան համար, անախորժ է համարում եւ բառարանի մէջ փնտռում ու գտնում է Զըմպայի հայերէնը՝ «դուր» (սուր գործիք՝ փորագրութեան համար – Դ.Ա.Ա.), ապա փոխելով ազգանունը՝ դարձնում է Դուրեան:

³ Բ. Էֆէրեանը «Ընդարձակ կենսագրութիւն...»-ում Պ. Դուրեանի ծննդեան թուականը համարել է 1852 թ.-ը, որը եւ, սակաւ բացառութեամբ, ընդունել են յետագայ ուսումնասիրողները: Այս թուականն է գրուած նաեւ Պ. Դուրեանի տապանաքարի վրայ «ծնեալ ի 1852»: Սակայն Պ. Դուրեանի 100-ամեակի առթիւ Ստամբուլում կազմուած յանձնախումբը ստուգելով Սկիւտարի Ս. Խաչ եկեղեցու տոմարները պարզել է, որ գրողը «ծնած է 1851 Մայիս 20-ին եւ մկրտուած Մայիս 25-ին» (Տե՛ս «Ճառագայթ» շաբաթաթերթ, Իսթանպուլ, 1951, թիւ 210, էջ 4, ինչպէս նաեւ՝ Փարիզի «Լուսադիւր» հանդէսի 1953-ի թիւ 14-ում տպագրուած Խ. Ամիրեանի «Պետրոս Դուրեան» յօդուածի ծանօթագրութիւնը): Եղիշէ Աբֆ. Դուրեանը նոյնպէս իր «Պատմութիւն հայ մատենագրութեան ի վաղ ժամանակաց մինչեւ մեր օրերն» աշխատութեան մէջ (Կ. Պոլիս, 1885) եղբօր ծննդեան թուականն ընդունել է 1851-ը (էջ 106): 1905 թ. Շուշիում տպագրուած Դուրեանի «Բանաստեղծութիւնների ժողովածոյ»-ում Հ. Անառեանը եւս գրողի ծննդեան թուականն ընդունել է 1851 թ. Մայիսի 20-ը (էջ 3), իսկ ակադեմիկոս Հրանտ Թամրազեանն իր «Երկեր»-ի Գ. հատորում բանաստեղծի ծննդեան թուականն ընդունել է 1851-ը, իսկ ծննդեան օրը՝ Մայիսի 25-ը (2010, էջ 31), որը Պ. Դուրեանի մկրտութեան օրն է:

կրթուած էր, քան ամուսինը, սիրում էր կարդալ, մեծ մասամբ աւետարան, սաղմոս եւ կրօնական ուրիշ գրքեր: Իր վշտի մխիթարութիւնը դրանց մէջ էր գտնում, որդուն էլ դաստիարակում էր նոյն ոգով⁴:

Ընտանիքը մեծ էր. վեց երեխայ՝ չորս տղայ՝ Յարութիւն, Պետրոս, Ագրիպպաս եւ Միհրան, երկու աղջիկ՝ Էլիպսը եւ Արտեմը, որոնք վախճանուել են մանուկ հասակում (առաջինը՝ երեք, երկրորդը՝ ութ տարեկանում): Մեծ եղբայրը՝ Յարութիւնը, որ լրագրող էր, դարձեալ շուտ է մահանում՝ Պետրոսից յետոյ, 1873 թ. Հոկտեմբերին, դարձեալ թոքախտից, 25 տարեկան հասակում: Ագրիպասը յետագայում զբաղւում էր փաստաբանութեամբ, իսկ Միհրանը, ապագայ յայտնի բանասէր-բանաստեղծ Եղիշէ Արք. Դուրեանը, ծնուել է 1860 թուականին, հետեւաբար ութ տարով փոքր էր Պետրոսից: Ամէնից երկար ապրեց Միհրանը՝ Եղիշէ Արք. Դուրեանը, որը հասաւ եկեղեցական բարձր դիրքի՝ ընտրուելով Կ. Պոլսի եւ Երուսաղէմի Պատրիարք⁵:

Պ. Դուրեանն ունեցել է անհոգ մանկութիւն, եղել է գեղեցիկ ու առողջ երեխայ, նրան սիրել են բոլորը... «...սիրուն ու գեղեցիկ մանկիկ մ'էր. սեւ յօնքեր ու սեւ աչքեր ունէր, վառվռուն-մեղամաղձիկ...»⁶, - գրել է Էքսէրճեանը:

Դեռեւս հինգ տարեկան Պետրոսը սկսում է դպրոց յաճախել 1856 թ.-ին: Շուտով ընդունւում է Սկիւտարի ճեմարանը: Կարճ ժամանակով ճեմարանի տեսուչ է եղել երգիծաբան Յ. Պարոնեանը, որը մանուկ հասակից ճանաչել է ապագայ բանաստեղծին եւ հովանաւորել ու խրախուսել նրան: Ճեմարանի ձրիավարժ աշակերտն էր Դուրեանը, թէեւ առանձնապէս չէր փայլում ուսման մէջ: Ունեւոր ընտանիքի զաւակները երբ գնում էին ճաշարան, Պետեկը (այսպէս էին անուանում նրան տնեցիները⁷) հնարաւորութիւն չունենալով նախաճաշ բերելու փակուում էր դասասենեակում, հանում կանխաւ հետը վերցրած որեւէ գիրք եւ կարդում էր, գրում: Իր մտաւոր սնունդը քաղում էր գերազանցապէս գրքերից, որոնք կարդում էր մեծ յափշտակութեամբ: Գրում էր նաեւ տանը՝ դպրոց մեկնելուց առաջ եւ երեկոները՝ մինչ ուշ գիշեր: Պատահում էր, որ խստակրօն հայրը արթնանում էր կէսգիշերին եւ, տեսնելով կանթեղի աղօտ լոյսի տակ գրքի կամ թղթի վրայ հակուած որդուն, սաստում էր. «Ծօ՛, տահա նստե՛ր ես, լոյս կը վառես»: Աղքատի տանը ճրագը վառ թողնելը շուայութիւն էր: Եւ մի՞թէ հայրական օճախում առկայծող կանթեղը չէր, որ պատանու երեւակայութեան մէջ ուրուագծեց խրճիթի ու դղեակի անշրպետը, ներշնչեց նշանաւոր ընդհանրացումներ:

Տընակին մէջ մարի առկայծ կանթեղն հող,

Այն մութին մէջ նօթի տրդեկք կը հեծեն,

Դղեակըն խրախ մինչեւ լոյս ջախք կը հիծեն...⁸ (Սիրեցէք զմիմեանս):

Աստուած նրան տուել էր գրելու խորհրդաւոր ձիրք, ուրոյն կարողութիւն՝ թափանցելու աշխարհի գաղտնիքների եւ հոգիների մէջ: Կարծես հէնց դրա հետ տուել էր նաեւ ճակատագրական ցաւը: Եղիշէ Դուրեանի խօսքով՝ Դուրեանը, դեռ աշակերտ եղած ժամանակ, կանխազգացել է իր ապագան. «Իւր դպրոցական կեանքէն բան մը չեմ գիտեր, զայս միայն իւր ընկերներէն լսած եմ, թէ էր աշխատասէր, զգօն եւ թէ կա-

⁴ Տե՛ս Յակոբեան Ս., Արեւմտահայ բանաստեղծներ, Պետրոս Դուրեան, Նրա կեանքը եւ երկերը, «Նոր մատենադարան», № 1-2, Վիեննա, 1922, էջ 13-14:

⁵ Թէրզիպաշեան Վ., Պետրոս Դուրեան, Երեւան, 1959, էջ 11-12:

⁶ Էքսէրճեան Բ., Ընդարձակ կենսագրութիւն բաւեյիշատակ Պետրոս Դուրեանի, Կ. Պոլիս, 1893, էջ 28:

⁷ Բացատրութիւնը Ալ. Շարուրեանի:

⁸ Պետրոս Դուրեան, Երկեր, Հայ դասականների գրադարան, Առաջաբանը, ծանոթագրութիւններ եւ բառարանը Ալ. Շարուրեանի, Երեւան, 1981, էջ 4-5:

նույն սկսած էր ըսել՝ ինչպէս ինքն իւր նամակներէն միոյն մէջ ալ կ'ականարկէ թէ «Ես երկնքի հիւանդութիւնն ունիմ»⁹:

1867 թ.-ին ճեմարանն աւարտելուց յետոյ, Պ. Դուրեանը ինչե՛ր ասես որ չի արել կարօտեալ ընտանիքին օգնելու համար. եղել է դեղագործի աշակերտ, դարձել սեղանաւորի գրագիր, զբաղուել դերասանութեամբ, սակայն միտքարանք է գտել գրելով: «Սպակը չեմ աքէր, բայց գրիչը կը սիրեմ, ախոյի մ'է նա ինձ այս անձուկ կացութեանս մէջ»¹⁰, - խոստովանել է ընկերոջն ուղղուած նամակներից մէկում: Եւ ահա, Դուրեանը, դեռ պատանի, ապրում է ստեղծագործական բուռն կեանքով, սկսում է գրել բանաստեղծութիւններ եւ դրամատիկական երկեր, կատարում է թարգմանութիւններ, փորձում է ուժերը վիպասանութեան մէջ, զբաղւում հրապարակախօսութեամբ:

Բանաստեղծական առաջին փորձերը Դուրեանն արել է դեռեւս տասներեք տարեկանից, որոնցից մի քանիսը Յ. Պարոնեանի միջնորդութեամբ, 1871 թ.-ին տպագրուել են Հ. Սվաճեանի «Մեղու» հանդէսում: Դպրոցի բարձր դասարաններում հրապուրուել է թատրոնով. «յիրաւի բռնի թաղերագիր կամ բանաստեղծ մը ըլլալ կ'ուզեմ»¹¹, - գրել է ընկերոջն ուղղուած նամակներից մէկում: Տասնհինգ տարեկանում արդէն պիեսներ էր թարգմանում եւ նոյնիսկ յօրինում: Նրա առաջին դրամատիկական գործն է «Վարդը եւ Շուշանը», որն առաջին անգամ բեմադրուել է 1869 թ.-ի Փետրուարին, Սկիւտարում՝ Վարդովեանի թատրոնում: Պատանին հօրից ծածուկ թատրոն էր գնում, որտեղ մոռանում էր ամէն ինչ՝ մռայլ եւ տխուր իրականութիւնը, տանը տիրող աղքատութիւնը, մարդկանց դաժանութիւնը, նոյնիսկ՝ հօր ազդած ահ ու սարսափը: Յետագայում, երբ որդու դրամատիկական առաջին փորձերը յաջողութիւն են գտնում եւ նոյնսիկ վարձատրւում, հայրը փոխում է իր վերաբերմունքը¹²:

1870 թ.-ի վերջերին, լարուած աշխատանքի, կրած զրկանքների եւ հոգեկան տառապանքների հետեւանքով Դուրեանի մօտ երեւում են մահացու հիւանդութեան՝ թոքախտի առաջին նշանները: Հիւանդութեան ողբերգական ընթացքի սրտակեղեք շարադարանքը մենք գտնում ենք նրա նամակներում: Քիչ են այդ նամակները, ընդամէնը՝ տասնհինգը, բայց հարուստ ներքին բովանդակութեամբ, անգնահատելի՝ իբրեւ հանճարի հոգու կենսագրութիւն: Դրանք՝ այդ նամակները, ապրած կեանքի անողոք վաւերագրութիւններ են, կեանքի ու մահուան բուռն բախումների օրագրութիւններ, որոնք կենսական ակունքներ են եղել նաեւ բանաստեղծութիւնների համար. իզուր չէ, որ յաճախ նա յիշեցնում է իր նամակների տողերը, ընդհանրացումները, որոնք խառնուել են նաեւ բանաստեղծութիւնների տարերքին: Առաջին անգամ նրա հիւանդութեան մասին կարդում ենք 1871 թ. Յուլիսի 5-ի նամակում, որից յետոյ նրա ստեղծագործական էներգիան մեծանում, ձիրքը բազմապատկւում է, քանզի ժամանակը կարճ էր, ասելիքը՝ անվերջ: Մահուան տագնապը եւ երկրային սէրը հսկայական ուժ էին տալիս նրա ինքնադրսետրմանը եւ հոգեկան դրամային:

Դուրեանի քնարական ամենամեծ արժէքները ստեղծուեցին կեանքի վերջին տարում՝ երբ կրծքի տակ արդէն բոյն էր դրել «մշտնջենաւոր վէրքը»՝ թոքախտը: «Գերեզմանի հակած» քսանամեայ պատանին չյանձնուեց ճակատագրի տնօրինութեանը, ըմբոստացաւ մահուան դէմ եւ վրէժ առաւ «սեւ ճակատագրից»: Նա շտապեց, իր իսկ խօսքերով ասած, «անդուկ կերպով թոթուել քնարը»՝ մրմնջալով բանաստեղծական

⁹ Պետրոս Դուրեանը վաւերագրելով եւ ժամանակակիցների յիշողութիւններում, Երեւան, 1982, էջ 50-51; Տե՛ս նաեւ Թամրազեան Հ., Երկեր, հ. Գ., Երեւան, 2010, էջ 32:

¹⁰ Պետրոս Դուրեան, Երկերի ժողովածու երկու հատորով, հ. 1, Երեւան, 1971, էջ 158:

¹¹ Նոյն տեղում:

¹² Տե՛ս Թէրզիպաշեան Վ., Նշում աշխ., էջ 14-16:

«մնաք բարեւ»-ները: Սա իւրատեսակ սխրանք էր, պարտքի ու պատասխանատուութեան գիտակցում ժամանակի ու սերունդների առաջ, որին ի զօրու են միայն մեծ հոգիները¹³: Այդ կարճ միջոցում նա արտայայտեց իր անծայր, անվերջ ասելիքը:

1871 թ.-ի աշնանը Դուրեանի վիճակը աւելի է ծանրանում, նա դժկամութեամբ գամւում է անկողնին, բերանից արիւն է հոսում: Նոյն թուականի Սեպտեմբերի 5-ի նամակում բանաստեղծը գրում է. «Իմ վիճակս յուսահատական է, եղբայր իմ, սակայն ես հանդարտ եմ և հարկաւ քիչ մը յիսուր...»: Այս նամակում են բանաստեղծի նշանաւոր խօսքերը՝ «...բանաստեղծ մը մահուանէ չի սուկար»¹⁴: Իսկ Նոյեմբերի 23-ին, երբ դրութիւնը աւելի ծանր էր, բանաստեղծը կրկնում էր նոյն միտքը ուրիշ ձեւով. «Շնորհակալ եմ, որ զիս կը մխիթարես, սակայն ես արդէն ըսած եմ թէ բնաւ մահուանէ վախ չունիմ, վասնզի տրեւեցայ ինքզինքս զգուցեցնել աշխարհէն»¹⁵:

Մահուանից մօտ մի ամիս առաջ ընկերոջը՝ Արմէն Լուսինեանին գրում է. «Եղբայր իմ, կուրծիս ցակ հրաբուխ բռնկած է. կրակներ կ'եռան ու կ'այրեն զիս. Աս կրակը երկրնէնց կրակին նման է, որ չ'մարիւր եւ չ'պիտի մարի, մինչեւ չ'սպառէ ամէն ինչ»¹⁶:

Իր մահը զգում եւ տեսնում էր նա ամէն վայրկեան: Սիրտը մորմոքւում էր, բայց կարեւորութիւն չտալով դրան՝ պատրաստւում էր մի ցաւագին «մնաք բարով» ուղղել աշխարհին, ապրող մարդկութեանը. «Ազնիւ բարեկամ... արդ կը դողդոջեմ, բերնես սիշտ արիւն կը հոսի, կը հիւծիմ, ճակտիս վրայ կենաց շիկնոյր ժպիտը կը քծգունի: Անդու կերպով քնարս կը թոյթուեմ անհուն «մնաք բարով»-ի մը համար անոնց, որոնք իրենց ծալքերը ինձ չը բացին»¹⁷: Մինչեւ վերջին վայրկեանը հոգու արիութիւնը չլքեց քսանամեայ բանաստեղծին, որի մասին ինքն ասում էր. «...սիս թշուառ երիտասարդ մը, որ աշխարհ եկաւ և միայն իր սէռնիլն զգաց ու սէռաւ»¹⁸: Նոյն նամակում նա խընդրում էր իր ընկերներին հրատարակութեան տալ իր անտիպ երկերը. «Մէկ քանի պատառ թուխթերու վրայ արցունքոյր քողեր գրեր եմ. անշուշտ բարեկամքս զանոնք պիտի պատուեն եւ անոնց Արեւ տեսցեն պիտի»¹⁹:

Երբ արդէն մօտենում է մահամերձ բանաստեղծի վախճանը, Աստուծոյ գաղափարի զօրութեամբ հոգին խաղաղւում է եւ, ասես, կատարեալ հաւատացեալ՝ Դուրեանը Սուրբ Հաղորդութիւն առնելու ցանկութիւն է յայտնում: Ծնողները կանչում են Տէր Յովհաննէս քահանային, որը երկար խոստովանութիւն է կատարում: Քահանան յետոյ յաճախ էր կրկնում Եղիշէ Վարդապետ Դուրեանին. «Եղբայրդ այնպիսի խոստովանանք մ'ըրաւ, որ կեանքիս մէջ ատոր նմանը չէի լսած»: Բայց ինչ որ Դուրեանն ասել էր հոգու մերկացման այդ վսեմ պահին, բարի քահանան իր հետ գերեզման է տարել: Խոստովանանքից յետոյ Պետրոսը Հաղորդութիւնն ընդունել է անհուն յուզմունքով, ծնկի եկած, գրեթէ արցունքոտ, կարծես իրեն արժանի դարձնելով Տառապողի՝ Յիսուս Քրիստոսի Մարմինն եւ Արեանը:

Մահից վեց օր առաջ Դուրեանը դարձեալ հաղորդուելու ցանկութիւն է յայտնում: Այս անգամ Տ. Խորէն քահանան է խոստովանեցնում նրան. մխիթարական խօսքեր է ասում, յիշեցնում է հանդերձեալ կեանքի եւ հոգու անմահութեան մասին, ապա մի

¹³ Պետրոս Դուրեան, Երկեր, Հայ դասականների գրադարան, Առաջաբանը, ծանօթագրութիւնները եւ բառարանը Ալ. Շարուրեանի, Երեւան, 1981, էջ 14:

¹⁴ Պետրոս Դուրեան, Երկերի ժողովածու երկու հատորով, հ. 1, Երեւան, 1971, էջ 170-171:

¹⁵ Նոյն տեղում, էջ 181-182:

¹⁶ Նոյն տեղում, էջ 183:

¹⁷ Նոյն տեղում, էջ 167:

¹⁸ Նոյն տեղում, էջ 186:

¹⁹ Նոյն տեղում:

քանի գլուխ բժշկութեան աւետարան է կարդում հիւանդ բանաստեղծի վրայ եւ Հաղորդութիւն է տալիս:

Քահանայի հեռանալուց յետոյ Դուրեանն ասում է հարազատներին. «Գիտեմ, որ մեռնելէ վերջ, շատ պիտի կարօքնաք, ես ձեր կարօքը երազներով կը լեցնեմ»: Ապա ցանկութիւն է յայտնում, որ իրեն թաղեն մեծ շուքով. «Ես բան պիտի չիմանամ,- ասում է,- բայց անանկ կ'ուզեմ»²⁰:

Ասում են, որ Դուրեանը մահուան մահճում խնդրել է ընկերներից մէկին Դէլփեանին գրել իր դամբանականը, որը պիտի կարդացուէր գերեզմանի վրայ: Բանաստեղծը կարդացել է գրուած դամբանականը եւ նոյնիսկ տեղ-տեղ ուղղումներ արել, «սրբագրել», ինչպէս ասում է կենսագիրը, աւելացնելով՝ «ինչ որ աւելի սրտաշարժ է»²¹ մեկնաբանութիւնը:

Որքան էլ այս պատմութիւնը անհաւատալի եւ տարօրինակ է թոււմ, սակայն այդ մասին ականատեսներն ու կենդանի վկաներն են պատմել, որոնք գրի է առել բանաստեղծի անդրանիկ կենսագիրը՝ Բ. Էքսէրճեանը: Ամենայուզիչը եւ խորապէս յատկանշականն այն է, որ բանաստեղծը հանգիստ էր նայում մահուան աչքերին, պատկերացնում էր թաղման շքեղ հանդիսաւորութիւնը, ցաւակից եւ սգացող մարդկանց անծայր թափօրը, լսում մահուան քայլերգի հնչիւնները, որի տխուր բառերն ընդհատում են ներկաների հեկեկանքներով: Սակայն բանաստեղծը չէր լալիս, նա զարմանալի անդորրութեամբ դիմաւորում էր իր առաջ կանգնած «տժգոյն մահու հրեշտակին» եւ հոգու խաղաղութեամբ, ինքնամփոփ եւ խորասուզուած՝ լսում էր «թրթռուն ծիծաղն մահու դժխեմ»²²:

Մահուան նախօրէին, գիշերուայ ժամը 9-ին, Դուրեանը հօրը կանչում է իր մօտ եւ ասում. «Հաճին թող վեր գայ»: Հաճին իր Յարութիւն եղբայրն էր, որ պատանի հասակում հօր հետ Երուսաղէմ էր գնացել: Բայց մօրաքոյրը, որ Ս. Քաղաքից նոր էր վերադարձել, լսում է եւ կռահում, որ հիւանդի վիճակը ծանր է, չի ուզում արթնացնել Յարութիւնին՝ ինքն է գնում Պետրոսի մօտ: Պետրոսը նայում է մօրաքոյրը եւ ասում. «Ես եղբայրս կ'ուզէի, բայց դուն ալ Երուսաղէմ գացած ես: Մտիկ ըրէ՛. Դուն Երուսաղէմ գացիր, ես վերին Երուսաղէմ պիտի երթամ. դուն Փրկչին պըտըտած տեղերը տեսար, ես ինքս իսկ Փրկիչը պիտի տեսնեմ»²³: Երբ արդէն բոլորն իրար գլխի են հաւաքուում, Պետրոսը մարած հայեացքով բոլորի միջից նկատում է Յարութիւնին եւ ասում. «Եղբայրս, քանի մը կ'որոք բան գրեր եմ, ջանա՛, որ հրապարակուին, չեմ ուզեր, որ յիշատակս կորսուի», ապա խնդալով աւելացնում է. «Կարգուէ, եղբայր, թո՛մպուլ թո՛մպուլ (փափուկ, կլորիկ – Ն.Ա.Ա.) զաւակներ ունեցի՛ր, անոնց ըսէ՛, որ մէկ ասանկ հօրեղբայր մը ունեցան, ես ալ երկնքէն ձեր վրայ նայիմ եւ ուրախանամ»²⁴:

Հոգեվարքի վերացման ըոպէներին՝ լուսադէմին, երբ բանաստեղծին այցելում է հօրեղբայրը, Պետրոսը նայում է նրան, սակայն չի ճանաչում. «Ինչո՞ւ չի խօսիր», հարցնում է հօրեղբայրը: «Զխօսի՞ս, Պետրո՞ս, հօրեղբայրդ եկաւ», ասում է մայրը: Բանաստեղծը հազիւ թափահարում է ձեռքը եւ արտասանում իր վերջին երկու բառերը. «Ժամանակ չունիմ...»²⁵: Նա շտապում էր դէպի յաւիտենութիւն, այլեւս ժամանակ չու-

²⁰ Էքսէրճեան Բ., Նշում աշխ., էջ 119:

²¹ Նոյն տեղում, 121: Տե՛ս նաեւ Զօպանեան Ա., Պետրոս Դուրեանի կեանքն ու գործը, Բ. տպագրութիւն՝ վերամշակուած ու նոխացած, Երեւան, 1967, էջ 73:

²² Տե՛ս Թէրզիպաշեան Վ., Նշում աշխ., էջ 23:

²³ Տե՛ս Զօպանեան Ա., Նշում աշխ., էջ 78:

²⁴ Տե՛ս Նոյն տեղում:

²⁵ Տե՛ս Նոյն տեղում, էջ 80: Տե՛ս նաեւ Էքսէրճեան Բ., Նշում աշխ., էջ 127:

նէր...

1872 թ.-ի Յունուարի 21-ին, «Օրագիր» թերթում բանաստեղծի աւագ եղբայր՝ Յարութիւն Դուրեանը համեստ յայտարարութիւն տպագրեց՝ գովաբանելով եղբոր՝ Պետրոս Դուրեանի անժամանակ մահուան մասին, «...Պետրոս Դուրեան իւր քսան տարեկան ծաղիկ հասակին մէջ, երկարատեւ հիւանդութենէ մը վերջ, այս առաւօտ իւր մահկանացուն կնքեց եւ վաղը՝ շաբաթ օր, իւր յուղարկաւորութեան հանդէսը Ենի-Մահալլէի Ս. Կարապետ եկեղեցին ժամը իննի միջոցները պիտի կատարուի»:

Դուրեանի մահուան բօթը կայծակնային արագութեամբ տարածուեց՝ ցնցելով Սկիւտարի եւ Կ. Պոլսի հայութեանը, որոնք չէին կարող անտարբեր գտնուել իրենց հանրածանօթ բանաստեղծի, «Սկիւտարի սոխակ» անուանուած Դուրեանի անժամանակ մահուան նկատմամբ: Մի խումբ երիտասարդներ հրաւիրեցին անուանի նկարիչ Աբրահամ Սարգսեանին՝ նկարելու մահացած Դուրեանին: «Եւ սակայն, վկայում է ժամանակակիցը՝ նշանաւոր քրոնիկագիր Հրանդը (Մելքոն Կիրճեան), պատկերահանը տեսնելով, որ մեռելի դէմքը բոլորովին եղծուած է, գիծերը քաքայուած, ճղակտոր եղած հիւծախտին բզկտող ճանկերուն տակ, կը դիտէ երկար ու հառաչելով կ'ըսէ, թէ չ'կրնար ատ եղծուած դէմքով անկեղծ Դուրեան մը նորաստեղծել: Արուեստին անպատուութիւն մը չընելու խղճահարութեամբ կը մեկնի»²⁶:

Թաղման օրը՝ Յունուարի 23-ի վաղ առաւօտեան, բանաստեղծի անշուք տան շուրջ հաւաքուել էին շուրջ 4000 յուղարկաւորներ: Հակառակ եկեղեցական իշխանութեան արգելքին, յուղարկաւորութեանը նուագում էին մէկի փոխարէն երկու նուագախումբ: Սկիւտարի եկեղեցու քահանայի մերժումից յետոյ թաղման կազմակերպիչները նուագակցութեան համար արտօնութիւն ստանալու նպատակով դիմում են Կ. Պոլսի պատրիարք՝ Մկրտիչ Խրիմեանին, որն այդ ժամանակ գտնուում էր Օրթագիւղում եւ նախագահում էր հարսանեաց հանդէսի: Խրիմեան Հայրիկը, որ հայրական խաղաղատանք ունէր Դուրեանի հանդէպ, լսելով վերջինիս մահուան բօթը՝ խորապէս յուզւում է²⁷. յետոյ իրեն դիմող երիտասարդին պատասխանում է. «Արտօնութիւն չեմ տար, բայց կը ներեմ»²⁸: Այդպիսով՝ «այդ չքաւոր բանաստեղծը ճշմարիտ հարուստի յուղարկաւորութիւն մը կ'ունենայ»²⁹, գրում է Ա. Զօպանեանը:

Դուրեանի թաղման վերաբերեալ աւելի մանրամասն տեղեկութիւն է հաղորդում «Հանդիսական մը»՝ «Ազգային նշանաւոր երիտասարդ բանաստեղծ մը՝ այն է Պ. Պետրոս Դուրեանի յուղարկաւորութեան շքեղ հանդէսը» խորագրով («Օրագիր», 26 Յունուար, 1872). «Կիրակի օր ցարդ Սկիւտարի եւ, ինչ կ'ըսեմ, համայն Պոլսոյ մէջ շտեմարած յուղարկաւորութեան շքեղ հանդէս մը տեղի ունեցաւ: Հանդէսն սկսաւ ճիշդ ժամը 8½-ին եւ աւարտեցաւ ժամը 11-ի մօտ:

Դագաղի առջեւէն երկու խումբ ընտիր նուագաժողներ կ'երթային: Իսկ դագաղին ետեւէն ու առջեւէն 4000-ի մօտ խուռն բազմութիւն մը ծանրաթախիծ ու լռիկ մնջիկ կը քայլեր: Ամենքն ալ սրտի, մտքի ու հոգւոյ սիրահար երիտասարդներ էին»³⁰:

«Հանդիսական»-ը բացատրում է արտասովոր թաղման ու մեծարանքի բուն պատ-

²⁶ Զաղարեան Ա., Պետրոս Դուրեան, Ինքի վերականգնումը, Երևան, 1971, էջ 11-12:

²⁷ Ա. Զօպանեանի ծանօթագրութիւններից իմանում ենք, որ Խրիմեան Հայրիկը յետագայում այցելել է Դուրեանների ընտանիքին եւ յայտնել իր ցանկութիւնը: Նա առաջարկել է Պ. Դուրեանի շիրմին փորագրել նրա «Իմ հանգիստը» բանաստեղծութիւնը:

²⁸ Տե՛ս Զօպանեան Ա., Նշուած աշխ., էջ 82:

²⁹ Նոյն տեղում:

³⁰ Պետրոս Դուրեանը վաւերագրելով եւ ժամանակակիցների յիշողութիւններով, Երևան, 1982, էջ 22-23:

ճառը, որը յատուկ իմաստ է հաղորդել երեւոյթին: Ո՛չ, պատանի բանաստեղծը հարուստ չէր, չէր ծնուել «հարստութեամբ եւ ոսկեզօծ տիտղոսով նշանաւոր գերդաստանում, ո՛չ ալ ամիրայի եւ ո՛չ ալ ազնուականի որդի էր, այլ պարզ ընտանեաց մը զաւակ մ'էր, որ իր գրական տաղանդովը նշանաւոր էր:

...Կիրակի օրուան աղքատիկ գրագէտի մը տրուած ժողովրդային վսեմ ցոյցերը յայտնի ցցուցին, թէ գրչին քով աննշանացաւ ոսկին:

...Դուրեան արքունական պաշտօնի, ամիրայի եւ տիտղոսաւոր մարդու զաւակ չէր, բայց անոնցմէ աւելի շքեղ յուղարկաւորութեան հանդէս մ'ունեցաւ:

Ապրի՛ն Սկիւտարայ երիտասարդք»³¹:

Եւ իսկապէս, բանաստեղծի մահուանից մէկ ամիս անց Սկիւտարի «Ընթերցասիրաց Ընկերութիւն»-ը Հայ գրականութեանը պատկանող Դուրեանի անգնահատելի գանձերը կորստից փրկելու, ինչպէս նաեւ տարաբախտ Սկիւտարցոյ իղձը իրագործած լինելու համար՝ անմիջապէս կազմակերպում է նրա երկերի հրատարակութիւնը: Ձեռագրերից բանաստեղծութիւնները յանձնուեմ են այդ օրերի «հոշակաւոր» բանաստեղծ Սիմոն Ֆէլէկեանին, իսկ թատերգութիւնները՝ Յակոբ Պարոնեանին՝ խմբագրելու համար: Պարոնեանը թատերգութիւնների տեքստի մէջ ոչ մի էական փոփոխութիւն չի կատարում եւ գրեթէ նոյնութեամբ վերադարձնում է պատանի դրամատուրգի ստեղծագործութիւնները, հաւանութիւն տալով նրանց հրատարակմանը: Մինչդեռ բանաստեղծական միջակութիւն Ֆէլէկեանը խմբագրական աշխատանքը վերածում է «սրբագրման աններելի յանցանքի»³²: Վերջինս փոփոխութիւններ է մտցնում Դուրեանի բանաստեղծութիւնների լեզուի եւ պատկերների մէջ, տեղ-տեղ աղաւաղելով եւ թուլացնելով դրանք³³: Ի վերջոյ Դուրեանի առաջին ժողովածուն «Տաղք եւ թատերգութիւնք» խորագրով լոյս է տեսնում 1872 թ.-ի կէսերին³⁴ եւ, համաձայն Տիգրան Արփիարեանի վկայութեան, արագօրէն սպառուում³⁵:

Բարեբախտաբար քսան տարի անց Ս. Ֆէլէկեանի մտքած կամայական եւ «անպատկառ»³⁶ ուղղումները եւ «սրբագրումները»³⁷ վերացուեցին Դուրեանի երկրորդ հրատարակիչ եւ առաջին կենսագիր Բ. Էքսէրճեանի³⁸ կողմից, որը պահպանուած ձե-

³¹ Նոյն տեղում, էջ 23-26:

³² Տե՛ս Գալայճեան Ա., «Տաղք», Փորձ մը բնագրային վերականգնումի, Երուսաղէմ, 1967, էջ 5:

³³ Բանաստեղծի աագ եղբայր Յարութիւն Դուրեանը ժամանակին բողոքել է աղաւաղումների դէմ («Բողոք մը», գրուած 1872, Ապրիլ 2-ին), որը տպագրել են նախ՝ Բ. Էքսէրճեանը 1892 թ.-ին («Արեւելք», թիւ 2667), ապա եւ գրողի կրտսեր եղբայր Ագրիպպաս Դուրեանը 1930 թ.-ին («Սիւն», 1930, թիւ 4-5, էջ 150-151):

³⁴ «Մասիս», 1872, 6 Յուլիս, թիւ 1258; «Մամուլ», Կ. Պոլիս, 1872, 5 Յուլիս, թիւ 212, էջ 48:

³⁵ «Մասիս», Կ. Պոլիս, 1892, թիւ 3966, էջ 176:

³⁶ Բնորոշումը՝ Ա. Զօպանեանի (Տե՛ս Զօպանեան Ա., Նշումած աշխ., էջ 176):

³⁷ Առաջին ժողովածուի բանաստեղծութիւնների աղաւաղման մասին առաջինը յայտնել է Հրազդանը (Ա. Արփիարեան): Նա «Բարոյական խրատներ» ֆրոնիկում խօսելով բարոյականութեան անուամբ գործող «գրական ոճիւրների» մասին, գրում էր. «Մեր հայկաբաններէն մին՝ պ. Սիմոն Ֆէլէկեան անցեալ օր մէկ բարեկամիս կը պատմէ հետեւեալը.

- Դուրեանին ոտանատրները երբ պիտի տպագրէին, կ'ըսէ, ինծի բերին, որ մէջ մը աչի՛ն անցընեմ: Էֆենտիմ տեսայ, թէ մէջը շատ մը փոխելու բաներ կան, անբարոյական տողեր կան, ամէնքը վերցուցի, շինեցի, շտկեցի, կոկեցի, շնորհիմբ բան մը ըրի, որ երես կը ներմկցնէ, թէ հանգուցեալին պատիւ կը բերէ, թէ՛ գրականութեան: ...Յանուն բարոյականի Դուրեան Ֆէլէկեանէն սրբագրուե՛ր է, այսինքն սրբապղծուե՛ր է», - եզրակացնում էր ֆրոնիկագիրը («Հայրենիք», Կ. Պոլիս, 28 Սեպտեմբեր, 1891, թիւ 45):

³⁸ Էքսէրճեանը նախաձեռնել էր նաեւ Դուրեանի դիմանկարն ստեղծելու երկրորդ փորձը: Այդ մասին պատմում է. «Նորա պատկերը գրասիրաց ներկայացնելու համար հետոս առի նկարիչ մը, պ. Մկրտիչ Պարսամեանց, եւ Պետրոս Դուրեանի եղբարց, մօր, մօրաբոջ, ազգականաց եւ բարեկամաց տեղեկութեանց եւ Ագրիպպաս եղբօրն ու ազգականաց ոմանց եւ ուրիշ երկու դէմքերու եւ լուսանկարաւորու վրայ, մին ի Զմիւռնիա, եւ միւսն ի Կետիփ

ռազմերի հիման վրայ վերականգնեց հեղինակային տեքստը եւ 1893 թ.-ին հրատարակեց «Տաղք եւ Թատերգութիւնք, Նամականի, Դամբանական, Տապանագիր» հատորը, որն աւելի ճշգրիտ է քան առաջինը³⁹։ Սակայն շուտով Ա. Զօպանեանը էքսէրճեանի հրատարակութիւնը եւս անկատար համարեց. «դժբախտաբար այդ մաքրագործումը լիակատար կերպով չէ ըրած եւ տպագրական նոր վրիպակներու շարք մը աւելցուցած է առաջին տպագրութեան վրիպակներուն վրայ»⁴⁰, քանի որ Համիդեան բռնապետութեան եւ խիստ գրաքննութեան պայմաններում էքսէրճեանը պարտաւոր էր հատորից դուրս թողնել Դուրեանի քաղաքական, հայրենասիրական, սոցիալական բովանդակութեամբ տաղերը⁴¹։ Թուով եօթ հատ («Իղձք առ Հայաստան», «Ի Պատրիարքական Ընտրութիւն Ամեն, Հայրիկին», «Ի Դիմաւորութեան Ամեն, Հայրիկին», «Հայրիկն Հայոց», «Նոր Սեւ Օրեր», «Երգ Մարտին Վարդանանց» եւ «Վիշտք Հայուն»), կրճատել (երկու տունով) «Սիրեցէք Զմիմեանս» քերթուածքը, ջնջել «Թրքուհին» բանաստեղծութեան վերնագիրը, դուրս թողնել ամենակարեւոր տողը «Իմ Յաւը» քերթուածքից («Հայրենիք մը ունիմ թշուառ») եւ այլն։ Իսկ թատերգութիւններից տպագրուել են միայն երկուսը՝ «Թատրոն»-ը եւ «Վարդ եւ Շուշան»-ը⁴²։

էքսէրճեանի հրատարակութիւնից յետոյ, վաղամեռիկ բանաստեղծի եղբայր՝ Նզիշէ Վրդ. Դուրեանը (ապա Արքեպիսկոպոս եւ Պատրիարք Կ. Պոլսի եւ Երուսաղէմի) զբաղւում է Դուրեանի ինքնագրերի հաւաքմամբ։ Վերջինս եղբօր գործերը միշտ է պահել իր մօտ՝ Կ. Պոլսում, Արմաշում եւ այլուր, իսկ 1921 թ.-ից, երբ ընտրւում է Երուսաղէմի Հայոց Պատրիարք, հետը բերում է Սուրբ Երկիր։

Դուրեանի ինքնագրերի Սրբոց Յակոբեանց վանքում գտնուելու մասին բազմիցս գրել եւ անդրադարձել են Ա. Զօպանեանը («Անահիտ», 1932-1933, թիւ 5-6, էջ 213), Յ. Օշականը («Համապատկեր արեւմտահայ գրականութեան», երկրորդ հ., Երուսաղէմ, 1953, էջ 313), Ս. Սիմոնեանը («Սփիւռք», Պէյրութ, 1959, Սեպտեմբեր 19, թիւ 32, էջ 3), Ալ. Շարուրեանը («Պետրոս Դուրեան», Երկերի ժողովածու երկու հատորով, հ. 1, Երեւան, 1971, էջ 5)՝ պաշտելի հեղինակի «սուրբ յիշատակի հանդէպ աններելի ապերախտութիւն»⁴³ համարելով նրա երկերի ամբողջական հաւաքածոյի

Փաշայ, պատկերը գծել տուի, եւ ապա զայն նոցա դիտողութեանց ենթարկեցի, քանիցս սրբագրել տուի, մինչեւ որ նմանութիւն մը ձեռք բերելու յաջողեցայ երկու տարի աշխատել վերջ՝ վկայութեամբ իւր ազգականաց եւ բարեկամաց» (Բ. Էփէրճեան, Ընդարձակ կենսագրութիւն բարեյիշատակ Պետրոս Դուրեանի, Կ. Պոլիս, 1893, էջ 143)։ Նոյնը հաստատել է նաեւ Տիգրան Արփիարեանը. «Մ. Պարսամեանց նախաձեռնած աշխարհական եղբօրմէն (խօսքը Ագրիպպայի մասին է) փոխ առաւ, աչէրը դասընկերէ մը, շրթունքն ազգականէ մը, մագերէն ուրիշէ մը եւ «արար մարդ ըստ պատկերի Դուրեանի»։ Յետոյ ուրուագիծը ցոյց տուին բանաստեղծին մօրը, եղբայր եւ ամէն անոնց, որք սրտի նանչցած էին զայն, բարեփոխեցին, սրբագրեցին ու խղճի հանդարտութեամբ յանձնեցին վիմագրիչին» («Մասիս», 1892, թիւ 3966, էջ 177)։ Քանի որ Մ. Պարսամեանցը մահացաւ թոքախտից՝ անաւարտ թողնելով Դուրեանի դիմանկարը, այն աւարտին է հասցրել Տիգրան Զրաֆեանը, բազմացրել է լուսանկարիչ Ֆէպիսը, իսկ 1893-ի Հոկտեմբերին այն արդէն յանձնուել է բաժանորդներին։ Դուրեանի դիմանկարը շատերը չէին հաւանում, անգամ Ա. Զօպանեանը երբ պատրաստում էր երկրորդ, բարեփոխուած հրատարակութեամբ լոյս ընծայել Պետրոս Դուրեանին նուիրուած իւր մեծածախ նստումնասիրութիւնը, չէր յաշտում այդ նկարի հետ. «Այս հատորին մէջ՝ գրում էր նա,՝ որեւէ տեղ չեմ տար այս շինծու եւ անկենդան դիմանկարին, զօր պ. Էփէրճեան Դուրեանի ազգականներէն ու բարեկամներէն տեղկութիւններ հաւաքելով շինել տուաւ գծագրիչի մը եւ զոր ուրիշներ ալ, հետեւելով անոր օրինակին, գրական հատընտիր էջերու հաւաքածոներու մէջ արտատպեցին այդ անհոգի դէմքը...» (Ա. Ճաղարեան, Պետրոս Դուրեան Դէմքի վերականգնումը, Երեւան, 1971, էջ 15-16)։

³⁹ Այս ժողովածոյում տեղ են գտել 35 տաղ (հինգն անտիպ), երկու տպուած թատերախաղ, 13 նամակ եւ Վ. Լուրճեանի դամբանականը։

⁴⁰ Զօպանեան Ա., Նշում աշխ., էջ 197։

⁴¹ Այս մասին վկայում է նաեւ Հր. Անատեանը. 1890-ական թուականներին Դուրեանի 1872 թ.-ի ժողովածուն «սաստիկ արգելուած» էր (Տէս Աճառեան Հր., Կեանքիս յուշերից, Երեւան, 1967, էջ 107)։

⁴² Տէս Գալայճեան Ա., «Տաղ», Փորձ մը բնագրային վերականգնումի, Երուսաղէմ, 1967, էջ 2։

⁴³ «Անահիտ», Փարիզ, 1947, թիւ 2, էջ 58, 59։

հրատարակման որեւէ յապաղում:

Եւ ահա 1967 եւ 1968 թուականներին Երուսաղէմում Արայ Գալայճեանը հրատարակում է Պ. Դուրեանի տաղերի եւ նամակների նոր՝ քննական ժողովածուները: Ա. Գալայճեանը 1872 թ.-ի ժողովածուի տաղերի եւ 1893 թ.-ի ժողովածուի նամակների տեքստերին հանդիպադրել է Դուրեանի տաղերի աւարտուն (Բ. տետրակ) եւ ինն նամակների ինքնագիր տեքստերը՝ միաժամանակ ցոյց տալով Բ. էքսէրճեանի թոյլ տուած սխալներն ու վրիպումները: Կազմողը ձեռքի տակ է ունեցել նաեւ բանաստեղծութիւնների նախնական տեքստերը (Ա. տետրակ), բայց հարկ չի համարել դիմել դրանց: Մինչդեռ այդպիսի աշխատանքը ցոյց կը տար, թէ ինչպէս է ստեղծագործել Դուրեանը: «Թէեւ, գրում է Ալ. Շարուրեանը, Ա. Գալայճեանի նշած տաղերի աղաւաղումների զգալի մասը մատնանշուած է Ա. Չօպանեանի 1967-ին Երեւանում տպագրուած «Պետրոս Դուրեանի կեանքն ու գործը» մենագրութիւնում, իսկ նամակների՝ էքսէրճեանի յապաւումած հատւածները վերականգնուած էին այլ ուսումնասիրութիւններում⁴⁴, բայց դրանցով հանդերձ Երուսաղէմեան ժողովածուների արժէքը եզակի է, քանի որ, ըստ էութեան, առաջին անգամ Դուրեանի տաղերը եւ նամակների մեծ մասը հրապարակուեցին անխաթար տեսքով»⁴⁵:

1957 թ.-ին թրքական իշխանութիւնը որոշում է Սկիւտարի Ս. Խաչ եկեղեցուն կից գտնուող «Պաղլար Պաշը» գերեզմանատան մի մասը յատկացնել յարակից ճանապարհին: Պ. Դուրեանի գերեզմանը ընկնում էր հէնց այդ՝ յատկացուելիք մասում, ուստի Կ. Պոլսոյ Պատրիարք Գարեգին Արք. Խաչատուրեանի հրամանով եւ ներկայութեամբ Միհրան Ագտաղ անունով գերեզմանափորը փորում եւ հանում է Դուրեանի «կտոր-կտոր» եղած գանկը եւ յանձնում է Պատրիարքին, իսկ մարմինը փոխադրում են գերեզմանատան միւս կողմը⁴⁶:

Յետագայում՝ 1970 թ. Մայիսին, Դուրեանի մահից գրեթէ մէկ դար անց, Ե. Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանի այդ օրերի տնօրէն Ս. Մելիքսեթեանը գուրգուրոտ հոգածութեամբ մարդաբան Ճաղարեանին է յանձնում խունացած ոսկրերով եւ մի բուռ հողով լի փայտեայ փոքրիկ մի տուփ՝ ասելով. «Պետրոս Դուրեանի գանկի բեկորներն են, փորձէք վերականգնել բանաստեղծի դէմքը»: Դուրեանի դիմանկարի պատուիրատուն եւ վրձնողը ի՛նչ իմանային, որ գալու են ժամանակներ, երբ հնարաւոր է լինելու վերականգնել «հանճարեղ պատանու» դէմքը: Ի՞նչ իմանային, որ մի սրտացաւ ձեռք Դուրեանի գերեզմանից վերցնելու է նրա փշրուած գանկը եւ Ստամբուլից հասցնելու է Երեւան, ուր մարդաբանական ու գանկաբանական սկզբունքներով վերստեղծուելու է Դուրեանի իրական դէմքը⁴⁷ եւ պարզուելու է, որ նկարիչը, չնայած Դուրեանի բարեկամների, ընկերների եւ ծանօթների խորհուրդներին, չի կարողացել յիշողութեամբ ստեղծել իսկական դիմանկարը:

Դուրեանի իրական դէմքը այլ էր...

«Սկիւտարի սոխակի» տարերքը քնարերգութիւնն էր: Բանաստեղծը 1867-1868-ին գրել է մէկական, 1869-ին՝ ութ, 1870-ին՝ երկու, իսկ 1871-ի մի քանի ամիսներին՝ 26 տաղ: 1867-ին հեղինակած միակ տաղը՝ «Իցի՛ւ թէ»-ն քնարական է: Ամենավերջինը՝ «Երեկոյեան բալն կը սողար բարդիլ խաւ», որ չկարողացաւ աւարտել, նոյնպէս քնարական է: Ուշարժան է այն, որ Դուրեան-քնարերգակի ձայնն ամբողջ ուժով հնչել է

⁴⁴ Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդէս», 1967, № 4, էջ 213-218:

⁴⁵ Պետրոս Դուրեան, Երկերի ժողովածու երկու հատորով, հ. 1, Ինստիտուտի կողմից, Երեւան, 1971, էջ 6:


⁴⁶ Տե՛ս Ճաղարեան Ա., Պետրոս Դուրեան, Դէմքի վերականգնումը, Երեւան, 1971, էջ 18-20:

⁴⁷ Նոյն տեղում, էջ 9, 17:

1871-ին, իսկ մինչ այդ նա ստեղծել է առաւելապէս քաղաքացիական երգեր: Ճեմարանական տարիներին Ֆրանսերէնից թարգմանել է ութ թատերգութիւն, որոնցից յայտնի են Հիւկոյի «Թագաւորը զուարճանում է» դրաման եւ Շէքսպիրի «Մակբեթ» ողբերգութիւնը: Դրանցից բացի նա հայացրել է նաեւ Հիւգոյի «Ջահել աղջիկ» բանաստեղծութիւնը: Բոլոր այս թարգմանութիւնները չեն պահպանուել: Չեն պահպանուել նաեւ գրողի վիպական փորձերը: Գիտենք միայն, որ գրել է երկու վէպ, մէկը սիրային բովանդակութեամբ, միւսը՝ ինքնակենսագրական բնոյթի՝ «Վոսփորեան գիշերներ» խորագրով, որոնք այդպէս էլ մնացել են անաւարտ⁴⁸:

Դուրեանի «Սիրել»-ն ու «Դրժել»-ը, «Լճակ»-ն ու «Տրտունջ»-ը, «Զղջում»-ն ու «Հեծեծմունք»-ը, «Թրքունի» բոլոր ժամանակների հայ քնարերգութեան ամենաբարձր գագաթներն են, որոնց հանգամանօրէն անդրադառնալ այս յոբելինական յօդուածի սահմաններում՝ ցաւօք հնարաւոր չէ:

ՆԵՐՍԵՏ ԱՔԴ. ԱԼՈՅԵԱՆ



⁴⁸ Տե՛ս Պետրոս Դուրեան, Երկեր, Հայ դասականների գրադարան, Առաջաբանը, ծանոթագրութիւնները եւ բառարանը Ալ. Շարուեանի, Երեւան, 1981, էջ 5:

ՊԱՏՄԱԿԱՆ

ՎԱՉՈՒՏԵԱՆ ՏՈՀՄԻ ԻՇԽԱՆՈՒՀԻՆԵՐԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐՆԵՐ

1205 թուականին Զաքարեան Հայաստանի անկախ պետութեան հիմնադիր, շահնշահ Զաքարէ Բ-ն երկրում իրականացրած վարչական ռեֆորմի արդիւնքում այլ կառույցների թուում ստեղծել է նաեւ Այրարատի կողմնակալութիւն-փոխարքայութիւնը եւ Սարգսի որդի Վաչէ Ա Վաչուտեանին նշանակել կողմնակալ-փոխարքայ, շնորհելով նրան երկրում բարձրագոյն իշխանաց իշխան կոչում: Վաչէ Ա-ն եւ նրա յաջորդները շուրջ 150 տարի իշխելով Այրարատում եղել են Զաքարեան թագաւորական տան ամենահաւատարիմ սիւներից մէկը: Կողմնակալ-փոխարքայ Վաչէ Ա-ի տոհմը, որ Սարգսի հայր Վաչուտի անունով կոչուել է Վաչուտեան, հակառակ միւս հայ տոհմիկ իշխանատներին, չունէր հին պատմութիւն, տոհմական-ժառանգական կալուածքներ: Յայտնի չէ Վաչուտը¹, նրա որդի Սարգիսը, վերջինիս կին Կատան հայկական ո՞ր հին տոհմից են սերել, բայց յայտնի է, որ Զաքարեան Հայաստանում նրանց որդի Վաչէ Ա-ն նոր՝ Վաչուտեան անունով տոհմի հիմնադիր է դարձել: Յօդուածի հեղինակը Վաչուտեան գահակալ տիրակալների կողքին ներկայացրել է գահակալ տիրուհիներին՝ իշխանուհիներ Մամախաթունին, Խորիշահին, Արուս Խաթունին, Գոհարին, Խուանդ Խաթունին, ինչպէս նաեւ տոհմի դուստրեր Մամքան եւ Թաթուն իշխանուհիներին եւ նրանց դերակատարութիւնը կողմնակալութեան-փոխարքայութեան մշակութային կեանքում:

ՄԱՄԱԽԱԹՈՒՆ ԻՇԽԱՆՈՒՀԻ

Վաչէ Ա կողմնակալ-փոխարքայի կինն է:

Վաչէ Ա-ի շինարարական, մշակութային գործունէութիւնը թերի կը լինէր առանց կնոջ՝ Մամախաթուն իշխանուհու գործակցութեան: Զաքարեան շրջանի ոչ մի ամուսնական զոյգ այնպիսի միասնութեամբ ու նուիրումով հանդէս չի եկել, ինչպէս Վաչէ Ա-ն եւ Մամախաթունը: Առանց Մամախաթուն իշխանուհու Վաչէ Ա-ն որեւէ գործ չի իրականացրել:

Ինչպէս Վաչէ Ա-ի, այնպէս էլ Մամախաթուն իշխանուհու տոհմական պատմութիւնից միայն հօր ու մօր անուններն են յայտնի: Վաչէ Ա-ին վերաբերող աղբիւրների քննութեամբ մենք եկել ենք այն եզրակացութեան, որ տոհմի նախնիները ենթադրաբար սերում են Արծրունի գերդաստանի երկրորդական ճիւղերից որեւէ մէկից²: Մամախաթուն իշխանուհու նախնիների հարցը ճշտելն աւելի դժուար է աղբիւրների բացարձակ սղութեան պատճառով:

Հոռոմոսի գրատան արձանագրութեան մէջ Մամախաթուն իշխանուհու հօր անուն մասին յայտնուում է. «ՈՀԸ /1229/ Շնորհին Ք/րիստոս/ի: Ես՝ Վաչէ որդի Սարգսի եւ ամուսին իմ Մամախաթուն՝ դուստր Ապուսէրհին, շինեցաք զՆշխարատունս ի վանս

¹ Դիւան հայ վիմագրութեան, պրակ IX, Լոռու մարզ, ՀՀ ԳԱԱ Գիտութիւն հրատարակչութիւն, Երեւան, 2012, էջ 29, արձ. 5: Նոյն արձանագրութիւնը վերափորագրուել է, էջ 60, արձ. 67:

² Պետրոսեանց Տ., Վաչուտեանների գիմնաշանները (տոհմի ծագումնաբանական հիմք): Գիտական Արցախ, թիւ 2(5), Ստեփանակերտ, 2020, էջ 104-114:

Հոռոմոսի...»³։ Տեղերի եկեղեցու մի կիսակողմ արձանագրութեան մէջ յիշուում է մեծ իշխան Ապուսերհի անունը։ Սա պատահական անուն չէ եւ նրա անունը պատահաբար չի յայտնուել Տեղերի եկեղեցում։ Ամենայն հաւանականութեամբ Հոռոմոսից յայտնի նոյն Ապուսերհն է⁴։ Թեղենեաց վանքի գաւթի բարաւորին Մամախաթունի անունից փորագրուել է. «Թվ/ին/ ՈԿ /1211/։ Ես՝ Մամախաթունս, ամուսին Վաչէի, դուստր նի արարի քշոցանի արծաթի եւ այլ արդիւնս եւ ետու ս/ուր/բ ուխտս Թեղենե/ա/ց...»⁵։ Մամախաթուն իշխանուհու նուիրատուական արձանագրութիւնում հնագէտ-վիմագրագէտ Գագիկ Սարգսեանը Մամախաթունի հօր անունը թէականով կարդացել է «Հասան»⁶։ Հնարաւոր է Մամախաթունի հայրն ունեցել է Ապուսերհ-Հասան երկանունը։ Մամախաթունի մօր անունը փորագրուած է Տեղերի եկեղեցում. «Ի Նավակատե/ա/ց ս/ուր/բ Տիրամաւրն մատուցանի պատարագ ամենայն խորանս Վախախին, մաւր Մամախաթունին՝ շինողի եկեղեցւոյս»⁷։

Վաչէ Ա-ն եւս, ինչպէս դարաշրջանի միւս իշխանաւորները, ամուսնական պատահական ընտրութիւն չէր կարող կատարել։ Այդ ընտրութիւնը եւս պիտի նրա անմիջական սիւզերեններին՝ Զաքարէ Բ շահնշահի եւ Իվանէ Ա զօրավարի հետ համաձայնեցուած լինէր։ Ամուսնութիւնն ամենայն հաւանականութեամբ տեղի է ունեցել Անբերդի ազատագրումից յետոյ 1196-1197 թուականներին։ Պէտք է ենթադրել, որ այդ ամուսնութիւնից նրանց աւագ որդի Քուրդ Ա իշխանաց իշխանը, Այրարատի ապագայ կողմնակալ-փոխարքան ծնուել է ամենաուշը դարավերջին, քանի որ նա 1221 թրւականին, Աստուածատուր վարդապետի Յովհաննավանքի արձանագրութեան մէջ, յիշուել է կողմնակալութեան ամիրայի պաշտօնում⁸. «Ի կողմնակալութեան մերո նահանգի ամիր Քրդին, որդո Վաչէի, ՈՀ /1221/ թւին»⁹։

Վաչէ Ա-ն եւ Մամախաթուն իշխանուհին Կեչառիսի 1213 թուականի նուիրատուական արձանագրութեան համաձայն ունեցել են երկու որդի՝ Քուրդ եւ Վաչուտ անուններով։ Վաչուտ Բ-ի մասին ոչինչ յայտնի չէ, բացի նրանից, որ նրա որդի Վաչէն /հերթականութեամբ կը լինի Վաչէ Գ-ՏՊ/ 1240-ական թուականների կէսերին արձանագրութիւն է թողել պապի՝ Վաչէ Ա-ի Սանահինի համալիրում կառուցած մեծ գաւթում։ Նա Շէնգաւիթում ունեցած Բադալի այգին¹⁰ նուիրել է վանական համալիրի Սուրբ Աստուածածին եկեղեցուն եւ պատարագ ստացել եղբօր՝ Դաւթի համար։ Հաւանաբար եղբայրն այդ ժամանակ մահացել է¹¹։

Վաչէ Ա-ի միւս որդին՝ Քուրդ Ա-ն դարձել է 13-րդ դարի հայ իրականութեան ամենայայտնի գործիչներից մէկը։ Պատմիչ Վարդան Արեւելցին «Մեկնութիւն Դանիէլի Վարդանայ Արեւելցւոյ» երկում գրել է. «Աղաչեմ... ողորմութիւն և թողութիւն մեղաց և ամենայն երախտաւոր պարոնացն Սաղունին, Սմբատայ, Քրդին, Պռաւշայ, և ամենայն

³ Հ. Ղևոնդ Վրդ. Ալիշան, Շիրակ տեղագրութիւն պատկերացոյց, Վենետիկ, 1881, էջ 24։

⁴ Կարապետեան Ս., Տեղեր, Վարձ, 2013, հմ. 10, էջ 18-19։

⁵ Մեր հաւաքածոյից։

⁶ Մեզ հնագէտ-վիմագրագէտ Գագիկ Սարգսեանն է յայտնել։

⁷ Մեր հաւաքածոյից։

⁸ Իշխանական պաշտօնահամակարգում կողմնակալ-փոխարքայից յետոյ բարձրագոյն երկրորդ պաշտօնը կողմնակալութիւն-փոխարքայութիւններում։

⁹ Ղաֆադարեան Կ., Յովհաննավանք եւ նրա արձանագրութիւնները, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչութիւն, Երեւան, 1948, էջ 94։

¹⁰ Դիւան հայ վիմագրութեան, պրակ IX, էջ 63, արձանագրութիւն 73։

¹¹ Ղաֆադարեան Կ., Սանահինի վանք եւ նրա արձանագրութիւնները, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչութիւն, Երեւան, 1957, էջ 136։

բնակչաց երկրիս»¹²։ Խօսքը Սադուն Բ Արծրունու¹³, Սմբատ Օրբելեանի¹⁴, Քուրդ Ա Վաչուտեանի¹⁵, Պոռ Ս Խաղբակեանի¹⁶ մասին է։

13-րդ դարի ոչ մի այլ տիրուհի Մամախաթուն Վաչուտեանի յայտնիությունը չունի։ Կողմնակալ-փոխարքայ, իշխանաց իշխան Վաչե Ա-ն եւ Մամախաթուն իշխանուհին միասին հովանաւորել են Սանահինի մեծ գաւթի¹⁷, Կեշառիսի Սուրբ Նշան եկեղեցու¹⁸, Տեղերի Կաթողիկէ եկեղեցու¹⁹, Սաղմոսավանքի Կաթողիկէ եկեղեցու²⁰, Յովհաննավանքի Կաթողիկէ եկեղեցու²¹, Հոռոմոսի գրատան²² կառուցումը։ Ամուսիններով նուիրատուութիւններ են կատարել Հաղբատի²³, Հառիճի²⁴ միաբանութիւններին։

Մամախաթուն իշխանուհին տիրապետել է անձնական միջոցների կամ այդ միջոցները նրան յատկացրել է իշխանաց իշխան Վաչե Ա Վաչուտեանը եւ նա իր անունից կառուցել է Թեղենեաց վանքի գաւթի։ Գունագեղ գմբէթով գաւթի կառուցումն աւարտուել է 1211 թուականին²⁵։ Այդ շինութիւնը Վաչուտեանների իրականացրած առաջին կառույցն էր Այրարատի կողմնակալութեան-փոխարքայութեան տարածքում, որ Վաչուտեան տան ներկայացուցիչը հինգ կամ վեց տարի առաջ ժառանգական իրաւունքով ստացել էր Զաքարէ Բ շահնշահից։ Թէեւ 1213 եւ 1218 թուականների երկու արձանագրութիւններով Վաչե Ա իշխանաց իշխանը յայտնել է, որ Մամախաթունի հետ կառուցել են Տեղերի Կաթողիկէ եկեղեցին եւ գաւթի, բայց Տեղերի 1232 թուականի աւարտական արձանագրութեան մէջ Մամախաթուն իշխանուհին միայն իրեն է վերագրել Տեղերի համալիրի կառուցումը. «ՈՁԱ /1232/։ ... Ես՝ Մամախաթունս, շինեցի գեկեղեցիքս զմեծ եւ զփոքր եւ զժամատունս յիշատակ ինձ եւ առն իմոյ Վաչէի...»²⁶։ 1229 թուականին Մամախաթունը Անիում ունեցած ձիթհանը նուիրել է Սանահինի միաբանութեանը. «Ի թուիս ՈՂԸ /1229/։ Ես՝ Մամախաթուն, ամուսին Վաչէի, ետու զիմ գանձագին ձիթհանքն յԱնի զիշխանի ակն յԱ/ստուա/ծածինս»²⁷։ Հաւանաբար նոյն ժամանակ Մամախաթուն իշխանուհին մէկ այլ ձիթհանի մէկ ակը նուիրել է Հաղբատի միաբանութեանը. «Ես՝ Մամախաթուն, տուի զձիթհանքն, որ ի Վարհամա որդեացն գնեցի, զմին ակն, որ երբ ժամն մեր լինի, զսեղանն մեր անուն դնեն»²⁸։

¹² Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, ԺԳ դար։ Կազմեց Ա. Ս. Մաքետսեանը։ Երեւան, 1984, էջ 211բ։

¹³ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանեանի, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչութիւն, Երեւան, 1961, էջ 215։ Ստեփանոս Օրբելեան, Սիւնիքի պատմութիւն, թարգմանութիւնը, ներածութիւնը եւ ծանօթագրութիւնները Ա. Ա. Աբրահամեանի, Երեւան, Սովետական գրող, 1986, 327 եւ յետոյ։

¹⁴ Ստեփանոս Օրբելեան, Սիւնիքի պատմութիւն, էջ 327 եւ հետոյ։

¹⁵ Պետրոսեանց Տ., Վաչուտեաններ, Երեւան, 2001, էջ 54-57։

¹⁶ Յովսէփեան Գարեգին, Խաղբակեան կամ Պոռեան Հայոց պատմութեան մէջ, մաս առաջին, Վաղարշապատ, 1928, էջ 86-135։

¹⁷ Ղաֆաղարեան Կ., Սանահին, էջ 136։

¹⁸ Յովսէփեան Գարեգին, Խաղբակեան կամ Պոռեան Հայոց պատմութեան մէջ։ Բ հրատարակչութիւն։ Լիբանան, Անթիլիաս, 1969, էջ 314։

¹⁹ Կարապետեան Ս., Տեղեր, Վարձ, էջ 18-19։

²⁰ Մեր հաւաքածոյից։

²¹ Ղաֆաղարեան Կ., Յովհաննավանք, էջ 82-83։

²² Վիմական տարեգիր, կազմեց Կարապետ Կոստանեանց։ Պետերպուրկ, 1913, էջ 72։

²³ Ղաֆաղարեան Կ., Հաղբատ, Ճարտարապետական կառուցումները եւ վիմական արձանագրութիւնները, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն, Երեւան, 1963, էջ 172-174։

²⁴ Հ. Ղեւոնդ Վրդ. Ալիշան, Շիրակ, էջ 161։

²⁵ Մեր հաւաքածոյից։

²⁶ Մեր հաւաքածոյից։

²⁷ Ղաֆաղարեան Կ., Սանահին, էջ 134։

²⁸ Ղաֆաղարեան Կ., Հաղբատ, էջ 174։

Հստ աւանդութեան 13-րդ դարի մեծագոյն բարեգործ Մամախաթուն իշխանունին մահից յետոյ թաղուել է ոչ թէ ամուսնու մօտ՝ Յովհաննավանքի Կաթողիկէ եկեղեցում, այլ իր կառուցած Տեղերի Կաթողիկէ եկեղեցում:

ԽՈՐԻՇԱՀ ԻՇԽԱՆՈՒՏԻ

Այրարատի կողմնակալ-փոխարքայ Քուրդ Ա Վաչուտեան իշխանաց իշխանը մի երկար հետք է թողել 1200-1270-ական թուականների Հայոց պատմութեան մէջ: Մինչեւ հօր մահը, մինչեւ 1233/4 թուականը, նա համագահակալել է հօրը, եղել Այրարատի կողմնակալութեան ամիրը²⁹: Հօր մահից յետոյ Զաքարէ Բ շահնշահի որդի եւ յաջորդ Շահնշահ Ա-ի կողմից Քուրդ Ա-ն հաստատուել է Այրարատի կողմնակալ-փոխարքայ: Քուրդ Ա-ն մօտաւորապէս 1215-1217 թուականների միջեւ ամուսնացել է Դսեղի Համազասպեան-Մամիկոնեան տոհմաւագ Մարգպան Մամիկոնեանի դստեր՝ Խորիշահ Մամիկոնեանի հետ:

Խորիշահ իշխանունու անունը առաջին անգամ յիշուել է Կարբիի բերդում տեղադրուած խաչքարի պատուանդանին, որը թերեւս Քուրդ Ա իշխանաց իշխանը պատուիրել է կողմնակալ-փոխարքայ դառնալու առթիւ. «Ի թուիս ՈԶԴ /1235/ Յիշխանութեան Շահնշահի, որդո Զաքարիայի: Ես՝ Քուրդ, որդի Վաչէի եւ ամուսին իմ Խորիշահ»³⁰:

Քուրդ Ա իշխանաց իշխանը իր բոլոր ձեռնարկումներին, հօր ու մօր օրինակով, մասնակից է դարձրել կնոջը՝ Խորիշահ իշխանունու: Նրանք միասին նուէրներ են տուել Սանահինի վանքին, որտեղ խաչքար է կերտուել ի բարեխօսութիւն իրենց եւ տեղադրուել հօր՝ Վաչէ Ա-ի կառուցած մեծ գաւթի դրսի սիւնաշարի դիմաց. «Նշանդ Աստուծոյ, աւգնեա Քրդի, Խորիշահի եւ զաւակաց»³¹: Նրանք նուէրներ են տուել Մամախաթուն իշխանունու կառուցած Թեղենեաց վանքի գաւթին³²: Ամուսիններով, մինչեւ 1240 թուականը, Նիգ /Ապարան/ գաւառի Վարդենիս գիւղում մոնղոլների կողմից աւերուած Անբերդի փոխարէն կառուցել են մայրաքաղաքային Վարդենիս դղեակը³³, 1241 թուականին նորոգել են Սաղմոսավանքի Կաթողիկէ եկեղեցին եւ գաւիթը³⁴, 1244 թուականին կառուցել են Աստուածընկալի կաթողիկէ եկեղեցին, մինչեւ 1250 թուականը՝ նաեւ գաւիթը³⁵, նոյն ժամանակներում կառուցել են Եղիպատրուշի եկեղեցու գաւիթը³⁶, 1250 թուականին՝ Յովհաննավանքի գաւիթը³⁷, 1255 թուականին՝ Սաղմոսավանքի գրատունը³⁸:

Քուրդ Ա-ին եւ Խորիշահին հիւրընկալուել է Արցախի ինքնակալ արքայ, Ներքին Խաչէնի կողմնակալ Հասան Զալալ Խաչեցին /1240 թուականին/: Նա գումար է նուիրել Յովհաննավանքի եկեղեցուն, որի համար «սպասաւորք սորա» մէկ պատարագ են խոստացել նրան³⁹: Վաչուտեաններին այցելել է Վայոց Ձորի կողմնակալ-փոխարքայ, իշխանաց իշխան Պռոշը /1247 թուականին/: Նա մօր արեւշատութեան համար Յովհան-

²⁹ Գաֆաղարեան Կ., Յովհաննավանք, էջ 94:

³⁰ Գևորգոսեանց Տ., Վաչուտեաններ, Երևան, 2001, էջ 258:

³¹ Դիւան հայ վիմագրութեան, պրակ IX, էջ 106, արձանագրութիւն 192:

³² Գևորգոսեանց Տ., Վաչուտեաններ, էջ 258:

³³ Գևորգոսեանց Տ. /Տիգրան Հայագն/, ի գիւղն Վարդենիս, որ ի Նիգ գաւառի, պատմավեպ, Երևան, 2018, 178 էջ:

³⁴ Նոյնը, էջ 259:

³⁵ Նոյնը, էջ 259-260:

³⁶ Նոյնը, էջ 189 եւ յետոյ:

³⁷ Նոյնը, էջ 260:

³⁸ Նոյնը, էջ 261:

³⁹ Գաֆաղարեան Կ., Յովհաննավանք, էջ 81:

նաժանքին նուիրել է մեծ գումար, որի համար ստացել է 10 պատարագ⁴⁰: Վարդան Արեւելցին 1268 թուականին իր բարձր տիպի դպրոցը իր Վիրապից տեղափոխել է Սաղմոսավանք, ապա՝ նոյն կողմնակալութիւնում գտնուող Թեղենաց վանք/⁴¹: Նոյն թուականին Այրարատի տերերին հիւրընկալուել է Գէորգ Սկեւռացին⁴²:

13-րդ դարի այս նշանաւոր զոյգին հիւր է եղել Կիլիկիայի Հայոց Հեթում Ա թագաւորը: Նա Կարակորում գնալիս 1254 թուականին եւ վերադարձին՝ 1255 թուականին, ամիսներով մնացել է Վարդենիսի դղեակում⁴³:

Քուրդ Ա-ն եւ իտրիշահը մինչեւ 1240 թուականը ունեցել են Վաչէ, Դաւիթ /վաղամեռիկ/, Հասան, Դաւիթ, Տայիր անուններով տղաներ եւ Մամախաթուն /վաղամեռիկ/, Մամքան անուններով աղջիկներ: Տարբեր կերպ են դասաւորուել նրանց ճակատագրերը: Մինչեւ 1261 թուականը թող Վաչէն /վաչէ Բ/ համագահակալել է Քուրդ Ա-ին: Այդ թուականին նա մահացել է: Նա աւելի վաղ մահացած Դաւիթ եղբոր յիշատակին մի փոքրիկ թաղակապ եկեղեցի է կառուցել Սաղմոսավանքի համալիրում: Ամուսնացել է ոմն Մամախաթուն իշխանուհու հետ: Վաչէ Բ-ի մահից յետոյ իշխանական գահ են բարձրացել նախ Հասան, ապա Դաւիթ Բ որդիները: Հասան իշխանը ամուսնացել է Ուքանանց տոհմից Արուս խաթունի հետ: Մամքան դուստրը ամուսնացել է Արցախի Ծարա ճիւղից Հասան Բ իշխանաց իշխանի հետ եւ ծնել այդ տոհմի հզօր իշխաններից մէկին Գրիգոր Բ իշխանաց իշխանին եւ Դադի ու Խադաի վանքերի առաջնորդ Յովհաննէս եպիսկոպոսին:

Խորիշահ իշխանուհու հետ Դսեղից Այրարատի կողմնակալութեան մայրաքաղաք էին եկել նաեւ նրա ծառայականները՝ Մալիքան եւ Անիփան⁴⁴, ինչպէս նաեւ Համազասպ անունով մի տղայ, որ Յովհաննավանքի հոգեւոր դպրանոցում կրթուել ու աստիճանակարգով բարձրացել եւ 1260-ական թուականների սկզբին նշանակուել է Անբերդի թեմի առաջնորդ: Այս Համազասպ Արքեպիսկոպոս Մամիկոնեանը⁴⁵ եղել է յոյժ ուսումնասէր ու բազում ձեռագրեր է պատուիրել, որոնցից եօթը պահպանուել ու գտնուել են Մատենադարանում: Եպիսկոպոսական գահի վրայ նրան յաջորդել է Ներսէս Եպիսկոպոս Մամիկոնեանը⁴⁶:

ԱՐՈՒՍ ԽԱԹՈՒՆ

Հասան Վաչուտեան իշխանի կինն է: Ամուսինն իշխել է մօտաւորապէս 1270/72-1283 թուականներին: Զաքարիա պատմիչը գրել է, որ Քուրդ Ա-ից յետոյ «... զտեղի նորա նստաւ որդի իւր, որոյ անունն էր Հասան»⁴⁷: Մինչեւ Հասանի գահակալ դառնալը Քուրդ Ա իշխանաց իշխանի համագահակալն էր Վաչէ /վաչէ Բ/ անունով որդին: Սակայն նա 1261/62 թուականներին երիտասարդ հասակում մահացել է: Հօր համագահակալ է

⁴⁰ Նոյն տեղում, էջ 91:

⁴¹ ԺԳ դարի յիշատակարաններ, 282:

⁴² ԺԳ դարի յիշատակարաններ, 366:

⁴³ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 365 եւ յետոյ: Պետրոսեանց Տ., Կողմնակալ (փոխարքայ) Քուրդ Ա Վաչուտեանի Վարդենիս իշխանանիստը: ՀՀ ԳԱԱ Պատմա-բանասիրական հանդէս, 2020, թիւ 3, էջ 196-212:

⁴⁴ Սարգսեան Գ., Բարձրաբազմակից եւ նրա արձանագրութիւնները, Էջմիածին, 1951, թիւ 9-10, էջ 44: Ղաֆաղարեան Ա., Յովհաննավանք, էջ 84: Նոյնը, էջ 109:

⁴⁵ ԺԳ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, էջ 611: Տե՛ս Պետրոսեանց Տ. Մ., Համագահակալ Մամիկոնեան՝ առաջնորդ Յովհաննավանքի: «Հոգեւոր հայրենիք» /Հայաստանի Ազգային գրադարանի ամսաթերթ/, 2006, թիւ 1 /22/, էջ 4-5:

⁴⁶ Հ. Ղեւոնդ Ալիշան, Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 172:

⁴⁷ Զաքարիա Քանաքեղոցի, Պատմութիւն, Կոնդակ Սուրբ ուխտին Յօհաննու վանից: Աշխատասիրութեամբ Արմէն Վիրաբեանի, Երեւան, Հեղինակային հրատ., 2015, էջ 184:

դարձել տարիքով նրան յաջորդող որդին Հասանը:

Հասան իշխանի մասին աղբիւրներում քիչ տեղեկութիւններ կան: Յովհաննավանքում 1274 թուականին Յովանէսի անունից փորագրուած արձանագրութեան մէջ «... ի տ/ե/րութեան]...»⁴⁸ բառերից յետոյ սպասուող իշխանաւորի անունը թէեւ անընթեռնելի է, բայց պիտի լինի «Հասանա»: Նոյն տեղում 1279 թուականին Վարդան վարդապետն ու Մխիթարիչը «ի տ/ե/րութեան/ան/ Հասանա» նուէրներ են տուել Յովհաննավանքին⁴⁹:

Յայտնի է, որ Հասան իշխանի կին Արուս Խաթունը Ուքանանց տոհմից⁵⁰ էր:

Արուս Խաթունի տոհմը յայտնի է Վրաց Գէորգի թագաւորի եւ նրա դուստր Թամար թագուհու օրերից: Նրանցից էլ ստացել է Ծոբի գիւղը⁵¹: Տոհմը մեծ ոյժ կամ կարողութիւն չի ունեցել: Յայտնի են Հաղբատում 1210-1220-ական թուականներին կառուցած մատուռներով եւ դրանց վրայ կանգնեցուած եռախորան խաչքարերով: Հաղբատի վիմագրերի հիման վրայ Կարօ Ղաֆաղարեանը կազմել է Ուքանանց տոհմածառը: Եւ նա եւ մենք այդ տոհմածառում որեւէ կերպ Արուս Խաթունին չենք կարողացել նոյնականացնել, յայտնի չէ Արուս Խաթունը ո՞ւմ դուստրն է: Տոհմի միակ իշխանաւորը, որ կարող էր լինել Արուս Խաթունի հայրը՝ Քուրդ իշխանի թոռ Դաւիթ իշխանն է, որ յայտնի է 1243 թուականի արձանագրութիւնից⁵²: Ամենայն հաւանականութեամբ Հասան Վաչուտեանի եւ Արուս Խաթունի ամուսնութիւնը տեղի է ունեցել 1260-ական թրւականներին՝ Այրարատի կողմնակալ-փոխարքայ Քուրդ Ա իշխանաց իշխանի կենդանութեան օրօք, հէնց նրա ընտրութեամբ:

Հասան իշխանի եւ Արուս Խաթունի ընտանեկան երջանկութիւնը 1283 թ.-ին անակընկալ, տարածամ խզուել է, նրանք այդ թուականին մահացել են:

Յովհաննավանքում Հասանի իշխանի անունից գրուած կտակ-հրամանագրով արձանագրուել է, որ կողմնակալութեան-փոխարքայութեան իշխանութիւնը եւ Հասանի իշխանի ժառանգների դաստիարակութիւնը յանձնուել է եղբօրը՝ Դաւիթ Բ-ին. «...Ես՝ Հասան իշխան... եւ բարեպաշտ ամուսին իմ Արուս Խաթուն... տարածամ եւ կէս աւուրց ելաք յաշխարհէ, աւանդեցաք զհոգիս մեր եւ զամէն հայրէնիս եւ զզաւակս մեր Դաւիթի եղբար մեր հարազատի եւ ա/ստուա/ծայսիրի...»⁵³:

ԳՈՏԱՐ ԻՇԽԱՆՈՒՇԻ

Ամենայն հաւանականութեամբ Դաւիթ Բ իշխանի կինն է: Դաւիթ Բ-ն ստոյգ գահակալել է 1283 թուականին եւ իշխել է հաւանաբար մինչեւ դարի վերջը: Դաւիթ Բ-ի իշխանութեան եւ գործունէութեան մասին աղբիւրներում սուղ յիշատակութիւն է պահպանուել:

2000 թ.-ին Ուշիի Սուրբ Սարգիս եկեղեցու պեղումների արդիւնքում գաւթի հաւաւային պատի հատուածում յայտնաբերուել է մի արձանագրութիւն, որը փորագրուել է Քուրդ Ա-ի որդիներից մէկին: Արձանակիր շորս քարերից առաջինը, որի վրայ գրուած է եղել գահակալ-իշխանի անունը դեռեւս չի գտնուել, սակայն շարունակութիւնից յայտնապէս երեւում է, որ այն փորագրուել է Քուրդ Ա-ի որդու կողմից. «...որդի իշխանի Քրդի եւ թոռն մեծին Վաչէի և ... սիրելի մաւր Խորիշահի՝ դստեր Մարծպանա»⁵⁴: Այս

⁴⁸ Ղաֆաղարեան Կ., Յովհաննավանք, էջ 105:

⁴⁹ Նոյնը, էջ 106-107:

⁵⁰ Նոյնը, էջ 90:

⁵¹ Նոյնը, Հաղբատ, էջ 230-231, արձանագրութիւն 130:

⁵² Նոյնը, էջ 206-207:

⁵³ Նոյնը, Յովհաննավանք, էջ 90-91:

⁵⁴ Բաբանեան Ֆ., Քալանթարեան Ա., Ուշիի Ս. Սարգիս վանքի վիմական արձանագրութիւններ, էջ 198:

արձանագրութիւնը կարելոր է նրանով, որ այստեղ յիշուած է այդ անանուն գահակալ-իշխանի կնոջ Գոհար անունը:

Քուրդ Ա-ի Վաչէ Բ որդու կնոջ անունը եղել է Մամախաթուն⁵⁵, Հասան իշխանի կնոջ անունը՝ Արուս խաթուն: Գոհարը կարող էր լինել Դաւիթ Բ իշխանի կինը:

Տայիրի որդի Քուրդ Բ իշխանաց իշխանը, որ յաջորդել է Դաւիթ Բ-ին, արձանագրութիւններում մօր անունը չի նշել, թէեւ մանրամասնօրէն նշել է հօր տոհմագրութիւնը: Հաւանական է, որ Գոհարը լինէր նրա մայրը եւ Քուրդ Բ-ն չիշեր նրան: Կարծում ենք, որ Գոհարը Դաւիթ Բ կողմնակալ-փոխարքայի կինն է եղել:

Ահա այդ արձանագրութիւնը՝

1. [որ]դի իշխանի Քրդի [ե]ւ թոռն մեծին Վաչէի եւ ի
2. սիրելի մաւր հորիշանի, դստեր Մարծպանա, յազգէ Մամի
3. [կոնեաց].....փոխեցաք արձանս եւ ամուսին իմ Գոհար
4. [տիկին].....մեր զավակ յետ մեր եւ ծնողքիս շինե
5. [ցաք].....ծից սրբոց ... արձան առ Ա(ստուա)ծ եւ փ...⁵⁶:

Արձանագրութեան հրատարակչները կարծիք են յայտնել, որ Քուրդ Ա-ի անանուն որդու կին Գոհարը կարող է լինել Տայիրի կինը, ինչը բացառում է, քանի որ Տայիրը գահակալ չի եղել, ըստ ամենայնի: Արձանագրութեան գրչագիրը թոյլ է տալիս այն թուագրել 13-րդ դարի 80-90-ական թուականներով: Դրանից ելնելով մեծարժէք նուիրատուութիւններով եւ վանական համալիրի կեանքում ունեցած դերով Գոհար տիկինը կարող էր լինել գահատիրոջ կին, իսկ այդ պահի գահակալը Դաւիթ Բ Վաչուտեանն էր:

Որեւէ յուշում չկայ, որ թէկուզ կարճ ժամանակով՝ Տայիրը եղել է գահակալ:

Պատմաբան-վիմագրագէտ Սամուէլ Կարապետեանը 2003, ապա 2011-2013 թուականներին ուսումնասիրել եւ 2013 թ.-ին հրատարակել է Տեղերի վանական համալիրի վիմագիր արձանագրութիւնները: Նա շրջանառութեան մէջ է դրել գաւթի հարաւային պատին, կենտրոնական լուսամուտից արեւելք, ներքուստ, սվաղի շերտի վրայ սեւ ներկով գրուած կիսաեղծ արձանագրութիւն. «... հր/ամանաւ/ ... անին եւ ի պ... սպասալարին, որդի Իվանէ[ի] մեծին Շահնշահի: Ես՝ Դաւիթ [որդի] Քրդին [իշխանաց իշխանի] եւ թոռն Վա[չէի], եւ իմ որդիքս՝ Ք[...], եւ Վաչուտն ... ի Տեղերո Ա/ստուա/ ծածինս ... գնել հանդովն ու ջրովն ... մեզ խոստացան ի տարին ... աւր պատարագ ... որչափ կենդանի եմք մեր ծնողացն ամեն, եւ յետ ... կամ յիմոց կամ ի /աւտարաց/ ... խաչահանողացն առցէ...»⁵⁷:

Այս արձանագրութեան սկզբնահատուածից կարող ենք վերականգնել սիւզերէն տէրերի շարքը յետադարձ կարգով. «մեծին Շահնշահը» Զաքարէ Բ-ի որդի Շահնշահ Ա-ն է, «Իվանէն»՝ նրա որդի Իվանէ Բ-ն, իսկ առաջին անունը, որ չի կարդացւում, բայց կայ անուանատիրոջ պաշտօնը՝ «սպասալարին» յուշում է, որ խօսքը Իվանէ Բ-ի որդի ամիրսպասալար, աթաբէկ Շահնշահ Բ-ի մասին է, քանի որ Իվանէ Բ-ի միւս որդիները՝ Վահրամ Դ-ն եւ Զաքա Ա-ն յիշուել են միայն աթաբէկներ եւ ոչ սպասալար: Այսինքն շարքը դառնում է այսպիսին՝ Շահնշահ Ա – Իվանէ Բ – Շահնշահ Բ: Իվանէ

⁵⁵ Պետրոսեանց Տ., Վաչուտեաններ, Երեւան, 2001 թ., էջ 79, Նոյնի Սաղմոսավանքի գրացուցակի գրուելու ժամանակը, ԳԱ Լրաբեր հաս. գիտ., 1981 թ., թիւ 1, էջ 83:

⁵⁶ Նոյն տեղում:

⁵⁷ Կարապետեան Ս., Տեղեր, Վարձ, էջ 28-29: Արձանագրութեան մէջ ուղղանկիւն փակագծերում եղած բառերը մեր վերականգնումն են:

Բ-ն 1261 թ.-ին յաջորդել է սպանուած եղբորը՝ Զաքարէ Դ-ին եւ գահակալել մինչեւ 1263 թ.-ը: Նրա որդի Շահնշահ Բ-ն պիտի ծնուած լինի մինչեւ 1263 թ.-ը: Այսպիսի հանգամանքներում սպասալար Շահնշահ Բ-ն կարող էր գործել 1280-1310-ական թրւականներին, քանի որ Անիում փորագրուած նրա կնոջ՝ Սահիպ Դիւանի դուստր Խուանդէի արձանագրութիւնից պարզուում է, որ Շահնշահ Բ-ն մահացել է 1320 թ.-ին⁵⁸: Այս ժամանակահատուածի մի մասը՝ 1283-1290-ական թուականները համընկնում են Քուրդ Ա-ի որդի Դաւիթ Բ Վաչուտեանի գործունէութեան տարիներին:

Յաջորդ բանաձեւը յուշում է արձանագրութեան հեղինակի անձը՝ «Դաւիթ, [որդի] Քրդին [իշխանաց իշխանի] եւ թոռն Վա[չէի]»: Խօսքը հաստատապէս Վաչէ Ա-ի որդի Քուրդ Ա-ի որդի Դաւիթ Բ-ի մասին է:

Պարզուում է, որ Դաւիթ Բ-ն իր որդիների հետ իշխանութիւնը 1283 թուականին ստանձնելուց յետոյ այցելել է հօր ու մօր կառուցած Տեղերի Ս. Աստուածածին եկեղեցի, նուէրներ տուել եկեղեցուն:

Ս. Կարապետեանը տեղում եղած տառահետքերով կարդացել է «իմ որդիքս Ք[...]

եւ Վաչուտն» անունները:

Պահպանուած տառահետքերով վերականգնուած «Վաչու[տ]» անուան վերականգնման հետ բացարձակ համաձայն ենք, համաձայն ենք նաեւ «Ք» տառով սկսուող անուան «Ք[ուրդ]» լինելու հանգամանքի հետ: Ժամանակի սովորութային իրաւունով իշխանաւորի աւագ որդին կրել է պապի, նրանից յետոյ ծնուածը՝ ապուպապի անունը: Այս դէպքում գործել է հէնց այդ բանաձեւը:

Բայց խնդիրը բացարձակ այդ անունների Քուրդ, Վաչուտ լինելը չէ, այլ այն, որ Դաւիթ Բ-ն ունեցել է տղայ զաւակներ: Այլ խնդիր է, որ նրանց փոխարէն կողմնակալութեան-փոխարքայութեան գահը ժառանգել է Դաւիթ Բ-ի եղբոր՝ Տայիրի որդի Քուրդ Բ-ն:

Քուրդ Ա-ի Տայիր որդին կողմնակալութեան-փոխարքայութեան գահին չի նստել, բայց հէնց նրա որդի Քուրդ Բ-ն է յաջորդել Դաւիթ Բ-ին:

ԽՈՒԱՆԴ ԽԱԹՈՒՆ

Զաքարեան տոհմից սերած Խուանդ Խաթունը Վաչուտեան նախաւերջին գահակալ Քուրդ Բ իշխանաց իշխանի կինն է:

Նա Իվանէ Ա Զաքարեանի որդու՝ Աւագի թոռ Աթաբէկի որդի Ամիրբէկի դուստրն է⁵⁹: 1314 թուականի Կարբի⁶⁰, 1329 թուականի Ուշի գիւղի Սուրբ Սարգիս եկեղեցու Հոռոմ երէցի⁶¹, Յովհաննավանքի 1350 թուականի⁶² արձանագրութիւններում յիշուել է Խուանդ Խաթուն, 1316-1335 թուականներին ընդօրինակուած ձեռագրի յիշատակարանում՝ Խոյա անունով:

Յովհաննավանքի 1350 թուականի Թէոյդոս Զրքինի արձանագրութեան շարադրման եղանակը յուշում է, որ գրուել է հօր՝ Քուրդ Բ-ի յիշատակին, որի մահը տեղի է ունեցել հէնց այդ տարի՝ 1350 թուականին: Նման եզրակացութեան համար հիմք է այն, որ համաձայն միջնադարեան իրաւահամակարգի՝ իշխանական սեփականութեան ամբողջ իրաւունքը պատկանել է գահակալ իշխանին, նրա անձի մէջ գերագոյն հողային

⁵⁸ Հ. Ղևոնդ Ալիշան, Շիրակ, էջ 62 /տե՛ս նաեւ 175 թերթի վրայ Զաքարեանների տոհմաճառը/:

⁵⁹ Կարբիի յաղթականութեան արձանագրութեան մեր ընդօրինակութիւնը:

⁶⁰ Մեր հաւաքածոյից:

⁶¹ Բաբայեան Ֆ., Քալանթարեան Ա., Ուշիի Ս. Սարգիս վանքի վիմական արձանագրութիւնները, էջ 188:

⁶² Ղաֆաղարեան Կ., Յովհաննավանք, էջ 92:

իրաւունքը նոյնացուել է նրա քաղաքական-վարչական իշխանութեան հետ, եւ միայն նրա հաստատումից յետոյ էր ոյժի մէջ մտնում ստորագրած ծառայողների, անգամ գահակից որդու նուիրատուութիւնը: Թէոյդոս Չրքինի նուիրատուական հրամանագիրը հաստատել է կողմնակալութեան այդ պահի երկրորդ դէմքը՝ մայրը՝ Խուանդ Խաթունը, որից կարելի է եզրակացնել, որ Քուրդ Բ-ն նոր է մահացել եւ Թէոյդոսը դեռեւս չի հաստատուել հօր փոխարէն: Խուանդ Խաթունի անունից փորագրուել է. «Ես՝ Խուանդ Խաթուն, ամուսին Անբերդեցի Քրդին, մայր Չրքընին... կրկին հաստատեցի զվերոյ գրեալս»⁶³:

Զաքարիա Քանաքեռցին արտագրելով Թէոյդոս Չրքինի արձանագրութեան Խուանդ Խաթունի հաստատում-հաստատածը, «ամուսին Անբերդեցի Քրդին, մայր Չրքընին» բառերից յետոյ դժվարընթեռնելի տառերի փոխարէն կարդացել է Թայիկ անձնանունը եւ եզրակացրել, որ Թայիկը Թէոյդոսի եղբայրն է: Այդ սխալն անցել է Յով. Շահխաթունեանցին⁶⁴, Ալիշանին⁶⁵, Կոստանեանցին⁶⁶: Կ. Ղաֆաղարեանն արձանագրութեան այդ հատուածը թէեւ որոշ չափով ուղղել է, բայց դարձեալ թողել է անորոշ «մայր Չրքընին Բ... արին պէկին»⁶⁷: Արձանագրութեան այդ հատուածը մենք ճշդել ենք Կարբիի Քուրդ Բ-ի արձանագրութեան հիման վրայ. «մայր Չրքընին, դուստր Ամրպէկին, թոռն աթապակ Ամրպէկին»⁶⁸:

Թէոյդոս Չրքինի եւ Խուանդ Խաթունի այս արձանագրութիւնը Վաչուտեան իշխանների վերջին արձանագրութիւնն է ու նրանց վերջին յիշատակութիւնը:

ՎԱՉՈՒՏԵԱՆ ՏԱՆ ԻՇԵԱՆՈՒՀԻ ԴՈՒՍՏՐԵՐԸ

ՄԱՄՔԱՆ

Քուրդ Ա-ն ունեցել է երկու դուստր, որոնցից մէկին անուանակոչել է մօր պատուին Մամախաթուն, իսկ երկրորդին տուել է կնոջ՝ Խորիշահի մօր անունը՝ Մամքան⁶⁹:

Մամախաթունի անունը յայտնի է Սաղմոսավանքի գրատան արձանագրութիւնից, որից պարզուում է, որ նա մահացել է մանկահասակ՝ 1245-1250-ական թուականների միջեւ եւ նրա յիշատակին ծնողները կառուցել են Սաղմոսավանքի գրատունը, որի շինարարութիւնն աւարտուել է 1255 թուականին:

Մամքանի մասին յայտնում են Խաչէնի Ծարի եկեղեցում, Դադի վանական համալիրում, Գեղարքունիքի Վարդենիսի տարածաշրջանի Այրքի Սբ. Գէորգ եկեղեցում փորագրուած, պահպանուած եւ մեր օրերը հասած ութ արձանագրութիւններ⁷⁰, որոնց համաձայն Մամքան իշխանուհին Քուրդ Ա-ի եւ Խորիշահ իշխանուհու դուստրն էր եւ ամուսնացած էր Դոփի՝ Զաքարէ Բ-ի եւ Իվանէ Ա-ի քրոջ՝ Դոփի թոռ, Խաչէնի, Ականի, Հաբանդի, Ծարի, Սոթքի, Շողգահի մեծ իշխան Հասան Բ-ի հետ: Հասան Բ-ն հռչակուած

⁶³ Նոյնը:

⁶⁴ Շահխաթունեանց Յով., Ստորագրութիւն, էջ 277:

⁶⁵ Հ. Ղեւոնդ Ալիշան, Այրարատ, էջ 253 /տոհմաձառ/:

⁶⁶ Վիմագիր տարեգիր, Յուցակ ժողովածոյ արձանագրութեանց Հայոց, կազմող Կ. Կոստանեանց, Ս. Պետերպուրգ, 1913, էջ 171:

⁶⁷ Ղաֆաղարեան Կ., Յովհաննավանք, էջ 92:

⁶⁸ Մեր հավաքածոյից:

⁶⁹ Դիւան, պրակ V, էջ 206, 214, 222: Ուլուքարեան Բ. Ա., Խաչէնի իշխանութիւնը X-XVI դարերում, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն, Երեւան, 1975, էջ 239-243: Պետրոսեանց Տ., Հայրենական մշակոյթի պաշտպան հայ կանայք: Մամքան, «Էջմիածին», 1980, Ժ, էջ 36-37:

⁷⁰ Խաչէնի տարածաշրջանի հայկական շատ պատմական կառոյցներ, խաչարեր տարածքի թուրք բնակչութեան կողմից ոչնչացուել են կամ օգտագործուել որպէս շինամար: Հնարատու է, որ Մամքանին վերաբերող այլ արձանագրութիւններ եւս ոչնչացուել են:

էր իր արիութեամբ եւ որպէս քաջակորով պատերազմող՝ մեծ դեր է խաղացել երկրամասի քաղաքական կեանքում: Մամքանի եւ Հասան Բ-ի որդիներն են Գրիգոր Բ-ն եւ Դադի ու Խադաի վանքերի առաջնորդ Յովհաննէս եպիսկոպոսը:

Մամքանի անունն առաջին անգամ յիշուել է Դադի վանքի Կաթողիկէ եկեղեցու խորանի աջակողմեան պատին գեղագիր տառերով արձանագրութեան մէջ: Այս արձանագրութեան գրուելու թուականի ժամանակի հարցը խնդրայարոյց է: Տեղում արձանագրութեան նախորդ արտագրողները վերականգնում են տարբեր թուեր՝ 1267⁷¹, 1307⁷²: Մենք տեղում մի քանի անգամ թուականի հարցը քննել ենք եւ արտակարգ պահպանուած տառերով բացարձակապէս արձանագրել ենք տառերի 20 լինելը, որ թուային արժէքով տալիս է 1267 թուականը: Մեր կարծիքով այս դէպքում տեղի է ունեցել հետեւեալը: Մամքան իշխանունիին որդու հետ Դադի վանք է այցելել 1267 թուականին, նուէրներ տուել Դադի վանքին, բայց հաւանաբար այցի մասին արձանագրութիւն չի կազմուել եւ աւելի ուշ՝ 1300-ական թուականներին որդին՝ Ծարի կողմնակալութեան-փոխարքայութեան կողմնակալ-փոխարքայ Գրիգոր Բ իշխանաց իշխանի հրամանով արձանագրութիւն է փորագրուել, որտեղ վաւերացուել է, որ իշխանունիու այցը իրականում եղել է 1267 թուականին:

Եթէ 1267 թուականին Մամքանը լինէր 20 տարեկան /ամուսնացած եւ որդի ունեցող/, ապա պէտք է ծնուած լինէր 1240-1245 կամ դրան մերձ որեւէ թուականի: Պատմաբան Բագրատ Ուլուբաբեանը Մամքանի մասին գրել է. «Հասանի կին Մամքանը, որ, ինչպէս տեսանք, դուստրն էր Արագածոտն գաւառի տէր Քուրտ Վաչուտեանի, իր արձանագրութիւններով ներկայանում է որպէս ժամանակի մեծահարուստ բարերարներից մէկը: Հայրենի տիրոջթներում կանգնեցրած խաչերն ու վանքերին ընծայած նրա նուէրները մի պատկառելի թիւ են կազմում: Դժբախտաբար, պահպանուել է մի շնչին մասը ծարեցիների աւանդական մշակութային կենտրոնի՝ Խաթրավանքի բոլոր արձանագրութիւնների, որոնցից, ամենայն հաւանականութեամբ, կարելի կը լինէր առաւել լրիւ պատկերացում կազմել Մամքանի ու նրա ամուսին Հասանի մշակութան պաստ գործունէութեան մասին»⁷³: Իր մշակութան պաստ գործունէութեամբ Մամքանը շարունակել է տատի՝ Մամախաթուն իշխանունիու եւ մօր՝ Խորիշահ իշխանունիու աւանդութները: Ամուսինը՝ Հասան Բ-ն, մասնակցել է Հուլաւեան տիրակալների արշաւանքներին: Նրա բացակայութեան ընթացքում երկրամասի իշխանութիւնը վարել է կինը՝ Մամքանը: Ապացոյցը Զողի եկեղեցու հարաւային պատին 1276 թ.-ին փորագրուած արձանագրութիւնն է: Թէեւ երկրամասի տէր յիշուել է Հասան Բ-ն, բայց եկեղեցի կառուցելու թոյլտուութիւնը /աւգնականութիւնը/ տուել է Մամքանը. «... պարոնութիւն/ Հասանա, աւգնականութիւն/ ամուսին իւրո Մամքանին»⁷⁴: Հասան Բ-ի մահուանից՝ 1287 թ.-ից առաջ Դաշքենդի Ս. Աստուածածին եկեղեցու մուտքի բարաւորին փորագրուել է. «... իշխանութեան/ մեծին Հասանա եւ Մամքանա եւ աստիանշան որդոյն Գրիգորի»⁷⁵ կառուցուել է եկեղեցին: Նոյն տեղում Ս. Գէորգ եկեղեցու արեւմտեան կամարակապ ճակատաքարի վրայ տիրոջ իշխանաւորների անունների հետ յիշուել է նաեւ նրանց հարսի՝ Տարսայիճ Օրբելեանի դստեր՝ Ասփայի անունը. «... եւ իշխանութիւն/ Հասա-

⁷¹ Շահխաթունեանց Յովհ. Եպս., Ստորագրութիւն Կաթողիկէ էջմիածնի եւ հինգ զաւառացն Արարատայ, Մայր Աթոռ, 2014, էջ 454: Նիսբէր Հայ Մեկիփութեան մասին, Բ պրակ, Դօփեանք եւ Մեկիփ Շահնազարեանք: Գրեց Կարապետ Եպիսկոպոս, տպարան Մայր Աթոռոյ, 1914: Վիմագիր տարեգիր, էջ 110: Մեսրոպ Մագիստրոս, Հայկական եւեմ մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի եւ Դադի եկեղեցիները եւ վանական շինութիւնները, Երուսաղէմ, 1938, էջ 94 ր:

⁷² Դիւան հայ վիմագրութեան, պրակ V, էջ 206:

⁷³ Ուլուբաբեան Բ. Ա., Խաչենի իշխանութիւնը X-XIV դարերում, էջ 242:

⁷⁴ Դիւան հայ վիմագրութեան, պրակ IV, Գեղարքունիք, կազմեց Ս. Գ. Բարխուդարեան, Երեւան, 1973, էջ 328:

⁷⁵ Դիւան, պրակ IV, էջ 317:

նա ու Մամբանին, Գրիգոր եւ Ասփէին»⁷⁶ կառուցուել է եկեղեցի: Նրա մահից յետոյ եւս Մամբանը, իշխանութիւնը ստանձնած որդու՝ Գրիգորի եւ հարսի՝ Ասփայի հետ բազում նուիրատուութիւններ է կատարել:

Մամբանը մահացել եւ թաղուել է Դաղի վանքի գաւթում: Նրա կողքին թաղուել է որդին՝ Դաղի վանքի առաջնորդ Յովհաննէս եպիսկոպոսը: Մամբանի տապանաքարի մահագրի թուականը Մեսրոպ Մագիստրոսը /Տէր-Մովսիսեան/ կարդացել է 9 /1251/⁷⁷, Մակար Բարխուտարեանցը՝ 20 /1298/⁷⁸, Սեդրակ Բարխուդարեանը՝ 247 /1315/⁷⁹: Վիմագրագէտ-պատմաբան Սամուէլ Կարապետեանը ուսումնասիրելով Դաղի վանքի արձանագրութիւնները ճշտել է Մամբան իշխանուհու տապանագրում նշուած մահուան թուականը՝ 206 /1306/⁸⁰: Տապանագրի վրայ եղած 1306 թուականի փաստը մենք եւս համարում ենք հաւաստի՝ տեղում կատարած տառահետքերի ուսումնասիրութեամբ:

ԹԱԹՈՒՆ

Քուրդ Բ-ն նորացրել է խնամիական կապը իսախանի Ծարա իշխանական տան հետ եւ իր Թաթուն աղջկան կնութեան է տուել Հասան Գ-ի որդի Հասան Դ-ին: Դաղի վանքի գմբէթաւոր եկեղեցու հարաւային պատի կենտրոնական կամարի մէջ, արտաքուստ փորագրուած է. «Կաման Ա/ստուծոյ. ես՝ Գոնցէս ու որդիքս՝ Հասան ու Վահրամ, թոռն Դաւիթանց, տվաք ի Դաղի վանս զմեր հայրենիքն զԽուդ իւր սահմանովն, իսասովն, վերին մարգով վասն սիրական հարսինն մեր Թաթունին, դստերն Քրդին Անբերդեցի՝ ամուսնո Հասանա»⁸¹:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այրարատի կողմնակալութեան-փոխարքայութեան Իրար յաջորդող գահակալ իշխանաւորներները՝ Վաչէ Ա-ն, Քուրդ Ա-ն, Հասանը, Դաւիթ Բ-ն, Քուրդ Բ-ն իրենց գահակալ կանանց՝ Մամախաթուն, Խորիշահ, Արուս Խաթուն, Գոհար, Խուանդ Խաթուն իշխանուհիների եւ Մամբան, Թաթուն դուստրերի համագործակցութեամբ ծաղկել են իրենց տրուած տարածքները, դրանց վրայ կառուցելով համահայկական մշակութային գոհարներ: Այրարատի տիրուհիները Այրարատի, իսկ տոհմի դուստրերը իսախանի Ծարա կողմնակալութեան-փոխարքայութեան տարածքում իրականացրած գործերով 13-14-րդ դարերի մեծագոյն մշակութային բարերարներ են դարձել: Այդ նաեւ նրանց ենք պարտական, որ այսօրեայ Հայաստանի տարածքում վեր են խոյանում Յովհաննէս-վանքը, Սաղմոսավանքը, Տեղերի վանքը, Նղիպատրուշի վանքը, Աստուածընկալը, Թեղենեաց վանքը, Կարբիի յաղթականամար-եկեղեցին, Սանահինի մեծ գաւիթը, Մակարավանքի գաւիթը, Հոռոմոսի եւ Սաղմոսավանքի գրատները, իսախանի Ծարա իշխանութեան տարածքում կառուցուած բազմաթիւ շինութիւնները, ինչպէս նաեւ այդ կառուցներում ստեղծուած անանց արժէք դարձած բազմաթիւ ձեռագրեր:

ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆՑ

Երեւանի իսախանուր Աբովեանի անուան ՀՊՄՀ-ի գիտական գրադարանի տնօրէն, Բնութեան եւ հասարակութեան մասին գիտութիւնների միջազգային ակադեմիայի ակադեմիկոս

⁷⁶ Դիւան, պրակ IV, էջ 315:

⁷⁷ Մեսրոպ Մագիստրոս, Նշ. աշխ., էջ 96ա:

⁷⁸ Բարխուտարեանց Մակար Եպս., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ: Երեւան, 1999, էջ 267 /ծանոթագրութիւն/:

⁷⁹ Դիւան հայ վիմագրութեան, պրակ V, Արցախ, կազմեց Ս. Գ. Բարխուդարեան, Երեւան, 1982, էջ 214-215:

⁸⁰ Կարապետեան Ս., Հայ մշակոյթի յուշարձանները խորհրդային Ատրպէյնանի բռնակցուած շրջաններում, Երեւան, 1999, էջ 117:

⁸¹ Դիւան, պրակ V, էջ 203, արձանագրութիւն 716:

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

THE ARMENIAN CHURCH GENUINE SUPPORT TO THE ARMENIAN NATION

The Destructive War

The history of the Armenian nation has always confirmed and never negated the indispensable support of the Armenian Apostolic Church to the Armenian state way back from ancient times based on the evidences recorded by our historians. In recent times the relationship of church and state during the World Wars I and II, has revealed the church's blissful support during the pontificate of Catholicos of All Armenians Kevork V, and Catholicos Sahag II of Cilicia who personally were involved in international congresses, meetings with heads of nations in defense of Armenia versus Turkish oppressions.

Following the defeat of Artsakh-Karabagh six months ago by the Azerbaijan-Turkey coalition a ceasefire was secretly signed between the two, brokered by the Russian Federation. All three, President Vladimir Putin, Prime Minister Nikol Pashinian, and President Aliyev, signed the controversial treaty without any endorsement, consultation or even the knowledge of the government of the Republic of Armenia. President of Armenia Armen Sarkissian knew about it from the media. Given the uncalled for articles forcefully included in the paper, Pashinian was forced to sign it without any question, deletion or amendment. The signed document surrendered most of the territories of Artsakh and simultaneously endangered the borders of the Republic of Armenia through insertion of construction of communicating highways, dangerously crossing through the southern territory of Armenia. Admittedly the one essential accomplishment the treaty resolved was the actual ceasefire.

Highly alerted and deeply concerned, both Pontiffs of the Armenian Church Karekin II of All Armenians and Catholicos Aram I of Cilicia, raised their concern and advised, they did not demand, they advised the PM Pashinian to resign quietly and save the nation from further temptations, fearing the repercussions of the unending demonstrations in Armenia demanding his resignation for singlehandedly signing the infamous treaty. The pontifical voice of the church however was politicized immediately, arguing that the church had no business interfering in politics. Such unsound and untrue attitude prompted this writing hoping that it may clarify the Armenian Church's position as genuinely supportive to the Armenian nation in recent times.

The 19th and 20th Centuries

Two examples well known to the Armenian historians come from Patriarchs Khrimian Hayrig and Nersess Varjabedian who succeeded each other as patriarchs of Constantinople in the latter part of the 19th century. Patriarch Khrimian was dispatched by the Patriarchate to attend the Summit Congress in Berlin, and Patriarch Varjabedian to the one in San Stefano (Constantinople). Both Conferences were exclusively European representations to hear among other issues the Armenian Church's request concerning the repeated oppressions of the Armenians by the Ottoman Turks, their subjects. Even though for us both meetings were uneventful, at least the Armenian Church's voice by her venerable Patriarchs was heard by world leaders. If that was possible then, why it is not possible today, the same voice addressed this time to the Armenians,

the legitimate children of the Mother Church of Armenia and not to foreign leaders.

During the pontificate of Catholicos Kevork V of Holy Etchmiadzin and by his personal initiative, the Armenian National Congress in Paris was instituted, headed by Boghos Noubar Pasha as the Chairman appointed by His Holiness. It was attended by distinguished Armenian leaders, lay and cleric, to make the Armenian cases known to the European nations regarding the oppression by the Ottoman Empire, especially for the six *vilayets* (districts) in eastern Anatolia to return to the Armenian Republic.

Simultaneously Patriarchs of Constantinople while in office did the same periodically by either appealing to the Ottoman authorities personally appearing before the Sultan, and/or the Ministers, or attending civic audiences to defend the rights and the privileges of the Armenians living in the country. Four names at least Patriarchs Malachia Ormanian, Matteos Izmirlian, Zaven Der-Yeghiayan and Archbishop Stepanos Hovagimian of Nocomedia were those who diplomatically approached the authorities before and during WWI.

In 1945 another courageous and in fact most adventurous step was taken by Catholicos Kevork VI Chorekjian of Holy Etchmiadzin, while still the Locum Tenens of the Mother See, in the middle of severe anti-religious decades of the Soviet Union. The Republic of Armenia was one of the 15 Soviet republics, and churches were persecuted to no end, especially under the harsh rules of Marshal Stalin. The Armenian Church was in dire need to reawaken as permission was still pending to even call the Church's National-Ecclesiastic Assembly as the top priority for electing the new Catholicos. The Holy See was humiliated since pontifical properties were confiscated and the administration was to its minimal without one single bishop next to the Archbishop.

Unusual diplomacy and an extraordinary action wisely and courageously had to be taken during World War II when the Soviet Union was involved with its Red Army against Germany. Archbishop Chorekjian appealed to the Armenian churches across the oceans to create funds for the building of 22 tanks that he named "Sassountsi David," to be donated to the Red Army as an eye catching contribution to the heavyweight Soviet Union on behalf of the Armenian Church. The donation was done immediately to serve as an "honorable bribe" in favor of requests for a set of allowances. The Archbishop's immediate request to personally meet with Stalin at the Kremlin materialized, at which time his list of 11 church allowances for the awakening of church and nation were honored with Stalin's signature on the presented file. If the church bells were silent, the tanks spoke instead.

Prime Minister Nikol Pashinian

Protests in Yerevan constantly claimed the resignation of PM Nikol Pashinian and his government for the failure and the defeat, and especially for signing the surrender of most of the territories of Artsakh. Obviously the PM has lost popularity dramatically. As of this day, the required resignation is still pending, but soon it will happen judging from the revolutionary condition of our country. Pashinian was apologetic for the signing of the so called treaty, assuming full responsibility for the outcome, claiming it was the only way to stop the war and the bloodshed. Danger is spreading along the southern borders of the Republic of Armenia and skirmishes are disturbing on the borderline of the Armenian province of Siunik.

The Prime Minister not realizing what he had signed was worthless, went to the endangered area in Siunik to be aware of the situation planning to visit Sisian, Goris, Gapan, Kacharan and Meghri. He found himself unwelcomed, they blocked the main road and barely visiting the

St. Gregory church in Sisian was obligated to cancel further visits and to return home. Even his visit to Sisian's church was unfortunate, as he entered the church he was not welcomed by the local priest who in view of the parishioners refused to shake hand with the Prime Minister, who lit a candle, said his prayers and left. One important fact that the priest should know, to be polite and be aware that no one, let alone a priest, is allowed to unwelcome anybody who is entering the house of God.

REVD. DR. ZAVEN ARZOUMANIAN

ԽՈՒՇՔ ԵՒ ԽՕՍՔ

Հրամանով կատարուած բարիքը բարիք չէ:

Դէմքը հոգիի հոյեւիին է:

Գեղեցկութիւնը ինքնավստահութիւն կը ծնէ:

Մարդու համար ի՞նչն է աւելի սիրելի: Կեանքը, որովհետեւ միայն անոր կապուած են մեր բոլոր ուրախութիւնները, երջանկութիւնը եւ բոլոր յոյսերը:

Մարդոց մէջ լաւագոյնը ան է, ով աւելի շատ օգտակար կ'ըլլայ ուրիշներուն:

Առանց զոհերու, առանց ջանքերու եւ զրկանքներու անկարելի է ապրել աշխարհի մէջ. կեանքը պարտէզ չէ, ուր միմիայն ծաղիկներ կ'աճին:

Իր ոյժերու նկատմամբ հաւատը եւ ուրիշներու համար ապրելու ցանկութիւնը վիթխարի ոյժ է:

Ապրել՝ կը նշանակէ պայքարել, եւ ոչ միայն յանուն կեանքի, այլեւ կեանքի լիակատարութեան ու բարեւաւման համար:

Մեծ գործեր կատարելու համար հարկաւոր է ապրել այնպէս, ասես չափտի մեռնիս:

Կեանքը ո՛չ տեսարան մըն է, ո՛չ ալ տօն. կեանքը դժուար զբաղում մըն է:

Կեանքը ինքնին՝ ո՛չ բարիք է, ո՛չ չարիք. այն թէ բարու եւ թէ չարի շտեմարան է, կախում ունի, թէ մենք ինքներս ինչի վերածած ենք այն:

ՍՈՒՐԲ ԳՐԱԿԱՆ**ՏԵԼԻՉԵԱՆ ԽՆԴԻՐԸ****Զ.****Ս. ԳԻՐՔ ԵՒ ԲԱԲԵԼՈՆ****ԱՆԽԱՐՀԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ**

Բացի Կիլկամէշի վէպէն, որուն 11 կճաքարերէն վերջինը ջրհեղեղի պատմութիւնը կը բովանդակէ, մենք ունինք նաեւ Աշխարհի ստեղծագործութեան վէպ մ'ալ, որ 7 կճաքարերու վրայ գրուած է բաբելական սեպագրութեամբ: Այս վէպի համաձայն ամէն բաներու սկիզբը կը տիրէր նախնական քառասային ջուրը ամենուրեք, որ Դիամադ կը կոչուէր: Երբ աստուածները ուզեցին կարգաւորել ամբողջ աշխարհ մը յօրինել՝ Դիամադ, իբր վիշապ եւ կամ եօթնգլխեան իժ՝ անոնց դէմ ելաւ եւ բարկութեամբ լի ծընաւ ամէն տեսակի հրէշներ, մանաւանդ հսկայական օձեր եւ անոնց հետ միանալով աստուածներու դէմ մարտի պատրաստուեցաւ: Ասոնցմէ միայն Մարտուք համարձակեցաւ անոր դէմ ելլել եւ սպաննեց զԴիամադ եւ անոր մարմինէն ստեղծեց երկինքն ու երկիրը, լուսինը, արեւն ու աստղերը, երկրի բոյսերն ու կենդանիները եւ վերջապէս առաջին մարդը:

Նախքան աշխարհի ստեղծագործութեան բաբելոնեան բնագրերու թարգմանութիւնը, պէտք կը համարիմ ընթերցողներուս ուշադրութիւնն հրաւիրել այն հանգամանքին վրայ, որ բաբելոնեան դիցաբանութեան եւ տիեզերաբանութեան համաձայն, Բաբելոնի քաղաքները իրենց տաճարներով տիեզերքի եւ երկինքի այլ եւ այլ մասերուն կը համապատասխանէին: Այսպէս զոր օր. Նիբբուր, Էրիտու, Սակիլ եւլն. տիեզերքի կողմեր կը սեպուին: Անցնինք այժմ բնագրերուն, նախ համառօտները եւ ապա ընդարձակը յառաջ պիտի բերենք:

ԱՆԽԱՐՀԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԸՍՏ ԲԱԲԵԼԱՅԻՈՅ**Ա. Պատճէն.**

1) Սուրբ բնակավայրը, աստուածներու տունը, նուիրական տեղերը դեռ չէին ստեղծուած.

2) Եղէգ մը դեռ չէր ծլած, ծառ մը դեռ չէր յօրինուած,

3) Աղիւս մը դեռ չէր թրծուած, հիմք մը դեռ չէր դրուած,

4) Տունը դեռ չէր շինուած, բնակութիւն դեռ չէր հաստատուած.

5) Բնակչութիւն դեռ չկար, համայնական կեանք գոյութիւն չունէր:

6) Նիբբուր դեռ չէր շինուած, (է)քուր դեռ չէր կառուցուած,

7) Ուրուք դեռ չէր շինուած, (է)աննա դեռ չէր կառուցուած

8) Ովկիանոս դեռ չէր շինուած, Էրիտու դեռ չէր կառուցուած,

9) Սուրբ տան, աստուածներու տան տեղերը դեռ չէին շինուած,

10) Բոլոր երկիրը ջուր էր

11) Կղզիի(?) հիմքը ջուրի հոսանք էր,

12) Այն ատեն Էրիտուն ստեղծուեցաւ, (է)սակիլան շինուեցաւ,

13) (է)սակիլա, որ ովկիանոսին մէջ է եւ ուր Ունկալ տուլ-ազակ (Մարտուք) Աստուածը կը բնակի:

- 14) Բաբելոն շինուեցաւ, (է)սակիլ աւարտեցաւ,
- 15) Անուննաքի հետզհետէ ստեղծուեցան:
- 16) Սուրբ քաղաքը, իրենց հաճելի բնակավայրը, սուրբ համարեցին անոնք.
- 17) Մարտուք եղէգով ծածկեց ջուրին ափերը,
- 18) Անիկա երկիրը ստեղծեց, եղէգի ցանցով պատեց զայն,
- 19) Որպէս զի աստուածները հաճոյքով բնակին անոր վրայ,
- 20) Ստեղծեց ան(=Մարտուքը) մարդիկը,
- 21) Արուրու անոր հետ մարդկային ցեղը ստեղծեց,
- 22) Դաշտի անասունները եւ ազատ շրջող կենդանիները ստեղծեց ան,
- 23) Տիգրիսն ու Եփրատը ստեղծեց ան եւ դրաւ զանոնք երկրի վրայ:
- 24) Անոնց անուններ դրաւ.
- 25) Խոտ, բանջար, եղէգն եւ փաթթուող բոյսեր ստեղծեց ան
- 26) Դաշտի կանաչը շինեց ան,
- 27) Երկիրներ, արօտատեղիներ եւ եղէգն,
- 28) Վայրի կովն ու իր ձագը, հորթը, ոչխարը եւ հօտի գառները,
- 29) Պուրակներն ու անտառները,
- 30) Այծեամն ու եղջերուն...
- 31) Տէր Մարտուք ծովափի առլեփը լցուց,
- 32) Եղէգնի եւ երկրի խաւ մը շինեց ան. (33-35 աւրուած է)
- 36) Աղիւս թրծեց, հիմք դրաւ
- 37) Տուն շինեց, բնակավայր կառուց ան,
- 38) Բնակավայր մը շինեց ան, համայնական կեանք ստեղծեց,
- 39) Նիբբուրը շինեց ան, (է)քուրը ստեղծեց ան.
- 40) Ուրուքը ըրաւ ան, (է)աննա ստեղծեց ան:

Անցնինք այժմ Ստեղծագործութեան պատմութեան Բ. բնագրին կամ Պերոսոսի աւանդածին:

Բ. Պատճէն.

«Կ'ըսուի, որ ժամանակ մ'եղած է երբ ամէն ինչ խաւարով եւ ջուրով ծածկուած էր եւ զարմանահրաշ եւ ալլակերպ կենդանիներ գոյութիւն ունեցած են. այնպիսի մարդիկ եղած են, որոնք երկու կամ չորս թեւեր ունեցած են եւ երկու գլուխներ, կամ երկգլխեան մարմին մը, երկու սեռերու գործարաններն միանգամայն ունենալով: Եղեր են նաեւ մարդիկ, որ այծի ետեւի մասն են ունեցած եւ եղջիրներ կրած, ուրիշները ձիու ոտքեր են ունեցած, ուրիշները առջեւի մասով մարդ եւ ետեւի մասով ձի են եղած կենդուրոսներուն պէս: Եղած են ցուլեր մարդու մարմինով եւ չորս մարմին ունեցող շուներ, որոնց պոչը ձկան կը նմանէր, կային ձիեր շան գլուխներով: Բաց աստի կային մարդիկ եւ կենդանիներ ձիու գլխով եւ մարմնով եւ ձկնանման պոչերով եւ ուրիշ կերպարանք ունեցող կենդանիներ: Բացի ասոնցմէ կային նաեւ ձուկեր, սողուններ, օձեր եւ ուրիշ զարմանալի կենդանիներ խառն կերպարանքով: Ասոնց պատկերներուն շատերը պահուած են Բէլի տաճարին մէջ (Բաբելոն քաղաք = Սակիլա): Այս բոլոր կենդանիներու վրայ իշխած է կին մը Օմօրքա անուամբ, որ քաղգերէն Դամադ կը կոչուի եւ ծով կը նշանակէ:

Երբ ամէն ինչ այս վիճակի մէջ էր՝ Բէլը եկաւ եւ կինը մէջքէն կիսեց եւ անոր մէկ կէսէն երկիրը, իսկ միւս կէսէն երկինքը ստեղծեց, բայց անոր մէջ ապրող հրէշները ոչնչացուց:

Այս ամէնքը սակայն ալլաբանական բնական նկարագրութիւն է (հոս բնագիրը

խանգարուած է)... Աստուածները արիւնը (Դիամադի գլուխի արիւնը) հողի հետ խառնեցին եւ մարդիկ շինեցին: Այս պատճառով մարդիկ խելք եւ աստուածային բանականութիւն ունին: Սակայն Բէլը, որ Զեւսին կը հաւասարի, խաւարը կիսեց եւ երկինքն ու երկիրը իրարմէ զատեց եւ այսպէս տիեզերքը կարգաւորեց: Կենդանիները չկրցան լուսոյ դիմանալ եւ մեռան: Երբ Բէլ երկիրը անապատ՝ բայց արգասաբեր գտաւ, հրամայեց աստուածներէն մէկուն իր գլուխը կտրել եւ հոսող արիւնը հողին հետ խառնելով այնպիսի մարդիկ ու կենդանիներ շինել, որոնք կարենային օդին դիմանալ: Բէլը ստեղծեց լուսաւորները, արեւը, լուսինն ու 5 մոլորակները»:

Այսպէս պատմած է ըստ Աղեքսանդրի, Բազմավէպի Պերոսոս՝ իր առաջին գիրքին մէջ ստեղծագործութեան Բաբելոնեան պատմութիւնը: Հին Բաբելացիք եւ Ասուրք 5 մոլորակներ կ'ընդունէին, Մերքուր, Վեներա, Մարս, Նուրդըր, Սադուրնուս: Ասոնց իբր մոլորակ կը կցէին նաեւ Լուսինն ու Արեւը եւ այսպէսով կը կազմէին մոլորակներու 7 թիւը:

Այժմ անցնինք Ստեղծագործութեան Բաբելոնեան Գ. բնագիր վարիանդին, որ երկու կճաքարերու վրայ գրուած է եւ նախորդներէն շատ աւելի ընդարձակ է, բայց զըժբախտաբար շատ տեղեր բոլորովին եղծուած ու անընթեռնի դարձած է:

Գ. Պատճէն.

- Ա. Տախտակ. 1) Երբ դեռ վերը երկինք ստեղծուած չէր,
- 2) Վարը երկիր անուն չունէր (չկար),
- 3) Երբ դեռ սկզբնական ովկիանոսը կար, եւ անոնց ստեղծողը,
- 4) Ովկիանոսը եւ նախնական հոսանքը, որ ամէն ինչ ծնաւ,
- 5) Իրենց ջուրերը միացուցին...
- 6) Երբ դեռ եղէգ մը չէր միացած եւ եղէգնի կղզիներ (այսպիսի եղէգնի խիտ կըղզիաձէ մացառներ կամ թուփեր կային Եփրատի ստորին հովտին, քալաի կոչուած երկրին մէջ) դեռ չէին կազմուած,
- 7) Երբ աստուածներէն դեռ մէկը չէր ստեղծուած,
- 8) Անուն մը դեռ չէր դրուած, ճակատագիր դեռ չէր դրոշմուած
- 9) Այն ատեն ստեղծուեցան աստուածները...
- 10) Լուխմու եւ Լախամու ստեղծուեցան...
- 11) Ժամանակի դարերը մեծցան...
- 12) Անշար եւ Քիշար...
- 13) Եւ Անու...
- 17) Հա, անոր հայրը, ծնող...
- 18) Խելացի եւ բանական...
- (20-21 ւերուած),
- 22) Դիամադ եւ Աբսու ըմբոստացան
- (23-28 ւերուած),
- 29) Այն ատեն Աբսու՝ մեծ աստուածներու ծնողը,
- 30) Կանչեց զՄումմու, իր օգնականը, եւ ըսաւ անոր,
- 31) «Մումմու, օգնականս, որ իմ սիրտս կը հրճուեցնէ,
- 32) Օ՛ն անդր, երթանք դէպի Դիամադ»:
- 33) Անոնք գացին Դիամադի առջեւ կայնեցան,
- 34) Անոնք խորհրդակցեցան աստուածներուն՝ իրենց զաւակներու մասին,
- 35) Աբսու սկսաւ խօսիլ,


- 36) Մաքուր Դիամադին ըսաւ ան,
 37) «... իրենց վարմունքը ինծի դէմ,
 38) Յերեկը հանգիստ չունիմ (անոնցմէ), գիշերը քուն չունիմ,
 39) Ես կ'ուզեմ զանոնք ոչնչացնել եւ իրենց գործերը ի դերեւ հանել,
 40) Վայնասուն պիտի բարձրանայ, բայց մենք պիտի հանգստանանք.
 41) Երբ Դիամադ լսեց այս,
 42) Բարկացաւ ան եւ խօսեցաւ
 43) Սաստիկ կատղած,
 44) Չար խորհուրդ խորհեցաւ ան իր մէջ,
 45) «Ի՞նչ ընենք, ոչնչացնենք,
 46) Անոնց ըրածը գէշ է»
 47) Մումմու պատասխանեց եւ Աբսու մտածեց.
 48) Մումմուի խորհուրդը բարեկամական չէր,
 49) «Գնա՛, անոնց խելացի գործունէութիւնը շփոթէ...
 50) Այն ատեն դու ցերեկը հանգիստ, գիշերը քուն պիտի ունենաս,
 51) Աբսու լսեց զայն եւ իր դէմքը ժպտեցաւ,
 52) Որովհետեւ ան աստուածներու՝ իր զաւակներու դէմ չար կը խորհէր,
 (53-108 աղաւաղուած է եւ առանձին բառեր կամ բառամասեր միայն ընթեռնելի են, որոնցմէ կարելի է հասկնալ որ աստուածները իրենց դէմ կազմուած դաւադրութիւնը ըմբռնելով պատերազմի կը պատրաստուին):
 109) Զինուեցան. Դիամադի հետ պատերազմի կ'երթան,
 110) Կատղած կը ծրագրեն գիշեր-ցերեկ,
 111) Պատերազմ կը յարուցանեն,
 112) Անոնք կռիւ կ'ուզեն,
 113) Խուպուր մայրը, որ ամէն ինչ ստեղծեց,
 114) Շինած է անդիմադրելի զէնքեր, ծնած է հսկայական վիշապներ,
 115) Սուր են անոնց ատամները, սուր անոնց մագիլները,
 116) Թոյնով եւ արիւնով լեցուցած է ան անոնց մարմինը,
 117) Կատղած գազանները սարսափեցուցին զանոնք,
 118) Ահազդեցիկ ըրաւ ան զանոնք, բարձրացուց զանոնք(?),
 119) Իրենց մարմինը ուղիղ պիտի երթայ. իրենց կուրծքը պիտի չխոնարհի.
 121) Անոնց զէնքերը չեն խնայեր բնաւ, պատերազմէ չեն վախնար անոնք,
 122) Հսկայական Ումունք, կատղած շունք եւ կարիճ-մարդիկ,
 123) Կատղած ռմունք, մարդաձուկեր եւ խոյեր,
 124) Զխնայող զէնքեր կը կրեն եւ պատերազմէ չեն վախնար,
 125) Հզօր մարտի եւ յարձակումի մէջ, որուն ոչ ոք կրնայ դիմակայել,
 126) Ընդամէնը 11 հատ ասանկ շինեց,
 127) Աստուածներէն իր նախածնունդներէն, զորս ան խմբած էր,
 128) զԲինկու բարձրացուց ան եւ անոնց տէր կարգեց զայն,
 129) Զօրքի առաջնորդի, խումբի մը հրամանատարի նման,
 130) Զէնք առնելու, դուրս ելլելով պատերազմելու,
 131) Կռիւի հրամանատարը անոր յանձնեց
 132) Անոր վստահացաւ եւ իշխանութեան զգեստ հագցուց անոր,
 133) «Քեզ կոչեցի ես եւ աստուածներու խումբին տէր կարգեցի քեզ,
 134) Բոլոր աստուածներու հրամանատարութիւնը քեզ յանձնեցի,

- 135) Դուռն տէր պիտի ըլլաս իմ միակ ամուսինս,
 136) Քո անունդ պիտի փառաբանուի բոլոր Անուննաքիներէն աւելի(?)»:
 137) Նէ տուաւ անոր բախտի տախտակները (ճակատագիրները), անոր կուրծքը
 կախեց զայն (քրմապետները կը կրէին այս նշանները՝ Ուրիմ եւ Դումմիւմ.),
 138) «Դուռն, քու հրամանդ պիտի չեղծանի, քու հրամանդ հաստատ պիտի մնայ»:
 139) Երբ Քինկու այսպէս բարձրացաւ, աստուածներու գերագոյնը եղաւ,
 140) Որոշեցին անոնք աստուածներուն՝ իրենց զաւակներուն վիճակը կամ դերը.
 141) «Եթէ ձեր բերանը բացուի, ան կրակը պիտի մարէ,
 142) Գերագոյն է-ն, հզօրը կործանէ»:
 Ասով կը լմնայ Ա. տախտակը, միւս տախտակներուն թարգմանութիւնը յաջորդ
 թիւին մէջ կու տանք:

ՏՕՔԹ. Յ. ԹՕՓՃԵԱՆ

Բերա - Կ. Պոլիս, 1906

(Շար. 5)



ՎԻՄԱԳՐԱԿԱՆ

«ԳՐԱՖԻՏԻ» ԵՐԵՒՈՅԹԸ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՎԻՄԱԳՐԵՐՈՒՄ

Դեռևս հնագույն ժամանակներից մարդն ամեն կերպ փորձել է արձանագրել իր գոյությունը, թողնելով իր հետքը երկրի վրայ՝ Աստծուն հաշուետու լինելու ձգտմամբ եւ իր ժառանգությունը, յիշատակը պահպանելու միտումով: Վերը նշուածը իրագործելու եղանակներից էր պատկերը՝ ձեռքի հետքից մինչեւ բարդ կոմբինացիաններով որսի կամ այլ տեսարանների պատկերումը, իսկ գրերի գիւտից յետոյ՝ արձանագրությունը, ձեռագիրը, տպագիր գիրքը, նկարը, էլեկտրոնային գիրք: Անկախ նրանից, որ ի յայտ են եկել նոր տեխնոլոգիաներ, մարդը շարունակում է իր հետքը թողնել զանազան շինությունների վրայ: Մարդու կողմից իր հետքը թողնելու հնագույն դրսևորումը յայտնի է որպէս ժայռապատկեր, սեպագիր արձանագրություն, ապա դասական այբուբենների ստեղծումից յետոյ՝ արձանագրություն, որը յետագայում ստանում է իր գիտական համընդհանուր անուանումը՝ վիմագրություն: Սրանց կողքին յայտնւում է մի «նոր» երեւոյթ, որը մեզ ծանօթ է «գրաֆիտի» անունով, ինչը ստանում է բացասական ընկալում եւ գնահատական 20-րդ դարի 60-ականներից յետոյ:

Չնայած, որ «գրաֆիտի» տերմինը գիտական շրջանառութեան մէջ է դրուել հրնագէտների կողմից¹, որպէս ժայռապատկերների, պատկերագրութեան բնորոշման ձեւ, բայց Պոմպէյի պեղումներից յետոյ ընդհանարական «գրաֆիտի» բնութագիրը տարածուեց նաեւ ոչ ֆորմալ կամ ոչ պաշտօնական գրությունների եւ պատկերների վրայ: Ժամանակակից ընկալմամբ «գրաֆիտի» երեւոյթի սկիզբն ընդունուած է համարել 1960-ականներին ԱՄՆ-ում գնացքների եւ մետրոյի կայարանների համատարած ներկումները, դրանց վրայ արուած գրառումները, ինչի դէմ տեղական ինքնակառավարման մարմինները կատաղի պայքար էին մղում: Հիմնական կռուանը գրաֆիտիների դէմ, այն է, որ նրանք փչացնում են կառույցների, շէնքերի ճարտարապետական տեսքը:

Ինչո՞ւ այս գրի ձեւը այսօր յայտնուել է ոչնչացման, մաքրման առաջ: Արդեօ՞ք գրի այս պայմանական երկու ձեւերը՝ վիմագրությունն ու գրաֆիտին, ի սկզբանէ տարբեր, բաժանուած են եղել եւ հակադրուել, թէ՞ ոչ: Այսօր նմանատիպ երեւոյթների քննութիւնը գիտական հանրութեան հետաքրքրութեան դիտակէտում է: Կան բազմաթիւ աշխատություններ նուիրուած «Միջնադարեան գրաֆիտի»² երեւոյթին: Սակայն, հայ գիտական միջավայրում դեռևս չկան խնդրին վերաբերող կամ նուիրուած համալիր աշխատություններ, հետազօտություններ:

¹ Առաւել մանրամասն տե՛ս Alan M. Forster, Samantha Vettese-Forster, John Borland, Evaluating the cultural significance of historic graffiti, Structural Survey, Emerald Insight, Harvard, 2012, 30 (1), pp. 43-64; Peter Keegan, Graffiti in Antiquity, London and New York, 2014, pp. 16-26.

² Memory on the Wall: Graffiti on Religious Wall Paintings, Véronique Plesch Colby College Waterville, Maine, https://docs.google.com/document/d/1W1PEsgdbm3uuh_869EmAS5XEQBKkYR5I4yzeKjYmzY/edit; Forster A. M., Vettese-Forster S., Borland J., Evaluating the cultural significance of historic graffiti, [file:///C:/Users/User/Downloads/Evaluating-the-cultural-significance-of-historic-graffiti%20\(1\).pdf](file:///C:/Users/User/Downloads/Evaluating-the-cultural-significance-of-historic-graffiti%20(1).pdf) ;

И. И. Толстой, Греческие граффити древних городов северного Причерноморья, из.-во АК СССР, М.-Л., 1953; Высоцкий С. А., Средневековые надписи Софии Киевской (по материалам граффити XI-XVII веков), Киев, 1978.

«Գրաֆիտի» երեւոյթը բնորոշող կան բազմաթիւ սահմանումներ³, սակայն հետազոտողների կողմից ընդունուած ամենահամապարփակ, սակայն տեխնիկական բնոյթ կրողը Կոխի սահմանումը. «Գրաֆիտին պատահական, այսինքն՝ ոչ ցանկալի եւ ոչ պաշտօնական, գրութիւններն եւ նշաններ են՝ հասարակական վայրերում. ներառեալ հասարակական զուգարանները կամ պէտքարանները, գովազդային յայտարարութիւններն ու ճանապարհային նշանները, հանդերձարաններում, բանտախցերում, կայարանների սպասասրահներում, ատոբուսների եւ տրամուլայների կանգառներում, հեռախօսի տնակներում, վերելակներում, ծառերին եւ նստարանների վրայ, դպրոցական գոյքի վրայ, յուշարձաններին, ատոբուսների կայանների կամուրջների սիւներին, շէնքերի, տների պատերին, ատոբուսների եւ գնացքների ներսում եւ դրսի հատուածում: Գրութիւնները կարող են կազմուած լինել նկարներից, սիմվոլներից, առանձին բառերից եւ անուններից, բառակապակցութիւններից, նախադասութիւններից, բանաստեղծութիւններից, երկխօսութիւններից, արտայայտութիւններից: Գրաֆիտի անելու համար կարող է օգտագործուել ցանկացած գործիք, որը հետք է թողնում մակերեսին՝ կաւիճ, մատիտ, գրիչ, մարկեր, այրողոլ ներկ, գունաւոր կաւիճներ, դանակ, փայտ»⁴:

Նման տեխնիկական կարճ սահմանում է տալիս նաեւ Օքսֆորդի բառարանը՝ Գրաֆիտի - գիր կամ նկար՝ գրուած անօրինական, քերծուել է կամ փորուել պատի կամ այլ մակերեւոյթի վրայ հասարակական վայրում⁵:

Ինչ վերաբերում է վիմագրութեանը, ապա այն նոյնպէս մարդու կողմից երկրի վրայ իր հետքը թողնելու միջոց է: Այն գիտակարգ է, որ ուսումնասիրում է կոշտ նիւթերի՝ քարի, մետաղի, կերամիկայի վրայ արուած արձանագրութիւնների բնոյթը եւ բովանդակութիւնը՝ տալով դրանց դասակարգումը՝ համաձայն ուսումնասիրուելիք վիմագրի ստեղծման ժամանակի ու մշակութաբանական համատեքստի: Պահպանել են հազարաւոր արձանագրութիւններ, որոնք փորագրուել են ժայռաբեկորների, տաճարների ու վանքերի, տարատեսակ հասարակական շինութիւնների եւ սահմանաբաժան քարերի վրայ: Այդ վիմագրերը, իրենց բնոյթով լինելով շինարարական, նուիրատական, յիշատակագրային, կարող են լինել եւ՝ ընդարձակ վաւերագրեր, եւ՝ կարճ, համառօտ յիշատակագրութիւններ⁶:

Վերը նշուածից կարելի է ենթադրել, որ գրաֆիտին եւ վիմագրութիւնը տեխնիկական շատ կէտերում ունեն նմանութիւններ եւ համընկումներ կամ գրեթէ նոյնական են: Այս առումով ցցուն են ռուսական բացատրական բառարանում գրաֆիտին տրուած մի քանի բացատրութիւններ 1. Հին եւ միջնադարեան մոզական, կենցաղային եւ նմանատիպ նկարներ եւ գրութիւններ՝ արուած մետաղի, ամանների եւ նմանատիպ այլ իրերի վրայ եւ այլն⁷: Ինչը առկայ է նաեւ հայկական միջավայրում ու մտնում է նաեւ վիմագրութեան գիտակարգի սահմանման մէջ: 2. Գրութիւններ արուած շինութիւնների վրայ՝ ձեռքով: 3. Նկարչական տեխնիկա եւ ստեղծագործութիւն արուած տուեալ տեխնիկայով⁸: Մեզ են հասել բազմաթիւ միջնադարեան արձանագրութիւններ արուած գունանիւթով՝ հիմնականում կարմիր եւ սպիտակ⁹: 4. Ոչ նորմատիւ փողոցային ար-

³ Դիլանեան Ամ., «Գրաֆիտի» երեւոյթի սահմանման խնդրի շուրջ, անտիպ:

⁴ Koch W. A. Simple Forms: An Encyclopaedia of Simple Text-Types in Lore and Literature. Bochum, 1994, p. 111:

⁵ Graffiti // English Oxford Living Dictionaries <https://en.oxforddictionaries.com/definition/graffiti>.

⁶ Դիւան Հայ Վիմագրութեան, պրակ I, կազմեց՝ Հ. Ա. Օրբելի, Երեւան, 1966, էջ VI:

⁷ Большой толковый словарь русского языка / сост. и гл. ред. С. А. Кузнецов. - СПб.: Норинт, 2000, 1536 с.

⁸ Նոյն տեղում:

⁹ Գունանիւթով են արուած վիմագրեր Զնշդու Սուրբ Կարապետ վանքում, Երեւան փաղափ Քանափեռ համայնքի Սուրբ Յակոբ եկեղեցում եւ այլն:

ուեստ¹⁰:

Ուեստի գրաֆիտիին միջնադարում տարբերակելու համար առաջարկում ենք բովանդակային առումով սահմանել հետեւեալ կերպ¹¹. գրաֆիտի տեքստերը կարող են լինել՝ դիոլոգային, թիրախաւորուած, ծածկագրուած, ինֆորմատիւ, պատմողական, ուսուցողական: Սովորաբար գրաֆիտի տեքստերը չեն ենթարկւում որեւէ կառուցւածքի, կանոնների. դրանք աւելի բաց են, անկաշկանդ, քանի որ իրենցից ենթադրում են անանուն արտայայտման ձեւ:

Նման գրութիւնները հայ միջնադարեան վիմագրութեան մէջ բազմաթիւ են, սակայն դրանք չեն առանձնացուել եւ չեն ընկալուել միջնադարում որպէս բացասական երեւոյթ: Հասկանալու համար դրա պատճառները՝ նշենք գրաֆիտի երեւոյթի ժամանակակից բացասական ընկալման փաստարկման մի քանի պատճառ: Դրանցից ամենատարածուածը եւ գլխաւորը ճարտարապետական տեսքի խաթարումն է: Միջնադարում ճարտարապետական տեսքի մասին պատկերացումները եղել են այլ կամ կարող ենք նոյնիսկ ասել, որ չեն եղել: Որեւէ միջնադարեան հեղինակի, ձեռագիր արտագրող գրչի մօտ չենք հանդիպել բողոք, քննադատութիւն ոչ պաշտօնական գրութիւնների դէմ կամ չենք հանդիպել որեւէ դէպք, երբ որեւէ գրութիւն ընկալուի որպէս ոչ պաշտօնական, այսպէսով կամ անտեղի /**Հայկ Յակոբեան**/: Չեն եղել, մասնաւորապէս, վանդալիզմի այն ընկալումները, որը բնորոշ է մեր ժամանակներին: Այսպէս Հաւուց թառի վանքում, 1720-1721 թթ.-ին, Աստուածատուր Համադանցի կաթողիկոսը, սկսում է կառուցել Սուրբ Կարապետ անաւարտ մնացած եկեղեցին՝ օգտագործելով վանքի հնագոյն քարերը՝ արձանագրութեան բեկորներով, զարդային մոթիվներ պարունակող հատուածներով¹²: Վերոնշուածի մասին երջանկայիշատակ յուշարձանագէտ Սամուէլ Կարապետեանը, ելնելով 21-րդ դարի կառուցապատման, վերականգնողական չափանիշներից, իր ֆէյսպուքեան էջում ունի քննադատական հրապարակում, որտեղ կաթողիկոսը մեղադրւում է վանդալիզմի եւ 21-րդ դարի կառուցապատման, վերականգնողական չափանիշները չպահելու մէջ¹³:

2. Բազմաթիւ գրաֆիտիներ ընկալնւում են որպէս արկածախնդիր մարդկանց կողմից արուած գրութիւններ, որոնք անօրինական են, չթոյլատրուած: Սակայն, միջնադարում նմանատիպ հետքեր թողողները չեն ընկալուել որպէս արկածախնդիր, քանի որ այդ մարդիկ եղել են հիմնականում ուխտաւորներ, որոնք արձանագրել են իրենց ուխտագնացութեան փաստը: Ուխտագնացութեան փաստի արձանագրման յաճախադէպ օրինակ է եկեղեցիների պատերին խաչային քանդակներով զուգորդուող արձանագրութիւնները: Այդ վիմագրերի փորագրումը կարծես թէ արգելուած չի եղել, սակայն չի էլ կրել, թերեւս, պաշտօնական, հոգեւոր կամ աշխարհիկ ղեկավարիների պարտադիր թոյլտուութիւնը ենթադրող բնոյթ, քանի որ չի ընկալուել որպէս բացասական, անթոյլատրելի արարք: Այսպէս Աղթամարի կաթողիկոս Գրիգորիս Մեծը (մօտ 1512 - մօտ 1544 թթ.) նոյնպէս թողել է նմանատիպ գրաֆիտային բնոյթ կրող, այսինքն պաշտօնական, բանաձեւուած ձեւակերպումներից զուրկ արձանագրութիւն՝ ՁՄ(Ե)Ծ Գ(Բ)ԻԳ(ՈՐ)ԻՍ Կ(Ա)Թ(Ո)Ղ(Ի)Կ(ՈՍ)Ն (ՅԻՇԵՅԷՔ?)¹⁴: Աղթամարի գրաֆիտային բնոյթ կրող վիմագրերից խօսում է նաեւ ակադեմիկոս Յովսէփ Օրբելին՝ իր դեռեւս անտիպ օրագրում նշելով, որ Աղթամարի արձանագրութիւնների ընդօրինակմանը զուգահեռ,

¹⁰ Большой толковый словарь русского языка / сост. и гл. ред. С. А. Кузнецов. - СПб.: Норинт, 2000, с. 1536.

¹¹ Մանրամասն տե՛ս Ա. Դիլանեան, Նշում աշխ.:

¹² Մաթեոսեան Կ., Հաւուց թառի վանքը, Երեւան, «Մուղնի» հրատ., 2012, էջ 48:

¹³ <https://www.facebook.com/berdagh/posts/1059997430851920>:

¹⁴ Յակոբեան Հ., Դաշտային վիմագրական նոթատետր, էջ 5:

նա արտագրել է նաեւ որոշ կարեւոր տեղեկութիւններ հաղորդող նուիրատական, եւ ոչ նուիրատական բնոյթ կրող գրաֆիտներ¹⁵:

Այսպիսով այդ վիմագրերը հանգիստ կարելի է դիտարկել որպէս միջնադարեան գրաֆիտի:

Բերենք հայկական միջնադարեան գրաֆիտներէից մի քանի օրինակներ՝



1. ԽԱԶԵՐՍ ԱԿՈԲԱՅ ՈՐԴՈՅ ԵՍԱՅԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՄԵՐ ՏԵՐ ՀԱՅԼՐ], ՈՒԼՈՒՂԱՆԻՆ ԹՎ :ՋԿԴ (1515)¹⁶:



2. ԽԱԶՍ ԲԵՍՈՒՐԱԹԻՆ, ՓԱՇԱՄԷԼԻՔԻՆ Է, ԲԱԽՏԻԵԱՐԻՆ Է¹⁷:



3. ԽԱԶՍ ՈՎԱՆԻՍԻՆ Է¹⁸:

¹⁵ И. Орбели, Ахтамарские надписи, Санкт-Петербургский филиал Архива РАН, фонд 909, оп. 5, стр 5-6. Исследование выполнено при поддержке Государственного комитета по науке МОН РА и Российской и Ново-Нахичеванской Епархии Армянской апостольской церкви в рамках научного проекта № 16AAR-007.

¹⁶ Надписи Гандзасара и hАвоцпука, И. Орбели; Собрал и подготовил к печати А. Акопян, Ереван, из.-во Нор Тпагричнер, 2016, с 183.

¹⁷ Նոյն տեղում, էջ 184:

¹⁸ И. Орбели, Надписи Гандзасара и hАвоцпука, И. Орбели; с. 193.

Վերոնշուած արձանագրութիւններում, հաւանաբար, ուխտաւորները փորագրում էին ուխտին մասնակից իրենց հարազատների կամ իրենց ընտանիքի անդամների թրւով խաչեր, իսկ ովքեր որ տառաճանաչ էին՝ փորագրում էին նաեւ իրենց անունները, յաճախ անփոյթ, անհաւասարաչափ տառաձեւերով, ինչը հիմք է տալիս ենթադրելու որ այդ փորագրումները արւում էր անձամբ ուխտաւորների կողմից: Վճարունակներն ամենայն հաւանականութեամբ դրա համար վճարում էին փորագրիչներին, իսկ ոչ տառաճանաչները, որոնք նաեւ գումար չունէին վիճագիրը փորագրողին վճարելու, ենթադրաբար, սահմանափակում էին միայն խաչային քանդակներ փորագրելով՝ առանց գիր թողնելու, որը նոյնպէս կարելի է դիտարկել որպէս միջնադարեան գրաֆիտի: Նման արձանագրութիւնները եւ խաչային քանդակների օրինակները բազմաթիւ են: Յաճախ գրաֆիտիների օրինակով ուխտաւորները մատնանշում էին իրենց այցելութեան փաստը: Նման օրինակների առկայութիւնը վկայում է, ոչ միայն գրի սրբազան լինելու հանգամանքը, այլեւ որ միջնադարում գրաֆիտի երեւոյթը չի ունեցել բացասական ընկալում ժամանակի մտաւորականների, հոգեւորականների շրջանում, որոնք էլ, ըստ էութեան, ձեւաւորում են հասարակական, բացասական կարծիքը այդ երեւոյթի հանդէպ: Այլապէս կաթողիկոսը չէր թողնի գրաֆիտի-վկայութիւն կամ այն ուխտաւորները, որոնք ի վիճակի չէին վճարել գրութեան համար, կը պատժուէին:

Վերոնշեալ օրինակների մատնանշումը պատահական չէ, ու պատահական չէ նաեւ արձանագրութիւնների շուրջ փորագրուած խաչային քանդակները: Այդ խաչերը հերթական անգամ հիմնաւորում են, որ մենք գործ ունենք միջնադարեան «գրաֆիտի» երեւոյթի հետ՝ գրաֆիտիին սրբազան գիր ընկալելու միջնադարեան մի երեւոյթի հետ, ինչ նաեւ դիտարկում էր կրօնական պրակտիկայի շրջանակներում¹⁹: Այս հանգամանքը հաստատում են նաեւ Ֆրանսիացի ուղեգիր Դիւբուանի նկարագրութիւնները Ակոռի վանքի ուխտագնացութիւնների մասին, որտեղ նշում է, որ ուխտաւորները վանքի պատերին խաչեր էին փորագրում՝ յիշուելու ու իրենց Աստծու «պաշտպանութեանը» յանձնելու համար²⁰:

Սրբազան գիր լինելու հանգամանքի մասին խօսում է նաեւ այն, որ գրաֆիտիները արւում էին սիրուած/պոպուլեար սրբավայրերի վրայ²¹: Քրիստոնէական պատկերագրութեան մէջ ամէն մի պատկեր ուներ իր խորհրդաբանութիւնը եւ տեղը եկեղեցու մէջ: Այն հիմնականում պիտի հաւատացեալին պատմեր, ներկայացներ Հին/Նոր Կտակարանի/Աստուածաշնչի բովանդակութիւնը/դոգման, պատմութիւնը: Հնարաւոր է, որ այս միջոցով հաւատացեալը իր պատմութիւնը գրում էր, թողնում էր «հոգու մի մասնիկը», միացնում էր իրեն սրբազան աւանդութեանը, սրբազան տեղում հաղորդակցւում Աստծոյ հետ²²:

Հետաքրքրական է, որ սրբավայր-շինութեան վրայ թողնուած գրաֆիտին կրկընում է համանման վիճագրերի ձեւը: Շատ յաճախ կրկնելով արձանագրութեան ձեւերը, ինչպէս վերը նշուած օրինակներում՝ խաչերի, պատկերների՝ անուններով կամ «նը-ւիրատական արձանագրութեամբ», այնպէս էլ եկեղեցու պատերին հանդիպում ենք

¹⁹ Memory on the Wall: Graffiti on Religious Wall Paintings, Véronique Plesch, Colby College Waterville, Maine, Journal of Medieval and Early Modern Studies, Duke University Press, v. 32, n. 1, winter 2002, pp. 167-197.

²⁰ F. Dubois de Montféréux, Voyage autour du Caucase, Tome III, Paris, Librairie de Gide, 1839, p. 470-471.

²¹ Бысоцкий С. А., Նշուած աշխ., էջ 39, Memory on the Wall: Graffiti on Religious Wall Paintings.

²² Marianne Ritsema van Eck, Graffiti in medieval and early modern religious spaces: illicit or accepted practice?, The case of sacro monte at Varallo, Tijdschrift voor Geschiedenis, v. 131, issue 1, p. 51-72.

կցագիր-գրաֆիտինների²³, նոյն՝ արձանագրութեան, գունաներկով արուած գրաֆիտի²⁴, որոնք ուղղուած էին մէկ Աստծուն, մէկ ապագայ սերունդներին:

Շարունակելով քննել գրի սրբազան լինելու հանգամանքը, հարկ է նշել, որ դեռեւս վաղնջական ժամանակներից խօսքը ունեցել է մոգական ուժ, յատկապէս «ցանկութեան խօսքերը», որոնք յետագայում դառնում են «ցանկութեան բանաձեւեր» (անէծքի-օրհնանքի բանաձեւերը): «Ցանկութեան խօսքերն» ունէին մոգական ուժ, հմայեական ներգործութիւն, քանի որ միտուած էին վիճակի փոփոխութեան: Բանաւոր խօսքի այս յատկանիշները խտանում, գեներացւում է յատկապէս գրաւոր խօսքի մէջ: Այսպիսով՝ առաջ է գալիս գրաւոր խօսքի պաշտամունքը: Գիրը սկսւում է նուիրաբերուել, զոհաբերուել որոշակի յատկապէս պահպանիչ ակնքալիքով: Ասպիսի պաշտպանիչ, նուիրաբերուող արձանագրութիւնները թողնուել են ուրարտական թագաւորների կողմից²⁵: Այսօր էլ շատ սրբավայրերում թողնուած գրութիւնները ունեն պահպանիչ նշանակութիւն: Երբեմն այսպիսի տեքստերը կրճատուում էին մինչեւ անուն եւ թուական: Այս հանգամանքը կարող էր կապուած լինել տեղի սակաւութիւնից, գրաֆիտին «ընդունող» նիւթի կարծրութիւնից: Կոշտ նիւթը հնարաւորութիւն չի տալիս երկար փորագրելու: Ուստի նախընտրում էին թողնել իրենց անունները, քանի որ անունը ենթագիտակցօրէն նոյնակաւացւում էր հոգու հետ, հանդիսանում էր մարդու կողը, որը կարելի էր ենթարկել բազմաթիւ կախարդանքների²⁶: Այսպիսով՝ անունը թողնելով, ուխտաւորը պաշտպանում էր շար ուժերից, ինչն էլ ենթադրում է Աստծու պաշտպանութեան ակնկալիք:

Կա մտայնութիւն, որ գրաֆիտի երեւոյթը իր բնոյթով հակասում է վիճագրութիւնը՝ այդ գիտակարգի բնոյթին, էութեանը: Երբեմն, կարծես իրար հակասող, գիր թողնելու այս երկու ձեւերը ոչ միայն արտաքին՝ կառուցուածքային առումով են համընկնում, այլ նաեւ՝ բովանդակային: Ինչպէս արդէն վերը նշուած օրինակներում՝ ուխտաւորների թողած հետքերը (ուխտաւորների անունների յիշատակում, նուիրատական, պահպանիչ/պաշտպանիչ, շնորհակալական եւ այլ բնոյթի տեքստեր) եւ միջնագրում, եւ 20-րդ դարում ունեցել են նաեւ ուխտաւորների անձնական սահմանը նշելու միտում: Ինչպէս հին ժամանակներում, այնպես էլ այսօր կարող ենք հանդիպել գրութիւնների կամ անունների, որոնք մատնանշում են սահմանը: Այսօր էլ կարող ենք հանդիպել շէնքերին կամ տան վրայ գրուած անունների, որոնք ենթադրում են, թէ դա տուեալ մարդու տունն է կամ այս թաղի հեղինակութիւնը տուեալ անձն է, ում ունեցուցքի վրայ կայ համապատասխան գրութիւն²⁷: Դրա վառ օրինակն է մեքսիկական բանդաների կողմից արուող <թեգինգը>՝ գրաֆիտին, որպէս իրենց

²³ Դիլանեան Ամ., Դան, 30 Յունիսի 2019, Գիւմրիի եկեղեցիներ:

²⁴ Դիլանեան Ամ., Դան, 25 Օգոստոսի 2020, Հաղարծին:

²⁵ «Խալդի Աստծուն՝ տիրոջը, Ռուսայիորդի Արգիշտին այս արձանագրութիւնը բարձրացրեց իր կենաց համար»: Ճիշդ է ուրարտական արձանագրութիւնները կառուցուածքային առումով կրկնում են ասորա-բաբելոնականին, սակայն բովանդակային առումով նրանք ունեն տարբերութիւններ: Ասորա-բաբելոնական արձանագրութեան տեքստերը ուղղուած են դէպի ապագայ սերունդներ, իսկ ուրարտականները դիմում են Աստուածներին: Ինչպէս նաեւ ուրարտական «նուիրատական արձանագրութիւնները» երբեմն սահմանափակուում էին միայն նըւիրատու թագաւորի եւ Աստծոյ անունով, խախտելով յայտնի արձանագրութեան կանոնակարգը՝ տեւ Յարութիւնեան Ա., Անէծքի եւ օրհնանքի ժանրը հայ բանահիւտութեան մէջ, հայկական ՍՄՀ ԳԱԱ հրատ., Երեւան 1975, էջ 5-35, 272:

²⁶ Մարգարյան Ն., Յանդիմանանք-դարձուածք մի հին սովորութեան մասին, էջ 51, Երեւանի պետական համալսարանի հանդէս, 1, 1998, 45-52:

²⁷ Միջնադարում նոյնպէս, յաճախ, իշխանները թողել են իրենց տիրապետութեան սահմաններում առկայ վանքերի վրայ արձանագրութիւններ՝ իւրայատուկ սահման գծելով ու յիշեցնելով իրենց տուեալ հողերի տիրակալ լինելու հանգամանքը: Ասածիս վառ օրինակ է Խաչէնի իշխան Հասան Զալալ Դոլայի թողած արձանագրութիւնը Գանձասարի վանքի հիւսիսային պատին՝ ներսից - И. Орбели, Надписи Гандзасара и hАвоцптука, с. 92-95:

սահմանի, տարածքի նշում: Թերեւս նմանօրինակ մտայնութեան երեւոյթ կարելի է դիտել նաեւ ուրարտական, արտաշէսեան շրջանի սահմանաբաժան քարերը:

Այսօր գիտութեան մէջ տեղի է ունենում գրաֆիտիի որպէս բացասական երեւոյթի վերագնահատում²⁸: Պէտք է նշել նաեւ, որ գրաֆիտիները եկել են լրացնելու այն բացը, որը գրաւոր, վիմագրական տուեալները մեզ չեն թողել: Այսպէս հնագոյն նիմֆեա քաղաքի Դեմետրէի տաճարի անուանումը հնարաւոր է եղել պարզել շնորհիւ տեղում յայտնաբերուած կերամիկայի վրայ թողնուած խզբզոցի²⁹: Հայկական կերամիկայի վրայ թողնուած տարբեր նշանների քննութիւնը նոյնպէս սպասում է իր ուսումնասիրողին: Այսպէս Անիում Յովսէփ Օրբելին 11 տախտակի վրայ արտագրել եւ նմանահանել է հարիւրից աւել գրաֆիտային բնոյթ կրող նշաններ, տառեր³⁰, որոնց հրատարակումը յետագայում կը հանդիսանայ այս զեկոյցի տրամաբանական շարունակութիւնը: Դրանք շատ յաճախ հանդիսանում են կրօնական պրակտիկաներ, որոնք կարծես թէ միջնադարից մինչ այսօր պահպանուել են որպէս սրբազան գրեր:

Մեր օրերում էլ գրաֆիտային բնոյթի գրութիւնները ուղղակի կամ անուղղակի վկայում են այդ արձանագրութիւնների պահպանիչ լինելու հանգամանք³¹:

Գրաֆիտիները ոչ միայն լրացնում են պատմական բացը, հանդիսանում կրօնական պրակտիկա, այլ նաեւ երբեմն փրկում հուշարձանը³²՝ վերականգնելով կամ օգտագործելով գրաւոր գրի, արձանագրութեան շինարարական, պաշտամունքային, մշակութային յուշարձանների պահպանութեան գործառնոյթը³³:

Այսպիսով կարող ենք ասել, որ վիմագիրն ու գրաֆիտին գիր թողնելու այն ձեւերն են, որոնք ի սկզբանէ հանդիսացել են հետք թողնելու մարդկային ձգտում եւ հաւանաբար ունեցել մէկ ընդհանրական ձեւ, մէկ աղբիւր, որոնցից մէկը կանոնիկացւել է, ստացել պաշտօնական բնոյթ, միւսը մնացել է որպէս աւելի ազատ, ոչ պաշտօնական յիշատակութեան ձեւ, սրբազան գիր, որոնք սկզբնական շրջանում եղել են միմեանց կողքին՝ առանց իրար հետ «մարտնչելու»³⁴ կամ հակադրուելու՝ ընկալուելով հաւասարազօր երեւոյթներ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Դեռեւս հնագոյն ժամանակներից մարդն ամէն կերպ փորձել է արձանագրել իր գոյութիւնը, թողնելով իր հետքը երկրի վրայ՝ Աստծուն հաշուետու լինելու ձգտմամբ եւ իր ժառանգութիւնը, յիշատակը պահպանելու միտումով: Վերը նշուածը իրագործելու եղանակներից էր պատկերը, իսկ գրի գիւտից յետոյ՝ արձանագրութիւնը, ձեռագիրը,

²⁸ Forster A. M., Vettese-Forster S., Borland J., Evaluating the cultural significance of historic graffiti: [file:///C:/Users/User/Downloads/Evaluating-the-cultural-significance-of-historic-graffiti%20\(1\).pdf](file:///C:/Users/User/Downloads/Evaluating-the-cultural-significance-of-historic-graffiti%20(1).pdf)

²⁹ И. И. Толстой, Греческие граффити древних городов северного Причерноморья, из.-во АН СССР, М.-Л., 1953, стр. 4

³⁰ И. Орбели, Ахтамарские надписи, Санкт-Петербургский филиал Архива РАН, фонд 909, оп. 6.

³¹ Դիւանեան Ամ., Դան, Յովիս-Օգոստոս 2019, Մաստարա, Թալին, Բարձրաշէն լուսանկարների թղթապանակներ:

³² Ըստ ազգագրագէտ Լիլիթ Սիմոնեանի բանասիր հաղորդման, Բարձրաշէն Սուրբ Գրիգոր վանքը խորհրդային տարիներին՝ ստալինեան տետրի ժամանակ, փրկուել է ակտուելոց շնորհիւ այն բանի, որ վանքի պատերին իր անունը գրաֆիտի տեսքով փորագրել է ամենայն հայոց բանաստեղծ Յովհաննէս Թումանեանը – Լիլիթ Սիմոնեան, Դաշտային ազգագրական նիսեր, 2017:

³³ Յարութիւնեան Ա., Նշուած աշխ., էջ 25-26:

³⁴ Juliet Fleming, 'Wounded walls: graffiti, grammarology, and the age of Shakespeare', *Criticism* 39.1 (1997) 1-30, esp. 4-5; this essay has recently been republished in amended form in: Juliet Fleming, *Graffiti and the writing arts of Early Modern England* (London 2001) 29-72, Matthew Champion, *Medieval graffiti: the lost voices of England's churches* (London 2015) .

տպագիր գիրքը, նկարը, ելեկտրոնային գիրքը:

Սրանց կողքին յայտնում է մի «նոր» երեւոյթ, որը մեզ ծանօթ է «գրաֆիտի» անունով, ինչը ստանում է բացասական ընկալում եւ գնահատական 20-րդ դարի 60-ականներին յետոյ:

Յօդուածում քննում է այն հանգամանքը, որ գրաֆիտիները, վիմագրերին զուգահեռ, ոչ միայն լրացնում են պատմական բացը, հանդիսանում կրօնական պրակտիկա, այլ նաեւ երբեմն փրկում յուշարձանը՝ վերականգնելով կամ օգտագործելով գրաւոր գրի, արձանագրութեան շինարարական, պաշտամունքային, մշակութային յուշարձանների պահպանութեան գործառնոյթը:

Յօդուածում ապացուցւում է, որ վիմագիրն ու գրաֆիտին գիր թողնելու այն ձեւերն են, որոնք ի սկզբանէ հանդիսացել են հետք թողնելու մարդկային ձգտում եւ հաւանաբար ունեցել մէկ ընդհանրական ձեւ, մէկ աղբիւր, որոնցից մէկը կանոնիկացւել է, ստացել պաշտօնական բնոյթ, միւսը մնացել է որպէս աւելի ազատ, ոչ պաշտօնական յիշատակութեան ձեւ, սրբազան գիր, որոնք սկզբնական շրջանում եղել են միմեանց կողքին՝ առանց իրար հետ «մարտնչելու» կամ հակադրուելու՝ ընկալուելով հաւասարազօր երեւոյթներ:

ՀԱՅԿ ՅԱԿՈԲԵԱՆ

ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ, պ.գ.թ., գիտաշխատող: Երեւանի Մաշտոցեան Մատենադարան, գիտաշխատող, Հայ-սլաւոնական համալսարան, Արեւելագիտութեան ինստիտուտ, դասախօս

ԱՄԱԼՅԱ ԴԻԼԱՆԵԱՆ

ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ, կրտսեր գիտաշխատող



ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԱՅԼԵԻԱՅԼՔ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԲԵԹՂԵՀԷՄԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ ՀԵՏ

26 Օգոստոս, 2021-ին, Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ Գերշ. Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան՝ ընկերակցութեամբ Բեթղեհէմի Ս. Ծննդեան տաճարի տեսուչ՝ Հոգշ. Տ. Ասպետ Ծ. Վարդապետ Պալեանի եւ Սուրբ Աթոռոյս Դիւանապետ՝ Հոգշ. Տ. Կորիւն Վարդապետ Բաղդասարեանի այցելեց Բեթղեհէմի նահանգապետարան եւ հանդիպում ունեցաւ նահանգապետ Տիար Քէամալ Ահմատ Հասան Ամիրի հետ: Հանդիպման ընթացքին Լուսարարապետ Սրբազան Հայրը նահանգապետին փոխանցեց Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի նամակը ի մասին Բեթղեհէմի հայ համայնքի:

ՏԱՐԵԿԱՆ ԳԻՇԵՐԱՅԻՆ ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ Ս.

ԱՍՏՈՒԱԾԱՄՈՐ ՏԱՃԱՐ

26 Օգոստոս, 2021-ին, կէս գիշերէն ետք ժամը 2:45-ին, Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը, ժառանգաւոր սաներ եւ Սաղիմահայ ուխտաւորներ կատարեցին իրենց տարեկան ուխտագնացութիւնը դէպի Աստուածամօր տաճար, ուր Ս. Կոյսի Գերեզմանին վրայ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Պատարագեց եւ քարոզեց Հոգեշնորհ Տ. Գէորգ Աբեղայ Հայրապետեան:

ՏԱՐԵՄՈՒՏ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Հինգշաբթի, 2 Սեպտեմբեր, 2021-ին, Դպրոցական շրջանի տարեմուտին Սրբոց Թարգմանչաց վարժարանն ընդունեց 167 աշակերտ-աշակերտուհիներ: Տարեմուտի արարողութիւնը կատարուեցաւ առաւօտեան ժամը 8-ին, ներկայութեամբ Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեանի եւ Միաբանութեան անդամներուն: Վարժարանի տեսուչ՝ Արժ. Տ. Արտէն Քհնյ. Աբրահամեանի բարի գալուստի խօսքէն յետոյ, Սրբազան Հայրը ողջունեց ներկաները եւ քաջալերեց աշակերտները ուսումնական տարին նոր եռանդով սկսելու եւ տրուած գիտելիքը լաւագոյնս իւրացնելու, իսկ ուսուցիչներուն մաղթեց համբերութիւն գալիք տարուայ ողջ ընտթացքի համար: Հանդիսութենէն ետք Լուսարարապետ Սրբազան Հայրը, հազելոր հայրերուն հետ միասին պատուուեցան Տեսչարանին մէջ:

Սրբոց Թարգմանչաց վարժարանը Սուրբ Երկրի միակ հայկական ամէնօրեայ կրթթօճախն է՝ հիմնադրուած 1929 թուականին, Եղիշէ Դուրեան Պատրիարքի օրօք:

ՏԱՐԵՄՈՒՏ ԺԱՌԱՆԳԱԻՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ

ԸՆԾԱՅԱՐԱՆԻ

Չորեքշաբթի, 8 Սեպտեմբեր, 2021-ին, առաւօտեան ժամը 9-ին, կատարուեցաւ Պատրիարքութեանս ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի 179-րդ ուսում-

նական տարեշրջանի վերաբացումը: Վերամուտի արարողութեան ներկայ էին Ս. Յակոբեանց Միաբանութեան անդամներ եւ ուսուցչական կազմը, գլխավորութեամբ՝ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանի: Միաբանութիւնը դիմաւորուեցաւ Վարժարանի քայլերգի երգեցողութեամբ, ապա, ըստ աւանդութեան, ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի Տեսուչ՝ Հոգեշնորհ Տ. Թէոդորոս Ծ. Վարդապետ Զաքարեան Աւետարանէն ընթերցաւ «Սերմնացանի» առակը: Աւետարանի ընթերցումէն յետոյ, Տեսուչ Հայր Սուրբը բարի գալուստի խօսքեր ըսաւ ներկաներուն եւ յաջողութիւն մաղթեց ուսանողներուն: Ապա հրաւիրեց Սրբազան Հայրը, որ ժառանգաւոր սաներուն քաջալերեց իր հայրական խրատներով ու բարի երթ մաղթեց անոնց: Իր խօսքին մէջ Սրբազան Հայրը շնորհաւորեց նաեւ ուսուցիչները եւ մաղթեց անոնց համբերատար գործունէութիւն:

Հանդիսութենէն ետք Միաբանութիւնը եւ ուսուցչական կազմը պատուուեցան ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի ուսուցչարանին մէջ:

ԴՊՐՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏԸԻՉՈՒԹԻՒՆ

Շաբաթ, 2 Հոկտեմբեր, 2021-ին, յետ երեկոյեան ժամերգութեան, ձեռամբ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի, եւ առընթերակայութեամբ ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի Տեսուչ՝ Հոգ. Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեանի եւ Հոգ. Տ. Արշակ Աբղ. Ղազարեանի, ժառանգաւորաց Վարժարանի 11 ուսանողներ եւ Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի ծառայող միաբան՝ Կարէն Գասպարեան, ստացան Դպրութեան աստիճան եւ յետ այսու Ս. Աթոռոյս պիտի ծառայեն իբրեւ դպիրներ:

«Սիոն» կը մաղթէ, որ Աստուած զօրացնէ անոնց եւ արժանացնէ գալիք բարձր աստիճաններու:

Հայ Առաքելական Եկեղեցւոյ մէջ կրտսեր աստիճանաւորներուն (ընթերցող-գրաւարդաց, դռնապան, ջահընկալ, երգմանցուցիչ) տրուող ընդհանուր անուանում մըն է դպիրը:

Դպիր կարգելու յատուկ արարողութիւնը դեռ ձեռնադրութիւն չէ, այլ՝ տըւչութիւն, որով մանկանը որոշ իրաւունքներ կը տրուին: Դպիրը ներկայիս կը ստանձնէ եկեղեցւոյ տարբեր ծառայողներու պարտականութիւններ, կարգուկանոն պահել, ծիսական արարողութիւններու ժամանակ կերոն (մոմակալ) բռնել, Աստուածաշունչ ընթերցել եւ աղօթել, կամ ըլլալ սաղմոսերգող եւ, առհասարակ, երգեցիկ խումբի անդամ:

ՏԱՐԵԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ

ԴԷՊԻ ՌԱՄԼԷԻ Ս. ԳԷՈՐԳ ՎԱՆՔ

Կիրակի, 17 Հոկտեմբեր, 2021-ի առաւօտեան, Սբ. Գէորգ Զօրավարի տօնին առիթով, սովորութեան համաձայն, կատարուեցաւ ուխտագնացութիւն դէպի Ռամլէի Սբ. Գէորգ վանք, ուր մատուցուեցաւ սուրբ եւ անմահ պատարագ: Պատարագեց եւ քարոզեց՝ Հոգ. Տ. Գէորգ Աբեղայ Հայրապետեան:

Սուրբի մասունքները 530 թուականին տեղափոխուած են Պաղեստին, Ռամլէ քաղաքը, ուր ի պատիւ սուրբին հայեր, լատիններ, յոյներ եւ ասորիներ եկեղեցիներ շինած են:

ՖՐԱՆԶԻՍԿԵԱՆ ՈՒԽՏԻ ՆՈՐ ՄԵԾԱՒՈՐԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՄՈՒՏՔԸ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐ

Չորեքշաբթի, 20 Հոկտեմբեր, 2021-ին, Ֆրանչիսկեան Ուխտի նոր մեծաւոր՝ Հայր Մասիմօ Ֆուսարելի ժամանեց Երուսաղէմ եւ պաշտօնական մուտք ունեցաւ Ս. Յարութեան տաճարէն ներս: Հայր Ֆուսարելի Հին քաղաքի՝ Նաֆայի դրան մօտ դիմաւորուեցաւ Ս. Յարութեան տաճարի երեք իրաւատէր համայնքներու ներկայացուցիչներէն, որմէ ետք Ֆրանչիսկեան միաբանութեան եղբայրներէն կազմուած թափօրով առաջնորդուեցաւ դէպի Ս. Յարութեան տաճար:

Դիմաւորութեան արարողութեան Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան ներկայացուցիչներն էին Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեան, Դիւանապետ՝ Հոգշ. Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան եւ Աւագ Թարգման՝ Հոգշ. Տ. Վազգէն Աբղ. Ալէքեան:

Տաճարի մուտքին Հայր Ֆուսարելի դիմաւորուեցաւ Ս. Յարութեան տաճարի իրաւատէր երեք համայնքներու տեսուչներէն: Հայոց տեսուչը Հոգշ. Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեանն է:

ՏԱՐԵԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՓԻԼԻՊՊՈՍԻ ԱՂԲԻԻՐ

Շաբաթ, 27 Նոյեմբեր, 2021-ին, Սրբոց Առաքելոցն Անդրէի եւ Փիլիպպոսի տօնին առիթով Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը, Ժառանգաւոր սաներ եւ Սաղիմահայ ուխտաւորներ կատարեցին իրենց տարեկան ուխտագնացութիւնը դէպի «Փիլիպպոսի աղբիւր» սրբավայր, ուր տեղի ունեցաւ մասնաւոր արարողութիւն, ապա քարոզեց Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեան, որմէ յետոյ ներկաներուն մատաղ բաժնուեցաւ:

«Փիլիպպոսի աղբիւր» սրբավայրի մասին յիշուած է Գործք Առաքելոցի մէջ: Փիլիպպոս Առաքեալ այս վայրին մէջ մկրտած է Եթիոպացի ներքինիին (Գործք, Ը:26-40):

ՏԱՐԵԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՅՈՊՊԷԻ Ս. ՆԻԿՈՂԱՅՈՍ ՀԱՅՈՅ ՎԱՆՔ

Շաբաթ, 18 Դեկտեմբեր, 2021-ին, Ս. Նիկողայոս Սքանչելագործ Հայրապետի տօնին առիթով, կատարուեցաւ տարեկան ուխտագնացութիւն դէպի Յոպպէի Ս. Նիկողայոս Հայոց վանք, որուն մասնակցեցան հայ ուխտաւորներ Իսրայէլի բոլոր քաղաքներէն:

Այս առիթով Երուսաղէմէն Ս. Նիկողայոսի վանք տարուած էր Ս. Հայրապետին մասունքը, որուն Ս. Պատարագէն ետք իրենց ուխտն ու երկրպագութիւնը կատարեցին ներկայ հաւատացեալներ, ապա տեղի ունեցաւ սիրոյ ճաշ:

Պատրաստեց՝ ՆԵՐՍԵՏ ԱԲՂ. ԱԼՈՅԵԱՆ



ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

Կիրակի, 1 Օգոստոս.- Զ. Կիրակի զկնի Հոգեգալստեան: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտօնեցաւ ի Ս. Հրեշտակապետաց, ապա Միաբան Հայրեր մեկնեցան Ս. Յարութեան տաճար: Ս. Պատարագը մատուցուեցաւ մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան:

Ուրբաթ, 6 Օգոստոս.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 7 Օգոստոս.- Յիշատակ Տապանակին Հնոյ եւ Տօն Նորոյս Ս. Եկեղեցւոյ: Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Էջմիածին: Ժամարարն էր Տ. Արշակ Աբղ. Ղազարեան:

Երեկոյեան, Վարդավառի Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը:

Իրիկնադէմին Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ պաշտօնեցան «Եկեցէի» եւ Հսկման արարողութիւնները: Հանդիսապետն էր Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 8 Օգոստոս.- Վարդավառ: Տօն Այլակերպութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Յետ Առաւօտեան ժամերգութեան, հանդիսապետութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր կատարեցաւ օրուան Անդաստանը ի Ս. Յակոբ: Ս. Պատարագը Աւագ Սեղանին վրայ մատուցեց եւ քարոզեց Տ. Պարետ Ծ. Վրդ. Փրէջեան:

Երկուշաբթի, 9 Օգոստոս.- Յիշատակ մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Փրկչի մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան: Յաւարտ Ս. Պատարագի մատրան գաւիթին մէջ կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Ուրբաթ, 13 Օգոստոս.- Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 14 Օգոստոս.- Սրբոցն Թադէոսի Առաքելոյն մերոյ եւ Սանդիստոյ կուսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան:

Կիրակի, 15 Օգոստոս.- Բ. Կիրակի զկնի Վարդավառի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտօնեցաւ ի Ս. Հրեշտակապետաց, ապա Միաբան Հայրեր մեկնեցան Ս. Յարութեան տաճար: Ս. պատարագը մատուցուեցաւ մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան: Յետ Ս. Պատարագի ձեռամբ Լուսարարապետ Սրբազան Հօր եւ առնթերակայ Հայր Սուրբերու կատարեցաւ «Խաղողօրհնէք»-ի արարողութիւն, ապա օրհնուած խաղողը բաժնուեցաւ հաւատացեալներուն:

Երկուշաբթի, 16 Օգոստոս.- Սկիզբ Աստուածամօր Վերափոխման տօնը կանխող 14-օրեայ Ս. Պատարագներու:

Շաբաթ, 21 Օգոստոս.- Եփեսոսի Սուրբ Ժողովոյն երկու հարիւր հայրապետացն: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտօնեցաւ ի Ս. Յակոբ: Օրուան Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատուցեց Տ. Վազգէն Աբղ. Ալէքեան:

Կիրակի, 22 Օգոստոս.- Գ. Կիրակի զկնի Վարդավառի: Գիշերային ժամերգութիւնը պաշտօնեցաւ ի Ս. Հրեշտակապետաց, ապա Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Ս. Աստուածածնայ տաճար, ուր Ս. Կոյսի Գերեզմանին վրայ պատարագեց Տ. Տիրան Աբղ. Յակոբեան: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Ուրբաթ, 27 Օգոստոս.- Նախատօնակին ի Ս. Էջմիածին եկեղեցին հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 28 Օգոստոս.- Տօն Շողակաթի Ս. Էջմիածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի ձախակողմը գտնուող Ս. Էջմիածին եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Տ. Աղան:

Աբղ. Գոգչեան:

Կէսօրէ ետք Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Աստուածածնայ տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու Վերափոխման նախատօնակը:

Գիշերասկզբին, նոյն վայրին մէջ պաշտուեցան «Եկեցե՛ք»-ի եւ Հսկման ժամերգութիւնները: Հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 29 Օգոստոս.- Վերափոխումն Ս. Աստուածածնի: Առաւօտուն Լուսարարապետ Ս. Հօր գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով մեկնեցան Գեթսեմանիի պարտէզ եւ «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցեւ քարոզեց, ապա «Անդաստան»-ի արարողութեան նախագահեց Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան:

Երկուշաբթի, 30 Օգոստոս.- Բ. օր Վերափոխման: Յիշատակ մեռելոց: Ս. Պատարագը մատուցեցաւ Ս. Փրկչի մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Արտէն Քհնյ. Աբրահամեան: Յաւարտ Ս. Պատարագի մատրան գաւիթին մէջ կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Ուրբաթ, 3 Սեպտեմբեր.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Լուսարարապետ Արք. Բազան Հայրը:

Շաբաթ, 4 Սեպտեմբեր.- Է. օր Վերափոխման: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ձախակողմեան դասի մէջ գտնուող Ս. Աստուածածնի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Խաղ Վրդ. Ծոնտուրեան:

Երեկոյեան նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 5 Սեպտեմբեր.- Ը. օր Վերափոխման: Ըստ սովորութեան, Տեսչական Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան երաշխաւոր Ս. Աստուածածին մատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Ս. Յարութեան Տաճարի Տեսուչ՝ Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Յաւարտ Ս. Պատարագի, կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններէն բարեյիշատակ Տ. Մաղաքիա Վրդ. Ամիրեանի հոգւոյն ի հանգիստ:

Երեկոյեան նախատօնակին ի Ս. Յակոբ նա-

խագահեց Տ. Գեղամ Ծ. Վրդ. Զաքարեան:

Երկուշաբթի, 6 Սեպտեմբեր.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Լուսարարապետ Արք. Բազան Հայրը:

Երեքշաբթի, 7 Սեպտեմբեր.- Արքեպիսկոպոս Եւ Աննայի, ծնողաց Ս. Աստուածածնի եւ կանանցն իւղաբերից: Ըստ սովորութեան Ս. Պատարագ մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ տաճարին մէջ, Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Հանդիսապետն էր Ժամօրհնող՝ Տ. Խաղ Վրդ. Ծոնտուրեան: Պատարագեց Տաճարին Տեսուչ՝ Տ. Արտակ Աբղ. Տիւշէնեան:

Շաբաթ, 11 Սեպտեմբեր.- Արքեպիսկոպոս Թովմայի, Յակոբայ եւ Շմաւոնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Արշակ Աբղ. Ղազարեան:

Նոյն օրը երեկոյեան, նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 12 Սեպտեմբեր.- Գիւտ Գօտուոյ Ս. Աստուածածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Պատարագեց Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան: Յաւարտ Ս. Պատարագի Հանդսապետութեամբ Լուսարարապետ Արք. Բազան Հօր կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն երկու օրեր առաջ Տաճարի մաքրութեան մասնակցող բարեպաշտ տիկիներու եւ օրիորդներու հանգուցեալ պարագայից հոգիներուն համար: Արարողութեան աւարտին հոգեսուրճ տըրուեցաւ տեսչարանին մէջ:

Շաբաթ, 18 Սեպտեմբեր.- Նիկիոյ Ս. Ժողովոյն երեք հայրեր ութ եւ տասն հայրապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան:

Կիրակի, 19 Սեպտեմբեր.- Դ. Կիրակի զինի Վերափոխման: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Բարսեղ Ծ. Վրդ. Գալէմտէրեան: Պատարագեց եւ քարոզեց Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Երկուշաբթի, 20 Սեպտեմբեր.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Երեքշաբթի, 21 Սեպտեմբեր.- Ծնունդ Ս. Աստուածածնի: Առաւօտուն Լուսարարապետ Ս. Հօր գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով մեկնեցան Գեթսեմանիի պարտէզ եւ «Հրա-

շափառ»-ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրւան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան:

Ս. Պատարագէն յետոյ կատարուեցաւ «Հանրապետական մաղթանք» Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան 30-ամեակին առիթով:

Շաբաթ, 25 Սեպտեմբեր.- Տօն եկեղեցւոյ ի նաւակատիս Ս. Խաչին: Ս. Պատարագը մատուցեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Վազգէն Աբղ. Ալէքեան:

Երեկոյեան Խաչվերացի մեծահանդէս նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը, որ ապա Խաչափայտի Ս. Մասունքը թափօրով Ս. Գլխադիրէն փոխադրեց Աւագ Խորան:

Իրիկնադէմին Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ պաշտուեցան «Եկեցէի» եւ Հսկման արարողութիւնները: Հանդիսապետն էր Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 26 Սեպտեմբեր.- Տօն վերացման Սրբոյ Խաչին: Առաւօտեան Մայր Տաճարին մէջ պաշտուեցան Գիշերային եւ Առաւօտեան Ժամերգութիւններ: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Խորանին վրայ մատուց եւ քարոզեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կէսօրէ ետք, նախագահութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Խաչվերացի մեծահանդէս «Անդաստան»:

Երկուշաբթի, 27 Սեպտեմբեր.- Յիշատակ մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Փրկչի մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Տիարն Աբղ. Յակոբեան: Յաւարտ Ս. Պատարագի մատրան գաւիթին մէջ կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 2 Հոկտեմբեր.- Տօն Խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Նշան վերնամատրան մէջ: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան:

Կիրակի, 3 Հոկտեմբեր.- Բ. Կիրակի զկնի Խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Արտէն Բճնյ. Աբրահամեան:

Ուրբաթ, 8 Հոկտեմբեր.- Ս. Գէորգի նախա-

տօնակը պաշտուեցաւ Ղապտոց Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 9 Հոկտեմբեր.- Սրբոյն Գէորգայ Զօրավարին, Ադոկտոսի եւ Ռոմանոսի երգեցողին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ղապտոց Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ: Պատարագեց Տ. Խաղ Վրդ. Ճոնտուրեան: Քարոզեց հանդիսապետ Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Արարողութեան աւարտին, Միաբանութիւնը հիւրասիրուեցաւ Ղապտոց վանքի տեսչէն:

Կէսօրէ ետք, Լուսարարապետ Սրբազան Հօր զխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր Ժամերգութիւնն ու նախատօնակը պաշտուեցան մեր վերմնամատրան մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան թափօր տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Կիրակի, 10 Հոկտեմբեր.- Տօն Վարագայ Ս. Խաչին: Գիշերային եւ Առաւօտեան Ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուց եւ քարոզեց Տ. Պարեա Ծ. Վրդ. Երէջեան: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 16 Հոկտեմբեր.- Սրբոց Եօթնասուն եւ երկու աշակերտացն Քրիստոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի գաւիթին մէջ գտնուող Ս. Գէորգայ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան:

Կիրակի, 17 Հոկտեմբեր.- Դ. Կիրակի զկնի Խաչի: Կատարուեցաւ Ռամէի Ս. Գէորգայ վանքի տարեկան ուխտագնացութիւնը, ի ներկայութեան Երուսաղէմի, Եաֆայի եւ Հայֆայի հայութեան: Ս. Պատարագը մատուց եւ քարոզեց Վանքին Տեսուչ՝ Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան:

Ուրբաթ, 22 Հոկտեմբեր.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 23 Հոկտեմբեր.- Ս. Թարգմանչաց Վարդապետացն մերոց՝ Մեսրոպայ, Եղիշէի, Մովսիսի Քերթովին, Դաւթի Անյաղթ Փիլիսոփային, Գրիգորի Նարեկացւոյն եւ Ներսիսի Կլայեցւոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ Աւագ Սեղանին վրայ: Պատարագեց եւ քարոզեց Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Յաւարտ Ս. Պատարագի Տ. Գեղամ Ծ. Վրդ.

Զաքարեան նախագահեց Կիւլպէնկեան գերդաստանի անդամներուն համար կատարուած Հոգեհանգստեան կարգին:

Կիրակի, 24 Հոկտեմբեր.- Ե. Կիրակի զկնի խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Ներսէս Աբղ. Ալոյեան:

Շաբաթ, 30 Հոկտեմբեր.- Ս. Աւետարանչացն՝ Մատթէոսի, Մարկոսի, Դուկասոս եւ Յովհաննոս: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան գաւիթը գտնուող հայոց Ս. Յովհաննէս Աւետարանչի մատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Ալոյեան: Ժամարարն էր Տ. Արշակ Աբղ. Ղազարեան:

Կիրակի, 31 Հոկտեմբեր.- Զ. Կիրակի զկնի խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ աշկողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան:

Երկուշաբթի, 1 Նոյեմբեր.- Սրբոցն՝ Յովսէփայ Աստուածահօրն, Յովսէփայ Արիմաթացւոյն եւ բարեկամին Քրիստոսի՝ Ղազարու եւ քերց նորա՝ Մարթայի եւ Մարիամու եւ Դունկիանոսի Հարիւրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ տաճարին մէջ, Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Հանդիսապետն էր ժամօրհնող՝ Տ. Խաղ Վրդ. Ծոնտուրեան: Ժամարարն էր Ս. Աստուածածնի Տաճարի Տեսուչ՝ Տ. Արտակ Աբղ. Տիւշէնեան:

Շաբաթ, 6 Նոյեմբեր.- Ս. Երկոտասան Վարդապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Վազգէն Աբղ. Ալէքեան:

Կէսօրէ ետք, Լուսարարապետ Ս. Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր ժամերգութիւնն ու նախատօնակը պաշտուեցան Հայոց՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան թափօր տաճարէն ներս: Հանդիսապետն էր Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան:

Կիրակի, 7 Նոյեմբեր.- Է. Կիրակի զկնի խաչի: Գիւտ Ս. Խաչի: Գիւտ Խաչ: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Դեոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Ապա կատարուեցաւ մեծահանդէս թափօր, նախ Գիւտ Խաչի Այրը, ապա Ս. Գերեզմանին շուրջ եռադարձ թափօրով եւ մէկ անգամ Պատանատեղւոյն: Թափօրը գլխաւորեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան, ամպհոլանիի տակ եւ Կենաց Փայտի մասունքն ի ձեռին: «Խաչի քո Քրիստոս» շարականի երգեցողութենէն եւ խնկարկութենէն ետք, արարողութիւնները վերջացան Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Այսպէս փակելով 2021 տարուան Ս. Յարութեան Տաճարի հանդիսութեանց շրջանը:

Շաբաթ, 13 Նոյեմբեր.- Ամենայն Սրբոց, հնոց եւ նորոց, յայտից եւ անյայտից: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Տիրան Աբղ. Յակոբեան:

Կիրակի, 14 Նոյեմբեր.- Ը. Կիրակի զկնի խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Աղան Աբղ. Գոգչեան:

Ուրբաթ, 19 Նոյեմբեր.- Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 20 Նոյեմբեր.- Ս. Հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Պատարագեց եւ քարոզեց Ս. Հրեշտակապետաց Վանքի Տեսուչ՝ Տ. Դեոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Յաւարտ Ս. Պատարագի հանդիսապետութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր կատարուեցաւ մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարքութեան միաբաններէն՝ հանգուցեալ Տ. Թաթուլ Ծ. Վրդ. Անուշեանի, Արցախեան 44-օրեայ պատերազմի ընթացքին նահատակուած քաջորդիների, ինչպէս նաեւ Նոյեմբեր 16-ին Ջերմուկի սահմանին ատրուպէճանական սադրանքներուն զոհ գացած նախկին Ժառանգաւոր սան Տարօն Սահակեանի եւ Սրբոց Թարգմանչաց վարժարանի բարերար՝ Մարգարեան եւ Ճէվահիրճեան ընտանիքներու հոգիներուն ի հանգիստ:

Կիրակի, 21 Նոյեմբեր.- Թ. Կիրակի զկնի խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Արտէն Քնյ. Աբրահամեան:

Շաբաթ, 27 Նոյեմբեր.- Ս. Առաքելոցն Անդրէի եւ Փիլիպպոսի: Առաւօտեան կատարուեցաւ ուխտագնացութիւն դէպի հայոց Փիլիպպոսի աղբիւր նախագահութեամբ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի:

Կիրակի, 28 Նոյեմբեր.- Ժ. Կիրակի գկնի խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան:

Ուրբաթ, 3 Դեկտեմբեր.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 4 Դեկտեմբեր.- Ընծայումս Ս. Աստուածածնի: Առաւօտուն Լուսարարապետ Ս. Հօր գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանիի պարտէզ եւ «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին օրուան Ս. Պատարագը մատուց Տ. Թէոդորոս Մ. Վրդ. Զաքարեան:

Կիրակի, 5 Դեկտեմբեր.- Ա. Կիրակի Յիսնակաց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարին, ձախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Խաղ Վրդ. Զոնտուրեան:

Ուրբաթ, 10 Դեկտեմբեր.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 11 Դեկտեմբեր.- Ս. Առաքելոցն Թադէոսի եւ Բարդղղիմէոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Ներսէս Արք. Ալոյեան:

Կիրակի, 12 Դեկտեմբեր.- Բ. Կիրակի Յիսնակաց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Գէորգ Արք. Հայրապետեան:

Շաբաթ, 18 Դեկտեմբեր.- Ս. Նիկողայոսի եւ Գրիգորի Աբանչեղագործ Հայրապետացն, եւ միւս

Նիկողայոսի Հայրապետին եւ Միւռոնայ Եպիսկոպոսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ՝ Ս. Մակարայ մատրան մէջ: Վերաբերումը կատարուեցաւ գաւթին մէջ գտնուող Ս. Նիկողայոսի Սեղանին վրայէն: Ժամարարն էր Տ. Արշակ Արք. Ղազարեան:

Կիրակի, 19 Դեկտեմբեր.- Գ. Կիրակի Յիսնակաց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Վանիկ Մ. Վրդ. Մանկասարեան:

Ուրբաթ, 21 Դեկտեմբեր.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Չորեքշաբթի, 22 Դեկտեմբեր.- Յղութիւն Ս. Աստուածածնի ի յԱննայէ: Առաւօտուն Լուսարարապետ Ս. Հօր գլխաւորութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանիի պարտէզ եւ «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց Տ. Բարսեղ Մ. Վրդ. Գալէմտէրեան:

Ուրբաթ, 24 Դեկտեմբեր.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 25 Դեկտեմբեր.- Սրբոցն՝ Յակոբայ Մծբնայ Հայրապետին, Մարուգէի ճգնաւորին եւ Մելիտոսի Եպիսկոպոսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Կիրակի, 26 Դեկտեմբեր.- Դ. Կիրակի Յիսնակաց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Կորին Վրդ. Բաղդասարեան:

Պատրաստեց՝ ՏՐՅ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ



Հինգշաբթի, 12 Օգոստոս.- Իսրայելի ԱԳՆ Կրօնից վարչութեան նորանշանակ պետ Տիկ. Շուլի Դաւիդովիչ եւ նոյն վարչութեան քարիստոնէաներու բաժնի նորանշանակ պետ Տիկ. Տանիա Պերկ-Ռաֆայէլ՝ ընկերակցութեամբ վարչութեան գլխաւոր քարտուղարի եւ Ներքին Գործոց նախարարութեան քրիստոնեաներու բաժնի պետ Տիար Սեզար Մարժիէի այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ:

Երեքշաբթի, 2 Նոյեմբեր.- Երուսաղէմի Դըպտոց եպիսկոպոս Գերշ. Տ. Անտոնիոս Արքեպիսկոպոս այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան Սուրբ Տեղեաց վերաբերող հարցեր:

Ուրբաթ, 5 Նոյեմբեր.- Իսրայելի «Ազգային Անվտանգութեան» քոլէճի տարբեր ազգերու ուսանողներ այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ: Հանդիպումէն ետք ճանաչողական այց կատարեցին նաեւ դէպի Հայոց թաղ:

Չորեքշաբթի, 15 Դեկտեմբեր.- Իսրայելի մէջ Ռուսիոյ դեսպանատան նորանշանակ առաջին քարտուղար Տիար Տիգրան Կոտպաշեան այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ:

Հանդիպմանը ներկայ էր նաեւ Իսրայելի մէջ Հայաստանի Հանրապետութեան հիւպատոս՝ Տիար Նարեկ Դազարեան:

Ուրբաթ, 17 Դեկտեմբեր.- Երուսաղէմի մէջ Սպանիոյ նորանշանակ Ընդհանուր Հիւպատոս Տիար Ալֆոնսո Լուչինի Մաթէո այցելեց Պատրիարքա-

րան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ: Հանդիպումէն ետք Տիար Լուչինի այցելեց Սրբոց Յակոբեանց Մայր տաճար, ապա շրջայց կատարեց վանքէն ներս:

Երկուշաբթի, 27 Դեկտեմբեր.- Կաթոլիկ եւ Բողոքական եկեղեցիներու Ս. Ծննդեան տօնի առիթով, Երուսաղէմի մէջ սկսան շնորհաւորութիւնները:

Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը, հանդիսապետութեամբ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր, շնորհաւորելու գնաց Ս. Երկրի Քիւսթոս՝ Հ. Ֆրանչեսկո Փաթոնի եւ Ֆրանչիսկեան Միաբանութեան:

Երեքշաբթի, 28 Դեկտեմբեր.- Ամանորի եւ Ս. Ծննդեան տօներու առիթով Երուսաղէմի քաղաքապետ՝ Տիար Մոշէ Լիոնի կողմէ կազմակերպուած քրիստոնեայ համայնքներու հետ հանդիպմանը ներկայ գտնուեցաւ Ս. Աթոռոյս Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Դարիպեան, ընկերակցութեամբ Աւագ Թարգման Տ. Վազգէն Աբղ. Ալէքեանի:

Չորեքշաբթի, 29 Դեկտեմբեր.- Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը, հանդիսապետութեամբ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր, շնորհաւորելու գնաց Լատինաց Պատրիարք Ամեն. Տ. Փիերպատիսթա Արքեպիսկոպոս Փիցապալային եւ Միաբանութեան:

Նոյն օրը երեկոյեան, Ամանորի եւ Ս. Ծննդեան տօներու առիթով Իսրայելի նախագահ Վսեմաշուք Տիար Իցիսակ Հերցոկի կողմէ կազմակերպուած ընդունելութեան Ս. Աթոռոյս կողմէ ներկայ գտնուեցաւ Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Դարիպեան, ընկերակցութեամբ Դիւանապետ՝ Տ. Կորին Վրդ. Բաղդասարեանի եւ Աւագ Թարգման՝ Տ. Վազգէն Աբղ. Ալէքեանի:

Պատրաստեց՝ ՆԵՐՍԵՍ ԱՔԴ. ԱԼՈՅԵԱՆ

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ**ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐ**

Շնորհակալությամբ և օրհնությամբ կ'արձանագրենք 2020-2021 տարիներու ընթացքին Ս. Յակոբեանց Մայր Տաճարին և այլ սրբավայրերու տրուած հետևեալ բարեպաշտական նուէրները:

1. Հայաստանի Երեւան քաղաքէն Տիար Արտական Յարութիւնեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Սբ. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ արծաթաշուր շղթայով ոսկի զարդ մը:

2. Կ. Պոլսէն Հոգշ. Տ. Յարութիւն Աբղ. Տամատեան Սբ. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրէ արծաթեայ խնկաման մը հետեւեալ յիշատակարանով. «Յիշատակ Նշան Մուրատօղլուի, Յարութիւն Աբղ. Տամատեանի, Գրիգոր Ա. Քհնյ. Տամատեանի կողմէ 6-4-2019»

(Յունուար, 2020)

3. Լեհաստանէն Տիար Վահիկ Թորոսեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Սբ. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ արծաթեայ շղթայով խաչ մը եւ երկու այլ զարդեր:

4. Քրիստինէ Յակոբեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Սբ. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ բնական քարէ կազմուած փոքր շղթայ մը:

(Փետրուար, 2020)

5. Սաղիմաբնակ Տիկ. Զապէլ Գալայճեան երկու գորգ կը նուիրէ Սբ. Յակոբեանց Մայր Տաճարին:

(Մարտ, 2020)

6. Սուրբ Աթոռոյս միաբան Հոգշ. Տ. Արշակ Աբղ. Ղազարեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրէ սպիտակ յատակի վրայ, ոսկեթել ասեղնագործ (մեքենայի գործ) խոյր մը, վակաս մը, եւ զոյգ արտախուրակներ: Խոյրի Ա. երեսին գունաւոր նկարազարդումով պատկերուած է Աստուածամայրը Յիսուս Մանուկով, Բ. երեսին՝ Յիսուս, Աստուածամայր եւ Յովհաննէս Մկրտիչ:

7. Պատրիարքարանէն Սբ. Յակոբ փոխադրուած են երեք մասունքներ՝ Ս. Աննա, Ս. Պիաճօ, երրորդին վկայականը դժուար ընթեռնելի է, եւ հողաթափ մը:

(Դեկտեմբեր, 2020)

8. Մի ոմն Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Սբ. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ ոսկի շղթայ մը:

(Յունուար, 2021)

9. Սաղիմաբնակ փոքրիկ Քնար Մարիա Ուղուրկէլ Սբ. Աստուածածնայ տաճարին կը նուիրէ սաղաւարտ մը, վակաս մը, եւ հողաթափ մը: Յամի Տեառն 2021, Օգոստոս

27:

10. Մատույեան ընտանիք Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Սբ. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ մանր աղամանդեայ քարերով ոսկի մատանի մը:

(Օգոստոս, 2021)

11. Ամիլա Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Սբ. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ ոսկի խաչ մը:

(Սեպտեմբեր, 2021)

12. Սաղիմաբնակ Տիար Յակոբ Գալայճեան ի յիշատակ եղբոր՝ Հայրիկ Վրդ. Գալայճեանի, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրէ արծաթեայ ձեռաց խաչ մը՝ գունաւոր քարերով: Խաչին կեդրոնը «Ս.Յ.» (Սբ. Յակոբ) գրուած է, իսկ ետեւի յիշատակարանը հետեւեալն է. «Անխոնջ ծառայ Աստուծոյ եւ երկարամեայ տեսուչ Աստուածամօր Տաճարին Հայրիկ Վրդ. Գալայճեանի յիշատակին նուէր Սուրբ Յակոբ Եկեղեցիին իր եղբոր Յակոբ Գալայճեանէն, 2021»:

13. Տիար Ենոք Քուբայրի Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Սբ. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ ոսկի շղթայ մը:

(Հոկտեմբեր, 2021)

ԵՐԱՆԻ ՈՐ ՈՒՆԻՅԻ ՅԻՇԱՏԱԿ Ի ՍԻՈՎՆ

ՍԵՒԱՆ ԱՐՔ. ՂԱՐԻՊԵԱՆ

Լուսարարապետ Ս. Աթոռոյ



ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Ս. ԱԹՈՌՈՅՍ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱԾ Է ՀԵՏԵԻԵԱԼ ԳԻՐՔԵՐԸ

1. Translation of the pioneering feminist novel Mayda: “Echoes of Protest”, Barbara Merguerian, PhD, Director, Armenian Women’s Archives, Armenian International Women’s Association, (1 copy).

2. Oriental Institute exhibition catalog, Antoin Sevruguins: “Past and Present”, Tasha Vorderstrass, Exhibition Curator and Catalog Editor, University and Continuing Education Program Coordinator, Oriental Institute of the University of Chicago, (1 copy).

3. “Solomon’s Temple and Palace”, New Archaeological Discoveries (Yosef Garfinkel, Madeleine Mumcuoglu), Bible Lands Museum Jerusalem, Biblical Archeology Society, (1 copy).

4. Վարուժան Արքեպիսկոպոս (Աղեղնաւոր) Հէրկելեան, «Գառնի» Մատենաշար, Ուսանողական, թիւ 43, «Ես, այս գիշեր 2», Արցախի վերքը, (1 օրինակ):

5. «Օտար Աղբիւրները Հայասանի եւ Հայերի Մասին 20», Կիլիկեան Հայաստանի Պատմութեան Մամուլքեան Սկզբնաղբիւրները (1), Իբն Աբդ Ալ-Ձահիր, (Թարգմանութիւնը-Գազիկ Դանիէլեանի): Մատենադարան – Մեսրոպ Մաշտոցի Անուան Հին Ձեռագրերի Ինստիտուտ, Արաբական Աղբիւրներ Դ., Երեւան 2021, (3 օրինակ):

6. Ներսէհ, «Միայնակ Ճամբորդը», Տպ. Երեւան, «Արմաւ» հրատ. 2021: Նուէր հեղինակին կողմէ, 11/10/21, (1 օրինակ):

7. Հանգուցեալ Եղիա Տիգրանեանի ընտանիքին կողմէ Կիւլպէնկեան Մատենադարանի ընծայուեցաւ անոր գրադարանն ամբողջութեամբ՝ թուով 847 գիրք, (736 անգլերէն, 1 ֆրանսերէն, 96 հայերէն եւ 14 արաբերէն), 09/11/2021:

8. Նաիրա Մանուկեան Կիւլպէնկեան Մատենադարանի կը նուիրէ հինգ անգլերէն գիրքեր:

9. Սեւան Տէյիրմենճեան Կիւլպէնկեան Մատենադարանի նուիրած է. «Կալուօշ-Նամէ» Թատերա-խմբագրական Յիշողութիւններ, (Ինքնակենսագրականով Խառնըւած) 1900-1935, Երուանդ Թօլայեան (Կալուօշ), Հրատարակութեան պատրաստեց Սեւան Տէյիրմենճեան, Փետրուար 2019, Ստանպուլ, (1 օրինակ):

Լեռ Կամսար, Մարդը Գործին Մէջէն (Աքսորականի Գաղտնի Օրագիր, Հրատարակութեան պատրաստեց - Սեւան Տէյիրմենճեան, Մարտ 2021, Ստանպուլ, (1 օրինակ):

10. Կորիւն Վրդ. Բաղդասարեան, «Երուսաղէմի Հայկական Թաղամասի Գաղտնիքները», Մաս Ա. 2019 թ., Մաս Բ. 2021 թ.: Նուէր հեղինակին կողմէ:

11. Երեւանի Կոմիտասի անուան պետական Կոնսերուատորիայի «Երաժշտական Հայաստան» ամսագրի տնօրէն Գոհար Շազոյեան Կիւլպէնկեան Մատենադարանի կը նուիրէ «Երաժշտական Հայաստան» ամսագրի երեք բացառիկ հատորներ եւ Գրիգոր Փիտէճեանի հեղինակած երկու գիրքեր:

- «Երաժշտական Հայաստան» 1(48) 2015 «Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին նուիրուած»:

- «Երաժշտական Հայաստան» 2(49) 2015 «Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին նուիրուած»:

- «Երաժշտական Հայաստան» 2(37) 2010 «Գրիգոր Փիտէճեանի Ծննդյան 75- ամեակին նուիրուած»:

- Գրիգոր Փիտէճեան, Հայ Եկեղեցւոյ Երաժշտութիւնը (Պատմական ակնարկ), Նիւ Եորք 2015

- Գրիգոր Փիտէճեան, Քրիստափոր Կարա-Մուրզա, Երեւան 2013:

ԱՆՆԱ ԿԷՃԷՔՈՒՇԵԱՆ

Քարտուղարուհի Կիւպէնկեան Մատենադարանի



ՅՕԴՈՒԱԾԱԳԻՐՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

«Սիոն» կրօնական, գրական, բանասիրական հանդէսը հիմնուած է 1866-ին, պաշտօնաթերթն է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան եւ լոյս կ'ընծայուի Սրբոց Յակոբեանց Տպարանէն:

«Սիոն» կրօնական, գրական, բանասիրական նիւթերէ զատ, կ'ընդգրկէ նաեւ պատմական, եկեղեցական, լեզուական եւ հայ արուեստի վերաբերեալ ուսումնասիրութիւններ եւ այլ բնոյթով նիւթեր:

Յօդուածները կ'ընդունուին Հայերէն եւ Անգլերէն լեզուներով, նախընտրաբար 10-15 համակարգչային շարուածքով լման էջ՝ Word միջավայրին մէջ (Word 2007-2019), երկու կողմերէն հաւասարեցուած, առանց տողադարձերու, ծաւալը՝ A4 ֆորմատի, տառատեսակը՝ Arian Grqi, տառաչափը՝ 12 pt, տողերու հեռաւորութիւնը՝ 1.15 pt: Յղումներու տառատեսակը եւս պէտք է ըլլայ՝ Arian Grqi, տառաչափը՝ 10 pt: Հայերէն յօդուածները «Սիոն»-ի մէջ կը հրատարակուին դասական հայերէն ուղղագրութեամբ: «Սիոն»-ին յանձնուած յօդուածները պէտք է ըլլան անտիպ:

Մեր սրտագին բաղձանքն է որ «Սիոն» մուտք գործէ բոլոր հայ տուններէ ներս. Վստահ ենք թէ ամէն ընթերցող պիտի գտնէ անոր էջերուն մէջ գրութիւններ՝ որոնք համապատասխան ըլլան իր ճաշակին եւ նախասիրութեան:

Յօդուածներ եւ այլ թղթակցութիւններ, ուսումնասիրութիւններ պէտք է ուղարկուին «Սիոն»-ի հետեւեալ հասցէով.

E-mail: sionjournal@yahoo.com



ՅԱՆՎԱՆԻ ՆԻՒԹՈՅ 2021 ՏԱՐԻՈՅ**ԱՐՈՒԵՍՏ****ՆԱՐԵԿ ՎԱՆ ԱՇՈՒՂԱԹՈՅԵԱՆ**

Ձինական վիշապներով եկեղեցական մի վարագոյրի մասին
կամ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի «Վիշապագոյրը» 157

ԱՇԽԷՆ ԵՆՈՔԵԱՆ

Արտաւանի եկեղեցու բարաւորի «Տիրամայրը մանկան հետ»
պատկերաքանդակը 281

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**ԱՆԱՀԻՏ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ**

- Եղիշէ Չարենցի «Էմալէ Պրոֆիլը Ձեր» շարքը եւ եւրոպական պոեզիան 10

- Արշակ Բ.-ն Բուզանդի «Պատմութեան» համապատկերում 306

ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ (ՏԷՐՏԷՐԵԱՆ)

Մարդկայինը Օշականի մէջ 16

ՈՌՁԱ ԳԱԼՍՏԵԱՆ

Համօ Սահեան եւ Ֆրեդերիկո Գարսիա Լորկա 297

ՎՈՎԱ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Անուշ Ասլիբեկեանի տողերում միակն ու ուրիշը հայրենիքն է 312

ՍԵՒԱՆ ՏԷՅԻՐՄԵՆՃԵԱՆ

Փորձ մը եւ ո՛չ գործ մը
(Քասիմի «Աշխարհաբար Նարեկ»-ի վերահրատարակութեան առթիւ) 317

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ**ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱՐՆԵՅԻ**

- Տաղ ի վերայ Սրբոց Ծննդեան տեղւոյն, որ ի Բեթղէհէմ 21

- Տաղ ի վերայ Սուրբ Յարութեան երկնանման տաճարին,
ուր կան Տնօրինական փրկագործ տեղիքն 166

ՄԵՍՐՈՊ ՔՇՆՅ. ԴԱՐԲԻՆԵԱՆ

Կաղանդ 23

ՀՄԱՅՆԱԿ ԳՐԱՆԵԱՆ

- Հրաժեշտ հոգեւորան 24

- Այս ծառերը, Տէ՛ր... 25

- Վանքը՝ Զատկին 171

- Իրիկուան աղօթք 296

ԵՂԻՎԱՐԴ

- Գարեգին Կաթողիկոս (Նուիրուած Գարեգին Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին) 23

- Մեռեալ ծով 172

- Օրեր 295

ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

Անառակ որդին 169

ԽՈՐԷՆ ԵՊ. ՆԱՐՊԷՅ

Հայր մեր որ յերկինս 291

Յ. ՈՍԿԱՆ

Վտարանդին առ ոգի Հայաստանի 292

ՅԱԿՈԲ ԱՐՔ. ԳԼՆՃԵԱՆ

Լոյս 294

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ**ԳՈԿՏ. ԶԱԻԷՆ ԱԻ. ՔՇՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ**

- Armenian church hymns St. Nersess Shnorhali the graceful (1103-1173),
Armenian church hymnbook, 1936, Jerusalem 27

- Տ. Տ. Բաբգէն Ա. Կիւլէսէրեան, Աթոռակից Կաթողիկոս Մեծի Տանն
Կիլիկիոյ «Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ» հատորը 173

ԳՐԱԿԱՆ**ԽԱՉԱՏՈՒՐ ԴԱԴԱՅԵԱՆ**

Տոնիկաշէն (Երեւակայական ճամբորդութիւն պատմութեան բաւիղներում՝
COVID-19-ի պայմաններում) 33

MICHAEL E. STONE

- Two songs of love by Hovhannes T'lkuranc'i 176

- Khachatur Kecharetzi, Four poems 323

ԴԻԻԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՒՈՅ

- Հաղորդագրութիւն հրեայ ծայրայեղականներու հայ
հոգեւորականներու վրայ յարձակելու մասին 270

- Յայտարարութիւն Կովերու պարտէզի առընչութեամբ 270

- Յայտարարութիւն Տ. Նորայր Վրդ. Գազազեան կարգալոյծ 270

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ**ՎԱՐԴՈՒՀԻ ԲԱՐՍԵՂԵԱՆ**

Դաւիթ Վարդապետ Ալաւկայ Որդու «Կանոնական Աւրէնագրութեան»
գրաբարեան դարձուածքները 44

ՋԻՆԱ ՕՇԱՆԵԱՆ

Բարսեղ Կեսարացու «Գիրք Պահոց» թարգմանական երկի հոլովման համակարգը 49

ԱՆՆԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Նոր Հայկազեան բառարանի դարձուածային միաւորների իմաստային խմբերը 329

ԶԱԻԷՆ ԱԻ. ՔՇՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Դասական յունարէնի եւ դասական գրաբարի առանձնայատկութիւններէն
«Այլ փրկեա՛ զմեզ ի չարէ» 335

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ամանոր	5
Բարիք գործէ՛ եւ ջուրը նետէ	6
Սուրբ Յակոբ	153
«Որք զերկաւոր մեծութիւն փառաց՝ խաւար կոչիցին»	279
Խորհուրդ եւ խօսք	77, 141, 182, 195, 255, 339, 394
Յօդուածագիրներու ուշադրութեան	142, 277, 421

ԾԻՍԱԿԱՆ**ԿԱՐԷՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ**

Շուշպաների կիրառութիւնը ժողովրդական սրբավայրերում	58
---	----

ԿՐՕՆԱԿԱՆ**ՆԱԻԱՍԱՐԴ ՄԱՐՏՈՅԵԱՆ**

Քահանայական աստիճանի պարտականութիւններն ու իրաւունքները (Վերջ)	66
--	----

ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ (ՏԷՐՏԷՐԵԱՆ)

Մոգեր	74
-------	----

REVD. DR. NERSESS NERSESSIAN

The See of Holy Etchmiadzin and The Vatican:

<i>A chronicle of the contacts between Armenian Catholicos and Popes</i>	78, 183
--	---------

Ն.Ա.Մ.

Խաւարման գիշեր	180
----------------	-----

REVD. DR. ZAVEN ARZOUMANIAN

Tradition and the Armenian church, Dogmatic-Traditional-National

337

ՁԵՌԱԳՐԱԿԱՆ**REVD. DR. ZAVEN ARZOUMANIAN**

The largest Armenian manuscript the Jarrendir of Mush

<i>(Lectionary of Mush) 1202 AD (1917-2021)</i>	88
---	----

ԽԱԶԻԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Երեւանի եւ նրա մերջակայքի գրչօջախներում գործած գրիչներն
ու նրանց ձեռագրական ժառանգութիւնը

196

ՀԱՅԿ ՅԱԿՈԲԵԱՆ

Սողոմոն Իմաստունը եւ Եօթանասուն երկու դեւերը,

Ձեռագրագիտական էսքիզներ	340
-------------------------	-----

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ**ՆԵՐՍԵՏ ԱՔԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ**

- Ընդհանուր բովանդակութիւն «Սիոն»-ի (1981-1985)	90
---	----

- Ընդհանուր բովանդակութիւն «Սիոն»-ի (1986-1990)	213
---	-----

- Ընդհանուր բովանդակութիւն «Սիոն»-ի (1991-1995)	352
---	-----

ՅՈՒՆԵՍԿՈՒՆԵՐ**ՆԵՐՍԵՍ ԱՐԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ**

- Հոյսի եւ ուրախութեան կոմպոզիտորը
(Առնօ Բաբաջանեանի ծննդեան 100-ամեակի առթիւ) 101
- Երկաթէ նկարագիրով խիզախ եւ անվեհեր զրոյղ՝ Գրիգոր Զօհրապ
(Ծննդեան 160-ամեակի առթիւ) 225
- Սկիւտարի Սոխակը (Պետրոս Դուրեանի ծննդեան 170-ամեակի առթիւ) 371
- Քահանայութեան յիսնամեակ Նորին Ամեն. Տ. Նուրհան Արք. Մանուկեանի,
Պատրիարքի Ս. Առաքելական Աթոռոյս 236
- Քահանայութեան 55-ամեակ Հոգեշնորհ Տ. Պարետ Ծ. Վարդապետ Երէցեանի 238

REVD. DR. ZAVEN ARZOUMANIAN

- 230 years old hymnal,
The oldest published Armenian church hymnal (Constantinople 1790) 223
- *Return of the pontifical Mother See from Sis to Etchmiadzin (1292-1441)*
580 years (1441-2021) 233
- Եւրոպայի հնագոյն եւ նորագոյն հայ եկեղեցիները.
Հոլանտայի Ս. Հոգի, Պելճիքայի Ս. Մարիամ Մագդաղենացի
(Գիւտ Արքեպիսկոպոս Նագգաշեանի յիշատակին) 368

ՊԱՏՄԱԿԱՆ**ՏԻՐԱՆ ԱՐԴ. ՅԱԿՈԲԵԱՆ**

- Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան հաւասար իրաւունքներու
վերականգնումը Սուրբ Ծննդեան եւ Սուրբ Աստուածածնի տաճարներուն
մէջ 1811-1813 թթ. ըստ Թէոդորոս Բ. Վանեցի Պատրիարքի նորայայտ
նամակին եւ Մահմուտ Բ. Սուլթանի հրովարտակին 239

ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆՅ

- Վաշուտեան տոհմի իշխանուհիները մշակութային բարերարներ 381

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**ԱՐՇԱԿ ԱՐԴ. ՂԱԶԱՐԵԱՆ**

- Նոր գտածոներ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան
«Վարդապետաց զբօսանաց պարտէզ»-ին մէջ 106

REVD. DR. ZAVEN ARZOUMANIAN

- The Armenian church. Genuine support to the Armenian Nation* 392

ՍՈՒՐԲ ԳՐԱԿԱՆ**ՏՕՔԹ. Յ. ԹՕՓՃԵԱՆ**

- Տելիշեան խնդիրը, Ս. Գիրքը եւ Բաբելոն (Մաս Դ-Ե-Զ) 114, 248, 395

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ**ԱՅԼԵԻԱՅԼԻՔ**

- Ամենապատիւ Ս. Պատրիարք Հօր Ծննդեան պատգամը Բեթղեհէմի Ս. Ալրէն 7
- Ամենապատիւ Ս. Պատրիարք Հօր պատգամը Ս. Յարութեան տօնին առիթով 154

Պատրաստեց՝ ՆԵՐՍԵՏ ԱԲՂ. ԱԼՈՅԵԱՆ

- Հայոց Սուրբ Ծնունդը Բեթղեհէմի մէջ	133
- Իսրայէլի մէջ Ռուսիոյ դեսպան՝ Տիար Անատոլի Վիքթորով այցելեց Պատրիարքարան	133
- Տարեկան ուխտագնացութիւն դէպի Յորդանան գետ	134
- Լատինաց նորանշանակ Պատրիարքին առաջին այցը Պատրիարքարան	134
- Աստուածամօր յախճապակեայ պատկերի օրհնութիւն ի նազարէթ	134
- Բեթղեհէմի զինուորապետին այցը Պատրիարքարան	135
- Օծում Ս. Եղիա եկեղեցւոյ նորահաստատ խորանին ի Հայֆա	135
- Սուրբ Պատարագ Ասորոց Ս. Մակար եկեղեցին	135
- Սարկաւազաց Զեռնադրութիւն	136
- Հայոց Յեղասպանութեան 106-րդ տարելից	266
- Հայոց Յեղասպանութեան 106-րդ տարելիցին նուիրուած յուշ-երեկոյ գիտաժողով	266
- Իսրայէլի տարբեր կազմակերպութիւններու 200 հրեաներ այցելեցին պատրիարքարան	267
- Սրբոց Թարգմանչաց Վարժարանի Շրջանաւարտից հանդէս	267
- Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի Ամալերջի հանդէս	268
- Իսրայէլի մէջ Եթովպիոյ դեսպանը եւ Արքեպիսկոպոսը այցելեցին պատրիարքարան	268
- Շնորհաւորագիր Հայաստանի Հանրապետութեան նորընտիր վարչապետ Տիար Նիկոլ Փաշինեանի	268
- Հոգշ. Տ. Աղան Աբղ. Գոգչեան եւ Հոգշ. Տ. Տիրան Աբղ. Յակոբեան շրջանաւարտ համալսարաններու	269
- Հանդիպում Բեթղեհէմի նահանգապետին հետ	408
- Տարեկան զիշերային ուխտագնացութիւն դէպի Ս. Աստուածածնի տաճար	408
- Տարեմուտ Սրբոց Թարգմանչաց վարժարանի	408
- Տարեմուտ Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի	408
- Դպրութեան աստիճանի տըւշութիւն	409
- Տարեկան ուխտագնացութիւն դէպի Ռամլէի Ս. Գէորգ վանք	409
- Ֆրանչիսկեան ուխտի նոր մեծաւորի պաշտօնական մուտքը Ս. Յարութեան տաճար	410
- Տարեկան ուխտագնացութիւն դէպի Փիլիպպոսի աղբիւր	410
- Տարեկան ուխտագնացութիւն դէպի Յոպպէի Ս. Նիկողայոս Հայոց վանք	410
- Յանկ նիւթոց 2021 տարւոյ	422
- Պաշտօնականը	Ապրիլ-Յուլիս 276
	Օգոստոս-Դեկտեմբեր 416

Պատրաստե՛՛ ՏՐՅ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽՈՒՏԱՎԵՐԴԵԱՆ

Եկեղեցականք- Բեմականք	Յունուար-Մարտ	138
	Ապրիլ-Յուլիս	271
	Օգոստոս-Դեկտեմբեր	411

ՍԵՒԱՆ ԱՐՔ. ՂԱՐԻՊԵԱՆ

Բարեպաշտական նուէրներ 2020-2021 տարւոյ	417
--	-----

ԱՆՆԱ ԿԷՃԷԿՈՒՇԵԱՆ

Ս. Աթոռոյս Կիւլպէնկեան Մատենադարանը շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ գիրքերը	419
--	-----

ՎԻՄԱԳՐԱԿԱՆ**ԱՐՍԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ**

Վիմագրական նոր վկայութիւն Մելիք Հայկազ Բ.-ի գործունէութիւնից	119
--	-----

ՀԱՅԿ ՅԱԿՈԲԵԱՆ, ԱՄԱԼՅԱ ԴԻԼԱՆԵԱՆ

«Գրաֆիտի» երեւոյթը միջնադարեան վիմագրերում	400
--	-----

ՏԵՂԵԿԱԳԻՐ**ԹԷՈԴՈՐՈՍ Ծ. ՎՐԴ. ԶԱՔԱՐԵԱՆ**

Տարեկան տեղեկագիր Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի	252
--	-----

ԱՐՏԷՆ ՔՀՆՅ. ԱՔՐԱՀԱՄԵԱՆ

Տարեկան տեղեկագիր Սրբոց Թարգմանչաց վարժարանի	256
--	-----

ՅԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ**ՎԱՐԴԱՆ ԼԱՔԼԱՋԵԱՆ**

Միջազգային հանրութեան վերաբերմունքը 20-րդ դարի վերջին եւ 21-րդ դարի սկզբին տեղի ունեցած ցեղասպանութիւններին, մասնաւորապէս Հայոց Ցեղասպանութեանը	258
---	-----



Տօն Գիտ Խաչի
Մեծահանդէս թափօր Քրիստոսի Ա. Գերեզմանին շուրջ



Տօն Սրբոց Թարգմանչաց
Պատարագիչ՝ Հոգշ. Տ. Սամուէլ Ծ. Վարդապետ Աղոյեան



Տօն Վերափոխման Ս. Աստուածածնի
Պատարագիչ՝ Հոգշ. Տ. Թեոդորոս Մ. Վարդապետ Զափարեան



Դպրութեան աստիճանի տըւչոյիւն՝ ձեռամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Սեան Արք. Դարիպեանի



Սբ. Ծննդեան շնորհատուրքիններ Ֆրանչիսկեաններուն



Սբ. Ծննդեան շնորհատուրքիններ Լաւիններուն

«ՍԻՈՆ»Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՍԻՈՆ»-ի խմբագրությունը կը փորձէ ամբողջացնել եւ արդիականացնել բաժանորդներու ցանկը: Բաժանորդագրուեցէ՛ք Նոր շրջանի «ՍԻՈՆ»-ին, զոր կրնաք ստանալ նամակատան միջոցաւ եւ կամ այցելելով մեր կայքէջը:

Հաճեցէ՛ք ներքեւի կտրոնը յստակ եւ գլխագիր տառերով ամբողջացնել եւ փոխելով մեր
E-mail: sionjournal@yahoo.com հասցէին ղրկել:

ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱԿԷՄԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԻՈՆԻ

Անուն, Մականուն. _____

Տիտղոս. _____

Կազմակերպություն. _____

Հասցէ. _____

Կայքէջ. _____ E-mail address _____

Տարեկան բաժանորդագրություն՝ \$150 USD

NOTICE TO SUBSCRIBERS

The Armenian Patriarchate of Jerusalem is driving up a new updated list to its official periodical SION. To ensure that your name is on the list, you are kindly requested to fill in the form below and send it back to us, with your remittance as soon as possible. You can also write to our E-mail: sionjournal@yahoo.com.

Name, Surname. _____

Title. _____

Organization. _____

Address. _____

Annual Subscription \$ 150 USD

Send your checks to: Armenian Patriarchate of Jerusalem P.O.Box 14235 Jerusalem, Israel

Tel: +972 (0)2-6282331

Fax: +972 (0)2-6264861

E-mail: sionjournal@yahoo.com

